





# ՍԱԼԻՀԱ ՀԱՆԸՄ

Կ Ա Մ

ԲԱՆԱԿԸ ԲՈՆԱԻՈՐԻՆ ԴԷՄ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ




ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ռ. ՍԱԳԱԵԱՆ

Վ.Ա.Լ.Ա.Թ.Ի.Ս.

ԳՈՒՐԵՈՒՆԵՂՈՒ ԽԱՆԸ, 7

Կ. ՊՈԼԻՍ



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Ռ. ՍԱԳՍԵԱՆ

# ՍԱԼԻՅԱ ՀԱՆԸՄ

Կ Ա Մ

ԲԱՆԱԿԸ ԲՈՒՆԱԽՈՐԻՆ ԴԷՄ

ՎԷՊ ՕՍՄ. ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ



Դ Ր Ե Յ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ



Բ. ՀԱՏՈՐ



Կ. Պ Օ Լ Ի Ս

ՏԿԱԳՐՈՒՔԻՆ Ռ. ՍԱԳՍԵԱՆ

1912

UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN

LIBRARY

UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN


UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN



UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN



# ՍԱԼԻՀԱ ՀԱՆՐԱՊԵՏ

Կ Ա Մ

## ԲԱՆԱԿԸ ԲՌՆԱԻՈՐԻՆ ԴԵՄ

ՎԷՊ ՕՍՄ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆԻՔԷ

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

### Հ Ա Ս Ս Ա Ն Ե Ր Ջ Ա Ն Ի Կ Է

Ապտիւլ Համիա կը սխալէր կարծելով որ Ջիւլիէայի փախուստին մասնակից էին ուրիշներ ալ: Ազջիկը սուսնց ուրիշ մեղսակցի կատարած էր ամէն բան:

Յորմէհետէ Սաֆնազ գալֆայի քով կը գտնուէր, Պիւրհանէտտին իշխանի ապարանքին մէջ, ինչպէս տեսանք, Ջիւլիէա գրեթէ ազատ կեանք մը կը վարէր օրն ի բուն չըջելով պարտէղին մէջ և և ընտանի անասուններուն հետ զբօսնելով: Իրեթէ բոլոր պարտիզպաններուն հետ բարեկամացած էր, ոչոնք այդ մանկատի ազջկան գեղեցիութենէն հրապուրուած ու անոր խուլ համր վիճակէն կարեկցած, ամէն ջանք կ'ընէին հաճելի ըլլալու համար անոր: Պարտէղին գեղեցկագոյն ծա-

ղիկները և պատուհները իր տրամադրութեան տակն էին ու կրնար ազատօրէն իր ձեռքովը քաղիլ զանոնք: Զիւլէհա սուկայն գո՛հ չէր իր վիճակէն. կ'զգար որ բանտարկուած էր, թէև գեղեցիկ ու ընդարձակ բանտի մը մէջ, բայց և այնպէս բանտարկուած: Իր միակ մտածումն էր ազատիլ այդ հեշտութիւններէն ու դառնալ իր ընկերներուն քով: Յետոյ կը խորհէր որ այս վիճակը երկար չէր կրնար տևել, կրնար իր կեղծ խտւի համբուրթիւնը յայտնուիլ ու այն ատեն սոսկումով կը մտածէր թէ ի՞նչ միջոցներու պիտի դիմէին զինքը խտտուվանցներու համար: Այս պատճառաւ Սաֆնազ գալֆայի քով փոխադրուելէն ի վեր իր սեւեռուն զազափարն էր փախուստի միջոց մը պատրաստել, առիթը ներկայանալուն պէս օգտուելու համար:

Զուան ցաակելու պատրուակին տակ յաջողած էր իրեն պէտք եղածին չափ պարան հայթայթել զոր խնամով պատրաստած էր, վրան հանգոյցներ շինելով. ճապուկ ու թիւրաթեք աղջիկ մըն էր Զիւլէհա և շատ դիւրաւ կրնար գործածել այդպիսի սանդուղ մը երբ առիթը ներկայանար: Այդ պարանը սենեակին մէջ խնամով պահած էր առանց դիտարու թէ կ'րբ պիտի կրնար օգտուիլ անկէ:

Առաւուն՝ իր արդուզարդին զբաղած ատեն, յանկարծ սենեակին դուռը բացուեցաւ ու Սաֆնազ գալֆա երեցաւ այլայլած դէմքով մը:

— Աղջիկս, գոչեց խեղճ էինը, գէշ լուր մը ունիմ քեզի հաղորդելիք, բայց սիրտդ ամուր բռնէ և ջանա որ հանդարտութիւնդ պահես:

— Ի՞նչ կայ որ, հարցուց աղջիկը գող կ'լի:

— Սուլթանը ուզեր է որ քեզ անմիջապէս կրկին Երլարը փոխադրեն և ինձի դէմ ալ շատ բարկացեր է որ առանց իր դիտակցութեան քեզ իմ քովս առեր կ'իմ, հաւանական է որ զիս ալ կ'անջէ բացատրութիւն պահանջելու համար...:

— Ի՞նչ գժբախտութիւն որ իմ պատճառաւ ձեզի ալ փորձանք պատահի, գոչեց մանկատի աղջիկը:



— Իմ մասին մի՛ մտածեր, ըսաւ Սաֆնազ գալֆա, ես կրնամ օձիքս աղատել, խնդիրը քու վրայ է... Կ'երեւայ որ յեղափոխական շարժումներու մասին ծանրակշիռ տեղեկութիւններ եկեր են Սելանիկէն և Իսկիւսպէն և ասոր վրայ Սուլթանը ստակալի կերպով զայրացեր է և իր բարկութեան միջոցին յանկարծ քեզ յիշեր է... :

— Աստուած իմ, ի՞նչ կ'ուղէ ինչէ, գոչեց Զիւլէնա այլալամ :

— Կը վախնամ որ նորանոր միջոցներու դիմէ, գուցէ նոյն խի բռնութիւններու, որպէս զի քեզ խօսեցնել տայ, չըլլայ որ տկարանաս :

— Այդ մասին ապահով եղիր, ըսաւ աղջիկը խորխորութեամբ, Հագգը պէյի գաւակը երբեք չի տկարանար :

— Կեցցես ուրեմն, գիտես որ եթէ խօսիս, եթէ խոստովանութեան սկսիս, ո՛չ թէ միայն դուն՝ այլ քեզի հետ ես ու մեր ընկերներն ալ կորսուած ենք... :

— Կ'երգնում որ բերնէս խօսք մը չի պիտի կրնան առնել, պատասխանեց Զիւլէնա հանդիսաւոր ձայնով մը, խուլ համր պիտի մնամ ինչ որ ալ պատահի :

Սաֆնազ հանրմ մօտեցաւ աղջկան ու գայն խանդաղատանքով համբուրելէ ետքը արտասուպից աչքերով ըսաւ .

— Աղջիկս, շուտով հագուէ ու պատրաստ եղիր, Աստուած հետք ըլլայ... :

Զիւլէնա երբ մինակ մնաց խորին հառաչանք մը արձակեց : Թէև դուրսէն ինքզինքը հանդարտ ցոյց ապ կը ճգնէ ակայն խորապէս յուզուած էր : Յանկարծ յիշեց իր պարանը :

Սրդեօք միտոին առնե՛մ խորհեցաւ :

Բայց յետոյ մտածեց .

— Եթէ Երլարդի միջ վրաս խուզօր՛իկն ու պարանը գրանեն՝ վրձակա տեղի կը ծանրանայ... :

Գնաց ըսցաւ չայն դարակը սրուն խորը պահած էր այդ

ազատարար գործիքը, պահ մը նկատեց զայն մտածկոտ հայ-  
ուածքով մը, յետոյ, մէկէն, բնազդաբար քաշեց դուրս հա-  
նեց պարանը ու տենդային ձեռքով մը զայն իր բարակ մէջ-  
քին շուրջ բոլորեց, շրջազգեստին տակէն, ապա եկաւ խոշոր  
հայելիին դէմը և անոր մէջ նայելով՝ ըսաւ .

— Դուրսէն բնաւ յայտնի չէ որ մէջքս պարան կապած  
եմ . . .

— Եւ շուտով շարունակեց հագուել :

Վայրկեան մը ետքը եկան զինքը փնտուելու : Երբորդ  
հասնելուն պէս զինքը առաջնորդեցին կանանոց : Հոն կլինե-  
լուն գաժան դէմքը և իրեն ուղղուած կասկածոտ անարկ-  
ները տեսնելով՝ խեղճ աղջիկը սարսուռ մը ունեցաւ և հառ-  
կցաւ որ փոթորիկ մը պիտի պէյթէր իր գլխուն, այսուհան-  
դերձ գերագոյն կորովով մը կրցաւ իր յուզմունքը ծածկել և  
հանդարտութիւն կեղծել :

Առանց բառ մը ուղղելու իրեն կամ իրարու մէջ խօսք  
մը ըսելու որմէ կարենար բան մը գուշակել, զինքը առաջ-  
նորդեցին խուց մը և վրայէն դուռը կղպելով հեռացան :

Մանկատի աղջիկը խեղճ զբան մտեցաւ ու ականջ դը-  
րաւ և լսեց հեռացող քայլերու ձայնը .

— Վայրկեան մը կորսնցնելու չէ, ըսաւ ինքնին վճռա-  
բար, գուցէ հիմա կը վերադառնան . . .

Ու պատուհանին մտնեալով զայն բացաւ .

— Զուանս մինչեւ դետին չպիտի հասնի կարծեմ, մտա-  
ծեց, հոգ չէ կը ցատքեմ . . .

Իսկոյն մէջքը բտրած հանգուցաւոր պարանը հանեց,  
զայն փեղկերը գոցելու ծանամանուած երկաթ ձողին կապեց,  
թեթեւ ոտուամով մը պատուհանին մէջ եկաւ, ինքզինքը վար  
կախեց, յետոյ պարանը բռնելով՝ յուշիկ վար սահիլ սկսաւ :  
Այս ամեն գործողութիւնները մանկատի աղջիկը կատարեց  
զարմանալի պազարիւնութեամբ մը և ճարպիկութեամբ մը որ  
իրմէ չէր սպասուէր .

— Իցիւ թէ մէկը չտեսնար փախուստս, մտածեց, պատահանէն դիտեցի, ո՛չ ոք կար պարտէզը, բայց կրնայ ըլլալ որ մէկը երեւան գայ...

Իր ենթադրութիւնը ձիշտ էր, պարանը մինչև գետին չէր հասած և աղջիկը պարտաւորուեցաւ երկու մէթը բարձրութենէ մը ինքզինքը զար թողուլ: Այս ոտուամբ մարգագետնի կակուղ հողին վրայ անզգալի եղաւ:

Զիւլէհա վեհերոտ ակնարկ մը նետեց չուրջը և տեսաւ որ ո՛չ ոք կար ու հանդարտ քայլով մը սկսաւ յտաջանալ ընդարձակ պարտէզին մէջ, որուն ամէն ճամբաներն ալ գրեթէ ծանօթ էին իրեն: Երբ Երլարզի պայտտէն բաւական հեռացաւ, քայլերը շտապեց և դէպի Պիւրհանէտաթին իշխանին ապարանքը դիմեց: Մէկ քանի պարտիզպաններ զինքը տեսան և սիրալիր ժպիտ մը ուղղեցին, ընդմիշտ: Ինքն ալ ձեռքովը բարեւեց ժպտելով:

Ապարանքին քովէն անցնելով շիտակ գնաց հիւղակ մը ուր պարտիզպանները իրենց դանաղան գործիքները կը պահէին: Հիւղակին հտեւ, գետնին վրայ դրուած էր բարակ ու երկար կնարան մը զոր պարտիզպանները կը գործածէին բարձր ծառերու ճիւղերը հատանելու համար:

Աղջիկը կնարանը վերցուց տեղէն և հակառակ իր անզօր թնկերուն, ամբողջ ոյժը հաւաքելով, գայն քաշքշեց դէպի այն խոչոր պատը որ ամբողջ Երլարզի չուրջը կը բոլորուէր:

Պարտէզին այդ մասը, հոկայ ծառերով ծածկուած ու անմշակ, բոլորովին ամայի էր: Պարտիզպանները գործ մը չունէին այդ կողմը: Մանկատի աղջիկը կնարանը կոթնցուց պատին ու կատուի մը ձարպիկութեամբ մինչև վեր բարձրացաւ: Յետոյ ոտուամբ մը ընելով ինքզինք պատին վրայ գտաւ: Վրայն թէ այդ վերջին շարժումը ցնցեց կնարանը ու գետին ստապալեցաւ:

Զիւլէհա յուսահատութեան ճիշ մը արձակեց: Իր նպատակը

տակն էր ելնարանը վեր քաշել և անոր միջոցաւ պատին միւս կողմէն վար իջնել: Ափս՛ս, այդ ծրագիրը ջուրը ինկած էր:

Մանկասի աղջիկը վար նայեցաւ և սոսկումով ակտաւ որ անկարելի էր ցատքել այդպիսի բարձրութենէ մը: Այսպէս պատին վրայ անշարժ մնալու դատապարտած էր մինչև որ զինքը ակննէին ու գային բռնէին: Այս մտածումը զինքը ասկնուվրայ բրաւ և խեղճ աղջիկը, որ մինչև այդ բոպէին հողեկան անսովոր կրօով մը ցոյց սոււած էր, սկսաւ դառնօրէն լալ:

— Անկարելի է որ փախուտաւ երկար տակն ծածուկ մնայ կը մտածէր, դուցէ նոյն իսկ հիմա ամեն բան յայտնուած է ու արդէն զիս կը փնտռեն կոր ամէն կողմ... ասկէ զտա այս պատերուն երկայնքը, դուրսի կողմէն, միշտ պահակներ կը շրջին՝ որոնք անշուշտ զիս պիտի նշմարեն...:

Կարծես այս խօսքերը անմիջապէս հաստատելու համար հեռուէն ոտնաձայներ լսուեցան:

— Ահա՛ կուգան կոր, ըսաւ աղջիկը սոսկումով:

Ու մէկէն տարածուեցաւ պատին վրայ, ինքզինքը ժողվուելով ու կրցածին չափ պզտիկնալով:

Արդարեւ հինգ հօգիէ բազկացած պահակախումբ մըն էր եկողը, քայլերը հեղհեղէ մօտեցան և աղջիկը լսեց պահակներու խօսակցութեան ձայնը թէև առանց զանոնք տեսնելու:

Արտատրոփ անձկութեամբ մը սպասեց: Միջոց մը զգաց որ ճիշտ իր գտնուած սեղին ստորոտէն կ'անցնէին ու անաբեկ՝ աչքերը խփեց մրմնջելով:

— Աստուած իմ, Աստուած իմ, պաշտպանէ զիս...:

Արհաւիրքի ահուկի բոպէ մը եղաւ այս խեղճ մանկասի առջկան համար: Բայց քայլերը կը հեռանային, պահակները զինքը չէին նշմարած: Փրկուած էր: Եւ սակայն այդ փրկուածութիւնը բան մը չէր արժեր, քանի որ կարող չէր դարձան մը գտնել իր տաղնապալի կացութեան:

Այսպէս, տարածուած մնաց ընդ երկար, դուցէ ժամ մը

կամ աւելի: Իր շուրջը ո՛ր և է շշուկ չէր լսեր ո՛չ պարտէզին կողմը և ո՛չ ալ պատէն դուրսը:

— Արդեօք սակաւին փախուտս երևան չելա՞ւ, մաս-  
ձեց:

Իր դիրքը այնքան անտանելի էր պատին վրայ որ խնդճ աղջիկը այլևս չէր կրնար ստեղծ:

— Իցի՛ւ թէ գային գիտ բռնեխն ու ազատէի այս տեղէն խորհեցաւ դառնութեամբ:

Ու կրկին սկսաւ լալ, այս անգամ աւանց փոյթ ընկու-  
ձայնը խեղդել, այլ ընդհակառակը կարծես լսուելու ջան-  
քով մը: Բոլորովին իր ցաւին և յուսահատութեանը անձնա-  
տուր իր հեծեծանքը հետզհետէ կը բարձրացնէր...

Յանկարծ իր ականջին ձայն մը հասաւ.

— Զիւլէհա՛, Զիւլէհա... .

Աղջիկը սարսուտ: Լացը դազրեցուց և գլուխը դէպի  
ձայնը եկած կողմը երկարելով՝ տեսաւ իր բարեկամը՝ Հա-  
սանը:

— Զիւլէհա՛, մի լար, ըսաւ պատանին ևս հոս եմ և կըր-  
նամ քեզի օգնել:

Աղջիկը պատանիին տեսքէն բոլորովին սրտապնդուած էր  
ու իր կորովը գտած:

— Ի՞նչ բան ունիս այստեղ, ինչպէ՞ս իմացար որ ևս հաս  
եմ, հարցուց:

— Ատոնք ևս քէն կը բացատրեմ, հիմա ամենէն կարե-  
ւորը հոտիէ վար իջնելդ է, պատասխանեց պատանին, պէտք  
է խկոյն չուան մը ձարեմ... դուն քիչ մըն ալ համբերէ՛ ու  
մի լար, վայրկեանէ մը կուգամ:

Ու պատանին վազելով հեռացաւ: Զիւլէհա հիմա ա՛լ  
հանդարտ սրտով սպասեց իր բարեկամին վերադարձին: Պա-  
տանին կ'ուշանար սակայն: Զիհրու ոռնածայն մը կրկին խը-  
ռովեց մանկատախ աղջիկը, որ խկոյն իր նախկին դիրքը ա-  
ռաւ ու տարածուցաւ պատին վրայ: Այս անգամ ալ ձիաւոր

պահակներու խումբ մըն էր որ կ'անցնէր քառամբակ : Այդ պահնորդները իրենց ամենօրեայ գիշերային ու ցերեկեայ շք- ջաններուն մէջ բնաւ կասկածելի բանի մը կամ անձի մը չէին պատահած : Երբորզի անունը այնքան սոսկում կ'ազդէր որ ոչ ոք կը համարձակէր մօտենալ այդ պատերուն և ասոր համար պահնորդներն ալ մեքենաբար կը կատարէին իրենց պաշտօնը, շատ անփոյթ ու անուշադիր կերպով :

Հագիւ թէ ճիւղորները հեռացած էին՝ երբ Հասան երե- ցաւ : Պատանին այնքան վազեր էր ճամբան որ չհասապա- հասաւ պատին տակ :

— Ամէն բան ճարեցի, գոչեց լսօսքը մոնկատի աղջկան ուղղելով, միայն թէ չուս գործենք որպէս զի մարդ վրայ չը հասնի :

— Այո՛, պատասխանեց աղջիկը, մանաւանդ որ հեռուէն հեռու ձայներ կը բեմ պարտէղին մէջ և կը վախնամ որ զի- ւը փնտռեն :

Պատանին ծրար մը ուներ թեւին տակ զոր խփոյն բա- ցաւ և մէջէն բարակ չուան մը հանելով՝ որուն ծայրը խոշոր գամ մը կապած էր, զայն նեակեց աղջկան : Հասան չուանին ծայրին կապեց հաստ պարան մը որուն ծայրը հանգոյց մը շինած էր : Այդ հանգոյցին մէջ մուրճ մը անցուց և բուս .

— Հիմա չուանը քաշէ՛, մուրճով գամը հաստատ կեր- պով պատին գամէ՛, պարանը անցուցր գամին ու վար իջիր . . . Մի՛ վախնար ու ճարպիկութեամբ գործ տե՛ս . . .

Վայրկեանի մը մէջ պատանին պատուէրները գործադր- ուած էին և Զիւլէհա պարանին վրայէն վար կը սահէր հան- դարտիկ :

Հասանի համար ահուկի վայրկեան մը եղաւ այս : Մէկ կողմէ կը վախնար որ մանատի աղջնան ոյժը չի բաւեր ու պարանը թողլով գետին իյնար, միւս կողմէ ակնարկը սոս- կումով չորս կողմ կը չրջէր, տեսնելու համար թէ պահնորդ խումբ մը արդեօք յանկարծ երեւան պիտի ելլէ՞ր :

վերջապէս աղջիկը ոտքը դեաինը դրաւ :

— Հիմա շուտով փախչինք ու հեռանանք, ըսաւ պատանիին, կարծեմ որ խուզարկութիւնները սկսած են ներսը . . .

Ու երկուքը վազն ի վազ ճամբայ ինկան : Երբ բաւական հեռացան և իրենք զիրենք ապահովութեան մէջ զգացին, մանկատի աղջիկը ըսաւ իր բարեկամին :

— Հիմա պատմէ՛ տեսնենք թէ ինչպէ՛ս իմացար իմ պատին վրայ գտնուիլս ու օգնութեան հասար :

— Իրա՛ւ որ, պատասխանեց պատանին, ևս ալ չեմ գիտեր . . .

— Ինչպէ՞ս չես գիտեր, հարցուց աղջիկը իր գեղեցիկ աչքերը պատանիին վրայ յառելով :

— Այս առտու երբ Սիւլէյման աղայէն իմացայ Երլարդ փոխադրուիլի ու քեզ սպառնացող վտանգը, գրէթէ խեղքս կորնցուցի, պատասխանեց Հասան կարմրելով . իոկոյն վազեցի մեր ընկերներուն քով՝ առած անդեկութիւններս հաղորդելու : Անոնք ալ շատ յուզուեցան, բայց ճար մը չկրցան գտնել օգնութեան հասնելու : Տխրութեամբ մեկնեցայ ձէմալ պէյի բնակարանէն ուր մեր ընկերները հաւաքուած էին : Ինծի տնայէս կը թուէր որ քեզի արդէն չարչարանքներու մատնած էին ու այս մտածումը սոսկալի կերպով կը յուզէր զիս : Կուզէի օգնութեան հասնիլ, ճար մը գտնել քեզ ազատելու համար այդ դժոխքէն կամ գոնէ վիճակակից ըլլալու քեզի . . . :

Ու յանկարծ լերան կողմէն սկսայ վազել գէպի Երլարդ, առանց գիտնալու թէ ինչ պիտի ընէի . . . յուսահատութիւնը զիս ծայրայեղ միջոցներու կը մղէր : Եւ ահա ինքզինքս գտայ Երլարդի պարտէզները շրջապատող պատերուն տակ : Յուսահատ կատաղութեամբ մը այդ բարձր պատերուն կը նայէի չեմ գիտեր ի՛նչ տեսնելու կամ լսելու համար, երբ յանկարծ քու հեծեճանքդ լսեցի . . . մնացածը գիտես : Հիմա դուն ալ պատմէ՛ գլխուդ եկածները :

Աղջիկը իր կարդին պատմեց ինչ որ մենք արդէն գիտենք մանրամասնօրէն :

Երկու բնորեկամները իրենց ճամբան շարունակեցին լւրան կողմէ :

— Ո՛ւր պիտի երթանք հիմա , հարցուց աղջիկը :

— Նախ ձէմալ պէյի բնակարանը , մեր ընկերներուն քով պատասխանեց Հասան :

Երբ հասան Աւնալուաքէօյի բարձունքը զանուած բնակարանը Սաառք պէյ և իր երկու ընկերները տակաւին խորհրդակցութեան մէջ էին : Զիւլէհայի ազատուժը մեծ ուրաթութեամբ ողջունեցին ու մանրամասնօրէն պատմել տալին պատահած բոլոր անցքերը :

Եւ սակայն նոր մտաւանջութիւն մը և անձկութիւն մը իրենց միաքը պաշարեցին : Դեռատի աղջիկան անհետացումը Երլարզի պաղատէն բնականաբար մեծ յուզում պիտի պատճառէր Ապտիւլ Համիտի , որուն հետեւանքը պիտի ըլլար նորանոր խառութիւններ և հետապնդումներ :

— Գուցէ այս վայրկեանիս արդէն գտանի ոստիկաններն ու լրտեսները ամէն կողմ ցրուած են , գիտել տուաւ Սաի պէյ :

— Եւ եթէ Սաֆնազ հանրմ խօսի՝ այն ատեն մեր կացութիւնը շատ կը ծանրանայ , աւելցուց Սաառք պէյ :

— Նախ պէտք է այս երկու աղաքը ազատել ու անոնց վիճակը ապահովել , վճուեց Արիֆ պէյ :

— Այո՛ , բայց ինչպէ՞ս , հարցուց Սաի պէյ :

Երեք ընկերները ի զո՛ւր միջոց մը գտնել կ'ուզէին մանկատի աղջիկը փրկելու համար բռնաւորին ճիրաններէն : Անկարելի էր երկար ատեն զայն պահել ձէմալ պէյի բնակարանը , միեւնոյն ատեն շատ վտանգաւոր պիտի ըլլար զայն բնակարանէն հանել և ուրիշ տեղ փոխադրել : Զիւլէհա այլեւ ծանօթ դէմք մըն էր ոստիկանութեան համար , մանաւանդ որ աղջկան գեղեցկութիւնը այնքան տպաւորիչ էր որ անգամ



մը գոյն տեսնողը կարելի չէր որ մտնար : Պատանիին մասին այնքան մտաւանջ չէին : Հասան դու օձիքը ձեռք չէր տը-  
ւած ու անձանօթ մնացած էր , ուստի անմիջական վտանգ մը չէր սպառնար իրեն :

— Զիւլէհան Պոլսէն հեռացնելէ ուրիշ ճար չկայ , ըսաւ Սաարք պէյ :

Ո՛ւր կարելի է զրկել անանձին այս ազջիկը . . .

— Եգիպտոս , մեր ընկերներուն քով , թուրք ընտանիք-  
ներ կան որոնք հաճոյքով պիտի հիւրընկալեն զինքը :

Երեք բարեկամներն այս մասին համաձայնեցան : Զիւլէհա Եգիպտոս պիտի զրկուէր միջոցը գտնուելուն պէս : Պատանին որ ներկայ էր այս խորհրդակցութեան՝ արտութեամբ լսեց տրուած որոշումը , մանաւանդ որ խնդիրն իր բարեկամուհիին ապահովութեա նվրայ էր :

Իրիկունն ուշ տանն , երբ մութը կոխել սկսած էր ու տա-  
կաւին երեկ բարեկամները խօսակցութեան մէջ էին , Պիւր-  
հանէտօփն իշխանին մատակարարը , Սիւլէյման աղա , Եկա-  
ղաղանարար , ինչպէս առտուն իմացուցած էր Հասանի մի-  
ջոցաւ :

Ինզճ մարդը բոլորովին այլայլած երեւոյթ մը ունէր և զինքը տեսնելուն պէս երեք երիտասարդները հասկցան թէ խիստ ծանրակշիռ անցքեր տեղի ունեցած էին առտու ընէ ի վեր :

— Վայրկեան մը չունիք կորսնցնելիք , յայտարարեց Սիւլէյման աղա , ամենուզ ալ կեանքը վտանգի մէջ է . . .

— Ի՞նչ պատահեցաւ , պատմէ՛ տեսնենք , մենք մեր կեանքն արդէն սրամազրած ենք հայրենիքին համար , ըսաւ Սաարք պէյ :

— Այս առտու , շարունակեց Սիւլէյման աղա , ձեզ լուր զրկեցի որ Զիւլէհան ու Սաֆնազ հանըմը Երլտըզ փոխադր-  
ուած են հարցաքննելու համար : Արդ , Սուլթանը նախ ան-

ձամբ կը հարցաքննէ գալֆան և ամէն բան կ'իմանայ, այսինքն աղջկան անունը, ո՞վ ըլլալն և խուլ—համբ ձեւանալը։ Այս յայտնութիւնը լսելուն պէս, կը վազէ կանանոց, աղջկան խուցը բանալ կուտայ ու ներս կը խուժ...։

— Եւ կը տեսնայ որ թռչունը փախած է, ընդ միջեց Սաի պէյ խնդալով։

— Ինչպէ՛ս, Զիւլէհայի փախուստը գիտէ՞ք արդէն, գուցեց մատակարարը զարմացած։

— Այո՛, պատասխանեց Սաի պէյ, բայց դուն պատմութիւնդ շարունակէ՛։

— Կրնաք երեւակայել Սուլթանին վիճակը երբ աղջկան անյայտացումը կը տեսնայ, նախ վհատում մը, յուսահատութիւն մը կը ախրէ վրան, որուն կը յաջորդէ սոսկալի բարկութիւն մը, բարկութիւն՝ որուն նմանը երկար ատենէ ի վեր տեսած չէինք պալատին մէջ։ Կը հրամայէ որ փախստականը իսկոյն գտնեն ու բռնեն, միեւնոյն ատեն հարէմի բոլոր կիւները իրենց սենեակներուն մէջ բանտարկել կուտայ, իսկ Սաֆնազ հանրմը մինչև հիմա մարդ չի գիտէ թէ ի՛նչ եղած է կամ ո՞ւր կը գտնուի...։

— Իսկ աղջիկը գտնելու համար եղած խուզարկութիւններուն արդիւնքը բացատրական է, այնպէս չէ՞, հարցուց Սաի պէյ։

— Ո՛չ ձեր կարծածին չափ, պատասխանեց՝ մատակարարը լուրջ գէժքով մը։

— Ի՛նչ բնկ կ'ուզես...։

— Ըսել կ'ուզեմ որ աղջիկը ձեռք անցուած չէ սակաւին բայց հաւանորէն պիտի յաջողին զայն գտնել։ Իր փախուստին մասին կատարուած քննութիւնը շատ մը բաներ երեւան հանեց։ Նախ՝ գտան այն պարսնը որ ծառայած էր Զիւլէհան վար իջեցնելու իր սենեակի պատուհանէն։ Յետոյ գտան այն պ ըրիզպանի սանդուխը որով աղջիկը պատին վրայ բաձրա-

ցած էր ու յետոյ պատին միւս կողմը գտան նաև ուրիշ պարան մը, որով կրցած էր վար սահիլ ու անյայտ ըլլալ . . .

— Այդ առարկաները բարեբախտաբար լեզուն չունին որ խօսին, ընդմիջեց Սառը պէյ :

— Մտիկ ըրէ՛ք, շարունակեց Սիւլէյման աղա, պատին վրայ կախուած պարանին հետ կար նաև մուրճ մը և խոշոր գամ մը, որուն կապուած էր այդ պարանը : Այդ առարկաները անմիջապէս ցոյց արուեցան Պէշիկթաշ և Օրթաքէօյ գրտուած բոլոր խանութպաններուն և վերջապէս Օրթաքէօյցի թուրք մանրավաճառ մը որոշապէս յայտարարեց թէ այդ առարկաները նոյն առտուն ինք ծախած էր պատանիի մը որ հեւ ի հեւ եկած փնտռած էր զանոնք ու յետոյ վազելով հեռացած : Մանրավաճառը մանրամասնօրէն նկարագրած է պատանիին դէմքն ու հագուստը . . .

— Որոնք զարմանալի կերպով կը նմանին մեր Հասանին դէմինքին ու հագուստին, ընդմիջեց կրկին Սաի պէյ խընդալով

— Ճիշդ ևս ալ այդ մտածումն ունեցայ, ուրեմն չեմ սըխալած ենթադրով որ Զիւլէհայի փախուստին օգնողը նոյնինքն Հասանն է . . . և զուք ալ իրմէ իմացած էք իրողութիւնը, բայց աւելին կայ . . .

— Շարունակէ՛ տեսնենք :

— Սմէն կողմ ցրուած լրտեսները յաջողած են իմանալ որ պատանիի մը ընկերակցութեամբ լերան կողմէն հեռացեր է դէպի Առնաւուտքէօյի ուղղութեամբ. զիրենք ճամբան տեսնողներ եղեր են . . .

— Ահաւասիկ հիմա խնդիրը ծանրացաւ, ըսաւ Սաի պէյ մտահոգ դէմքով մը .

— Այո՛ և ճիշդ ասոր համար է որ ըսի թէ՛ աղջկան ձերբակալումը շատ հաւանական է : Ոստիկանութիւնն ու լրտեսները հիմակ սահմանափակ շրջանակի մը մէջ պիտի կրնան գործել. արգէն ամբողջ վերի կողմերը հսկողութեան առա-

նուսած են... իցիւ թէ աղջիկն ու պատանին յաջողած ըլլա-  
ցին անխտանդ Շիշի երթալ և հոն ապաստանիլ մեր ծանօթ  
տեղը, բայց կ'երեւայ որ այդ ուղղութեամբ չեն գացած, ու  
բովհետև Շիշիի ու Նշան Թաշիի կողմն ո՛չ ոք տեսած է  
զիրենք:

— Բնականաբար չսխալ կրնային տեսնել, քանի որ Զիւ-  
լէնա և Հասան հոս կը գտնուին, պատասխանեց Սաի պէյ:

— Ո՛ւր հոս, գոչեց մատակարարը ահաբեկ:

— Քովի սենեակը...

Սիւլէյման ազա նստած տեղէն վեր ցատկեց, անհնարին  
յուզման մը մասնուած:

— Բայց այդ մարդիկը կարող են այս կողմերու բոլոր  
բնակարանները խուզարկել, գոչեց:

— Ի՛նչ կրնանք ընել, միթէ կարելի՞ է զիրենք դուրս  
ձգել, պատասխանեց Սաի պէյ ինքն ալ վրդովուած:

Իրա՛ւ ալ անկարելի էր այդ բանը, միեւնոյն ատեն քա-  
նի որ փախտականներուն հետքը գտնուած էր շատ կը ծան-  
րանար իրենց կացութիւնը:

Սիւլէյման ազա պատրաստուեցաւ մեկնելու:

— Ա՛յ սերիշ հազորդելիք բան մը չունիմ, ըստ, ահա՛  
կացութիւնը, դուք խորհեցէք թէ ի՛նչ պէտք է ընել, գալով  
ինծի իմ վիճակս ալ սարսափելի է, եթէ Սաֆնալ խօսի՛ կոր-  
սուած եմ, ամբողջ յոյսս Պիւրհանէտաին էֆէնտիին վրայ է...  
եթէ յաջողի իր գալֆան ազատել Ապաիւլ Համիտի ձանկէն՝  
այն ատեն լա՛ւ, եթէ ո՛չ, գործս գէշ է...

— Միթէ Պիւրհանէտաին էֆէնտիին միջամտե՞ց իր գալ-  
ֆան ազատելու համար, հարցուց Սաի պէյ:

— Այո՛, բայց տակաւին արդիւնք մը չունեցաւ... միայն  
թէ զիտէք որ մեր էֆէնտին Սուլթանին սիրականն է և կրնայ  
ի վերջոյ յաջողութիւն մը ձեռք բերել:

Մատակարարը մեկնեցաւ ընկճուած ու վհատ կերպարան-  
քով մը:

Երեք ընկերները խսկոյն իրենց քով կանչեցին մանկատի աղջիկը ու պատանին և կացութիւնը պարզեցին անոնց, մի աս մի պատմելով Սիւլէշյան աղայի բերած տեղեկութիւնները :

— Վայրկեան մը աւելի կարելի չէ այլևս արտակ մնալ, եզրակացուց Սաի պէյ, թէ՛ դուք և թէ՛ մենք պէտք է հեռանանք այս բնակարանէն, նախ չվտանգելու համար մեր ճիւղընկալեալ բարեկամը՝ ձէմալ պէյը, երկրորդ մեր զլուխները աղատելու համար :

— Կառ ուրեմն կը մեկնինք, բոսու Հասան վճուարար, միայն թէ ձենէ պիտի խնդրեմ որ ինձի դրամ հայթայթէք :

— Դրամը խնդիր չէ, ուղածնիդ շափ կրնանք տալ, պատասխանեց Սաի պէյ, բայց ինչպէ՞ս պիտի յաջողիս ձեր օձիքը ազտակ . . .

— Պիտի փորձեմ և կը յուսամ որ պիտի յաջողիմ, բոսու պատանին ինքնավստահ շեշտով :

— Միջոց մը խորհած ես . . .

— Առտուքնէ ի վեր ատոր վրայ կը մտածենք ես ու Զիւլէհա և ծրագիր մը պատրաստեցինք այս մասին :

Երեք երիտասարդները զարմացմամբ իրարու երես նայեցան :

— Ի՞նչ է տեսնենք ձեր ծրագիրը, հարցուց Սաի պէյ :

— Գիտէք որ ձէմալ պէյի այս տան մէջ յոյն սպասուհի մը կայ . . .

— Այո՛, փոքրիկ էլէնին, ընդմիջեց Սաարք պէյ :

— Ընդհանրապէս : Այդ փոքրիկ էլէնին գրեթէ տարակից ու հասակակից է Զիւլէհայի . . . սրտեցինք որ Զիւլէհա էլէնիի հագուստները հագնի, գողնոցը կապէ, զլուխն ալ սեշտով մը ծածկէ ու ձեռքը կողովով մը տունէն դուրս ելլէ, իրր թէ նպարավաճառէն բան սունկու համար : Այս կերպով կարծեմ կրնայ անվտանգ մինչեւ շուկան իջնել ու անկէ ծովեկերքէն դէպի Պէպէք ուղղուիլ . . .

— Իսկ դո՞ւն . . . ի՞նչ կերպով պիտի ծախուիս . . .

— Ես պարզապէս անգլիական քեփի մը պիտի անցնեմ  
գլուխս ու վրայէս ալ խոչոր վերարկու մը պիտի հագնիմ . . .  
վերարկուն արդէն դուրսը պատրաստ է և շատ լաւ կը յար-  
մարի կոր ինձի . . . խուզարկութեան ելլողներուն մէջ զիս ան-  
ձամբ ճանչցող չկայ . Օրթաքէօյցի մանրավաճառին նկարագ-  
րութեամբը չեն կրնար զիս զիւրաւ ճանչնալ , մանաւանդ երբ  
գլխանոցս և հագուստս փոխած ըլլամ . . . :

Պատանին լռեց : Երեք բարեկամները իրարու երես նայե-  
ցան : Փախուստի այս ծրագիրը գէշ չթուեցաւ իրենց : Այդ  
տազնապալի կացութեան մէջ միջոցներու ընարութեան մա-  
սին դժուարահաճ չէին կրնար ըլլալ :

— Լաւ , ենթադրենք որ դուն ալ յաջողիս տունէն դուրս  
ելլել ու հեռանալ , ո՞ւր պիտի երթաս , հարցուց Սասըզ պէյ :

— Բնականաբար պիտի երթամ Զիւլէհան գտնելու , որուն  
հետ ժամադիր պիտի ըլլանք Պէպէքի ու Ռումէլի Հիսարի մի-  
ջև գտնուած գերեզմաննոցը :

— Իսկ անկէ ետքը . . .

— Անկէ ետքը Աստուած ողորմած է , պատասխանեց պա-  
տանին ամենայն լրջութեամբ , միայն թէ այս ծրագրին յաջո-  
ղութեան առաջին պայմանն է իսկոյն զայն գործադրել . . .  
վայրկեանները շատ թանկագին են :

— Լա՛ւ , ձեր ուղածին պէս ըրէ՛ք , պատասխանեց Սաի  
պէյ վճռաբար , իսկ գալով դրամին՝ ահաւասիկ .

Երիտասարդը թղթապանակը գրպանէն հանելով՝ երկու  
հատ հինգ ոսկինոց պանքնօթ տուաւ պատանիին . յետոյ զըր-  
պանը խառնելով բուռ մը արծաթ առաւ ու պատանիին կը-  
կարեց ու ըսաւ .

Ահա՛ , մանրուք դրամ ալ . . .

Հասանի ու մանկատի աղջկան յղացած ծրագիրը իսկոյն  
գործադրութեան դրուեցաւ և քաւորդ մը ետքը Զիւլէհան  
արդէն կը մեկնէր ձէմալ պէյի բնականաբանէն յոյն սպասու-  
հիին զգեստներովը ծպտուած ու թեւին տակ կողով մը առած

— Հիմա մեր զլխուն ճարը նայինք, ըսաւ Սաի պէյ :

— Դուն առանց վտանգի կրնաս մեկնիլ, պատասխանեց Սաարզ պէյ իր ընկերոջ, քանի որ տակաւին չես ձերբակալուած ու լրտեսներէն կամ սատիկաններէն ոչ ոք կը ճանչնայ քեզ :

— Բայց այս ատեն ո՞ւր կ'ուզէք որ կրթամ, ըսաւ միւսը մտտանջ դէմքով մը :

— Նաւակով Պէշիկթաշ գնա՛ ու հոնկէ կառք մը բռնելով վերադարձիր Շիշլի :

— Իսկ դո՞ւք...

— Մեզ մեր ճակատագրին թո՛ղ, ես ալ մեզի համար փախուտի ծրագիր մը պատրաստած եմ...

Սայի պէյ չհարցուվարձեց իր ընկերը և մեկնեցաւ ձէմադ պէյի բնակարանէն :

Թողունք որ հեռանայ դէպի Սոնալուա քէօյի նաւամատոյցը և մենք վերադառնանք Զիւլէհայի քով :

Մանկատի ազջիկը թեթև քայլերով իջաւ զառիվայրէն վար ու հասաւ շուկան առանց ուշադրութիւն գրաւելու : Իրա՛ւ է որ ճամբան մէկ քանի կասկածելի մարդոց հանդիպեցաւ որոնք իրեն նայեցան : Բայց իր սպասուհիի տարազը իր դերը լաւ կատարեց և ոչ ոք հետապնդեց զինքը :

Շուկային մէջ, ըստ Հասանի խորհուրդին, յոյն նպարավաճառէ մը պանիր, ձիթապտուղ, հաւկիթ և հաց մը գնելէ ետքը, ուղղուեցաւ քարափին վրայ և արագ քայլերով անցաւ սատիկանատան առջեւէն, ուր ո՛չ ոք ուշադրութիւն դարձուց իրեն : Ոստիկանները սովոր էին տեսնել այդ փոքրիկ յոյն սպասուհիները որ օրուան ժամերուն կ'երթեւեկէին իրենց աիրուհիներուն հրամանները կատարելու համար :

Հեազհետէ ճամբան կ'ամայանար և ազջիկը իր քայլերը կը փութացնէր : Մութը պատած էր ամէն կողմ ցուրտ հով մը կը փչէր Սեւ ծովի կողմէն :

— Կարծեմ վասնզր անցուցինք խորհեցաւ Զիւլէհա, այս կողմերը՝ բնաւ մարդ չեբեւար կոր, իբնց խուզարկու թիւնը կ'երեւայ որ լեռներուն կողմը կը կատարեն կոր... Իցիւ թէ Հասան ալ կարենար անտարդիլ հասնիլ մեր ժամու դրավայրը :

Պէտէքի ծովեղերեայ պարտէզին մօտ հասած էր արդէն, երբ մուրթին մէջ նշմարեց երկու անձեր որոնք դէպի իր կողմը կուգային :

Ազջիկը խտոյն քայլերը մեղմեց կասկածի չենթարկուելու համար ու ջանաց բոլորովին անտարբեր կերպարանք մը առնել :

Քիչ մը ետքը դէմ առ դէմ եկաւ երկու անձանօթներուն հետ :

— Կեցիր տեսնեմ, գօչեց անձանօթներէն մէկը :

Զիւլէհա թէև սարսուռ մը ունեցաւ, բայց խտոյն ինքզինք զսպեց ու իչեց Հասանի պատուէրները ու է անկնկալ հանդիպման մը պարագային :

Երկու անձանօթները ազջկան քով եկան :

— Ո՛ւր կ'երթաս, հարցուց մին :

— Տուն կը վերադառնամ :

— Որո՞ւն տունը...

— Էֆէնաթիս, միւսիւ Թոմարնին տունը պատասխանեց ազջիկը, կրցածին չափ յուշական հնչուժը կեղծելով :

— Այս ատեն ի՞նչ բան ունիս դուրսը...

— Միւսիւ Թոմարնին հիւր մը եկաւ ու շատեն, մատամը զիս զրկեց որ մէկ քօնի բաներ առնեմ նպարավաճառէն :

— Միթէ Պէսէք նպարավաճառ չի՞ կայ որ մինչև Առնափուտ քէօյ գացեր ես :

— Մեր նպարավաճառ Առնափուտ Քէօյ է, մատամը կ'ուզէ որ միայն անկէ առեւտուր ընեմ :

— Բայց սա կողովը, հրամայեց անձանօթը :



Աղջիկը բացաւ: Երկու անձանօթները ծոցեան ու մէջը եղածները քննեցին:

Չգէ' թող գործին երթայ, ըսաւ անձանօթներէն մին որ մինչեւ այն ատեն բերանը չէր բացած, ևս ըսի քեզի որ Պէպէք բնակող անգլխացիներէն մէկուն սպասուէին ըլլալու:

Աղջիկը շունչ մը առաւ, զգաց որ ազատած էր, բայց ճամբան շարունակելու փորձ չըրաւ որպէսզի կասկածի տեղի չտայ:

Միւս մարդը սակայն իր ընկերոջ խօսքերէն համոզուած չէր թուեր:

Անունդ ի՞նչ է, հարցուց:

— Էլէնի, պատասխանեց աղջիկը:

— Ո՞ր տեղացի ևս:

— Հայրս մայրս Առնապուտ Գէօյ կը նստին...

Մարդը վայրկեան մըն ալ վարանեցաւ, ուղեց ուրիշ հարցում մը ընել, յետոյ մէկէն ըսաւ.

Ճամբող գնա...

Զիւլէհա կամաց կամաց հեռացաւ: Երբ մարդիկը աննրեւոյթ եղան քայլերը փութացուց և վերջապէս հասաւ Պէպէքի նաւամատոցը: Երկէ անցնելով՝ գնաց թրքական գերեզմաննոցը և սկսաւ կամաց կամաց դէպի Ռոպէրթ Գոլէճ բարձրանալ:

Կէս ճամբան, ապառաժի մը տակ նստաւ ու սպասեց:

Սարսափելի ցուրտ մը կար և դեռատի աղջիկը կը զողզողար, այսուհանդերձ շատ երջանիկ կ'զգար ինքզինքը անվրտանդ մինչեւ հոն հասած ըլլալուն համար: Հիմակ միակ մըտաստանջութիւնն Հասանն էր ու անընդհատ աչքերը չորս կողմ կը պտտցնէր անոր զայլուստը տեսնելու համար:

— Հասան շատ ճարպիկ է, կը մտածէր, և անչուշտ պիտի յաջողի օձիքը ազատել:

Հետոն ստուերներ կ'երեւային ատեն ատեն, մանաւանդ Պէպէքի բարձունքը, որոնք կ'երթային ու կուզային: Աղջիկը

մտահողութեամբ կը դիտէր մութին մէջ շրջող այդ ստուերները որոնք հաւանօրէն փախստականները կը վնասէին :

Կէս ժամէ ի վեր ապառաժին տակ կծկուած էր Զիւլէհայի որ սեղանը որ գերեմաննոցին մէջանգէն դէպի վեր բարձրացող ճամբուն վրայ ստուեր մը կը յառաջանար , արագ արագ :

— Կարծեմ թէ Հասանն է , ըսաւ սրտատրոփ :

Ստուերը սկսաւ վազել դէպի վեր :

— Այո՛ , կասկած չկայ , ինքն է , մտածեց աղջիկը և ուրախութեամբ ոտքի ցատքելով՝ ընդ առաջ երթալ սկսաւ :

Արդարև եկողը Հասանն էր որ իր փոքրիկ բարեկամունին տեսնելուն պէս սկսաւ աւելի ուժով վազել :

Վայրկեանէ մը իրարու միացան :

— Փա՛ռք Աստուծոյ , ըսաւ աղջիկը ուրախութեամբ , անվտանգ կրցար հասնիլ . . . բայց ինչ<sup>օ</sup>ւ համար այսչափ ուշացար :

— Ուշացայ որովհետև հազար զգուշութեամբ կրցայ յառաջանալ , պատասխանեց պատանին ամէն կողմ կասկածելի մարդիկ լեցուած են և շատ կը վախնամ որ այս կողմերն ալ պիտի դան խուզարկութեան , եկած ատենս նշմարեցի որ Պէպէքի ծովեզերեայ պարտէզին ամէն ծակուծուկը կը պրպտէին . . . ջանանք այստեղ չկենալ և լաւագոյն ու աւելի ապահով պատասպարան մը գտնել :

Պատանին Զիւլէհայի ձեռքէն բռնելով շարունակեց վերելքը : Աղջիկը պատմեց ճամբան երկու անձանօթներու հանդիպումը և անոնց հետ ունեցած խօսակցութիւնը :

— Այդ մարդիկը ապահովաբար գաղանի ոտիկաններ էին վճռեց պատանին , բարեբախտաբար կրցերես զանոնք խտրել :

— Շնորհիւ քու սուած խրատներուդ , պատասխանեց աղջիկը :

Հասան պահ մը կանգ առաւ և շուրջը դիտեց . յետոյ փափսաց աղջկան ախանջին :

— Տե՛ս վարը, ծովափին մօտ, խուճբ մը մարդիկ որոնք գէպի գերեզմաննոցը կը յառաջանան...

Ազջիկը ցոյց արուած կողմը նայեցաւ :

— Այո՛, ըսաւ իր բարեկամին ձեռքը ուժգին սեղմելով այո՛, եղթը ութը հոգի են, արդեօք մե՞զ կը հայածեն :

— Ատոր տարակոյս չկայ...

Կարծես պատանին այս խօսքը հաստատելու համար փոքրիկ խուճբը գերեզմաննոցին մէջէն անցնող ու գէպի բարձունքը տանող ճամբան բռնեց .

— Աստուած իմ, հոս կուգան կոր, մրմնջեց ազջիկը, ինչ պիտի ընենք...

— Եկ՛ւր, ըսաւ պատանին իր բարեկամուհիին ձեռքէն քաշելով, մի՛ վախնար, հիմա դտայ մեր ապահով ապաստանարանը, միայն թէ ջանանք որ այդ մարդիկը մեզ չտեսնեն :

Երկու փախստականները արագ արագ իրենց վերելքը չարունակեցին և հասան Ռոպէրթ Քոլէճի պարտէզի մուտքին առջև :

— Մե՛զք, ըսաւ պատանին յուսահատօրէն, պարտէզին դուռը դոցուած է եզեր...

Յետոյ, կրկին Զիւլէհայի ձեռքէն բռնելով մտաւ այն մայառներուն մէջ որ ամերիկեան վարժարանին ընդարձակ պարտէզին ստորտար կը տարածուին :

— Գոնէ՛ այս կերպով անտեսանելի կը մնանք, մտածեց պատանին :

Բաւական քայլէ ետքը տեղ մը հասան ուրկէ ոտու մով մը կարելի էր Քոլէճին պարտէզը ելլել :

Հասան ուրախութեան ճիչ մը արձակեց .

— Վերջապէս ազատեցանք գոչեց .

Յետոյ, խոչոր քարի մը վրայ կլկլով՝ յաջողեցաւ դպրոցին պարտէզը մանկ :

Զիւլէհա հեռուեցաւ իրեն :

— Հիմա, ըսաւ պատանին, ամերիկեան հողի վրայ կը գանուինք ու Համիտի ոստիկաններն ու լրտեսները չեն կարող մեզ հալածել:

— Բայց եթէ վարժարանին մարդիկը մեզ այս տեղ տեսնեն, միթէ դիտողութիւն չգիտի՞ ընեն, հարցուց աղջիկը:

— Այդ մասին բնաւ երկիւղ մի՛ ունենար. պատասխանեց պատանին, երբոր մեր կացութիւնը պարզենք իրենց, ո՛չ թէ միայն դուրս չեն նետեր, այլ նոյն խակ կը պաշտպանեն ալ, բայց արդէն մէկը չերեւար պարտէզին մէջ, գիշերուան այս ժամուս ամէնքը պառկած ըլլալու են:

— Պատանին իր շուրջը իրենց գանուած տեղէն կրնար տեսնել ամբողջ այն դառիվեր ճամբան ուրկէ անցած էին քիչ մը առաջ:

— Տե՛ս, տե՛ս, ըսաւ, ըսաւ ձեռքը երկարելով, ա՛հա՛ դէպի մեզ եկող մարդիկը որոնք գերեզմաննոցին մէջ ցրուած են մեզ փնտռելու համար... խեղճերը քիչ մը ուշ մնացին:

— Ամէն պարագայի մէջ լաւ կ'ըլլայ որ հեռանանք այս տեղէն, դիտել տուաւ աղջիկը, կրնան մեզի նշմարել...

— Եսնիսկ եթէ նշմարեն չեն կրնար ճանչնալ, ասկէ զատ ըսի քեզի որ հոս ապահովութեան մէջ ենք, այսուհանդերձ լաւ կ'ըլլայ որ երթանք տեղ մը ճարինք ցուրտէն պատրաստուելու համար, մինչեւ որ լուսնայ:

Երկու ընկերները պարտէզին մէջ առդին անդին պտտելէ վերջը, հասան մարմնամարդանը, որուն քով մթերանոց մը կար:

— Ահաւասիկ մեր այս գիշերուան պանդոկը, ըսաւ պատանին զուարթութեամբ, միայն թէ տեսնենք որ դուռը բաց էր...

Բարեբախտաբար դուռը բաց էր. պատանին աչք մը պտտուց մթերանոցին մէջ և տեսաւ որ ո՛չ ոք կար հոն: Միայն հին կարասիներ, փայտեր ու պարսպ անտուկներ ու տակառներ լեցուած էին մէջը:

— Կարծեմ թէ գիշերը այստեղ հանդիստ կրնանք անցնել, ըսաւ իր բարեկամուհիին զայն մթերանոցէն ներս մացրնելով. թէև Երլաբղի պալատին մէջ ընտկելու վարժուողի մը

համար այստեղը քիչ մը անյարմար է, բայց ինչ և է, մարդ  
գտածովը գոհանալու է...

— Ես հազար անգամ աւելի կը նախընտրեմ այս մթե-  
րանոցը երլորդի պալատէն, պատասխանեց աղջիկը ինդալով  
թէ և կակուզ անկողններ չունինք՝ բայց հանդարտ սրտով կըր-  
նանք քնանալ:

Երբ գէշ ազէկ տեղաւորուեցան մթերանոցին մէջ, զգա-  
ցին որ փորերնին չափազանց անօթեցած էր: Բարերախտա-  
բար կողովը միասին էր, որուն մէջ, ինչպէս գիտենք բաւա-  
կան ուտելիք կը գտնուէր:

— Ճաշենք ու յետոյ հանգստանանք, ըսաւ պատանին  
ուտելիքները կողովէն դուրս հանելով:

Պատանին ու մանկատի աղջիկը, օրուան մեծամեծ յու-  
ղումներէն ետքը, այլեւս իրենք զիրենք ապահովութեան մէջ  
զգալով լափեցին իրենց ուտելիքները:

Հասան բոլորովին երջանիկ էր, նախ Զիւլէհան բունաւո-  
րին ճանկէն ազատած ըլլալուն և յետոյ զայն իր մօտը ունե-  
նալուն համար:

---

Գ Լ Ո Ւ Խ Դ Գ.

## Յ Ո Ւ Ս Ա Լ Ի Յ Լ Ո Ւ Ր Ե Ր

Մեր պատմած դէպքերուն վրայ մէկ քանի օրեր անցած  
էին: Ապտիւլ Համիտ հակառակ իր անլուր ջանքերուն՝ կա-  
րող չէր եղած ձեռք անցընել իր դէմ դաւադրողները: Ոստի-  
կանութիւնն ու լրտեսները օրերով ամբողջ Վոսիորի գիւղերը

մանրակրկիտ խուզարկութիւններ կատարած էին, բայց չէին կրցած փախստական աղջկան և պատանիին հետքը գտնել: Բռնաւորը այն ժամանակ իր ամբողջ բարկութիւնը թափած էր Սաֆնազ գալֆայի գլխին և նոյն իսկ ուղած էր զայն տանջանքներու ենթարկել, բայց Պիւրհանէտտին իշխանին ազդու միջամտութիւնը այդ ծայրահեղութեան առաջքն առաւ: Ապա տիւ Համիտ այնքան կը սիրէր իր գաւազը որ չի կրցաւ անոր ազաջանքներուն դիմադրել, մանաւանդ որ Սաֆնազ հանրմիրեն եղած ամէն հարցումներուն մի առ մի պատասխանած էր առանց գժուարութեան: Ի վերջոյ Ապաւիւ Համիտ սա համոզումը գոյացուցած էր թէ՛ իր գաւակին գալֆան եթէ այդ մանկատի աղջիկը պաշտպանած էր ո՛չ թէ մեղսակից մը ըլլալուն համար էր, այլ պարզապէս անոր գեղեցկութենէն հրապուրուելով ու անոր կապուելով: Սաֆնազ հանրմին տեղ ուրիշ մը անշուշտ չա՛տ սուղ պիտի վճարէր այսպիսի համակրանք մը, բայց, ինչպէս ըսինք, Պիւրհանէտտին իշխանին շնորհիւ, ինզիրը անոյշ տեղը կապուեցաւ, թէև գալֆան բուրովին կորսնցուց իր նախկին դիրքն ու ազդեցութիւնը:

Երբ սասիկանական հարցապնդումները քիչ մը մեղմացան մեր բարեկամները որոնք իրենց թաքստոցներուն մէջէն դուրս չէին ելլեր, համարձակեցան կրկին երեւան գալու: Ամէնէն առաջ, առաւ մը, Սաի պէյը դուրս ելաւ իր Ծիչլիի բնակարանէն, երթալ տեսնելու համար Ծաթման որ մօտերը հեղէնահարստակ ընտանիքի մը տունը կը գտնուէր:

Պառաւը մեծ ուրախութեամբ ընդունեց իր բարեկամը.

— Վերջապէ՛ս, ըսաւ զիրար կրկին տեսանք:

— Ի՞նչ լուր ունիս, հարցուց Սաի պէյ, ես հինգ օրէ ի վեր դուրսի հետ յարաբերութիւններս խզած էի և մէկու մը երեսը չեմ տեսած, չ՛ուա խօսէ տեսնենք:

Իրենց մէջ այնպէս կարգադրած էին որ պառաւ Ծաթման իբրև միջնորդ կը ծառայէր իրարու տեղեկութրւն փոխանակելու համար: Ասկէ զատ նամակներուն մեծ մասն ալ իր հասցէին կուգային, ապահով միջոցաւ մը:

- Աղէկ և գէշ լուրեր, պատասխանեց Ֆաթմա :
- Նախ՝ գէշ լուրերը հաղորդէ, ըսաւ Սաի պէյ, անոնք աւելի կարեւոր են, ապէկ լուրերը ետքն ալ կրնանք լսել :
- Շատ մտառանջութեան մէջ եմ Զիւլէհայի ու Հասանի մասին որոնք մինչև այս վայրկեանիս կենդանութեան նշան ցոյց չառին . . . ես կը սպասէի որ Հասանը կամ անձամբ և կամ մէկումը միջոցաւ լուր մը կը զրկէր : Չեմ գիտեր թէ ինչ եղան, ո՛ր կը գտնուին, ձեր քովէն մեկնելէն ետքը :
- Կը կարծե՞ս որ ձերբակալուած ըլլան . . . :
- Միակ վախս այդ է : Անհամբեր կը սպասեմ Սիւլէյման աղային որպէսզի տեղեկութիւն մը առնեմ, բայց ան ալ չերեւար : Այդ տղաքը ո՛ր սպաստանած կրնան ըլլալ օրերէ ի վեր . . .
- Ես կը յուսայի զիրենք հոս գտնել, պատասխանեց Սաի պէյ դառնութեամբ . ասիկա մեծ յուսախարութիւն մը եղաւ . . . : Իսկ գայով մեր միւս ընկերներուն, տեղեկութիւն մը ունի՞ս իրենց մասին :
- Սաարզ պէյը լուր զրկած է որ այս առտու անպատճառ պիտի գայ, իսկ Արիֆ պէյը գիտեմ որ ապահով տեղ մը կը գտնուի :
- Փա՛ռք Ասաուծոյ ուրեմն, գոչեց Սաի պէյ : Ուրիշ ի՞նչ գէշ լուրեր ունիս :
- Բանակի երխտասարդ սպաներուն դէմ հալածանքը սկսած է, շարունակեց պառաւը, հինգ օրէ ի վեր քսանէ աւելի ձերբակալութիւններ կատարուած են Պոլսոյ մէջ . ասկէ զատ զինուորական վարժարանի ուսանողներն ալ կրկին խիստ քննութեան մը ենթարկուած են և իրենցմէ շատերուն սուներ խուղարկութիւններ եղած են : Երէկ հարիւրապետ Սէլիմ պէյը եկաւ և շատ տխուր լուրեր տուաւ :
- Եւ այդ սպաները թոյլ կուտան որ զիրենք այսպէս մէկիկ մէկիկ բռնին ու բնաջի՞նջ ընեն, ո՛ր եւ է ըմբոստական շարժում չկա՞յ մէջերնին :

— Ափաս՛ս, հառաչեց Ֆաթմա, Սէլիմ պէյ կ'ըսէ թէ Պոստէն յոյս չկայ բնաւ, զինուորները եւ ստորադաս սպաները կուրօրէն կ'ապուած են իրենց փառիշահին, իսկ մեծ պետերը գրեթէ ամենքն ալ Համիտին լրտեսներն են եւ դրամի ու փառքի համար ամէն բան կ'զոհեն իրեն... մեր ամբողջ ջանքը Պոստյ մէջ զինուորական շարժում մը յառաջ բերելու համար, անօգուտ է... աւասիկ Սէլիմ պէյի գաղափարը:

— Եւ մենք որ այնքան յոյս դրած էինք մեր Պոստյ գործունէութեան վրայ, հառաչեց Սաի պէյ:

— Գժբախտաբար ժամանակ չունեցանք դադանի փրփականալը յառաջ տանելու այստեղ, Հազզը պէյի ձերբակալումը եւ անոր յաջորդող գէպքերը բոլորովին մեզ զինաթափ ըրին եւ յետոյ Սելանիկի ու Իւսկիւպի եղելութիւնները բոլորովին Համիտի կասկածները արթնցուցին...:

— Այո՛, այնպէս որ եթէ մեր Բուժէլիի բանակները ժամ առաջ չգործեն, ա՛լ ամէն բան կորսուած է:

— Միակ յոյսերնիս այն է, ըսաւ Ֆաթմա:

Վայրկեան մը լուսթիւն տիրեց երկու խօսակիցներու միջեւ որոնք շատ տխուր սպաւորութեան մը տակ էին:

— Կը յուսամ որ ալ գէշ լուրերդ լինցաւ ըսաւ Սաի պէյ, հիմա սա աղէկ լուրերդ հազորդէ տեսնենք:

— Աղէկ լուրերս հեռուէն կուգան, պատասխանեց Ֆաթմա, Իւսկիւպի մեր քաջ ու անձնուէր ընկերներէն:

— Նամա՞կ ստացար արդեօք, հարցուց Սաի պէյ որուն աչքերը շողացին:

— Այո՛, Սալիհա հանրմէն համակ մը, տհաւասիկ:

Պառաւը իր կուրծքէն հանեց ծաղկած թուղթ մը եւ երկարեց Սաի պէյի որ գալն փութկոտ շարժումով մը առաւ, բացաւ եւ սկսաւ հետաքրքրութեամբ կարդալ:

Միւրեկի ընկերներ, կը գրէր Սալիհա, ամէն բան յաջող է եւ մեր մասին մտատանջ մի՛ ըլլաք: Առաջին համակովս պատմեցի արդէն Սելանիկի անցքերը եւ յետոյ, Իւսկիւպի կայա-



րանէն մեր փախուսար: Անկէ ի վեր մեր փոքրիկ խումբը հե-  
ազհետէ բազմացաւ, եւ այժմ երեսուն հոգի միացած ենք ու  
տեսակ մը յեղափոխական կառավարութիւն կազմած: Մեր  
թիւը շատ աւելի պիտի բազմանար, բայց մենք չուզեցինք որ  
բոլոր այժիրը այժմ մեր քով հաւաքենք, քանի որ անոնք  
կրնան աւելի օգտակար ըլլալ իրենց պաշտօնին վրայ մնալով:  
Ժողովուրդը ամբողջ մեզի հետ է, եւ ամէն կողմ օժանդա-  
կութիւններ կը հասնին եւ ո՛ր գիւղ որ իջնենք գրկաբաց կը  
ընդունուինք: Մեր Ալպանացի հայրենակիցները մասնաւանդ  
խանդավառութեամբ են եւ պատրաստ են իրենց արիւնը թափե-  
լու ազատութեան յաղթանակին ու բնաւորութեան տապալ-  
ման համար:

«Կանոնաւոր յարաբերութիւն հաստատած ենք մեր Սե-  
րանիկի, Իւսկիւպի, Մանասղրի եւն. ընկերներուն հետ, ինչ-  
պէս նաեւ Եւրոպայի հետ: Կառավարոնթիւնը մեզ հետապըն-  
դելու եւ ձերբակալելու համար մէկ քանի տկար փորձեր ընելէ  
հոքը բոլորովին հրաժարեցաւ այդ ձեռնարկին, որովհետեւ տե-  
սաւ որ բացարձակապէս անկարելի է: Եւ եթէ յամառի մեզ  
հարածելու, ընդհանուր ապստամբութիւն յառաջ պիտի գա՞  
թի՛ բանակին եւ թէ ժողովրդին մէջ: Այժմ մեր հրամանները  
շատ աւելի եռանդով կը գործադրուին քան կառավարութեան  
հրամանները: Վստահ եղէք որ քանի մը ամիսէն պիտի կր-  
նանք ընդարձակ շարժում մը յառաջ բերել:

«Մեր միակ երկիւղը այն է որ Ապաիւլ Համիտ ծայրա-  
յեղ միջոցներու կը դիմէ եւ բանակին մէջ դատուող յեղափո-  
խական այժիրը միահամուռ կը ջախջախէ: Ասոր առաջքը  
առնելու համար հարկ է որ իր ուշադրութիւնը ուրիշ կողմ  
գարծնենք եւ ժամանակի մը համար մեզ մոռցնել տանք: Այս  
նպատակին համարելու իբրեւ միջոց մենք որոշեցինք որ այդ  
տեղ ու եւ է յեղափոխական գործունէութիւն մը, մահախորձ  
կամ պոմպայի պայթում, կատարուի, որպէսզի Համիտ մեր  
օձիքը ձգելով իր ուշադրութիւնը Պոլսոյ մէջ կեդրոնացնէ:»

«Միրելի ընկերներ, ձեռնէ կ'ապասենք որ այսպիսի դործունէութեան մը ձեռնարկէք որչափ կարելի է շուտ: Գուք կրնաք ձեր մէջ որոշել թէ ի՞նչ կերպով պիտի պատրաստէք ձեր ցոյցը, միայն թէ հարկ է որ անիկա ուժգին բան մը ըլլայ եւ կարենայ Համիտի սարսափ պատճառել:

«Նոյնպէս ձեռնէ կը խնդրենք որ անյատաղ մեր մօտ դրկէք Ֆաթմա հանրմը, որ այլեւս Պոլսոյ մէջ օգտակար չի կրնար ըլլալ, քանի որ վտանդուած է ու ոտախկանութեան կողմէ կը փնտռուի: Հոս շատ պէտք ունինք իրեն մեր ընկերներուն հետ յարաբերութեան մէջ Վանսելու համար, որովհետեւ մեր գործունէութեան չըջանալը հետզհետէ կ'ընդարձակուի եւ օրէ օր հաւատարիմ ու փորձուած անձերու պէտքը կը շատնայ: Նոյնիսկ Հատանը շատ օգտակար պիտի ըլլար մեզի, եթէ կարենայիք զրկել, սակայն գուցէ անոր պէտք ունիք Պոլսոյ մէջ:

«Քաջասիրտ եղևք ու անվեհեր գործեցէք եւ մանաւանդ մի՛ յուսահատիք: Մեր սուրբ նպատակին պիտի հասնինք քիչ ատենէն»:

Այս նամակին ընթերցումը բոլորովին ցրուեց Սաի պէյ տխուր արամադրութիւնը եւ խանդավառութեամբ գոչեց.

— Կեցցե՛ն մեր քաջ ընկերները:

— Ի՞նչ կ'ըսես իմ մասին գրուածներուն, հարցոյց Ֆաթմա:

— Կատարելապէս համամիտ եմ, այո՛, դուն հոս այլեւս այնչափ օտակար չես կրնար ըլլալ որքան հո՛ն, Սալիհա հանրմին քով. միջոցը գտնելուս պէս քեզ ճամբայ կը հանենք:

— Բայց ինչպե՞ս կրնամ երթալ, հոս առանձին թողով Զիւլէհան...:

-- Գուցէ մինչեւ ճամբայ կլելու վայրկեաննիդ զինքը կը գտնենք:

— Եւ այն ատե՛ն...:

— Այն ատեն զինքն ալ միտաին կը տանիս: Ամէն պարագայի այդ ազջկան համար չես կրնար քու պարտականու-

թենէդ ետ մնալ : Ամէն բանէ առաջ մենք ուխտած ենք մեր  
հարկերէն նուիրուիլ ու ամէն բան անոր զոհել :

— Ճիշտ է, պատասխանեց Փաթմա վճռարար :

Նոյն միջոցին Սաաբգ պէյ ալ եկաւ միացաւ իրենց :

Նախկին խմբագիրը երբ կարդաց Սալիհա հանրմի նա-  
մակը՝ բողբոլի մտցաւ իր մասասնջութիւնները և օրերէ ի  
վեր իր վրայ ախրած յուսախաբութիւնը սեղի տուաւ խան-  
դալաւ սղեորութեան մը :

— Իսկոյն պէտք է գործադրել իր ըսածները, գոչեց,  
կրք մեր ընկերները իրենց անձը մահուան ենթարկելով խիզա-  
խօրէն կը գործեն ու ազատութեան յաղթանակը կը պատ-  
րաստեն, մեզի համար ամօթ է անգործ մնալ : Այո՛, շատ  
իրաւունք ունին մեր ընկերները, պէտք է այստեղ, Ապաիւլ  
Համիտի քիթին տակ, ու և է գործողութիւն մը, ցոյց մը  
կազմակերպել որպէս զի իր ուշադրութիւնը հոս լարուած  
մնայ և ձգէ Բուսէլիի բռնակլին օձիքը, որուն վրայ յառած  
է իր դիւային աչքերը : Իսկ գոյով Փաթմային, այդ մասին  
ալ կատարելապէս համամիտ եմ, հարկ է որ զինքը հոն զըր-  
կենք, քանի որ պէտք ունին իրեն, հոս այլեւս մեզի օգտա-  
կար չի կրնար ըլլալ . . . :

— Բաւական դժուար է սակայն ներկայ դրութեան մէջ  
զինքը Պոլիսէն փախցնել, զիտեղ տուաւ Սաի պէյ :

— Դրամը ամէն բան կը դիւրացնէ և փա՛ւք Սաաուծոյ,  
սակաւին քովերնիս պէտք եղածին շափ դրամ կայ :

— Ի՞նչ միջոց կ'առաջարկես Փաթման ապահով կերպով  
մինչև Սեկանիկ հասցնելու համար :

— Այդ մասին ձեզի որոշ պատասխան մը կուտամ այս  
իրիկուն իսկ, ըսաւ Սաաբգ պէյ. հիմա, անմիջապէս այդ  
խնդրով պըտի դրազիմ . . . Սալիհայի նամակը այնպիսի յոյս  
ու քաջութիւն ներշնչեց ինձի որ ինքզինքս կարող կը զգամ  
կոր ամէն բան ընելու : Դուք հոս ինձի սպասեցէք, քանի մը  
ժամէն կը վերադառնամ, իսկ դուն Փաթմա հանրմ, պատա-

ընտա գանուէ՛ , որպէս զի հարկ եղած ատենը խոխոն կարև  
ընեսա մեկնիլ :

— Ձանա որ անխոհմութեամբ օծիքդ ձեռք չտաս ,  
խրատեց Սաի պէյ որ երկէջդ կը զգար սեանելով իր բարև  
կամին չափազանց եռանդն ու խանդաւառութիւնը :

Նախկին խմբագիրը , առանց պատասխանելու իր բարև  
կամին զխտոզութեան , աճապարանքով մեկնեցաւ Յաթմայի  
ընակարանէն ,

Երիտասարդ յեղափոխականը սին պոռոտախօսութիւն մը  
չէր ըրած ըսելով թէ Յաթման փախցնելու միջոց մը պիտի  
գտնէր անմիջապէս : Կառք մը նստելով ուղղակի Ղալաթիս  
իջաւ և Մումհանէի կողմը յունական սրճարան մը մտաւ , ուր  
ընդհանրապէս կը հաւաքուէին նաւազներ ու առաջատաւ  
նաւերու կամ փոքրիկ յունական շոգենաւներու նաւա  
պիաներ :

Սաորք շխտակ սրճարանին ախրոջ մօտեցաւ և ցած ձգ-  
նով հարցուց .

— Նիքօլին հո՞ս է :

— Դուրս ելաւ , հիմա կուգայ , պատասխանեց սրճարա-  
նին աէրը , նստեցէք և գալուն պէս ձեր քովը կը գրկեմ :

Սաորք պէյ սուրճ մը ապսպրեց և անկիւն մը քաշուե-  
լով սպասեց :

Նիքօլին հին ծանօթ մըն էր իրեն որ բաւական ծառա-  
յութիւններ մատուցած էր , բնականաբար նիւթական վար-  
ձատրութեան մը փոխարէն : Իր գործն էր մտրդ փախցնել և  
ատոր համար ամբողջ կազմակերպուած խումբ մը ունէր իր  
տրամադրութեան տակ : Քարափին վրայ , շոգենաւներու կը-  
նարաններուն քով պահակ սպասող բոլոր ստախկաններն ալ իր  
ձեռքին մէջն էին և մէյ մէկ տակի նուէրի փոխարէն թող  
կուտային որ ուզած մտրդը , առանց անցազրի , շոգենաւ  
դնէ : Բացառիկ հակոզութիւններու ժամանակ Նիքօլի գործը  
թէև կը դժուարանար , սակայն դարձեալ կը յաջողէր յա-

ճախ: Իրեն համար որոշ սակացոյց մը շինած էր, որուն համեմատ դրամ կ'առնէր գող մը, հրձիգ մը, ոճրագործ մը, մնանկ մը, զեղծարար մը կամ յեղափոխական մը փախցնելու համար: Այդ ճորպիկ Յոյնին գլխաւոր յատկութիւնը այն էր որ երբեք չէր մատնէր իրեն վստահուած մէկը, որչափ ալ վստահ ըլլար թէ զայն մատնելով շատ աւելի մեծ վարձատրութիւն մը պիտի ստանայ քան թէ փախցնելով: Միայն թէ կը պահանջէր որ անկեղծութեամբ վարուին իրեն հետ, յեղափոխական մը իրրեւ զօղ, կամ ոճրագործ մը իրրեւ մնանկ հերկայացնեն իրեն. Նիքօլի մէկ տարօրինակութիւնը այն էր որ սիրային խնդիրներով վստահուած և ծածկարար փախչելու պօրաւորուած երխաւորներէն կամ աղջիկներէն բնաւ դրամ չէր ստանար, ձեռքէն եկած ամէն օժանդակութիւնը ընծայելով հանդերձ:

Սաաբգ պէյ հազիւ թէ իր սուրճը աւարտած սիկառէթը կը ծխէր, երբ Նիքօլի մօտեցաւ իրեն: Սովորական բարեւտութէն ետքը, երխաասարզը զայն իր քով նստեցուց և կամայ մը ըսաւ.

— Նոր ծառայութիւն մը պիտի խնդրեմ քննէ:

— Ըսէ՛ք տեսնեմ եթէ ըլլալիք բան է, գլխուս վրայ:

— Կին մը կայ զոր պէտք է փախցնես անմիջապէս:

— Սիրային խնդիր է...

— Չէ, պառաւ կին մըն է, թուրք յեղափոխական կին

մը:

— Թո՛ւրք կին մը և յեղափոխական միւսնոյն տանն, չիտակը քիչ մը դժուար խնդիր է այդ: Ոստիկանութեան հետ գործ ունեցած է:

— Այո՛, ոստիկանութիւնը զինքը կը ճանչնայ, անգամ մը ձերբակալուած ու յաջողած է փախչիլ, ասկէ մէկ քանի շաբաթ առաջ, անկէ ի վեր, ոստիկանութիւնը խուզարկութիւններ կը կատարէ իր հետքը գտնելու համար...

— Բայց շահ ծանրակշիռ բան է այդ : Այժմ ո՞ւր կը գտնուի :

— Շիշլիի կողմը , յոյն ընտանիքի մը քով : Նիքօլի , պէտք է որ այս կինը փախցնես Պոլսէն . . . քեզի քսան ոսկի կայ , տասը ոսկին հիմա կանխիկ է և տասն ալ ճամբայ կլեւէն հաքը :

Ըստ Նիքօլիի սակացոյցին՝ յեղափոխական մը տասը ոսկիով կը փախցուէր և ահա՛ երիտասարդն անոր կրկինը կ'առաջարկէր : Յոյնը սկսաւ մտածել :

— Եթէ հարկ ըլլայ՝ Եւրոպացի կնոջ մը պէս կը ծըպտուի՞ , հարցուց :

— Սնչուչա , ինչպէս որ յարմար դատես , այն ձեւով կրնայ ծպտուիլ :

— Լա՛ւ , ըսաւ Նիքօլի , դինքը շոգենաւ մը կը նետենք :

— Միայն թէ այդ կինը Սելանիկ պիտի երթայ անպատճառ , դիտել տուաւ երիտասարդը :

— Սելանիկ , գոչեց յոյնը զարմացած , ասկէ պիտի փախչի՞ ու Սելանիկ պիտի երթայ . . .

— Այո՛ , պէտք է որ հոն երթայ , պատասխանեց Սատըք պէյ :

— Գիտէ՞ք որ իմ դործս փախստականներն ապահով կերպով շոգենաւ դնել ու ճամբայ հանել է , անկէ հտքն ա՛լ պատասխանատու չեմ : Եթէ կ'ուզէք դինքը Սելանիկ գացող շոգենաւ մը կը դնեմ , բայց եթէ այնտեղ դուրս ելած միջոցին ձերբակալուի , մեզքը ձեր ճիւղը :

Երիտասարդը զգաց որ շատ ուղիղ էր Յոյնին դիտողութիւնը , մանաւանդ որ այդ միջոցին Սելանիկ հասնող շոգենաւերուն վրայ արտաքոյ կարգի հսկողութիւն ի գործ կը դրուէր : Պահ մը մտածելէ հաքը , ըսաւ .

— Նիքօլի , դուն խկացի ու ճարպիկ մարդ մըն ես և այս գործերուն մէջ մեծ փորձառութիւն ունիս , մտածէ՛ , ճար մը գտիր ու սա կինն անվտանգ Սելանիկ ցամաք հանել տուր

...քեզի հինգ ոսկի ալ բացառիկ նուէր կ'ընեմ այն օրն ուր լուր գայ թէ կինը կրցած է իր տեղն հասնիլ :

Նիքօլի չպատասխանեց և խոր մտածութեան մը մէջ թաղուեցաւ , յայտնի կը տեսնուէր որ մտքին մէջ ճար մը կը փնտռէր իրեն ևզած առաջարկն յաջողցնելու և խոստացուած նուէրն զրպանելու համար : Աչքը պտտուց սրճարանին մէջ նստողներուն վրայ և ակնարկը պահ մը սևեռելէ ետքը , յանկարծ ոտքի ելաւ ու ըսաւ .

— Դուք հոս նստեցէ՛ք և սպասեցէ՛ք , հիմա կուգամ :

Սաարը պէյ տեսաւ որ Նիքօլի դիմացի կարգը սեղանի մը քով առանձին նստած՝ արևառն մօրուքով երկայնահասակ մէկու մը մօտեցաւ ու անոր հետ խօսակցութեան բըն-նուեցաւ : Այդ խօսակցութիւնը կէս ժամի չափ տևեց , յետոյ Յոյնը վերադարձաւ երիտասարդին քով :

— Կարծեմ թէ գործերնիս յաջողեցաւ , ըսաւ զուարթ դէմքով մը :

— Ինչպէ՞ս , հարցուց Սարք պէյ հետաքրքիր :

— Այն մարդուն հետ տեսնուեցայ առազատասանաւի մը նաւապետն է և վազն առաւ իսկ պիտի մեկնի դէպի Սևրանիկ ու անկէ ալ Վսրս : Ճամբորդութիւնը թէև քիչ մը երկար կը տևէ այս ձեւով , բայց աւելի ապահով է , առազատասանաւերուն վրայ գրեթէ հսկողութիւն չի կատարուիր և նաւապետը խոստացաւ իրեն հետ ցամաք հանել կինը . . .

— Վստահ ես այդ մարդուն վրայ հարցուց երիտասարդը :

— Բախթան Մարքո՞ն . . . Ի՛նչ կ'ըսես , պատուական մարդ է , իմ անձէս աւելի վստահ եմ իրեն , արդէն առաջին անգամ չէ որ այսպիսի դժբեր կը տեսնայ : . . մեր խումբին կը պատկանի :

— Լաւ ուրեմն , ահաւասիկ կանխավճար սասը ոսկին , ըսաւ երիտասարդը դրամը համրելով Նիքօլիի ձեռքին մէջ ,

հիմա ըսէ՛ տեաննք թէ կինը երբ և ի՞նչպէս պիտի փոխադրենք նաւը :

— Այդ հոգը ինծի թողէք, միայն լաւ մտիկ ըրէք ըսելիքներուս : Առագաստսանաւը թէև վաղը առտու արշալոյսին պիտի մեկնի, բայց կինը պէտք է որ այս իրիկուընէ հոն փոխադրուի :

— Շատ աղէկ, ինք պատրաստ է արդէն :

— Ուրեմն շուտով վերադարձէք իր մօտ և ըսէք որ թո՛ղ Սաքըզցի պառաւ յոյն կիներու տարագովը ծպտուի, քանի որ յոյն ընտանիքի մը տան մէջ կը գտնուի անոնք իրեն դիւրաւ ցոյց կրնան տալ ամեն բան :

— Այդ ծպտումը անմիջապէս կ'ընենք. իսկ յետո՛յ :

— Յետոյ, իրիկուան դէմ ես մէկը կը գրկեմ իր գանուած տունը և անոր ընկերակցութեամբ այս սրճարանը կուղայ, անկէ ետքը ալ դիւրին է :

Երիտասարդն իր գործը լրացուցած էր, ուստի ոտքի կլաւ և Նիքօլիի ձեռքը թօթուելով՝ ուրախ զուարթ մեկնեցաւ, այսքան շուտ և այսքան լաւ կերպով յաջողելուն համար :

Երբոր հասաւ Փաթմայի ընակարանը, պառաւն ու Սաի պէյ իրեն կը սպասէին անհամբեր : Սատրք մանրամասնօրէն պատմեց Նիքօլիի հետ ըրած կարգադրութիւնը :

— Հիմա իր կարգադրութեան համեմատ հագուէ՛ և ոպասէ որպէս զի մարդը գալուն պէս ճամբայ ելլես, ըսաւ ի վերջոյ երիտասարդը խօսքը պառաւին ուղղելով :

Այս յանկարծական մեկնումը վրդովեց Փաթման որ թէև որոշած էր Սալիհայի հրամանը կատարելու, սակայն կը յուսար որ տակաւին քանի մը օր պիտի կրնար մնալ Պոլլիս և լուր մը ստանալ Զիւլէհայէն :

— Ո՛ւր է ատդեօք խեղձ աղջիկը, ի՞նչ պիտի ըլլայ իր վիճակը երբոր ես երթամ, կ'ըսէր անդադար, մեկնումի պատրաստութիւնները տեսնելով հանդերձ :

Յոյն ընտանիքը որոնց տունը ապաստանած էր, ամե-



հասին հաճոյակատարութեամբ օգնեցին իրեն զինքը Քիոսցի յոյն կնոջ մը պէս ծպտելու համար: Տնեցիները թէև լաւ վարձատրութիւն կը ստանային Փաթման պահելով իրենց մօտ, այսուհանդերձ սրտերնին միշտ անուզողի մէջ էր և ամէն օր կը վախնային թէ ստոիկաններ պիտի դային իրենց բնակարանը կոխելու: Ասոր համար գրեթէ ուրախ եղան որ վերջապէս իրենց քովէն պիտի մեկնէր այս վտանգաւոր վարձակալը և սիրայօժար իրենց ձեռքէն եկած ամէն օժանդակութիւնը չուայլեցին:

Ծպտումը կատարեալ երաւ, և երբ Փաթմա իր նոր տարազով երեւցաւ երկու երիտասարդներուն՝ ասոնք աի ի բերան մնացին:

— Իրաւ որ եթէ փողոցը տեսնէի՝ ևս խակ չպիտի ճանչնայի քեզ, յայտարարեց Սաադը պէչ խնդարով:

— Այս ծպտումով կարծեմ առանց վտանգի պիտի կըրնաս ցամաք ելլել Սեղանիկ, աւելցուց Սաի պէչ:

Փաթմա տխուր էր սակայն. քանի՜ մեկնումի ժամը կը մօտենար, իր յուզումը այնքան կ'աւելնար:

— Ափսո՛ս որ Զիւլէհան քովս չէ ու դայն ալ միասին չպիտի կրնամ տանել, կը կրկնէր, ի՞նչ պիտի ըլլայ իր վիճակը, կամ մանաւանդ ի՞նչ վիճակի մէջ է այս միջոցս...:

— Էականը այն է որ Համիտի ճանկէն ազատեցաւ, քանի որ մէջտեղ չեկաւ, ըսել է թէ ապահով տեղ մը ծածկուած է Հասանի հետ:

— Մինչև և՛ որ այսպէս ծածկուած պիտի մնան... անկարելի է որ Հասան միջոց մը չգտնար մեզի լուր տալու համար:

Ի զո՛ւր երկու երիտասարդները կը ջանային հանդարտեցնել Փաթման որուն մտատանջութիւնը հետզհետէ կ'աւելնար:

— Այս աղջիկը հօրը կողմէ ինձի յանձնուած աւանդմըն է, կ'ըսէր պառուր, և անա ճիշտ այն միջոցին ուր

վասնդաւոր և անորոշ կացութեան մը մասնուած է, և կը ձգեմ կը հեռանամ կոր... միթէ կարելի՛ բան է սա, խիղճս չափազանց կը տանջէ կոր զիս... :

Իրիկուան զէմ Արիֆ պէյն ալ եկաւ իրենց քով : Երբ-տասարդը շփոթած կերպարանք մը ունէր :

— Թէև գալու գիտաւորութիւն չունէր՝ բայց այնքան ծանրակշիռ բան մը իմացայ որ ամէն վասնդ աչքս առնելով զուրս ելայ թաքստոցէս, ըսաւ :

— Ի՞նչ պատահած է, հարցուց Սաի պէւ, որուն գոչը նետեց :

— Խնդիրը մեր երկու բարեկամներուն վրայ է, շարու-նակեց Արիֆ, Զիւլէհայի ու Հասանի վրայ... :

— Աստուած իմ, ձերբակալուած են, գոչեց Ֆաթմա գողահար ձայնով մը :

— Չէ՛, բայց սա այժմ կորսուած... թողէ՛ք որ պատ-մեմ ինչ որ գիտեմ :

— Խօսէ՛, խօսէ, ըսաւ Սառք պէյ աշխոյժով :

— Այս ցերեկ մեր ընկերներէն Օսմանը եկաւ և հետե-կալը պատմեց. Զիւլէհա և Հասան, ձէմալ պէյի բնակարա-նէն մեկնելէն ետքը կ'ապաստանին Ռոպէրթ Գոլէճ ուր կը մնան մինչև երէկ սուտու, սակայն երէկ սուտու վարժախանին տնօրէնը կը կանչէ զիրենք և կ'ըսէ թէ հար'յ էջ՝ անմիջապէս մեկնին վարժարանէն, որովհետև իրենց հոն գտնուելը երե-ւան ելած է և սասիկանութիւնը ամերիկեան հիւղատանին ներկայութեամբ խուզարկութիւն պիտի կատարէ : Ասոր վրայ երկուքը մէկ աներևոյթ կ'ըլլան լերան կողմէն. յետոյ ցերեկու-ւան մօտ, Հասան կուգայ Օսմանին այս տեղեկութիւնները կուտայ և կը ինդրէ որ անմիջապէս մեզի իմացնէ ու միև-նոյն ատեն կը յայտնէ թէ իրենց վիճակը շատ տագնապալից է ու չի գիտեր թէ ի՞նչպէս պիտի յաջողի օձիքնին աղասել սասիկանական հետապնդումներէ... :

— Բայց քանի որ վարժարանէն կրցեր են վախճիլ լերան կողմէ՝ ինչո՞ւ չեն փորձած հոս դալ ապաստանիլ :

— Իրենց գիտաւորութիւնը այդ է եղեր . բայց կ'երեւայ որ ճանբանեջը բռնուած են այս կողմերը , պտտասխանեց Սրբի՛ք : Այս վրդովիչ լուրը ա՛լ աւելի յուզման մասնեց ֆաթման որ յայտարարեց .

— Այս վիճակին մէջ ես չեմ մեկնիր Պոլսէն . . .

Սրբի՛ք պէյ հարցուց թէ ո՞ւր պիտի երթար ֆաթմա : Այն ատեն երկու երիտասարդները Սալիհայի համկտը ցոյց տուին և ամէն բան բացատրեցին :

— Պէտք է որ մեկնիս , վճուեց Սրբի՛ք պէյ , քու հասներկայութիւնդ ո և է կերպով օգտակար չի կրնար ըլլալ ո՛չ աղջկան և ո՛չ ալ Հասանին : Մենք կը ջանանք մեր ձեռքէն եկած օգնութիւնը հասցնել իրենց՝ թէև չեմ գիտեր թէ ինչպէ՛ս պիտի կրնանք բան մը ընել . . .

Այս տագնապալի խորհրդակցութեանց մէջ էին երբ Նիքօլի ընկերը եկաւ Փաթման տանելու : Այդ մարդը քառատուն տարեկանի մօտ , երկայնահասակ , նիհար ու ջղուտ մէկն էր ու ինքն ալ , պառաւին պէս , կղզեցիի տարազ հագած էր :

— Ճիշտ իրարու յարժարեցանք , ըսաւ պառաւը գիտելով , ո՛չ ոք պիտի կրնայ կասկածիլ թէ թրքուհի մըն է քովի ընկերս , միայն թէ շուտով մեկնինք , Նիգօլին մեզի կ'սպասէ :

Փաթմայ՝ թէև ակամայ և սիրաը դարնտպէս յուզուած՝ ոտքի ելաւ մեկնելու համար , իր երեք ընկերներուն հետ վերջէն խորհրդակցութիւն մը կատարելէ ետքը :

Իր ամբողջ ճամբու բեռը փոքրիկ ծրար մըն էր զոր յոյն թեկն տակ առաւ :

Երեք քառորդ ժամ ետքը կառքը արդէն զիրենք բերած էր Ղալաթիա , այն սրճարանը ուր կը գնուէր Նիգօլի և առագաստանաւին նաւապետը :

Փաթմայի մուտքը այդ սրճարանին մէջ բնաւ ուշա-

դրութիւնն չգրաւեց, մանաւանդ որ իրեն շօման ուրիշ մէկ քանի կ'իներ. իրենց դաւակնելով, հոն կը գտնուէին Արքիպեղագոսի կղզիները երթալու համար:

Նաւասպետը աչք մը նեւեց թրքուհիին վրայ, յետոյ ըսաւ.

— Լա՛ւ, դուք այս կ'ինը նաւ տարէ՛ք, ես պէտք եղած հրահանգները տուած եմ, զինքը յարմար աւել մը պիտի տես դաւորին, միայն թէ իրեն հետ ուտելիք պէտք է առնէ, որովհետեւ մեր նաւուն մէջ ճամբորդի համար կերակուր չկայ:

— Այդ դիւրին է, պատասխանեց Նիքօլի, հիմա ամէն բան կը կարգադրենք:

Յետոյ, Փաթմայի ընկերացոյ մարդուն դատնալով աւել յուց.

— Դուն տիկինը անմիջապէս նաւակ մը դիր ու նաւ տար, ուտելիքի մասին ես պէտք եղածը կը պատրաստեմ և կը բերեմ... լաւ չէ որ շատ երկար առեն մնանք այս սրճարանը:

Պատաւը և իր ընկերը դուրս կ'ան սրճարանէն ու դէպի քարափ ուղղուեցան: Փաթմա ընկճուած ու մտատանջ երևոյթ մը ունէր. իր մտածումը մինչև ետքը կը սեւեռէր դէպի Զիւլէհան և ինքզինք յանցաւոր կը համարէր այսպէս իրեն աւանդ թողուած հէզ աղջիկը ձգել հեռանալուն համար: Այսուհանդերձ լռիկ մնջիկ հետեւեցաւ իր առանջնորդին:

Առաջատանաւը, հեռուն, ծովին բացը կեցած էր, աւելի մօտ ասիական եզերքին: Պատաւը և իր ընկերը յոյն նաւավարի մը նաւակը մտան և ճամբայ կ'ան, առանց ուշադրութիւնը գրաւելու երկու ուսիկաններու որոնք քարափին վրայ կեցած էին:

Գտնն վայրկեանէն հասան նաւը և Նիքօլիին ընկերը Փաթման հոն տեղաւորելէ ետքը, վերադարձաւ քարափ:

Առաջատանաւը արդէն իր բեռը առած էր և կ'սպասէր հետեւեալ առտուան, ճամբայ ելլելու համար: Մութը կոխելէն

յետոյ նաւապետը եկաւ, լեցուն սակաւ մը ուտելիք բերելով  
Ֆաթմայի: Բայց խեղճ կիներ բնաւ ակորժակ չսենէր և ու-  
նաւած էր ու միշտ կը մտածէր Զիւլէհայի ու Հասանի վրայ  
որոնց անստոյգ վիճակը շատ կ'առաջնապէսէր վիճքը:

Գիշերը գրեթէ անքուն անցուց, անընդհատ ծխելով:  
Առտուն կանուխ նաւածիգ մը մտեցաւ առաջատանաւին  
ու զայն կամաց կամաց առաջնորդեց Մարմարայի բայը:

Յաջող հով մը կար և նաւապետը շատ գոհ էր, թէ և ծո-  
վը թիթեւապէս արեկոծեալ էր: Նաւածիգը շուտով իր պաշտո-  
նը աւարտեց ու վերադարձաւ նաւանագիտ, մինչ նաւը իր  
առաջատաները բացած՝ կը հեռանար դէպի Գարգանէլ:

Այ-Սահֆանոյի ու Բիւշիւկ Չէքմէճէի առջևէն անցած  
էին արդէն, երբ նաւապետը վաքրիկ նաւակ մը տեսաւ որ  
արեկոծեալն դէմ կը կուռէր.

— Ի՛նչ անխոհեմութիւն, ըսաւ նաւաւորդին, այսպիսի  
օդով մը ծովուն բացերը ելլել փոքրիկ նաւակով մը:

— Այո՛ մանաւանդ որ ձկնորսութեան ժամանակ ալ չէ,  
պատասխանեց միւսը, ո՛չ ալ ծովային պառոյտ ընկոււ կղանակ:

— Այդ մարդիկը պարզապէս յիմար ըլլալու են այսպիսի  
օդով մը ծովուն վրայ ելլելու համար...

Նաւակը փոխանակ ցամաք երթալու դէպի նաւը կը յա-  
աջանար յառանձատ ճիգով մը:

Նաւազետը իր դիտակը բերաւ և սկսաւ ուշի ուշով  
քննել.

— Երկատարդ մը ու կին մը կայ նոտակին մէջ, յայ-  
տարարեց, բայց վիճակնին շատ առաջնապալի է և հարկ է որ  
օգնութեան փութանք իրենց...

Եւ հրաման ըրաւ նաւաւորդին դէպ ի նաւակը դարձնելու  
նաւուն ցուկը:

Նաւակին մէջ գանձաւորները տեսան այս շարժումը և երի-  
տաւարդը նոր կռօնդով մը սկսաւ թիալարել:

Փաթմա հանրմ ինքն ալ մօտեցած էր նաւապետին ու  
անձկութեամբ կը դիտեր փոքրիկ նաւակը որ մերթ ալիքնե-  
րուն ծայրը կը բարձրանար ու մերթ անոնց խորը անյայտ  
կ'ըլար :

— Արդեօք ժամանակին պիտի հասնի՞նք զիրենք փրկելու  
համար, հարցուց :

— Եթէ Աստուած ուզէ՛ պիտի փրկենք, պատասխանեց  
նաւապետը որ յաջողութեան շատ յոյս չունէր :

Այսուհանդերձ նաւակն ու առաջատանաւը հեռոյնեմ  
իրարու կը մօտենային :

Պատու Փաթման ծայրայեղօրէն յուզուած էր այս տեսա-  
րանէն և մինչև ետքը մտովի կազօթէր նաւակին մէջ գտնու-  
ողներուն փրկութեանը համար :

Յանկարծ ահուկի ճիշ մը արձակեց .

— Բայց անոնք են, գոչեց խելայեղ, Զիւլէհան ու Հա-  
սանը, զաւակներս . . . Աստուած իմ, Աստուած իմ, փրկե-  
ցէ՛ք, ազատեցէ՛ք զիրենք . . .

— Պատանի մը և մանկամարդ աղջիկ մըն են, պատաս-  
խանեց նաւապետը, կը ճանչնաս զիրենք, ինչպէ՞ս . . . Եւրո-  
պացի ըլլալ կը թուին, իրենց հագուստներէն ախպէս կ'երե-  
ւայ :

— Կը ճանչնամ, թուրք են, փոխատականներ են . . .  
ազատեցէ՛ք զիրենք, խեղճ Զիւլէհա, կ'ազազակէր պառաւը  
աղաչաւոր ձեռքերը երկարելով քովը գտնուողներուն :

Վերջապէս նաւակը մօտեցաւ : Բոլոր նաւաստիները պա-  
րաններով զինուած կը սպասէին :

— Նեաեցէ՛ք պարանները, գոչեց, Հասան, մինչ Զիւլէհա  
վախ ու սարսափէն լեզուն բռնուած՝ գամուէր մնացեր էր իբ-  
տեղը, առանց կենդանութեան նշան մը տալու :

Առաջին պարանը, զոր պատանին ձեռք անցուց, խեղճ  
կապեց մանկատի աղջկան մէջքը և զախ ջուրը իջեցուց, յե-  
տոյ ինքն ալ պարանի մը կապուելով՝ ծովը նետուեցաւ :

վայրկեան մը ետքը երկուքն ալ նաւուն կամուրջին վըրայ տարածուած էին : Ազջիկը յուզումէն նուազած էր, մինչ պատանին պահած էր իր պաղարխնութիւնը և իսկոյն ճանչցաւ Յաթման և ուրախութեան աղաղակ մը արձակեց :

Պառաւը ազջկան վրայ ծռած գայն կը համբուրէր, դառնորէն արցունք թափելով :

— Լալով ու համբուրելով խելքը գլուխը չես կրնար բերել, ըսաւ նաւապետը, թո՛ղ սուր որ զինքը վար փոխադրեն և պէտք եղած խնամքը իսկոյն ըրէ իրեն :

Պառաւը այս խօսքերուն վրայ իսկոյն ոտք ելաւ և նաւաաթի մը օգնութեամբ ազջիկը փոխադրեց իրեն յատկացուած խցիկը, ուր սրուած խնամքներուն շնորհիւ, Զիւլէհա շուտով աչքերը բացաւ և երբ իր քով անսաւ պառաւ Յաթման, չկրցաւ աչքերուն հաւատալ :

— Ինչ, մրմնջեց, դուն այսան՞ղ... Աստուած զրկեց քեզի... :

— Այո՛, Աստուած այսպէս կարգադրած ըլլալու է... :

Ժամ մը ետքը, երկու նաւաբեկեալները, իրենց խխում եղած լաթերուն անդ՝ չոր լաթեր հագած ու բոլորովին խնքզինքնին գտած, պառաւին խցիկին մէջ անյագօրէն կը ճաչէին սակառին մէջ գանուած կերակուրները : Յաթման որ նաւը մանկէն ի վեր բերանը բան չէր գրած՝ հիմա ինքն ալ կը մանակցէր կերակուրին :

Երբ ճաշը աւարտեցաւ, այն ատեն պառաւը ըսաւ .

— Հիմա պատմեցէ՛ք սեննեմ թէ այս օրին, փոքրիկ նաւակով մը, ինչպէ՞ս եղաւ որ բաց ծովուն վրայ կը գըտնուէիք... :

— Թո՛ղ Հասանը պատմէ, ըսաւ Զիւլէհա, ևս տակաւին կարողութիւն չունիմ չատ խօսելու :

— Այո՛, այո՛, աւելցուց պատանին, դուն հանգիստդ նայէ՛, ևս ամէն բան կը պատմեմ... :

-- Երէկուրնէ ի վեր անհնարին մտատանջութեան մը

մասնուած էի ձեր մասին, ըսաւ Յաթմա, մանաւանդ կըր լուր առի թէ՛ Ռոպէրթ Քօլէճ ապաստանելէ ետքը, ստիպուեր էք հեռանալ հոնկէ . . . :

— Ըստ քախտի բաւական թափառելէ ետքը, ըսաւ Հասան վերջապէս կրցանք առանց ուշադրութիւն գրաւելու Սթէնիայի ծովախորշը հասնել: Գիտէի որ ամէն կողմ մեզի կը փնտռէին, ամբողջ Վոսիորի երկայնքը, հետեաբար չէինք կրնար այդ կողմերը երկար մնալ . . . : Շուարձ՝ ի՛նչ ընելիքիս վրայ կը մտածէի՝ երբ պարտապ նաւակ մը նշմարեցի ծովեզերքը: Քիչ մը հեռուն յոյն մարդ մը կեցած էր: Մնոր մօտեցայ. «Որո՞ւնն է այս նաւակը հարցուցի.» «Իմն է,» պատասխանեց: Այն ատեն իրեն առաջարկեցի որ ժամուան մը համար վարձու տայ զայն մեզի, պտոյտ մը ընելու համար: Մարդը՝ զարմացած՝ երեսս նայեցաւ .

— Այս եզանակին ու այս օդին, ծովու վրայ պտոյտ կ'ըլլայ, ըսաւ:

— «Վ'ուզենք այցելութիւն մը ընել Պօյաճը գիւղ, պատասխանեցի: Վերջապէս, չերկարեմ, չնորհիւ առտա վարձատրութեան մը, հաւանեցաւ նաւակը մեզի յանձնելու, և ան՝ Զիւլէհան մէջը անգաւորելէ ետքը թիակները ձեռք առի ու ճամբայ ելանք: Իմ միակ նպատակս էր այդ վտանգաւոր սահմաններէն ժամ առաջ հեռանալ, մանաւանդ հետաքրքիր ակնարկներէ խուսափել, ուստի նաւակը չիտակ ծովուն բացը հանեցի, յետոյ բոլոր ուժովս սկսայ թիավարել դէպ ի Սարայ Պուււնու: Ո՛ւր պիտի երթայի . . . ես ալ չէի գիտեր, բայց ամէն պարագայի մէջ՝ չէի ուզեր ցամաքին մօտննալ: Այսպէս ժամերով, ծովուն վրայ թիավարեցի, մինչև որ մտ թը կուլանց:

— Ինչպէ՞ս, գոչեց պառաւը, ուրիմն, երէկուրնէ ի վեր ծովուն վրայ կը գանուիք:

— Այո՛, գրեթէ քսան ժամէ ի վեր, պատասխանեց պատանին:



— Եւ, առանց բան մը ուտելի՞ւ... :

— Ո՛վ կը մտածէր ուտելիքի վրայ, մեր միակ մտածումն էր Համբախ ճիրաններէն խուսափիլ... ուրիշ բան չէի խորհէր : Մտ՛թը բոլորովին կոխեց և այդ միջոցին մեր նաւակը Գընալը կղզիի բացերը կը գտնուէր : Այն ատեն Զիւլէհայի ըսի .

— Այս գիշեր պէտք է որ ծովուն վրայ անցընենք մինչև առտու . առտուն կը ջանանք ինքզինքնիս պէսի Գարգանէլ գացող եւրոպական նաւ մը նեակի :

Այս որոշումն շատ բանաւոր երեցաւ Զիւլէհայի :

— Աստուած իմ, բոլոր գիշերը ծովուն վրայ, խեղճ զաւակներս, հառաչեց պառաւը :

Պատանին իր խօսքը շարունակեց .

— Այս որոշումը սակայն շատ դժուար էր գործադրել, ցուրտը հեռզհեռէ կը սաստկանար ու ծովն ալ կ'սկսէր արեկոծիլ... տեսայ որ ստոյգ մահուան մը կը դիմէինք այս կերպով՝ ուտտի ամէն վտանգ աչքս առնելով՝ սկսայ թիավարել դէպի ցամաք ու վերջապէս հասանք Այ-Սաէֆանայի եզերքը, ուր ծովափին վրայ անցուցինք ամբողջ գիշերը, ցուրտէն չարչարուելով՝ բայց զոնէ ծովը խեղդուելու վտանգէն զերծ : Առտուն դարձեալ նաւակ մտանք՝ հաստատապէս մտքերնիս դնելով որ առաջին հանդիպած նաւերնէս օգնութիւն հայցենք... մնացածը գիտես արդէն :

Հիմա կարգը եկած էր Փաթմային՝ իր պատմութիւնը պատմելու և բացատրելու թէ ի՛նչպէս այդ առադաստանաւին մէջ կը գտնուէր : Պատանին երբ ամէն բան լսեց ուրախութեամբ գոչեց .

— Ուրեմն քեզի հետ մենք ալ կուգանք Սալիհա հանըմին քով և մեր ընկերները կրնան վտանգ ըլլալ որ իրենց շատ օգտակար պիտի ըլլանք : Հո՛ն, լեռներուն մէջ, Զիւլէհա այլևս ո՛ր է վտանգէ ազատ կ'ըլլայ :

— Խնդիրը մինչև հոն հասնիլն է, դիտել տուաւ պառաւը :

— Թո՛ղ նախ նաւերնիս անվտանգ կերպով Սեյանիկի նաւահանգիստը մտնէ և այն ասեն ես հնարք մը կը գտնեմ ապահով կերպով դուրս ելլելու և մեր ընկերներուն միանալու համար, պատասխանեց պատանին ինքնավստահ կերպարանքով մը :

Նաւը, հիմա, ամբողջ աւազաստները բացած, նպատաւոր հովով մը, արագ արագ կը յառաջանար, ճեղքելով Մարմարայի կոհակները :

---

Գ Լ Ո Խ ԵՎ Ժ Գ .

Ս Ա Տ Ը Ք Պ Է Յ Կ Ը Գ Ո Ր Ծ Է

Ֆաթմայի նաւ գրուելուն հետեւեալ օրը, երեք երիտասարդները կրկին հաւաքուեցան, այս անգամ Սաի պէյի բնակարանը :

— Հիմա որոշենք մեր ընելիքը, ըսաւ նախկին խմբագիրը :

— Ի՞նչ ընելիք, հարցուց Սա'ի պէյ որ չէր ըմբռնած իր բարեկամին միտքը :

— Ինչպէ՞ս մտցար միթէ Սալիհա հանրմի տուած հրահանգը, գոչեց երիտասարդը սրանեղած, մեր բարեկամները կ'ուզեն որ ու ե է հնարքով մը Ս.պախլ Համիտի ուշադրութիւնը իրենց վրայէն դարձնենք և զայն հոս կեդրոնացնենք... ասիկա անհրաժեշտ է և մենք պարտաւոր ենք նոյն իսկ մեր կեանքը վտանգելով այդ ծառայութիւնը մատուցանել մեր ընկերներուն, կը զարմանամ որ մինչև հիմա այս մասին չես խորհած...

— Կը ներես, ըսաւ Սաի, իրաւունք ունիս, բայց ես կը կարծէի որ այնքան անապարհու պէտք չունինք:

— Ինչպէ՞ս, այն կէտին ուր հասած է կայութիւնը, մէկ վայրկեանի յապաղումը կրնայ աղետարեր ըլլալ... ընդհակառակն անմիջապէս պէտք է գործողութիւն մը պատրաստել և իրարանցում մը առաջ բերել Պոլսոյ մէջ... եթէ կարելի է նոյնիսկ վաղը կատարելու է այդ բանը...

— Դո՞ւն ի՞նչ կ'ըսես, հարցուց Սաի պէյ դառնալով դէպ ի կրիֆ պէյը որ մինչև այն ատեն լուռ կեցած էր:

— Իրա՛ւ որ ես ալ համամիտ եմ Սաաըքի, պատասխանեց այս վերջինը, միայն թէ չեմ դիտեր թէ ի՞նչ միջոցաւ պիտի կշնանք հասնիլ մեր նպատակին:

— Սուլթանը մէկ բանէ մը ամէնէն աւելի կը սարսափի ու իրար կ'անցնի, ըսաւ Սաաըք, այն է՝ արհամիթը:

— Ի՞նչ, կ'ուզես որ նո՞ր մահափորձ մը կատարուի Ապուիւլ Համիտի դէմ, անմիջապէս, առանց նախապատրաստութեան բայց պարզապէս յիմարութիւն է այդ ըսածդ:

— Ո՛չ այնքան որքան կը կարծես, պատասխանեց Սաաըք քիչ մը բարկացած: Նախ՝ ես չըսի թէ արհամիթով մահափորձ մը կատարենք Ապուիւլ Համիտի դէմ...

— Պարզէ՛ ուրեմն ծրագիրդ:

— Սուլթանի դող հանելու և զինքը շփոթութեան մատնելու համար, պէտք չէ որ իր անձին դէմ ուղղուի հարուածը... կրնանք ուրիշ զս՛ մը ընտրել:

— Ո՞վ, հարցուց Սաի պէյ:

— Օրինակի համար ստիկանութեան նախարար Շէֆիք փաշան... կարծեմ Համիտին չափ արժանի է այդպիսի մահափորձի մը ենթարկուելու:

— Չէ՛ չեմ ըսեր, բայց նորէն այդ մահափորձը քու կարծածիդ չափ զիւրին չի թուիր ինծի: Նախ՝ արհամիթի շինուած պոմպան հարկ է ճարել...

— Ատիկա պատրաստ է, պատասխանեց Սաաբը պէյ հաստատ շեշտով մը :

— Յետոյ պէտք է գտնել օրն անձնուէր մարդը որ յանձըն պիտի առնէ այդ պոմպան նետեկու ոստիկանութեան նախարարին վրայ . . .

— Այդ անձն ալ պատրաստ է ըսաւ Սաաբը նոյն շեշտովը :

Երկու երիտասարդները՝ զարմացած՝ իրենց բարեկամին նայեցան :

— Կը յուսամ որ կտտակ չէ ըսածդ, գոչեց Սաի պէյ, որ տակաւին չէր ուզեր հաւատալ թէ իր ընկերը լրջօրէն կը խօսէր :

— Կատակի ժամանակ չէ, պատասխանեց միւսը, այլ գործկու, երբ մեր լաւագոյն ընկերները գէն ի ձեռին կտու կը մղեն լեռներու մէջ, շատ անտրտես պիտի բլլար այստեղ կատակարանութեամբ ժամանակ անցնելը . չէ՛, կատակ չեմ ըներ և ինչ որ ըսի բացարձակօրէն ճիշդ է . . .

— Ուրեմն կտտարեւք այդ մահափորձը :

— Երկուքդ ալ համամիտ էք ուրեմն, կը կարծէ՞ք որ մահափորձը պէտք է Շէֆիք փաշայի վրայ կտտարուի՝ թէ լաւագոյն է ուրիշի մը վրայ փորձել :

— Ո՛չ, ընտրութիւնդ խիստ լաւ է, Ապտիւլ Համիտէն դուրս ելթէ կայ մէկն որ արժանի է ասոր այն ալ ոստիկանութեան նախարարն է . . . :

— Եւ կը յուսա՞ք որ այս մահափորձը բաղձացուած արդիւնքն առաջ բերէ :

— Ապահովաբար : Միայն թէ Սուլթանը պէտք է հասկընայ որ հարուածը մեր կողմէն կուգայ . . .

— Այդ կրնանք դիւրաւ հասկցնել իրեն, պատասխանեց Սաաբը պէյ :

— Ատոր մասին ալ միջոց մը խորհո՞՞ծ ես :

— Բնականաբար : Մահափորձէն առաջ, Սօֆիա գտնուող



մեր ընկերներուն միջոցաւ, յանուն մեր քօմիթէին սպառնա-  
կան նամակներ կ'աւզղենք նախարարներուն և ծանօթ պալա-  
տականներուն և յետոյ մահափորձը կը կատարենք... այս  
կերպով թէ՛ հասկցուցած կ'ըլլանք որ մահափորձը մեր ձեռ-  
քով պատրաստուած է և թէ միւսնոյն ատեն սարսափ կը սփ-  
ռենք Երւազլի շրջանակներուն մէջ:

— Այո՛, միայն թէ պէտք է որ գործը յաջողութեամբ  
զլուխ հանենք... հիմա ըսէ տեսնենք թէ ո՛ւր կը գտնուի  
պոմպան:

— Իմ սենեակիս մէջ, պատասխանեց Սառքք պէյ ամե-  
նայն հանդարտութեամբ:

— Բայց ինչպէ՞ս յաջողեցար ձեռք ձգել հարցուց Սաի  
պէյ:

— Գիտէք որ միշտ յարարերութեան մէջ եմ մեր յեղա-  
փոխական ընկերներուն հետ, անոնք հայթայթեցին ինծի ան-  
միջապէս, երբ երէկ իրենցմէ հառ մը ինդրեցի:

— Ըսիր թէ, շարունակեց Սաի պէյ, անձնուէր ընկեր-  
մը պատրաստ է այդ պոմպան գործածելու, կրնա՞ս ըսել թէ  
ո՞վ է այդ անձը:

— Ե՛ս, ըսաւ երիտասարդը:

Սաի պէյ չպատասխանեց և Արիֆի նայեցաւ այլալիւծ  
դէմքով մը:

— Ինչո՞ւ կը շփոթիք, ըսաւ երիտասարդը իր ընկերնե-  
րուն, միթէ վճռական զտնօրութիւններու ժամանակը հասած  
է՞...

— Անշուշտ, պատասխանեց Սաի պէյ, բայց ըսածդ այն-  
քան տնակնկալ մը եղաւ ինծի համար որ չիտակը չեմ գիտեր  
թէ ի՛նչ պէտք է պատասխանել:

— Համաձայնութեամբ որոշեցինք թէ մահափորձը պիտի  
կատարուի, շարունակեց նախկին խմբագիրը, ատիկա բաւա-  
կան է. գալով զայն ի գործ դնելիք անձին, այդ կարևորու-  
թիւն չունի՞ նա կամ մէկ ուրիշը, ինչ հարկ վրդովելու:

— Սիրելի բարեկամ, ըսաւ Սա'ի պէյ յուզուած, անշուշտ շատ գեղեցիկ ու արխատիրտ բան մըն է ընկ ուղածդ, բայց միթէ մեր հեռաւոր ընկերները պիտի հաւանէի՞ն որ այսպիսի գործի մը մէջ անձդ վստանգէիր . . .

— Միթէ անոնք մեր հաւանութիւնը առի՞ն երբ հայրենիքի ազատութեան սիրոյն իրենց անձերը վտանգեցին . . . և յետոյ, այժմէն կը յայտարարեմ որ ձեր կողմէ ո և է ընդդիմութիւն օգուտ չունի, ես որոշած եմ միտքս դրածս գործագրել, նոյնիսկ եթէ պէտք ըլլայ հակառակ ձեր կամքին :

— Լաւ ուրեմն, սիրելի Սատըք, ըրէ՛ ինչ որ կ'ուզես և վստահ եղիր որ մենք ալ մեր բոլոր սրտով քեզի հետ պիտի ըլլանք, պատասխանեց Սաի պէյ, իր բարեկամին ձեռքը սեղմելով, խանդազատազին :

— Ո՛չ թէ միայն սրտով այլ մեր անձովը քեզի հետ ենք, ըսաւ Արիֆ . . . գոնէ ես թող չպիտի աամ որ դուն առանձին ինքզինքդ վտանգես, կ'ուզեմ սր այդ գործողութիւնը միասին կատարենք :

— Ամենայն հաճութեամբ կ'ընդունիմ քու աջակցութիւնդ, պատասխանեց երիտասարդ խմբաւորը, արդէն ես պիտի խնդրէի ատիկա, բայց չէի համարձակեր կոր . . . :

— Ուրեմն զիս վատի տե՞ղ դրած ես, ըսաւ Արիֆ դառնացած շեշտով մը :

— Երբեք, գոչեց Սատըք պէյ, միայն թէ կը վախնայի քեզի պէս թանկագին ընկեր մը ինծի հետ վտանգելու . . . դուն արդէն արխատութեան և յանդգնութեան այնպիսի ապացոյցներ տուած ես որ ոչ ոք կը համարձակի քեզի այդպիսի նախատինք մը ընկու :

Եւ իր բարեկամին քով երթալով՝ անոր ձեռքը սեղմեց : Երկու ընկերները քիչ ետքը մեկնեցան Սաի պէյի քովէն ժամ առաջ իրենց պատրաստութիւնները տեսնելու համար :

Չորս օր ետքը, փետրուար 5, Երեքշաբթի օր մեծ ~~է~~

բանցում մը կար Ղալաթիոյ քարափին վրայ, նոյն օրը Քէօսթէնձէ մեկնելիք սուսանալիւն շողենալին շուրջը :

Շուէտական պատուիրակութիւնն սը սը Մ. ար Սէրգիւնիկի նախագահութեամբ Պոլիս եկած էր Շուէտի կիւսթալ Ս. թագաւորին գահակալութիւնը Սուլթանին պաշտօնապէս ծանուցանելու և անոր արքայական մէկ նամակը յանձնելու, իր պաշտօնը աւարտելէ ետքը, Քէօսթէնձէի ճամբով կը վերադառնար :

Ս.մբողջ շարաթ մը այդ պատուիրակութիւնը Սուլթանին չիւրը եղած էր ու մեծարանքներ ընդունած :

Մեկնումին առթիւ նախարներ ու պալատականներ եկած էին շողենաւ ողջութիւն մաղթելու : Արարողապետ Կալիպ փաշա յատկապէս եկած էր իր Վեհափառ Տիրոջ բարեկները հազարդելու պատուիրակութեան անդամներուն՝ որոնք նախորդ օր հանդիսաւորապէս ներկայացած էին Սուլթանին ու պատուանշաններով մեծարուած : Բայր այդ մարդիկը սակայն, պալատական ու նախարար, խորին անձկութեան մը մասնուած կը թուէին և մինչև ետքը կասկածոտ նայուածքներ կ'արձակէին շուրջներին :

Միջոց մը, շողենալին առաջին կարգի ճաշատրանին մէջ. Կալիպ փաշա նշմարեց ոտիկանութեան նախարար Շէֆիք փաշան ու Սուլթանին քարտուղար Իզդէթ փաշան, որոնք անկիւն մը քաշուած՝ իրարու հետ յուզեալ խօսակցութեան մը բռնուած էին : Արարողապետը իր ուշադրութիւնը անոր վրայ կեդրոնացնելով տեսաւ որ Իզդէթ փաշա գրպանէն թուղթ մը հանեց ու նախարարին սուտաւ, որ թուղթը առնելով ուշադրութեամբ գննեց. յետոյ ինքն ալ իր գրպանէն ուրիշ թուղթ մը հանելով՝ սկսաւ երկուքը իրարու հետ բազդատել :

— Ի՞նչ կը նշանակէ այս արդեօք իրե՞նք ալ ստացած են, մտածեց արարողապետը :

Յետոյ, պահ մը վարանելէն ետքը, վճարքար ուղղուե-

ցաւ անոնց քով : Նախարարը Կալիպ փաշայի մօտենայլը նշմարածին պէս կամաց մը թուղթերը պահեց :

Նախարարը և պալատական քարտուղարը իրարու երեսնայեցան , ջանալով զսպիկ իրենց այլայլութիւնը :

— Ի՞նչ սպառնական նամակ , փաշա էֆէնտի , հարցուց Իզզէթ :

— Ես այս առտու , Պուլիարիայէն , կամ աւելի ճիշդ Սօֆիայէն , ինչպէս յայտնի կ'երևայ պահարանին վրայի դրոշմաթուղթէն , սպառնական զիր մը ստացայ , պատասխանեց Կալիպ փաշա , որով իմաց կը տրուի ինձ որ զազանի թրքական Քօմիթէին կողմէ մահուան դատապարտութիւն պիտի կրեմ՝ եթէ իսկոյն պաշտօնս չթաղում ու չհեռանամ Վեհափառ Սուլթանին քովէն :

— Լաւ ուրեմն , ըսաւ Իզզէթ փաշա , ճիշդ գուշակեցիք , ես և Շէֆիք փաշան ալ նոյնիմաստ նամակներ ստացած ենք Սօֆիայէն . . .

— Արդեօք միայն մեր երեքի՞ն ուղղուած են այս սպառնալիքները , հարցուց արարողապետը մտատանջ երևոյթով մը :

— Իրա՛ւ որ չեմ գիտեր , պատասխանեց նախարարը , այս առտու ստացայ այս սպառնալիքը և կը կարծէի որ միայն ինձի սահմանուած է , բայց ա՛հ՝ քիչ մը սառջ Նորին Վսեմութիւնը քովս եկաւ և ըսաւ որ ինքն ալ սպառնական նամակ մը առած է . յետոյ այժմ ձեռնէ կ'իմանամ որ դուք ալ ընդունած էք այդպիսի նամակ մը , ուրեմն կ'ենթադրեմ որ մենէ զուրս ուրիշներ ալ առած ըլլալու են . . .

— Ես այդ մասին վտասն եմ , ըսաւ Իզզէթ փաշա , լաւ է պալատականներուն և նախարարներուն դէմքերը քննել տեսնելու համար որ ամենքն ալ մտատանջ երևոյթ մ'ունին :

— Եւ ի՞նչ պիտի ըլլայ ասոր հետեանքը հարցուց արարողապետը :

— Ոչինչ , պատասխանեց նախարարը , հաստատ չեչտով մը , վերջին դէպքերէն ետքը , չնորձիւ ձեռք առնուած ազդու



միջոցներուն, մէկ թուրք յեղափոխական չէ մնացած բովանդակի կ. Պոլսոյ մէջ, այո մասին կրնամ ապահովել ձեզ: Արդէն նայնը յայտարարեցի երէկ մեր Վեհափառ Սուլթանին. հետեւաբար եղածը պարզ սպառնալիք մըն է յուզում մը յառաջ բերելու և մեր ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձնելու համար:

— Սյունհանդերձ կարծեմ լաւ կ'ըլլայ որ սպառնական գիր ունդուենայ անձերու շուրջը մասնաւոր հսկողութիւն մը ի գործ դրուի, ըսաւ արարողապետը որ նամակը ստացած վայրկեանէն իր հանգիստը կորսնցուցած էր:

— Ընդհանրապէս մըն առաջ ես ալ կ'ըսէի, ըսաւ իզգէլիք փաշա:

— Արդէն ամէն վայրկեան այդ հսկողութիւնը կը կատարուի, ասոր վտահ եյիք, պատասխանեց նախարարը, բայց և այնպէս պէտք եղած միջոցները ձեռք կ'առնեմ անմիջապէս:

— Միթէ քննութեան մը չպիտի՞ ձեռնարկէք նամակներ բուն հեղինակը կամ հեղինակները երեւան հասելու համար:

— Արդէն իշտողութիւնը հեռագրեցի մեր Սօֆիայի ոստիկանական դաշտնի գործակալներուն և անոնց պատասխանին կ'սպասեմ:

Խոհեմութիւն չէր միւս պալատականներուն աչքին տակ խօսակցութիւնը աւելի երկարել, ուստի երեք բարձրաստիճան անձնաւորութիւնները իրարմէ բաժնուեցան:

— Վայ մեզի եթէ մեր անձերուն պահպանութիւնը Շէֆիք փաշայի պէտ ոստիկանութեան նախարարի մը յանձնուած է, մտածեց արարողապետը:

Շոգենաւը սուրեց մեկնումի պատրաստութեան նշանը տալով:

Սմենքը փութացին Շուէտական պատուիրակութեան անդամներուն մօտ, վերջին ողջոյնները փոխանակելու համար և յետոյ մէկիկ մէկիկ մեկնեցան շոգենաւէն:

Պալատականները երբաբայ հասնելէ ետքը՝ կալիպ փաշա

հարկ համարեց իր ստացած սպառնական գիրը հերկայացնելու իր Վեհափառ տիրոջ: Ապտիւլ Համիտ, իր սովորութեան համեմատ, չափազանց յուզուեցաւ այս իրողութիւնը իմանալով:

— Ի՞նչո՞ւ առտուն, համակը ստանալուդ պէս, չիմացուցիր ինձի, գոչեց իր արարողապետին:

Վեհափառ տէր, չհամարձակկցայ անձնական խնդրի մը համար Ձեր Վեհափառութիւնը անհանգիստ ընել, բայց երբոր իմացայ թէ Իզդէթ և Շէֆիք փաշաներն ալ նոյն իմաստ զրութիւններ ստացած են, այն ատեն խորհեցայ որ խնդիրը անձնական հանգամանք չունէր՝ այլ դաւադրութիւն մըն էր այս յեղափոխականներուն կողմէ սարքուած:

— Ի՞նչ ուրիշներն ալ այդ տեսակ համակներ ստացած են, գոչեց բռնաւորը ա՛յլ աւելի յուզուելով: Շո՛ւտ թող կանչեն Իզդէթը...

Եւ ահա՛ ամբողջ պալատին մէջ քննութիւն մը բացուեցաւ սուղեկու համար քէ արդեօք ուրիշներ ալ ընդունած էին նմանօրինակ գրութիւններ և երևան ելաւ թէ 14 բարձրատիճան պալատականներ նոյն առտուն այդ սպառնազիրը ստացած էին Սօֆիայէն:

— Անմիջապէս Շէֆիք փաշան հոս կանչեցէ՛ք, հրամայեց Ապտիւլ Համիտ:

Թիկնապահ մը իսկոյն ճամբայ ելաւ Սուլթանական հրամանը կատարելու համար:

Մէկ ու կէս ժամ ետքը, երբ մութը արդէն կոխած էր, ոտտիկանութեան նախարարը կը հասնէր Երլարզ և կը ներկայանար իր Վեհափառ տիրոջ:

— Ի՞նչ է այս սպառնական համակներուն խնդիրը, հարցուց բռնաւորը զայրացած չեշտով մը:

— Վեհափառ Տէր, բնաւ կարեւորութիւն տալիք բան չէ, պատասխանեց նախարարը, ինչպէս երէկ պատիւ ունեցայ Ձեր Վեհափառութեան յայտնելու, այս միջոցիս Կ. Պոլսոյ մէջ մէկ յեղափոխական չէ մնացած. հետեւաբար այդ տեսակ սպառնալիքները երբեք չեն կրնար գործադրուիլ:

— Վստահ ես այդ ըսածներուդ վրայ, պուսայ բռնաւորը՝  
— Եթէ վստահ չըլլայի չպիտի համարձակէի այս յայտարարութիւնը ընել Ձեր Վեհափառութեանն :

— Եւ եթէ այսօր կամ վաղը իմ պալատականներէս մէկուն գժրախտութիւն մը պատահի՞ . . .

Ես կ'երաշխաւորեմ ամենուն ալ ապահովութիւնը, պատասխանեց նախարարը . հիմա արդէն Սօֆիայի մեր գաղտնի ոստիկանութենէն հեռադիր մը ստացայ, որով կը ծանուցուի թէ այդ նաժախներուն հեղկնակը փախստական թուրք ուսանող մըն է եղեր :

Այս վերջին խօսքերը քիչ մը հանդարտեցուցին Ապտիւլ Համիտը : Նախարարը տեսնելով իր խօսքերուն առաջ բերած սպաւորութիւնը շարունակեց .

— Անգամ մըն ալ կը կրնեմ, Վեհափառ Տէր, թէ անկ. Պոլսոյ մէջ անկարելի է որ յեղափոխական ու է շարժում պատահի : Ծնորհիւ Աստուծոյ և Ձեր Վեհափառութեան, մեր բոլոր թշնամիներն ալ ջախջախուած են մայրաքաղաքին մէջ .

— Բայց ուրիշ տեղեր տակաւին կը գործեն, դետկ տուաւ բռնաւորը :

— Ինքալլահ, շնորհիւ Ձեր Վեհափառութեան, անոնք ալ իրենց արժանի պատժիը կը գտնեն . . . :

Գիշերը վրայ հասած էր երբ Շէֆիք փաշա իր տիրոջ մէկ քանի հրամաններն ստանալէ ետքը, Ապտիւլ Համիտ քովէն հեռացաւ, իր պաշտօնատեղին երթալու համար, ուր պիտի մնար մինչեւ կէս գիշեր :

Հազիւ թէ քառորդ ժամ կար որ հեռացած էր, երբ յանկարծ պայթիւն մը լսուեցաւ . Ապտիւլ Համիտ՝ սարսափահար ու գունաթափ՝ իր շուրջը գտնուող պալատականներուն նայեցաւ, որք փութացին պատուհանին քով, տեսնելու համար թէ ի՞նչ կ'անցնէր : Իզգէթ փաշա գոչեց .

— Շէֆիք փաշայի կառքը ջախջախուեր ու ինք ալ . . .

Խօսքը տակաւին չէր աւարտած երբ ետեւէ ետեւ կրկու հրազէնի ձայնիւ լսուեցան, որոնց յաջորդեցին ուրիշ ձայնիւ ալ: Պալատականները ստուգուածով ետ քաշուեցան պատուհաններուն առջևէն, մինչ բռնաւորը քորացած մնացեր էր իր տեղը, առանց կարենալ շարժում մը ընելու:

— Զիրար կ'սպաննեն կոր վարը, պարտէյին մէջ, ըստ Համիտի քարտուղարը դողահար ձայնով մը:

— Բայց որո՞նք, ի՞նչ կը պատահի կոր, պոռայ Ապախի Համիտ, առանց տեղէն շարժելու, չո՛ւա հասկցէք, լուր բե-րէք...

Երկու պայտասկան վաղելով դուրս ելան սրահէն, կայսերական հրամանը կատարելու համար:

Այլևս հրազէնի կամ նոր պայթուածի ձայն չէր լսուեր ուսմէն ինչ հանդարտած կը թուէր:

— Թշուառականները, մրմնջեց բռնաւորը, իրենց սպառնալիքը արդէն խի գործադրել կ'ոկուին և այդ աւանակ Շէֆիքը կը պնդեր թէ ապահովութիւնը կատարեալ է ու մէկ յեղափոխական չէ մնացած Պոլսոյ մէջ:

Կալիպ և Իզզէթ փաշաները անմտունչ իրարու կը նայէին: Սրճաւիթքը նկարուած էր իրենց դէմքերուն վրայ: Սարսափով կը մտածէին թէ իրենք ալ ենթարկուած էին նոյն վտանգին և դուրսէ այդ դիշեր կամ հետեւեալ օր, նոր պոմպա մը զիրենք ջարդուկտոր պիտի ընէր: Սպառնական նամակները ստացած ասաննին աւտուն իրենց զգացած երկիւղը, որ յետոյ փարատած էր ստախկանութեան նախարարին ապահովիչ և ինքնավատահ յայտարարութիւններէն, այժմ ա՛լ աւելի սաստկու-թեամբ զիրենք կը պաշարէր:

Ի՞նչ մը առաջ սրահէն դուրս փութացող երկու պալատա-կաններէն մին վերջապէս շնչասպառ վերադարձաւ:

— Ի՞նչ լուր, հարցուց Ապախի Համիտ այլայլած:

— Շնորհիւ Զեր Բարձր Վեհափառութեան, որուն թան-կազին կեանքը Աստուած պահպանէ յաւիտեան, եղածը մեծ բան մը չէ...

— Ո՞ւր է Շէֆիք փաշան...

— Վարը, սրահի մը մէջ փոխադրուած է, ուր նախնական դարձանները կ'ընդունի...

— Վիրաւորուած է...

— Այո՛, Վեհափառ Տէր...

— Ծանրապէ՛ս...

— Տակաւին յայտնի չէ, բժիշկները վերքերը քննելու վրայ են...

— Բայց ի՞նչ պատահեցաւ, գոչեց Ապտիւլ Համիտ անհամբեր. պատմէ՛ տեսնենք մանրամասնօրէն:

— Ահաւասիկ, Վեհափառ Տէր, իրողութիւնը: Ոստիկանութեան նախարար Շէֆիք փաշա, Չեր Բարձր Վեհափառութեան քովէն մեկնելով՝ վար կ'իջնէ իր կառքը նստելու և պաշտօնատեղին երթալու համար: Հողիւ թէ կառք կը մտնէ ու ձիերը ճամբայ կ'ըլլեն՝ պայթում մը կը լուրի, կառքը կը ջախջախուի, ձիերէն մին կը մեռնի ու կառապանն ու Շէֆիք փաշա դեռին կը տապալին վիրաւորուած վիճակի մէջ: Նոյն միջոցին, մութին մէջ, մէկու մը փախչիլը կը նշմարուի հոն գտնուող պահապանները խոյն գաշն կ'սկսին հալածել: Փախտականը այն ստանն ետին կը դառնայ և ձեռքը գտնուած հրազէնը կը պարպէ զինքը հալածողներուն վրայ և անոնցմէ երկուքը կ'ապաննէ. յետոյ, դարձեալ կը շարունակէ կրակ ընել, բայց վերջին հարուածները, զորս հետուէն կ'արձակէր, կը վիպին ու մարդու միտս չեն տար: Այս միջոցին՝ ամէն կողմէ օդնութեան կը փութան և կը յաջողին ձերբակալել այդ մարդը որ ապահովար մահախորձը կատարողն է...

— Ինչ, ձերբակալուած է, գոչեց Ապտիւլ Համիտ վայրագ ուրախութեամբ մը:

— Այո՛, Վեհափառ Տէր, և այժմ թեկն ու սաքերը կապուած՝ բանտարկուած է խոտ հոկողութեան ներքև:

— Իր ո՞վ ըլլալը յայտնուած է...

— Ո՛չ տակաւին, որովհետեւ ու ե է հարցաքննութիւնն չէ կատարուած :

— Ինչ որ է, գոնէ իրենցմէ մէկ հատը ձեռք ձգեցինք, ըսաւ բռնաւորը գոհունակ դէմքով մը :

Յետոյ հրամանն ըրաւ որ վիրաւորեալներու վիճակին վրայ նոր տեղեկութիւններ բերեն ու միւսնոյն ատեն ամէն խնամք շուայեն անոնց :

Այդ տեղեկութիւնները գոհացուցիչ էին : Նախարարը շատ թեթեւապէս վիրաւորուած : Բժիշկները յայտարարած էին որ քանի մը ժամուան հանդարտութիւն բաւական պիտի ըլլար զինքը կազդուրելու համար : Իսկ կառապանին վէրքերը թէև բաւական ծանր՝ սակայն մահացու չէին :

Այսպէս ուրեմն մահափորձը գրէթէ վիժած էր :

Ապտիւլ Համիտի առաջին մտահոգութիւնը եղաւ իրոգութիւնը ծածկել տալ :

— Եւ ո՛չ մէկը պէտք է զիտնայ որ այսպիսի բան մը պատահած է Երլտըզի մէջ, ըսաւ քովիներուն, գաղանիքը այս շրջափակէն դուրս ելլելու չէ : Թո՛ղ Շէֆիք փաշան զգուշութեամբ իր բնակարանը փոխադրեն ու թո՛ղ հոն հանդիստ մնայ մինչև որ իր ստացած վէրքերուն հետքերը բոլորովին ջնջուին : Թերթերուն ալ ըսէ՛ք որ ծանուցանեն թէ՛ ոստիկանութեան նախարարը ստամոքսի խանգարման հետեանքով՝ անկողին ինկած է ու մէկ քանի օր պաշտօնատեղին չպիտի կրնայ երթալ : Վերջապէս ամէն միջոց գործածեցէ՛ք որպէս զի Երլտըզէն դուրս երբեք չտարածուի այդ մահափորձին լուրը :

Սուլթանական այս հրամանը այնքան խիստ կերպով գործադրուեցաւ որ արդարեւ այդ եղելութիւնը բոլորովին ծածուկ մնաց և հանրութիւնը բնաւ չլուսացաւ Երլտըզի պարտէզին մէջ տեղի ունեցած այս գիշերային եղեւնը :

Ապտիւլ Համիտի երկրորդ հրամանը եղաւ անմիջապէս հարցաքննութեան ենթարկել ձերբակալուած յեղափոխականը :

Բռնաւորը, իր առաջին սարսափը անցնելէ ետքը, այժմ

գրէթէ գոհ էր պատահած մահափորձէն, որովհետեւ անով ձեռք անցուցած էր այդ վտանգաւոր յեղափոխականներէն մին որուն շնորհիւ անշուշտ ուրիշներ ալ կարելի պիտի ըլլար ձերբակալել :

— Այս գործին քննութիւնը Նէճիպ Մէլհամէն պիտի կատարէ, վճռած էր բռնաւորը :

Ինքն ալ ուղեց վարագոյրի մը հետէն ներկայ գտնուել այս հարցաքննութեան ինչպէս ամէն անգամ կ'ընէր երբ խընդիրը կարեւոր անձի մը շուրջը ըլլար :

Բոլոր այս կարգադրութիւնները քանի մը ժամ տեւեցին, այդ միջոցին պալատականներէն մին իր վեհափառ տիրոջ քով գալով՝ ուրախութեամբ ըսաւ .

— Յայտնուեցաւ թէ ո՛վ է եղեր ձերբակալուած անձը, զինքը ճանչցողներ կան հոս . . . :

— Ո՛վ է որ, հարցուց Ապտ—իւլ — Համիտ հետաքրքրուած :

— Նոյնինքն ծածուկ քօմիթէի պետերէն մին, Շահաթ թերթի նախկին խմբագիր Սատրգը, այն որ անգամ մը արդէն ձերբակալուած է չորս տարի առաջ և յետոյ Նէմէն աքտորուած միջոցին Սուէզի ջրանցքէն փախած էր իր միւս երեք ընկերներուն հետ, անշուշտ Չեր բարձր վեհափառութիւնը լաւ կը յիշէ այս ամէնը :

— Այո՛, այո՛, պատասխանեց բռնաւորը, այդ Սատրգը վերջին անգամ ալ ձեռք անցուցինք ու դաւաճան Մէհմէտի շնորհիւ կրցաւ փախչիլ :

— Այս անգամ ա՛լ օձիքը չի կրնար աղատել Արդարութեան ձեռքէն, պատասխանեց պալատականը, իցի՛ւ թէ Չեր վեհափառութեան դէմ դաւաճանող միւս թշուառականներն ալ մէկիկ մէկիկ այսպէս ձեռք անցնէինք . . .

Այս նոր աւետիսը, այսինքն ձերբակալուած անձին Սատրգ պէ՛յ ըլլալը, ա՛լ աւելի մեծ ուրախութիւն մը պատճառեց բռնաւորին : Քանի մը անձեր կային որոնք իր աչքին փուշ

եղած էին և կը կարծէր թէ իր դէմ նիւթուած անէն դուռ-  
դրութիւն անոնց ձեռքով կը գործուէր: Այդ անձերէն մին էր  
ահա՛ Սատրք պէյը: Անշուշտ աւելի դո՛ս պիտի ըլլար եթէ  
Սատրքի տեղ՝ Սպիհա հանրմը կարող ըլլար ձեռք ձգել, բայց  
գարձեալ որսը շատ կարեւոր էր:

Կէս գիշերին մօտ էր երբ Երիտասարդ յեղափոխականը,  
որուն թեւերը միշտ կապուած էին, բերուեցաւ այն սրահը  
ուր պիտի հարցաքննուէր:

Ապաիւլ Համիտ հրամայած էր որ յեղափոխականը Նէճիպ  
Մէլհամէն հարցաքննէ առանձին, միակ քարտուղարի մը ներ-  
կայութեան՝ որպէս զի ըլլալիք յայտնութիւնները ծածուկ  
մնան:

Իսկ ինք, ինչպէս ըսինք, վարագոյրի մը ետեւ պահու-  
տած էր՝ ճիշտ Նէճիպ Նէլհամէի թիկնաթուին ետեւ:

Սատրք պէյ շատ հանգարտ ու պաշարին կերպարանք  
մը ունէր երբ ներս բերուեցաւ:

— Ի՞նչ է անունդ և գործդ, հարցուց պալատականը:

— Անունս Սատրք է և Շահազ թերթին նախկին խմբա-  
գիրներէն եմ, իսկ այժմ իմ միակ գործս է բռնաւարութեան  
դէմ կուռիլ հայրենիքիս ազատութեանը համար, պատասխա-  
նեց Երիտասարդը խրոխտ ձեւով մը:

— Ո՞ր կը բնակիս:

— Բնակարանս չեմ ուզեր յայտնել, որպէս զի զիս Նիւր-  
ընկալողներուն գլխուն փորձանք մը չգայ:

— Դո՞ւն նետեցիր պոմպան ոստիկանութեան նախարարին  
կառքին վրայ:

— Այո՛:

— Դո՞ւն սպաննեցիր բէլովլէրով՝ քեզի հետապնդող եր-  
կու պալատական պահապանները:

— Այո՛,

— Ինչո՞ւ գործեցիր այդ ոճիրները:



— Որովհետեւ սուշած ենք մի առ մի ընաջինջ ընել բո-  
լոր շան անձերը որոնք արգելք կը հանդիսանան մեր հայրե-  
նիքի ազատութեան :

— Ո՞վ էք դուք որ այդ որոշումը աււած էք :

— Յեղափոխական քօմիթէի Կ. Պոլսոյ մասնաճիւղին ան-  
դամները :

— Քանի՞ հոգի էք :

— Այնչափ հոգի ենք որքան պէտք է մեր նպատակը  
գործադրելու համար :

— Քանի որ անկեղծ համարձակութեամբ մը իմ հարցում-  
ներուս կը պատասխանես, այնպէս ինչպէս կը վայէ ճշմարիտ  
յեղափոխականի մը, ըսէ՛ խնդրեմ այդ մասնաճիւղին անդամ-  
ներուն անունները :

— Ձեր այդ հետաքրքրութիւնը չպիտի կրնամ գոհացնել,  
միայն կը յայտնեմ որ ձեր ենթադրածէն շատ աւելի է իրենց  
թիւը : Գալով իրենց անուններուն՝ անոնք կարևորութիւն չու-  
նին, Աճմէա, Մէճմէա, Օսման կամ Ալի . . .

— Եւ ե՞րբ կատարելու միտք ունիք միւս մահափորձնե-  
րը :

— Առիթը ներկայացածին պէս, գուցէ այս գիշեր կամ  
վաղը առտու . . . :

— Ինչպէ՞ս յաջողեցար Երլարզի պարտէզը մանել, ոճիրդ  
կատարելու համար :

— Մեր քօմիթէն, պէտք եղած ատեն, ամեն տեղ մանե-  
լու միջոցը ունի :

— Բացատրէ՛ տեսնենք այդ միջոցը :

— Ձեմ կարող . . .

— Երլարզ մտած ատենդ առանձի՞ն էիր թէ ուրիշ ընկեր-  
ներ ալ ունէիր :

— Ուրիշ ընկերներ ունէի :

— Քանի՞ հոգի :

— Վեց կօթը հոգի :

— Ի՞նչ եղան անոնք :

— Կարծեմ յաջողեցան փախչիլ :

— Ո՛ւր տեղէն կրցար ձեռք ձգել պոմպան զոր նետեցիր կառքին վրայ :

— Մեր մթերանոցէն առի, դժբախտաբար շատ պզտիկ էր ու չկրցաւ պէտք եղած արդիւնքը տալ, կը յուսամ որ իմ ընկերներս կ'օգտուին այս դասէն ու աւելի մեծ ու զօրաւոր պոմպաներ կը գործածեն :

— Գիտե՞ս որ այդ գործած ոճիրիդ ու մարդասպանութեանց նուազագոյն պատիժը կախաղանն է :

— Բնականաբար, բայց գիտցէ՛ք որ անկեղծ յեղափոխական մը մահուընէ չի վախնար :

Ի՞նչ է քօմիթէին նպատակը այս ոճիրները գործելով ու հանրային անդորրութիւնը խանգարելով :

— Բռնակալութիւնը ջնջել, Սահմանադրութիւնը վերահաստատել և հայրենիքը փրկել մօտալուս կործանումէն :

— Ասոնք գեղեցիկ խօսքեր են, որոնք ու ե է արժէք չունին երբ մօտէն քննենք, պատասխանեց Նէճիպ Մէլհամէ բռնակալութիւնը գոյութիւն չունի այս երկրին մէջ. մեր Վեհափառ Տէրը, իր իմաստութեամբ, այնպէս կը կառավարէ երկիրը որ նոյն իսկ Եւրոպայի ամէնէն ազատ Սահմանադրութիւնը օւնեցող Պետութիւնները կը նախանձին մեր վրայ: Հանդարտօրէն իր գործին աշխատողներուն համար բռնութիւն չկայ բնաւ. բայց երբ ոճիրներ կը գործուին՝ անշուշտ Վեհափառ Սուլթանին պարտքն է պատժել յանցաւորները: Հայրենիքի կործանումը դուք էք որ կը փութացնէք ձեր յիմարական ձեռնարկներով: Մեր Վեհափառ Տէրը արամադիր է Սահմանադրութիւնը շնորհելու իր հպատակներուն՝ երբոր ժամանակը գայ, ուստի ձեր բոլոր այդ խօսքերը արժէք մը չունին և մազի չափ չեն կրնար արդարացնել ձեր անխիժապարտ արարքները:

— Ես իմ արարքներուս ամբողջ ծանրութիւնը կ'ընդունիմ և երբեք չեմ ջանար դանոնք արգարացնել կամ թեթեացնել, պատասխանեց երիտասարդը հանդարտութեամբ :

— Մէկ բան մը միայն կրնայ գուցէ նորին վեհախառութեան անձուն գթութիւնը քու վրայ հրաւիրել, չարունակեց պալատականը առանց Սատրք Պէյի խօսքերուն պատասխանելու, և քեզ կը հրաւիրեմ որ աշխատիս արժանանալ այդ գթութեան՝ առանց որու չարաչար մահ մը քեզի կ'սպասէ . . . :

Երիտասարդը զարմացած՝ պալատականին երեսը նայեցաւ, առանց անոր խօսքերուն իմաստը ըմբռնելու :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք Ապտիւլ Համիտի գթութեան ապաւինիլ ըսելով, հարցուց :

— Հիմա կը բացատրեմ միտքս, պատասխանեց փաշան . քիչ մը առաջ յայտարարեցիք թէ՛ քու ընկերներդ նորանոր մահափորձեր պիտի կատարեն ուրիշ բարձրաստիճան անձնաւորութիւններու դէմ : Արդ, այդպիսի ոճիրներ ուրիշ օգուտ մը չպիտի ունենան՝ այլ եթէ շատ մը անձերու դժբախտութեան պատճառ ըլլալ, թէ՛ անոնք որոնք զո՞ պիտի երթան մահափորձին և այդ մահափորձը կատարողները : Օրինակը անա՛ մէջտեղն է այս միջոցիս : Ի՞նչ օգտակարութիւն ունեցաւ քու արարքդ : Նախ՝ նպատակին չհասաւ, քանի որ ոստիկանութեան նախարարը ողջ առողջ է ու միայն քանի աննչան վէրքեր ստացած է, որոնց հետքն անգամ չպիտի մնայ մէկ քանի օրէն . յետոյ, ի փոխարէն երկու անմեղ պահապաններ, որոնք իրենց պարտականութիւնը կատարած են քեզ հալածելով՝ չարաչար սպաննուած են, ինչպէս նաև նախարարին կառապանը ծանրապէս վիրաւորուած է, որ նոյնպէս անմեղ զո՞ մըն է : Իսկ դո՞ւն արդարութեան ձեռքը մատնուած ես : Կը տեսնե՞ս թէ ի՞նչ ժխտական արդիւնք ձեռք տուած է մահափորձը : Բայց ընդունինք որ բոլոր մահափորձներն ալ յաջողին, ձեր մահուան դատապարտուած անձերը մեռնին և մահափորձին հեղինակներն ալ հրաշքով ազատին : Կը կարծե՞ս որ

այդ պարագային մեր վեհափառ Սուլթանը տեղի պիտի տա՞  
և ձեր ապաժաման պահանջումները պիտի գործադրէ : Բնաւ  
երբեք : Ընդհակառակն հալածա՞քը աւելի պիտի սաստկացնէ  
ձեր գազանի քօմիթէին դէմ և վստահ եղիք որ մեռնողներուն  
տեղ ուրիշ անձեր պիտի գտնուին որոնք իրենց համար փողք  
ու պատիւ պիտի համարեն անոնց պաշտօնները ստանձնել և  
հաւատարմաբար ծառայել մեր Վեհափառ տիրոջ : Մի՛ կարծեր  
որ այս խօսքերը կ'ըսեմ անձնական նկատումներով՝ որովհետե  
ես ալ սպառնական գիր մը ստացած եմ, ինչպէս անշուշտ  
դուն ալ գիտես :

— Այո՛, գիտեմ, ընդ միջևց Սատըգ պէյ հանդարտու  
թեամբ :

— Չէ՛, անձնական նկատումով չեմ խօսիր, սա ևս ըսեմ  
որ ձեր սպառնալիքներէն չեմ վախնար և՛ հակառակ անոնց՝  
պիտի շարունակեմ մինչև վերջին շունչս իմ Վեհափառ Տիրոջ  
ծառայելու ամենայն անձնուիրութեամբ և հաւատարմու  
թեամբ : Եւ աւելի ձեր օգտին համար է որ այս խօսքերը  
կ'ըսեմ :

— Ի՞նչ է ձեր եզրակացութիւնը, հարցուց երիտասարդը  
որ չսփառանց զարմանք կ'զգար հարցաքննութեան այս տա  
րօրինակ ձեւէն :

— Իմ եզրակացութիւնս այն է որ, նոյն իսկ ձեր օգտին  
համար, պէտք է առաջքն առնել ապագայ յիմարական մա  
հափորձներուն :

— Թո՛ղ ձեր ոտտիկանութիւնը և լըրտեսներու բանակը,  
եթէ կարող են, ընեն այդ բանը :

— Խնդիրը ատոր վրայ չէ. մեր ոտտիկանութիւնը ան  
շուշտ իր պարտականութիւնը պիտի կատարէ, բայց այդ բա  
լէ, պէտք է որ դուն ալ մեղի օգնես :

— Ե՞ս օգնե՞մ, գոչեց երիտասարդը զարմացած :

— Այո՛, օգնես քու և քու ընկերներուդ շահուն համար :  
Մատնութիւն մը չէ որ կ'առաջարկեմ քեզի՝ ալ խոհմու

թեան և խելացութեան գործ մը : Յայնմ՛ մեզի քու ընկերնե-  
րուդ անունները և հասցէները , և ես՝ յանուն մեր Վեհափառ  
Տիրոջ՝ կ'երաշխաւորեմ որ անոնց մազին գալստը չպիտի ըլլայ :

— Հապա ի՞նչ պիտի ընէք , արդեօք պատուանշաններով  
պիտի մեծարէ՞ք զիրենք , հարցուց Սատըք պէյ հեզնական  
ժպիտով մը :

— Չէ , ա՛յ զիրենք արտասահման պիտի զրկենք լիաւատ  
դրամական պարզւելով մը և արտասահմանի մէջ ալ իրենց  
աղբուստը պիտի ապահովենք . յանուն Վեհափառ Սուլթանին  
կը խոտանամ տօրկուս : Նորին Վեհափառութիւնը մէկ փափաք  
մը ունի՛՝ այն է խաղաղութիւնն ու անդորրութիւնը պահպա-  
նել թէ՛ մայրաքաղաքին և թէ՛ դաւառներու մէջ : Վրէժխնդ-  
րական դժբաղձներ չի տածեր , առար կրնաս վտահ ըլլալ :

— Իսկ զիս ինչպէ՞ս պիտի վարձատրէք իմ մատուցանե-  
լիք ծառայութեանս փոխարէն , ըսաւ յեղափոխականը նոյն  
հեզնական ժպիտով :

— Նախ՛ ներում պիտի շնորհենք գործած ոճիրներուդ  
համար , յետոյ քեզ ալ անոնց հետ արտասահման պիտի զր-  
կենք նոյն պայմաններով :

— Այդ ամէնքը շատ դեղիցիկ են , պատասխանեց Սատըք  
պէյ , միայն թէ մէկ անպատեհութիւն մը կայ :

Ո՞րն է այդ անպատեհութիւնը , հարցուց պալատա-  
կանը որ գոհ էր տեսնելով թէ երիտասարդը իր առաջարկը  
ընդունելու միտում ցոյց կուտար :

— Ընկերներս չպիտի հաւանին արտասահման երթալու :

— Ինչո՞ւ համար :

— Որովհետեւ արտասահմանէն եկած են արդէն ճիշտ այդ  
մահափորձները կատարելու պաշտօնով :

— Մենք զիրենք կը համոզենք , պատասխանեց պալա-  
տականը աւանց նշմարելու որ երիտասարդը իր քթին կը  
խնդար :

— Ենթադրենք թէ համոզուին ու հեռանան , նորէն ձեր

նպատակի՛ն չէք կրնար հասնիլ, որովհետև հեռացող քան երեսուներին տեղ՝ հարիւր հաս մէջտեղ պիտի կլլէ, ու կթէ անոնք ալ յաջողութե ձեռք անցընել՝ ուրիշ հազար հաս երեւան պիտի գան. . . յեղափոխական շարժումը, երիտասարդ թուրքերու մէջ, ձեր կարծածէն շատ աւելի խորապէս տարածուած է ամէն կողմ և չափադանցած չեմ ըլլար եթէ ըսեմ որ այսօր Պոլսոյ մէջ, պալատականներէն ու լրտեսներէն դուրս ամէն թուրք յեղափոխական է :

Երիտասարդը լսեց : Այս վերջին խօսքերը այնքան համոզուած չեչառով մը և այնքան հանդարտ կորովով մը արտասանած էր որ պալատականը սարսուաց, բայց իսկոյն իր վըրդովումը ծածկեց և ձայնը խտացնելով ըսաւ .

— Գիտցած եղիր որ Վեհափառ Սուլթանը բաւական զօրութիւն ունի ամէնքն ալ ջախջախելու :

— Ուրեմն այդ զօրութեան դիմեցէ՛ք :

— Պիտի յայտնե՞ս ընկերներուդ անունները :

— Զիս նախատե՞լ կ'ուզէք այդպիսի վատ առաջարկութիւններ ընելով, գոչեց երիտասարդը որուն աչքերը բարկութենէ կը չողային :

Պալատականը զգաց որ իր բոլոր համոզիչ խօսքերը անգուտ եզեր էին և թէ երիտասարդը միաք չունէր իրեն դէմ լարուած ծուղակին մէջ իյնալու :

— Կը ցաւիմ որ, ըսաւ, իմ խորհուրդներս կը մերժես և կ'ստիպես մեզ որ տարբեր միջոցներու դիմենք :

Լաւագոյն կը սեպեմ այդ տարբեր միջոցները որոնք գոնէ իմ արժանապատուութիւնս չեն վիրաւորեր :

— Քանի որ ինքնաբերաբար խօսիլ չես ուզեր՝ այն ատեն բռնի խօսեցնել պիտի տանք քեզ :

— Եթէ քիչ մը յիշողութիւն ունրնայիք, միաք պիտի բերէիք թէ ասկէ չորս տարի առաջ, նոյն աս պալատին մէջ, փորձեցիք զիս բռնի խօսեցնել և յաջողեցաք. . . կը զարմանամ որ կրկին այդ անյաջող փորձը ընել կ'ուզէք :

— Այն ասան շատ ներողամտութեամբ վարուեցանք, բայց այժմ պիտի տեսնես որ քեզ խօսեցնելու պիտի յաջողինք՝ հակառակ կամքիդ :

— Գուք ալ պիտի տեսնէք որ չպիտի խօսիմ, գոչեց երիտասարդը բարկաճայթ շեշտով մը :

Նէճիպ Մէլհամէ ոտքի կլաւ, մօտեցաւ երիտասարդին որ աթոռին վրայ նստած էր, թեւերը կապուած և գոչեց .

— Ոճրագործ թշուառական, ինչպէ՞ս տակաւին կը համարձակիս յոխորտալ . . . :

— Մեծագոյն ոճրագործը սա վարագոյրին ետև փնտռէ՛, պուտայ իր կարգին երիտասարդը, գլխովը ցոյց տալով այն ծածկոյթը որուն ետև կը գտնուէր Ապտիւլ Համիա :

Այս խօսքերուն վրայ՝ պալատականը շուտաչիւն ապտակ մը իջեցուց Սատրքի երեսին :

Երիտասարդը կատաղութեամբ ոտքի ցատքեց, ուղեց թեւերը անշարժութեան մատնող կապերը քակել, սակայն չկրցաւ ու սոսկալի ձայնով մը պուտայ .

— Վա՛տ, վա՛տ, վա՛տ . . . :

Նէճիպ Մէլհամէ իր գրասեղանին քով վերագարձած ու զանգակը հնչեցուցած էր :

Սննեկապահ մը երեցաւ սեմին վրայ :

— Պահապանները կանչէ՛, հրամայեց պալատականը :

Յետոյ, երիտասարդին դառնալով՝ ըսաւ .

— Հակառակ ոճիրներուդ ծանրութեանը՝ ուղեցի մեղմօրէն վարուիլ հետդ և նոյն իսկ փրկութեան ճամբայ մըն ալ ցոյց տալ, բայց խօսք հասկնալ չուղեցիր: Ա՛լ ասկէ ետքը մեղքը քու ճիտդ :

— Վատ թշուառական մըն ես, պու՛տայ Սատրք պէյ իբրև պատասխան :

Նոյն վայրկեանին պահապանները ներս մտան :

— Առէ՛ք այս մարդը ու տարէք կրկին բանտարկեցէք, ըսաւ պալատականը ցոյց տալով երիտասարդը, չըլլայ որ մէ-

Կը քովը մօտենայ կամ հետը խօսի, այս է մեր վեհափառ Տիրոջ բացարձակ հրամանը:

Պահապաններն ակնածութեամբ խոնարհեցան ու երիտասարդը բռնկով դուրս հանեցին:

Հակառակ մահափորձին անյաջողութեան՝ Սատրք իր նպատակին հասած էր: Ապտիւլ Համիտ դարձեալ սարսափահար եղած էր՝ մանուանդ երիտասարդին խօսքերը լսելէ ետքն ու բոլորովին մոռցած հեռաւոր վտանգները, Ռուսկիի բանակին մէջ տիրող ըմբոստական շարժումները. իր բոլոր ուշադրութիւնը դարձուցած էր Պոլսոյ վրայ: Բռնաւորին չափ սարսափի մասնուած էին նաև բոլոր անոնք որոնք սպառնական նամակներ ստացած էին: Պալատականներէն ո՛չ մին կը համարձակէր ոտքն Ելլորդէն դուրս գնել և արդէն Ապտիւլ Համիտ ալ հրամայած էր որ զգոյշ կենան և իրենց անձրը չվտանգեն: Նախարարներուն շուրջն ալ սքոտակարգ հսկողութիւններ ձևուք առնուած էին, այսու հանդերձ ժամէ ժամնոր մահափորձի մը կ'սպասէին սրտատրտի:

Ապտիւլ Համիտ, ջղային դրութիւնը բոլորովին խանդարուած, զիշերներն անքուն կ'անցընէր իր թիկնաթուին՝ մէջ: Ա՛լ սկսած էր իր ամէնէն հաւատարիմ պալատականներէն իսկ կասկածիլ, բայց մասնաւորապէս իր բարկութիւնը կեդրոնացուցած էր ստիկանութեան նախարար Շէֆիք փաշայի վրայ, որ մահափորձէն ժամ մը առաջ չէր վարանած հանդիսաւորապէս երդնուլ թէ՛ Պոլսոյ մէջ թուրք յեղախոխական մը չէր մնացած և թէ եղած սպառնալիքներն անկարելի էր որ գործադրուէին:

— Այդ աւանակը անկարելի է թուուլ իր պաշտօնին մէջ, կը կրկնէր:

Եւ սակայն չէր համարձակեր այդ միջոցին Շէֆիք փաշայի դպչիլ, մանաւանդ որ նախ և առաջ ինք զո՛ր գտցած էր սպառնալիքին: Ասկէ դաս՝ բռնաւորը կը խորհէր թէ՛ գուցէ իր գլխուն եկած փորձանքը զրգիւ մը պիտի ըլլար նա-



խարտրին աւելի եռանդով և ուշադրութեամբ դործելու իր պաշտօնին մէջ :

Գալով Սատրքի, ի դուր փորձած էին խօսեցնել զինքը : երիտասարդ յեղափոխականը ո՛չ սպառնալիքի և ո՛չ ալ տանջանքներու առջև տեղի տուած էր, աննման կորով մը ցոյց տալով :

— Այսպիսի մարդերու հետ ինչպէ՞ս կարելի է զրուխ ելլիլ, կը խորհէր Ապտիւլ Համիտ յուստնատութեամբ, ո՛չ սպառնալիքներէ կը վախնան, ո՛չ ալ տանջանքներով կը տկարանան . . .

Իբրև վերջին փորձ մը՝ երիտասարդ յեղափոխականը բանտարկած էին մութ ու նեղ նկուղի մը մէջ ուր միայն հաց ու ջուր կը արուէր իրեն, օրը մէկ անդամ, խուլ—համր պահապանի մը ձեռքով, որուն պատուէր տրուած էր բոլոր մը խկչմնալ բանտարկեալին քով : Բռնաւորը կը յուսար այսպէս բարոյական ու Ֆիլիքական անտանելի ճնշումի մը տակ փշրել երիտասարդին կորովն ու հոգեկան զօրութիւնը :

Ամբողջ շաբաթ մը այդ սարսափելի կեանքին ենթարկելէ ետքը երիտասարդ յեղափոխականը՝ գիշեր մը զինքը կրկին բերլն այն սրահը ուր հարցաքննուած էր առաջին անգամ :

Գարձեալ Նէճիպ Մէլհամէի յանձնուած էր Սատրք պէյը խօսեցնելու գժուարին պաշտօնը : Պալատականը երբոր տեսաւ իրենց զո՛րը զարմանք ու արհաւիրք զգաց միանգամայն : Ութը օր բաւական եղեր էր կերպարանափոխ ընելու համար այդ առոյգ երիտասարդը, որուն աչքերը հիմա փոսը ինկած էին, երեսը անուկիօրէն տժգունած, նայուածքը մարած :

— Սատրք, ըսաւ պալատականը մեղմ ձայնով մը, նոր հարցաքննութեան մը սկսելէ առաջ կ'ուզեմ որ անգամ մը զէմքդ տեսնաս հայելիի մը մէջ :

Այս ըսելով՝ Նէճիպ Մէլհամէ զրպանէն փոքրիկ կաշկապտ հայելի մը հանեց և ենիտասարդին մօտենալով վայրկեան մը աւոր գէմը բռնեց : Սատրք անտարբեր նայուածք մը ուղղեց

հայելիին, իր դէմքը անոր մէջ անսնկով սարսուռ մը ունեցաւ և յանկարծական շարժումով մը գլուխը անդին դարձուց .

— Ինքզինքէդ կը սոսկաս կոր, այնպէ՞ս չէ, ըսաւ Նէ՛ճիպ Մէլհամէ շարաշուք ժպտով մը :

Երիտասարդը չպատասխանեց :

Պալատականը վերադարձաւ իր գրասեղանին քով ու թիկնաթոռին մէջ բազմելով՝ ըսաւ .

— Կը յուսամ որ ութօրեայ կեանքդ զնտանի մթութեան մէջ բարերար ազդեցութիւն մը ըրած է մտքիդ վրայ և թէ այլևս պիտի հրաժարիս քու յամառութենէդ որուն պատիժը շարաշար կրեցիր :

— Ի՞նչ յամառութիւն, հարցուց երիտասարդը :

— Մեր հարցումներուն ճշգրիտ կերպով չպատասխանելու յամառութիւնդ :

— Ինչ որ կրնայի ըսել ինչ որ պարտաւոր էի ըսել, արդէն ըսի, անոնցմէ դուրս ելբեք կամք չունիմ ձեր հարցումներուն պատասխանելու և եթէ այդ նպատակով զիս հոս բերել տուիք, անօգուտ աշխատութիւն մը ըրած էք ու լաւագոյն է որ անմիջապէս զիս վերադարձնել տաք իմ զնտանս :

— Ի՞նչ, գոչեց Նէճիպ Մէլհամէ, տակաւին այդ յիմար ընթացքէն հրաժարելու միտք չունի՞ս . . .

— Ինչ որ ձեզի համար յիմար ընթացք կը թուի՝ ինձի համար նուիրական պարտականութիւն է, պատասխանեց երիտասարդը որուն ձայնը հետզհետէ կորովի շեշտ մը կ'առնէր :

— Ատոնք գեղեցիկ խօսքեր են որոնք իրականութեան մէջ ունէ արժէք չունին ըսաւ պալատականը իրականութիւնը այն է որ եթէ շարաթ մըն ալ յամառիս քու այս ընթացքիդ մէջ՝ գուցէ այն զնտանը ուր կը գտնուիս քու գերեզմանդ ըլլայ և այն ատեն ի՞նչ պիտի շահիս . . . լաւագոյն չէ՞ որ ինքզինքդ փրկես ու վերադառնաս քու սիրելիներուդ քով, քու ծնողքիդ, քու ազգականներուդ, քու բարեկամներուդ ծոցը . . . :

— Մնոնցմէ ևս շատոնց հրաժարած եմ հայրենիքիս  
զոհուելու համար, ըսաւ երիտասարդը չոր կերպով:

— Ի՞նչ անօգուտ զոհարերութիւն... կը կարծես որ քու  
մեռնելովդ հայրենիքիդ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլաս,  
կամ քու հետապնդած նպատակիդ կը հասնիս... .

— Գիտցէք որ այդ խօսքերը ո ե է կերպով չեն կրնար  
ազդել իմ վրաս:

— Վերջին անգամ կը հրաւիրեմ քեզ որ խօսիս... ըսէ՛  
տեսնեմ գաղանի քօմիթէէն քանի՞ հօգի անդամներ կը գրաւ  
նուին Պոլիս:

— Չեմ գիտեր:

— Քու ընկերներդ որո՞նք էին:

— Չեմ ուզեր ըսել:

— Գիտե՞ս որ սպառնալիքներդ ո ե է արդիւնք չունեցան  
և քու ձերբակալուելէդ ի վեր, հակառակ քու ենթադրու-  
թեանդ, նոր մահափորձ չպատահեցաւ, ինչ որ կ'ապացուցա-  
նէ թէ ընկերներդ արդէն կծիկը դրած են քու բռնուիլդ իմա-  
նախուն պէս... անա՛ թէ ի՞նչ տեսակ մարդոց համար ինք-  
զինքդ կը վտանգես ու տանջանքներու կ'ենթարկուիս:

— Չեմ ներեր ձեզի որ իմ ընկերներս նախատէք, գոչեց  
Սատրք պէյ զայրացած:

— Իրողութիւնը կ'ըսեմ կոր, շարունակեց պալատականը  
ո՞ւր են նոր մահափորձները...

— Եթէ չեն պատահած՝ կրնաք վստահ ըլլալ որ քիչ  
օրէն պիտի պատահին:

Երիտասարդը այնքա՛ն հոստատ չեչտով մը արտասանեց  
այս խօսքերը որ Նէճիպ Մէլհամէ որտի՛ն խորէն երկիւզ մը  
ղգաց:

— Վեհափառ Սուլթանը իր անսահման բարխորտութեամբ  
քեզի բացարձակ ներում պիտի չնորհէ, եթէ մեզի յայտնես  
քու ընկերներուդ անունները, ըսաւ պալատականը:

Սատրք պէյ չպատասխանեց:

— Նոյնպէս դրամական մեծ նուէր մըն ալ պիտի չնորձէ ,  
չարունակեց Նէճրիպ Մէլհամէ :

Երիտասարդը կրկին չպատասխանեց :


— Ասանցմէ զառ մեր Վեհափառ Տէրը արամաղկը է  
քեզի կարեւոր պաշտօն մըն ալ տալ պալլաւին մէջ :

Դարձեալ լռութիւն յեղափոխականին կողմէ :

— Իսկ եթէ քենէ պահանջուածը չուզես ընել , այն ասան  
իրբև հասարակ սճրագործ դաւաճան մը պիտի վարուինք  
հետդ , ըսաւ պալատականը , հիմա ընարէ՛ տեսնեմ այդ կը-  
կուքէն մէկը՝ կամ ազատութիւն , հարստութիւն , փասք ու  
պատիւ և կամ չարաչար մահ գնտանին մէջ :

Երիտասարդը պահ մը գլուխը կախեց , կարծես թէ խոր  
մտածումի մը մէջ բնկղմած ըլլար . յետոյ գլուխը վեր առաւ  
ախարհը շեշտակի պալատականին վրայ յառեց և հանդարտ  
ու հաստատուն ձայնով մը պատասխանեց .

— Զնտանին մէջ չարաչար մահը կ'ընտրեմ . . .



Պ Լ Ո Ւ Խ Ժ Ե .

## Մ Ա Ռ Ա Ն Ա Պ Ե Տ Օ Ս Մ Ա Ն Պ Է Յ

Իր գնտանին մթութեանը մէջ Սաարք պէյ ուրախ և  
յուսալից կ'սպասէր : Գիտէր թէ իր բարեկամները , հեռուն ,  
անդործ չէին մնար և ազատութեան պէյքարը առաջ կը մը-  
զէին ու այս բանը կը սրտապնդէր զինքը : Ուրախ էր մա-  
նաւանդ որ կրցած է Սալիհա հանըմին առաւ խորհուրդը  
յաջողութեամբ գլուխ հանել և բռնաւորին ուշադրութիւնը

կեղբորնացնել Պոստոյ վրայ: Իր միակ տառապանքը այն էր որ կարող չէր հաղորդակցելի դուրսի հետ լուր առնել իր ընկերներէն, յուսատու խօսք մը լսել անոնցմէ:

Վերջին հարցաքննութիւնէն ետքը օրեր անցած էին ու կրկին զինքը չէին վնասած: Եւ սակայն Ապոսիւլ Համիտ ամեն վարկեան այդ մահափորձով կ'զբաղէր, անվերջ քննութիւններու կը ձեռնարկէր հետք մը գտնելու, նորանոր դաւադիրներ ձեռք անցնելու համար: Սաարքի Երբորզի պարպարաէշ մանելն ու մահափորձ կատարելն անլուծելի դադարնիք մը մնացած էր և կարելի չէր եղած հասկնալ թէ ինչպէս երկուստարդը կրցած էր առանց տեսնուելու մինչև հոն երթալ:

Գունապաններն ու պահապաններն ամենախիտա հարցաքննութիւններու ենթարկուած էին. ո՛չ ոք կրցած էր տեղեկութիւն մը տալ: Բռնաւորն հաստատապէս համոզուած էր թէ պալատին մէջ գտնուող անձեր մաս ունէին գործին մէջ և այս համոզումը չափազանց կը սաղնա պիցնէր զինքը:

Ո՞րոնք էին իրեն դէմ դաւող պալատականները, որո՞ւ վրայ կարելի էր կասկածիլ: Ապոսիւլ Համիտ մի առ մի աչքին առջև կը բերէր իր շուրջի մարդիկը, անոնց ամբողջ անցեալը ամենափոքր արարքները, կը ջանար վերլիչելու, իրենց նոյնուածքը, չարժուհիներո՞ւ, խօսուածքը վերլուծելու, որպէս զի կարողանար կասեաձանքի դոնէ նշոյլ մը գտնել...

Իր շարջիները իրենց արքայ այս մտատանջութիւնը կը տեսնէին, անոր պատճառը կը դուշակէին և սրտատրտի անձկութեամբ կ'ստպասէին թէ իրենցմէ որո՞ւն զլխին պիտի պայթէր փորձանքը: Պալատականները իրարու երես նայելու կամ իրարու խօսք ուղղելու չէին համարձակեր կասկածի տեղի չտալու համար:

Այս սաղնատրայի օրերուն էր երբ պալատական առաջին միւսահիպ ճէվհէր ալա նրբանցքի մը մէջ հանդիպեցաւ Ապոսիւլ Համիտի մտուանապետ Օման պէյի: Այս վերջինը շուրջը

կասկածոս ակնարկ մը պտտցնելէ և սառուղիէ կաքը լի է բու-  
լորովին սուսնձին են, մօտեցաւ մուսահիպին ու ցած ձայնով  
հարցուց .

— Ի՞նչ նոր լուր կայ, ձէֆէր աղա, մեր Վեհափառ Տէրը  
դարձեալ մտատանջութեան մէջ է . . . :

— Իր տազնառն ու մտատանջութիւնը հետզհետէ կ'ա-  
ւելնան կոր, պտտասխանեց աղան, և կարծեմ մեծ վատեղ մը  
կ'սպաւնայ ամենուս զլխուն . . .

— Աստուած իմ, ի՞նչ վատեղ . . .

— Ամենքս ալ մի առ մի հարցաքննութեան պիտի են-  
թաբկու ինք և վա՛յ եթէ ամենափոքր հակասութեան մը մէջ  
իյնանք, կամ չփոթութեան նշոյլ մը ցոյց տանք . . .

— Ի՞նչ կ'ըսես, ձէվհէր աղա, ես չեմ կարծեր որ մեր  
Վեհափառ Տէրը այսպիսի ծայրայեղութիւններու զիմէ և իր  
տարիներէ ի վեր փորձուած հաւատարիմ ծառաներուն վրան  
ալ կասկածի :

— Հարցաքննութիւնները արդէն սկսած են, Օտման պէյ,  
ինչ որ կ'ըսեմ բացարձակ իրողութիւն է :

— Հարցաքննութիւնները սկսած են, միմուայ մտանա-  
պետը սարսափահար դէմքով մը :

— Այո՛, այս միջոցիս Սէճճատէճի պաշի Իզզէթ պէյը  
հարցաքննուելու վրայ է . . .

Այս վերջին տեղեկութիւնը ա՛լ աւելի չփոթութեան մա-  
նեց ծերունի մառանապետը որ քթին տակէն մրմնջեց :

— Աստուած ողորմի ամէնուս ալ . . .

— Մեր Վեհափառ Տէրը իր արդարամտութեամբ անշուշտ  
պիտի դատաստան ընէ և մենք քանի որ անմեղ ենք վախնա-  
լու բան մը չունինք :

— Հարկաւ, հարկաւ այնպէս է, ըստ Օտման պէյ, ու-  
րուն չփոթութիւնը կ'աւելնար :

Երկու պալատականները զիրար բարեւելէ կաքը հետա-  
ցաւ :

Մերունի մառանապիտը կամաց կամաց զնաց մէկ քանի հրահանգներ տալու . յետոյ ժամացոյցը նայեցաւ և ինքնիրեն ըսաւ .

— Արդէն բաւական ուշ է , լաւագոյն է որ ելլեմ ընակարանս երթամ . . .

Իր սենեկապանը կանչելով՝ ըսաւ թէ սուներ հիւանդ ունենայուն պատճառաւ ստիպուած էր անպատճառ երթալու և իթէ անակնկալ կերպով իրեն պէտք ունենային՝ կրնային լուր դրիկ ուրպէս զի անմիջապէս գար :

Մառանապիտին սպարանքը Օրթաքէոյ կը գտնուէր և իր կառքը նստելէն քսան վայրկեանս կաքը արդէն հասած էր հին :

— Կէս ժամէ ի վեր էֆէնտի մը ձեզի կ'սպասէ հիւրանոցը , ըսաւ իր սղան :

— Ո՞վ է այդ էֆէնտին , հարցուց Օսման պէյ գեղոն գէմքով մը :

— Անունը չտուաւ , խիստ մաքուր հազուած երիտասարդ պէյ մըն է , որ առաջին անգամ կը անհնկմ :

Մառանապիտը տենդոտ քայլերով ուղղուեցաւ դէպի հիւրարանը , դուռը բացաւ և իրեն սպասող հիւրը նշմարելով թեթև ճիչ մը արձակեց . յետոյ կտին գարձաւ , ազան ճամբու դրաւ , և սրահէն ներս մտնելով դուռը գացեց :

— Ի՞նչ յանդգնութիւն . Արիֆ պէյ , գոչեց :

Երիտասարդը որ նոյնինքն մեզի ծանօթ յեղափոխականն էր , պատասխանեց .

— Կը ներէք , Օսման պէյ , բայց պարտաւորուած էի ձեզ անհնկ անպատճառ :

— Բայց այս միջոցիս գիտէ՞ք թէ ի՞նչ սարսափնիլի փորձանքներ կ'սպառնան մեր ամենուս ալ գլխին :

— Ի՞նչ կայ որ , հարցուց Արիֆ իր խօսակցին ըսածներէն դող ելած :

Ապաքիւ Համիրտի մտանապիսիւր մօտեցաւ երիտասարդին  
և պատմեց ինչ որ բաժ էր ձէվձէր ազգայէն :

— Շիրտակը ծանրակշիւ է այդ իրողութիւնը , ըստ Ա.  
րիֆ , բայց ինչո՞ւ համար արդեօք Համիրտ այս հարցաքննու-  
թիւններուն ձեռնարկած է , միթէ որոշ կասկածնե՞ր ունի :

— Ձեմ գիտեր , բայց կը վախնամ որ շուտով հարցաքն-  
նուելու կարգը ինծի պիտի դայ : Հիմա պատմէ՛ տեսնենք թէ  
ի՞նչ կարեւոր բան քեզ հոս բերելու անխոհեմ արարքին մղեց :

— Նախ ըսէք թէ ի՞նչ վիճակի մէջ է Սատըք :

— Միշտ զնտանին մէջ բանտարկուած ու ամէն յարաքե-  
րութիւններէ զրկուած :

— Դեռ կ'ապրի ուրեմն :

— Այո՛ , դեռ կ'ապրի , բայց չեմ գիտեր թէ որքան պի-  
տի կրնայ դիմանալ այս կեանքին :

— Հարկ է որ Սատըք իրմէ պահանջուած խոտովանու-  
թիւնը ընէ , որպէսզի ազատի այդ տանջանքներէն :

— Ինչպէ՛ս , կ'ուզէ՞ք որ ձեզ մասնե՛ . . .

— Այո՛ , պատտօրեանեց կրիտասարգը , այժմ կրնայ ա-  
մէն բան ըսել , որովհետեւ ամէնքս ալ ապահովութեան մէջ  
ենք :

— Ի՞նչ ըսել կ'ուզես , հարցուց Օսման պէյ զարմացած :

— Ըսել կ'ուզեմ որ Յաթմա և իր հեռ Ջիւլէհան ու Հա-  
սանն ալ , որոնք հրաշալի զուգադիպութեամբ մը զինքը տա-  
նող առաքատաանաւը տպատանած են , անվտանգ հասած են  
Սելանիկ ու անկէ ալ մեր ապստամբ ընկերներուն քովը :

— Այս լուրը չափազանց դո՛ւ ըրաւ զիս , ըստ Օսման  
պէյ , մանուաւնդ այդ խեղճ տղոց ազատումը :

— Յետոյ Սաի պէյ ևս հեռացած է Պոլսէն երէկուսէ ի  
վեր . նոյնպէս մեր միւս ընկերները : Իսկ ևս այս իրիկուն խի  
չոգենաւ կը մտնեմ : Ինչպէս կը տեսնաս , Սատըքի ընկիւթ  
յայտնութիւնները միզի չին կրնար վիասել , բայց գտնէ զինքը  
իր սոսկալի կացութենէն կ'ազատեն : Ես թուղթի մը մէջ ման-



բամանորէն գրած եւ ամէն բան հիմա հարկ է որ այդ թուղթը Սաաբքի ձեռք համարի և ասիկա միայն դուն կրնաս ընել . . .

— Ե՞ս, գոչեց մառանապետը սարսափահար, ե՞ս այս միջոցիս ուր ամենքս ալ կտակածի տակ ենք, ուր Երլարզի մէջ ամենքը իրար կը լրտեսեն . . . անկարելի բան է ըսածդ :

— Ո և է միջոցաւ, բանտապահը սիրաշահելով, կամ սպառնալով վերջապէս անկարելին փորձելով պէտք է որ այս թուղթը Սաաբքի ձեռքը հասցնես, ըսաւ Արիֆ պէյ վճռական շեշտով մը :

— Այդ ըսածդ զիս պարզապէս մահուան դատապարտել է :

— Գերագոյն ծառայութիւն մըն է որ կը խնդրեմ քենէ, մինչև հիմա բաւական ճարպիկութիւն ունեցար ինքզինքդ չմտանելու և իբրև Ապաիւլ Համիտի հաւատարիմ ծառան՝ ահոր վստահութիւնը գրաւելու . այս անգամ ալ վստահ եմ որ պիտի յաջողիս, առանց գլխուդ փորձանք մը բերելու :

— Ի՞նչ մը առաջ պատմեցի քեզ Երլարզի մէջ տիրող վիճակը, գուցէ ժամէ մը զիս ալ տանին հարցաքննելու, գուցէ տունս արդէն լրարմներով պաշարուած է, գուցէ բու հոսներկայութիւնդ արդէն իմացուած է, այս պայմաններուն մէջ ի՛նչպէս կրնամ առաջարկութիւնդ կատարել :

— Փորձէ՛ անգամ մը թերևս կը յաջողիս, պնդեց երիտասարդը : Թուղթը ահաւասիկ, կարելի է դայն պահել բանտարկեալին արուելիք հացին մէջ . . .

Արիֆ պէյ այս ըսելով՝ գրպանէն ծալլուած թուղթ մը հանեց և Յաման պէյի կրկարեց, որ մեքենական շարժումով մը առաւ դայն ու պահեց :

— Թուղթն որչափ աւելի չուա համարի ձեռքը այնքան աւելի լաւ կ'ըլլայ, ըսաւ :

Մառանապետը չպատասխանեց : Արիֆ պէյ շարունակեց .

— Ես կը մեկնիմ, իմ դուրս կլլէս ետքը դուն առանձին մտածէ՛ և ճար մը գտիր այս թուղթն այս իրիկուն իսկ

Սաաբքի ձեռքը հասցնելու... յոյսերնիս քու վրադ է և այդ խեղճ կրիտասարդին կեանքը քենէ կախուած է, որովհետեւ եթէ յարատեւէ լուռ մնայ, ապահովաբար զինքը զնստանին մէջ պիտի մեռցնեն...

Արի՞ յամրաքայլ մօտեցաւ դրան, զայն բացաւ ու անկրեւոյթ եղաւ, մինչ Օսման պէյ արձանագոստ մնացեր էր իր եղած սեղը:

Երիտասարդին մեկնելէն ետքը՝ ընկճուած՝ թիկնաթուռի մը մէջ ինկաւ և հոն մնաց ժամու մը չափ, խոր մտածումներու մէջ թաղուած: Յետոյ, մէկէն ոտքի ելաւ ճակատը սրբեց, հառաչանք մը արձակեց և ինքնիրեն ըսաւ.

— Աստուած ողորմի ինձի:

Այս խօսքերը արտասանելէ ետքը դուրս ելաւ հիւրասրահէն և իր ազան կանչելով ըսաւ.

— Ըսէ՛ կառապանին որ կառքս պատրաստէ, Երլարզ պիտի վերադառնամ:

Ազան գնաց իր տիրոջ հրամանը կատարելու, չափազանց զարմացած այս յանկարծական մեկնումին համար, ինչ որ շատ անսովոր կը թուէր իրեն:

— Ապահովաբար այս մեկնումը կապ ունի քիչ մը սուղուան այցելութեան հետ, մտածեց, աւանց սակայն կարենալ այդ կապակցութիւնը հասկնալու:

Մտռանապետը Երլարզ հասնելուն պէս, իրեն յատկացուած սենեակը քաշուեցաւ և սենեկապահին պատուիրեց որ Ապու Մամաքը իրեն կանչէ: Ապու Մամաք Սուտանցի ըմբիշ մըն էր որ Ապաիւլ Համիտի ծառայութեան մէջ մտած էր տարիներէ ի վեր: Թէև ինք հրաւիրուած էր Պոլիս իբրև պալատական ըմբիշ ու այդ տիազոսը կը կրէր, սակայն Ապաիւլ Համիտ այդ տեսակ ժամանցներէ համ չառնելուն համար երբեք պալատի ըմբիշները իրենց յատկացուած դերը չէին կատարեր և ընդհանրապէս զանազան տարրեր պաշտօններ կը վարէին: Ապու Մամաքի ալ վիճակուած էր բանտապետի պաշտօնը: Երլարզի բանտարկեալներուն համար:

Սուտանցին պալատին մէջ համբաւաւոր էր իր արտակարգ ուժովը, վայրագութեամբը, որկրամոլութեամբը և արծաթասիրութեամբը :

Ապու Սամաք երբ մառանապետին սենեակը մտաւ՝ այս վերջինը թիկնաթոռին մէջ ընկողմանած, անընդհատ կը ծըխէր :

— Ձեր վսեմութիւնը զի՞ս տեսնել ուզեր է, հարցուց Սուտանցին իր երկար հասակը սատանելով :

— Այո՛, պատասխանեց Օսման պէյ, հաճեցէ՛ք նստիլ, խօսելիք ունիմ ձեզի :

Սեւամորթը աթոռ մը առաւ և անխածական դիրքով մը նստաւ, զարմանք զգալով այս անակիկալ հրաւերէն, որովհետեւ իր կեանքին մէջ երբեք յարարերոնթիւն չէր ունեցած մառանապետին հետ :

— Ապու Սամաք, ըսաւ Օսման պէյ, լսած եմ որ դրամը շատ կը սիրես, իրա՞ւ է :

— Ո՛վ չի սիրեր դրամը, պատասխանեց սեւամորթը ժպիտով մը որ փզոսկրեայ ձերմակ ակուաներու շարք մը երեւան հանեց :

— Կ'ուղե՞ս անմիջապէս մեծկակ գումար մը շահիլ, շարունակեց մառանապետը :

— Ի՞նչպէս հարցուց Սուտանցին աչքերը շողացնելով :

— Շատ դիւրին կերպով, առանց մէկու մը վնասելու, առանց ինքզինքիդ փորձանք մը բերելու . . .

— Լաւ ուրեմն խօսեցէք տեսնեմ և ըսէք թէ ի՞նչ ծառայութիւն կ'սպասէք ինէ . . .

— Ձեր ընդիւքը պարզապէս բարերարութիւն մը պիտի ըլլայ, մարդասիրական գործ մը որով թշուառ մօր մը աղօթքներուն պիտի արժանանաք :

— Աւելի աղէկ, թէ՛ բարերարութիւն ընել և թէ՛ դրամ շահիլ, ատիկա առիթ մըն է որ յաճախ չի պատահիր :

— Բանտարկեալ մը կայ հոս որ երկու շաբաթէն աւելի է, ձեր հսկողութեան յանձնուած է...

— Սաառք պէ՛յը հարցուց Սուտանցին :

— Այո՛ խօսքս ճիշտ այդ երիտասարդին մասին է : Իրա՛ւ է որ այդ երիտասարդը ոճրագործ մըն է և իր արժանի պատիժը կը կրէ , այսուհանդերձ չենք կրնար արգիլել որ իր մայրը չողբայ իր զաւկին վրայ ու չմտածէ անոր մասին...

— Բնական է որ պիտի ողբայ ու մտածէ , պատասխանեց սևամորթը առանց ըմբռնելու թէ մառանապետը ո՞ւր պիտի կապէր իր խօսքը :

— Կրնա՞ք ինձի ըսել թէ Սաառքի կերակուրը ո՞վ կը տանի , հարցուց մառանապետը .

— Խուլ-համբ պահապան մը ունինք՝ անոր յանձնուած է այդ գործը :

— Կարծեմ հաց ջուր կը արուի իրեն...

— Վեհափառ Սուլթանին դէմ դաւաճանող ոճրագործի մը ուրիշ ի՞նչ կ'ուզէք որ տանք . այդ անգամ չնորհ մ'է մեր Վեհափառ Տիրոջ կողմէ :

— Բնականաբար այդպէս է , փութաց պատասխանել մառանապետը : Ո՞ր ժամերուն կուտաք ընդհանրապէս իր ուտելիքը :

— Ամէն առտու կանուխ , հրաման եղած է որ օրը մէկ անգամ միայն քովը մարդ մօտենայ :

— Ուրեմն վաղը առտու պիտի տարուի իրեն ուտելիքը :

— Այո՛ , վաղը առտու կանուխ :

— Հիմա ինձ մտիկ ըրէ՛ , Սպու Սամաք , քենէ խնդրելիք ծառայութիւնս այն պիտի ըլլայ որ այդ հացին ու ջուրին հետ խմորեղէն մ'ալ տաք իրեն , խմորեղէն մը գոր իր մայրը յատկապէս պատրաստած է : Ստով խեղճ կլինք կ'ուզէ նախ իր զաւկին հաճոյք մը զատճառել , յետոյ անոր զգացընել թէ իր վերայ կը մտածեն ու զինքը չեն մոռցած : Ինչպէս կը տեսնէք՝ ձենէ խնդրուածը շատ անխնայ բան մ'է...

— Բայց դիակ՞ք որ եթէ յայտնուի ի՛նչ փորձանք կրնայ  
դալ զլեռուս :

— Մէկ խմորեղէնի՞ մը համար, ոչինչ . . .

— Չէ՛, ըսաւ Սուսանցին, այսպիսի գործ մը չեմ կրնար  
կատարել . . . շատ ծանրակշիռ բան մըն է :

Ապու Սամաք, մեծ վարձատրութիւն մը պիտի ստանաք  
եթէ այդ բանը ընէք և կարենաք դադանի պահել :

— Ծատ վտանգաւոր է, պնդեց Սուսանցին զլուխը օրօ-  
րելով :

— Հարիւր սկիի նուէր կայ ձեզի, եթէ յաջողիք խմորե-  
ղէնը Սատրքի ձեռքը հասցընել, ըսաւ մտաւնապետը :

Գրամական այդ նուէրը լսելուն պէս՝ Ապու Սամաքի աչ-  
քերը չաղացին :

— Հարիւր սկիի, մրմնջեց ինքնիքին :

Մտաւնապետը հասկցաւ թէ ի՛նչ կ'անցնէր սեամորթին  
չողիին մէջ և խօսքը առաջ ատարաւ :

— Հարիւր սկիին անմիջապէս կը վճարեմ եթէ խոտանա  
խմորեղէնը Սատրքի ձեռքը հասցնել առանց մէկու մը դի-  
տակցութեան . . . կը տեսնաս որ շատ դժուար և վտանգաւոր  
գործ մը չեմ պահանջեր քենէ և ի փոխարէն առատօրէն կը  
վարձատրեմ . . . չմտնամ ըսելու որ քեզ յանձնելիք խմորեղէնս  
մեծ բան մը չէ և կրնաս շատ դիւրաւ ծածկել . . .

Ապու Սամաք սկսաւ մտածել. այդ խմորեղէնի ինչդիրն  
իրեն տարօրինակ կը թուէր : Միթէ՞ կ'արժէ՞ր հարիւր սկիի  
առլ անոր համար . . .

— Խմորեղէնը պատրաստ է, հարցոյց ի վերջոյ :

— Վազն առտու կանուխ քեզի կը յանձնեմ :

— Դա՛ւ ևս ալ կը խոտանամ զայն իմ ձեռքովս Սատր-  
քին տալ :

Մտաւնապետը ուրախութեամբ օտքի ելաւ, սեամորթին  
ձեռքը սեղմեց և ըսաւ .

— Շնորհակալ եմ, Ապու Սամաք, վստահ եղի՛ր որ այս

ըրածդ յաւիտեան չը պիտի մտնամ և պիտի ջանամ որ մը զայն փոխարինել :

— Ընկիւքս այնքան մեծ բան մը չէ, պատասխանեց Սուսանցին համեստութեամբ, մանաւանդ որ առատօրէն կը վարձատրէք կոր :

Ապու Սամաք ոտքի կլաւ, ակնածանքնով բարեկց և սրտհէն մեկնեցաւ :

— Հիմա կեանքս այս սեւամորթին ձեռքն է, մտածեց Օսման պէյ երբ առանձին մնաց :

Հեռեկալ առտուն կանուխ Սուսանցին կհրու մառանապետին քով :

— Պատրաստ է, հարցուց :

— Այո՛, պատասխանեց Օսման պէյ և գլորոց մը բանալով մէջէն փոքրիկ ծրար մը հանեց և Սեւամորթին երկարեց : Յետոյ զրպանէն թղթապանակ մը հանելով՝ պանքնօթներու դէզ մին ալ առաւ, ըսելով :

— Ահաւասիկ հարիւր ոսկին, դուն ալ համրէ՛ :

— Համրելու պէտք չկայ, պատասխանեց Ապու Սամաք պանքնօթնները զրպանը դնելով :

— Հիմա կրնամ վստահ ըլլալ որ խմորեղէնը իր սեղը պիտի հասնի, հարցուց մառանապետը որուն ձայնը յուզումէն կը դողար :

— Քառօրդէ մը արդէն Սաաքը կերած պիտի ըլլայ զայն պատասխանեց Սուսանցին հաստտա չեշտով մը :

Երբ Ապու Սամաք դուրս ելաւ սրահէն՝ Օսման պէյ թիկնաթուռին վրաւ ինկաւ և սիկառէթ մը վառելով մրմնջեց,

— Իցի՛ւ թէ այս անխոհմտութիւնս գլխուս փոքձանք մը չըերէր :

Երէկուրնէ ի վեր սակայն մառանապետը քիչ մը հանդարտած էր : Ապուլու Համիտ գինքը մոռցած կը թուէր, և հարցաքննութեան կանչուելու երկիւղն ալ չէր իրականանար : Գալով Սէճճաստէճի պաշի Իզգէթ պէյին՝ կրցած էր իր անմե-

դուժեանն և հաւատարմութեանն ապացոյցները սոսկ և ո՛չ թէ միայն անխառն ազատիկ, այլ նոյն իսկ զրամական մեծկակ նուէր մըն ալ ստանալ իր տիրոջմէն :

Ապտիւլ Համիտի սովորութիւնն էր վարձատրել իր այն մարդիկը որոնց վրայ անիրաւ կասկածներ ունեցած էր :

Ժամի մը չափ իր թիկնաթոռին մէջ թաղուած մնաց այսպէս Օսման պէյ, առանց կարենալ ո և է գործով զբաղելու . յետոյ մէկ քանի ստորագաս պաշտօնեաներ կանչելով անոնց հրահանգներ տուաւ և պատրաստուեցաւ իր սպարանքը վերագառնալու, երբ պարտական մը գալով լուր բերաւ թէ Վեհափառ Սուլթանը զինքը տեսնել կ'ուզէր :

Թեթև սարսուռ մը անցաւ մառանասկեսին մարմնէն երբ Սուլթանական հրամանը լսեց, բայց իսկոյն ինքզինքը զսպելով՝ փութաց իր Վեհափառ Տիրոջ քով :

— Արդեօք ե՞ս ալ հարցաքննութեան պիտի ենթարկուիմ, մտածեց ճամբան և և սկսաւ մտովի իր պաշտպանողականը պատրաստել և իր հաւատարմութեանն ապացոյցները մտարերել :

Եւ սակայն երբ իր տիրոջ ներկայացաւ՝ իսկոյն հանդարտեցաւ : Ապտիւլ Համիտ զուարթ ու ժպտուն ընդունելութիւն մը ըրած էր իրեն .

— Օսման ինչպէ՛ս ես տեսնիմ, հարցուց բարեմոյն դէմքով մը, քանի օրէ որ քեզ տեսած չունիմ :

— Փա՛ռք Աստուծոյ և Ձեր Վեհափառութեանն շատ հանգիստ եմ, պատասխանեց մառանասկեսը խորին ակնածանքով իր տիրոջ առջև խոնհարելով :

— Իմ պարտականներուս մէջ զխաես որ ամենէն աւելի քեզ կը սիրեմ ու քու վրադ վստահութիւնն ունիմ :

— Իմ Վեհափառ Տէրս զիս չափազանց կը սրատուէ այս խօսքերով . . .

— Շատոնց է որ ինէ բան մը չես ինդրած, շարունակեց բռնաւորը միշտ ժպտուն դէմքով մը :

— Ծնորդիւ Ձեր Վեհափառութեան բանի մը պէտք չունիմ, ամեն ինչ առատօրէն կը վայելմ . . .

— Բանի որ բանի մը պէտք չունիս՝ ուրեմն աշխարհի ամենէն երջանիկ մարդն ես :

— Միթէ կարելի՞ է երջանիկ չըլլալ երբ մարդ բոխաւորութիւնը ունի Ձեր Բարձր Վեհափառութեան քով ապրելու և անոր ծառայելու . . .

— Իմ բոլոր պալատականներս քեզի պէս չեն մտածեր :

— Ինչպէս, Վեհափառ Տէր, միթէ կարելի է տարբեր մտածում մը ունենալ :

— Եթէ ամենքն ալ քեզի պէս մտածէին՝ մէջերնին դաւաճաններ չպիտի գտնուէր, շարունակեց բռնաւորը որուն աչքերը տարօրինակօրէն չողացին :

— Վեհափառ Տէր, միթէ աշխարհի մէջ կարելի՞ է որ գոյութիւն ունենան աշխարհի անձեր որոնք Ձեր կայսերական անսպառ շնորհներն ու պատիւները վայելելէ ետքը կարեան ձեր նուիրական անձին դէմ դաւաճանել . . .

— Ուրեմն չես հաւատար այդպիսի անձերու գոյութեան :

— Վեհափառ Տէր, ներեցէք որ չհաւատամ, կիկմաց մտանապետը որ կ'սկսէր նեղուիլ խօսակցութեան առած այս ընթացքէն :

— Իսկ եթէ պապոյոյցնէ՞ր ըլլան մէջանդ, հարցուց Ապա-  
իւլ Համիրո :

— Այն ատեն, Վեհափառ Տէր, հարկ է հաւատալ :

— Եւ ինչպէ՞ս պատճելու է այսպիսի դաւաճանները :

— Ձեմ կրնար երեւակոյնկ պատիժ մը որ հաւատարի այդպիսի ոճիրի մը :

Ապաիւլ Համիրո պահ մը խօսքը ընդհատեց, ակնարկ մը նետեց իր թիկնաթուղին մօտ սեղանի մը վրայ դրսւած տար-  
կայի մը որ սե չուխայով մը ծածկուած էր, յետոյ մատ-  
նապետին դառնալով ըսաւ .

— Գիտես որ հախառակ իմ փափաքին մեր պետութեան



Թղթատարական վարչութիւնը շատ յետադէմ է տակաւին...  
Օսման պէյ այս խօսքերը լսելով՝ զարմացած իր վեհա-  
պետին նայեցաւ, չկրնալով կապ մը դանել պահ մը առաջ-  
ուսն խօսակցութեան և այս խօսքերուն միջև :

— Նամակները յաճախ ուշ կը հասնին իրենց տեղը կամ  
բնաւ չեն հասնիր, շարունակեց Ապախու Համիտ :

Այնպէս է դժբախտաբար, կմկմաց Օսման պէյ :

— Կ'ուզեմ վերջ մը դնել այս ցաւալի կացութեան :

Ձեր Վեհապետութեան կամքը անշուշտ խնդրն պիտի  
գործադրուի, ինչպէս ամէն բանի մէջ :

Եւ այս գործը քեզի պիտի յանձնեմ, ըսաւ Ապախու  
Համիտ շեշտակի նայուածք մը նկատելով իր մառանապետին :

— Ինձի՛, գոչեց Օսման պէյ :

— Այո՛, Թղթատարական ու հեռագրական ընդհանուր  
անօրէնութիւնը պիտի ջնջեմ, Հիւսէյին Հատիպ էֆէնտին պի-  
տի հրաժարեցնեմ, Վարչութիւնը նախարարութեան պիտի  
բարձրացնեմ ու քեզ ալ նախարար կարգեմ :

— Վեհապետ Տէր, շատ շնորհակալ ու երախտապարտ  
եմ իմ մասին ձեր ցոյց տուած բարեսացակամութեան համար,  
սակայն խոնարհաբար չէիտէ՞ կուտամ որ ես չպիտի կրնամ  
օգտակար ըլլալ այդ պաշտօնին մէջ և ինձի համար շատ ա-  
ւելի մեծ երջանկութիւն մըն է հոս, այս պալատին մէջ, ձեր  
Բարձր Վեհապետութեան քով ծառայել, կը խնդրեմ որ այդ  
պաշտօնին աւելի յարմար անձ մը որոշէք :

— Ի՞նչ ըրածդ կեղծ համեստութիւն է, ևս գիտեմ ար-  
ժանիքդ, յարմարագոյն անձը այդ պաշտօնին համար դուն  
ես :

Մառանապետը՝ գլուխը խոնարհած՝ չպատասխանեց, բըւ-  
նաւորը խօսքը շարունակեց .

— Ի՞նչ կրնաս Թղթակցութեան այնպիսի միջոցներ հնա-  
րել որ ո՛չ մէկուն միտքէն կրնայ անցնիլ... :

— Վեհապետ Տէր, ի՛նչ կ'ըսէք, զիս կը չփոխեցնէք :

— Ահաւաստիկ ապացոյցը , գոչեց Ապտիւլ Համիտ , սե չու-  
խան վար առնելով սեղանին վրայ դրուած առարկային վրա-  
յէն :

Մտանապետը աչքերը դէպի հոն ուղղեց . սեղանին վրա-  
յինը Ապու Սամաքի յանձնած խմորեղէնն էր . . .

Օսման պէյ ահուելի ցնցում մը ունեցաւ , յանկարծ գու-  
նաանցաւ , ուղեց խօսիլ , բայց շնչահեղձ գետին տապալեցաւ  
թևերը շարժելով :

Ապտիւլ Համիտ զանգակը հնչեցուց և իր հաւատարիմ  
պահապանին ըսաւ .

— Շն՛ւտ պալտար գանձող բժիշկ մը կանչէ :

Վայրկեան մը ետքը բժիշկը եկաւ ու հաստատեց մառա-  
նապետին մահը :

— Մե՛ղք , ըսաւ բռնաւորը ինքնիրեն , դարձեալ որսը  
փախցուցինք ձեռքէ . . .

Օսման պէյի մարմինը խփոյն իր բնակարանը փոխադրու-  
եցաւ :

Դէպքը պատահած էր կիրակի առաւօտ և 18 փետրուար ,  
երկուշաբթի օրուան թերթերը տւր կուտային հետեւեալ կեր-  
պով :

«Վեհափառ Սուլթանին մտանապետ Օսման պէյ շարաթ  
զիշեր յանկարծական տկարութիւն մը զգալով հիւանդացա-  
լի ապարանքին մէջ՝ Օրթաքէօյ : Տօքթու Շէֆիք փաշա , և  
տօքթ . Սիւլէյման փաշա հարկ եղած դարմանները ըրին , սա-  
կայն արդիւնք մը չունեցաւ և երէկ առտու ժամը Յին Օսման  
պէյ հոգին աւանդեց շնչարգելութեան հետեւանքով :»

Թերթերը հետեւեալը կ'աւելցնէին .

«Վեհ . Սուլթանը , իմանալով Օսման պէյի մահը , ցաւ  
զգաց և բարեհաճեցաւ նախ առաջին Միւսահիպ Ճէվհէր ա-  
ղան և յետոյ Սէճճատէճի Պաշի Իզզէթ պէյը զրկելով վախ-  
ճանեալին ապարանքը , ցաւակցութիւն յայանել տալ ընտա-  
նիքին : Կայսերական Իրատէ մը հրամայեց որ յուղարկաւո-

բութեան ծախքը կայս . մասնաւոր արկղէն հատուցուի և մարմինը ամբողջութիւն Եանեա էֆէնտի տէրկեահը :»

Ապտիւլ Համիտի համար այս նոր իրողութիւնը , այսինքն իր մառանապետին յարաբերութիւնն ունենալը թուրք յեղափոխականներուն հետ , շահի շարուած մը եղաւ , որ կրկին հրդեհեց իր կասկածոտ երեւակայութիւնը : Օսման պէյ՝ մինչեւ այդ օր՝ բռնաւորին աչքին ամենահաւատարիմ ծառայ մըն էր որ երբեք ամենափոքր կասկածանքի մը տեղի տուած չէր , այն աստիճան որ Ապտիւլ Համիտ ո՛չ թէ անոր վրայ ո և է հակողութիւն ի գործ դնել չէր տար , այլ նոյն խկ եթէ իր լրտեսներուն մէկին խկըին փչէր ժուռնալ մը զրել մառանապետին վրայ՝ զայն բարկութեամբ կը պատուէր կը նետէր , առանց գրուածքին ամենափոքր կարեւորութիւն մը ընծայելու : Լրտեսները տեղեակ ըլլալով բռնաւորին այս արամաղութեան ի վերջոյ այլ ևս երբեք տեղեկութիւն չէին հաղորդեր մառանապետին մասին , որ իր ներշնչած վստահութեամբը բացառիկ դիրք մը կը գրաւէր Երլարզի պալատին մէջ :

Բայց այս անգամ երբ Ապու Սամաք իր ընդունած ծրարը բերած էր խակսյն իր Վեհափառ Տիրոջ ոտքերուն տակ դնելու , ըսելով թէ ո՛ւսկից կուգար այն և որո՞ւ տրուելու սահմանուած էր , երբ այդ խմորեղէնին մէջէն երևան ելած էր կասկածելի թուղթը , այն ատեն Ապտիւլ Համիտի կոյր վստահութիւնը խախտած էր իր մառանապետին վրայէն : Բայց վերջին փորձ մ՛ալ ընել ուղած էր զայն իր քովը կանչելով ու յանկարծ խմորեղէնը մէջտեղ հանելով :

Այդ փորձը , ինչպէս տեսանք , ջախջախիչ եղած էր պալատականին համար որ վախէն ու սաստիկ յուզումէն չնչասպառ մեռած էր :

Ապու Սամաքի մատնութիւնը բնականաբար դրամական մեծամեծ պարզեւներով վարձատրուեցաւ և այդ ուսամորթ բանտապետը յանկարծ կարեւոր անձնաւորութիւն մը դարձաւ

Երկտըղի մէջ, բոլոր պայատականներուն ակնածանքին արժանի :

Ապաիւլ Համիտ թէև շատ ցաւ զգաց իր մատակարարին յանկարծատահ ըլլալէն, որով կարող չպիտի ըլլար դայն ու զածին պէս խոստովանցնել և նորանոր յայտնութիւններ ձեռք բերել, այսուհանդերձ այդ ցաւը մեծապէս թեթեցաւ խմորէ-զէնին մէջէն ելած թուղթին շնորհիւ :

Այդ թուղթով Արիֆ պէյ իմաց կուտար իր բանտարկեալ ընկերին թէ բոլոր Պոլիս գանուող գլխաւոր յեղափոխակաները, որոնց անունը մի առ մի կը յիշեր, արդէն խոյս տուած էին և թէ ինքն ալ նոյն օրն իսկ, ազահով ճամբով կը մեկնէր, հետեւօրաբ Սատըք պէյ կրնար այլևս խոստովանութիւններ ընել ու իր կեանքը փրկել, առանց իր դուրսի ընկերները վրտանգելու :

— Ամենքն ալ խոյս տուեր են Պոլիսէն, ուրեմն ազատեցանք իրենցմէ, մտածեց բռնաւորը, հիմա ջանանք իրենց բո՛ւն կեդրոնին մէջ զիրենք ջախջախելու . . .

Իսկ գալով Սատըք պէյի՝ ան բոլորովին անտեղեակ իր շուրջը անցած դարձածներէն, կը շարունակէր մութ գնտանին մէջ աստապիլ անտրտունջ՝ ստոյիկեան համակերպութեամբ մը :



Գ Լ Ո Ի Խ Ժ Զ.

## ԸՄԲՈՍՏԱԿԱՆ ՈԳԻՆ ԿԸ ՏԱՐԱԾՈՒԻ

Պէտք չկայ ըսելու որ Համիտի համար թուրք յեղափոխականներու բո՛ւն կեդրոնը Սելանիկն էր և այս մասին բա-

հաւորը չէր սխալեր: Պալատական մասնաւոր լրտեսներու կողմէ իր ստացած ամենօրեայ երկար տեղեկագիրները այդ կը հաստատէին: Յեղափոխական ոգին յանկարծ հրդեհուած էր կարծես Ռուսիոյի զօրագունդներուն մէջ, բոլոր երիտասարդ սպաները և նոյնիսկ հաւատարիմ կարծուած բարձրաստիճան ու տարիքստ զինուորականներ անսովոր եռուզեռում մը ցոյց կուտային և գրեթէ յայտնի համարձակ բռնաւորին դէմ կը խօսէին, հիմնական բարենորոգումներ պահանջելով, մասնաւոր բանակի մէջ:

Սահմանադրութիւն ըստ որ ո՛չ ոք կը համարձակէր արտասանելու մինչև այն աստի, այժմ ամէնուն չրթունքին վերայ էր: Եւրոպա հրատարակուած յեղափոխական թուրք թերթեր ամէն սպաներու ձեռքը կը պտտէին: Ապտիւլ Համիտի հաւատարիմ պաշտօնեաները սուկուսով կը տեսնէին այդ ամէնը, սակայն չէին համարձակէր խիստ ու վճռական միջոցներու դիմել, վտանգին առաջքը առնելու համար, մասնաւոր որ իրենց ոյժին վրայ հաւատք չունէին: Ասոնք կը դոճանային միայն ամէն բան տեղն ի տեղօք հաղորդելով Երլարզ և անմիջական անօրէնութիւն ուղելով:

Երկիւղը սակայն Սելանիկի մէջ չէր այնքան Իւսկիւպի ու Մանասզըրի կողմերը, ուր յեղափոխական փրօփականաւ չատ աւելի ծաւալ ստացած էր՝ ոչ միայն բանակին մէջ, այլ նաև հասարակ ժողովրդին ու քաղաքային պաշտօնեաներու մէջն ալ: Դեփոհութիւնները հեռզհեռէ տւելի կը շեշտուէին ու պահանջմունքները տւելի սպառնական կը դառնային:

Այս ամէն իրողութիւններուն Ապտիւլ Համիտ տեղեկացած էր, բայց տակաւին այնքան հաւատք ունէր իր զօրութեան և իր ներշնչած ստրատիլին վրայ, որ կը յուսար ջախջախիկ ծնունդ առած այս ըմբոստական շարժումը, մասնաւոր որ սա հաւատքը ունէր թէ բոլոր այդ շարժումները երիտասարդ թուրքերու և մէկ քանի ազատական սպաներու գործն էին, թէ հասարակ զինուորները միշտ հաւատարիմ էին իրեն

և թէ երբեք զէնք չպիտի վերցնէին իր իշխանութեան զէմ,  
Իրողութիւնը սակայն բոլորովին տարբեր էր, մանաւանդ  
Փետրուարի վերջերը:

Փոքրիկ տետրակներ, հազարաւոր օրինակներով սպուած  
ու պարզ ժողովրդական թուրքերէնով գրուած, ցրուած էին  
բոլոր կարգաւ գիացող տասնապիաներուն և զինուորնե-  
րուն:

Այդ տետրակները ուղակի իրենց սրտին կը խօսէին:

Անոնց մէջ կը պատմուէր Երլարդի զօրագունդներուն  
փարթամ ու հանդատուէտ կեանքը բաշխատութեան կը զըր-  
ուէր իրենց քաշած տառապանքներուն, զրկանքներուն, զրե-  
թէ կիսամերկ ու կէս կուշտ կէս անօթի վիճակին հետ:

Երլարդի լրտեսներէն մէկը այս տետրակներէն հաս մը դը-  
կած էր պարտա և Ապտիւլ Հաֆիտ զայն կարդալով հասկցած  
էր թէ ինչ վտանգ կ'սպառնար իրեն:

Եւ սակայն հակառակ իր ջանքներուն կարող չէր բլլար  
այդ յեղափոխական շարժումներուն առջքը առնել: Լրտես-  
ները կը ծանուցանէին թէ արդի ոստիկանութեամբ կարելի  
չէր գործ մը տեսնել: Արդարև Մակեդոնիոյ ոստիկանութիւնը  
1904էն ի վեր եւրոպացի սպաներու հսկողութեան տակ, զրե-  
թէ անկախ մարմին մը դարձած էր որ պէտք չէր զգար կեդ-  
րոնի ամէն քմահաճոյքներուն հպատակելու:

Բռնաստըր կ'զգար թէ մեծ սխալ մը գործած էր տեղի  
տալով եւրոպական Պետութեանց պահանջումներուն ու Մակե-  
դոնիոյ ոստիկանութիւնն ու ելեմուտքը ենթարկելով անոնց  
հսկողութեան:

Օտօր սպաներու դալուստը թէև նախ վիրաւորուած էր  
թուրք և եւրոպայի սպաներու արժանապատուութիւնը, բայց  
յետոյ գո՛հ մնացած էին այս կարգադրութենէն, տեսնելով որ  
որքան նպաստաւոր էր այն իրենց յեղափոխական շարժումին  
համար: Հիմա թուրք և եւրոպացի սպաներուն մէջ սերտ  
մտերմութիւն մը կը տիրէր ու այս բանը լրտեսներու կողմէ

մասնանիչ եղած էր Երլտրդի բռնաւորին . ազգու հրամաններ կը հասնէին միշտ որպէս զի թուրք սպաները ու է յարարութիւն չունենան Եւրոպացիներուն հետ , բայց այդ հրամաններուն ալեւս ահանջ կախող չկար :

Քիչ ատենէն ա՛լ աւելի սերտ կապ մը հաստատուեցաւ օտար սպաներու և ժողովրդեան զանազան դատակարգերուն , բանակին , պաշտօնեաներուն , պէյերուն՝ կրեւելիներուն և մանաւանդ ամէն ազգէ գիւղացիներուն միջև :

Երիտասարդ թուրքերը կ'զգային սակայն որ այդ եւրոպական միջամտութիւնը որքան որ ներկայիս մէջ իրենց ձրգատումներուն օգտակար՝ մեծ վտանգ մըն էր իրենց հայրենիքին և կամաց կամաց Մակեդոնիոյ բաժանումը կը պատրաստէր : Ոստիկանութիւնն ու կիւմուտաքը ձեռք անցնելէ ետքը , այժմ եւրոպական Պետութիւնները կ'ուզէին դատարաններն ալ իրենց հսկողութեան տակ առնել և զանոնք բարեկարգել :

Այս նոր ոտնձգութիւնը պարզապէս Մակեդոնիոյ անջատումը կը նշանակէր Օսմանեան Պետութեանէն :

Յեղափոխական կառավարութիւնը որ կազմուած էր Իււկիւպի լեւներուն մէջ և որուն կ'անդամակցէին Սալիհա հանրմ , թիկնապահ Մէհմէտ , հարիւրապետ Նուրի պէյ և ուրիշներ և որոնց եկած միացած էին նաև պառաւ Փաթման , Ջիւլէան ու Հասանը , սպառնացող այս վտանգին հանդէպ , իսկոյն չրջաբերական մը ուղղեցին իրենց Սերանիկի , Մանասզըրի , Էպիրնէի , Բարիզի , Ժէնէվի ու Լոնտոնի ընկերներուն :

«Գործելու վայրկեանը հասած է , կ'ըսէր այս չրջաբերականը , եթէ քիչ մըն ալ յապաղինք մեր թշուառ հայրենիքին բաժանումը պիտի սկսի : Մակեդոնիոյ մէջ եւրոպական Պետութիւններու ճնշումով ի գործ գրուած ոստիկանական , կլմտական ու դատական բարենորոգումներուն անշուշտ հակառակ չենք : Բայց միթէ միայն հո՞ս պէտք կայ այդ բարենորոգումներուն միթէ Օսմանեան Պետութեան միւս նահանգները լիու-

լի կը վայելնն ամէն բան : Ինչո՞ւ համար բարենորոգումները  
ընդհանուր չըլլան , ինչո՞ւ համար բարձր Օսմանցիները չօգտու-  
ին անոնցմէ :

«Մենք կը կարծենք որ Օսմանեան Կայսրութիւնը վրկե-  
լու համար կործանումէ , անհրաժեշտ է որ ձեռք բերենք Սահ-  
մանադրութիւն մը որ ամբողջ օսմանեան հաստատակերուն  
ապահովէ ազատութիւն , արդարութիւն և հաւասարութիւն :  
Ասոր հասնելու համար պէտք է դործել , կուսիլ , արիւն թա-  
փել : Այլ խօսքի չըջանը անցաւ :

«Մեր առաջին դործը պէտք է ըլլայ նախ մէջտեղէն վեր-  
ցնել բոլոր այն մնծ ու պղախի լրանները զորոնք հետզհետէ  
Ապտիւլ Համիտ մեր վրայ կը զրկէ և որոնք մեր երկրին թըլ-  
ուաւութեան զլխաւոր պատճառներն են :

«Մահ լրաններուն . այս պիտի ըլլայ մեր նշանարանը  
յեղափոխութիւնը սկսելու համար :

«Կեցցէ՛ Օսմանեան Սահմանադրութիւնը

«Կեցցէ՛ յեղափոխական Թուրքիան

«Կեցցէ՛ ցեղերու համերայխութիւնը :»

Այս չըջաբերականը մեծ խանդավառութեամբ ընդունուե-  
ցաւ ամէն կողմ , մանաւանդ Սելանիկի մէջ , ուր կը գտնուէր  
Յեղափոխական Քօմիթէին կեդրոնը :

Կարծէ որ քիչ մը խօսինք այս Քօմիթէին մասին որ  
այնքան կարեւոր դեր մը պիտի խաղար յետոյ Թուրքիոյ ձա-  
կատագրին մէջ :

Այս յեղափոխական կազմակերպութիւնը բազկացած էր  
հինդական հոգինոց խրմբակներէ : Ամէն մէկ անգամ իրաւ-  
ունք ունէր ինքն ալ իր կարգին հինդ հոգինոց խումբ մը  
կազմելու և ինք միայն կը ճանչնար իր կազմած խումբին  
անդամները , այնպէս որ եթէ մատնիչ մը մանար իրենց մէջ ,  
իր մատնութեամբը չէր կրնար միասիկ ամբողջ կազմակերպու-  
թեանը : Ո՛չ նախագահ կար , ո՛չ մասնաւոր պաշտօններով ան-  
ձեր և ո՛չ ալ արձանագրութիւններ : Իրենց միութեան կապը



բուն իսկ «Միութիւն և Յառաջդիմութիւն» քօմիթէն էր, որ թէ՛ արտասահման և թէ՛ երկրին ներքին մասերուն մէջ մասնաճիւղեր ունէր, որոնց թիւը օրէ օր կ'աւելնար: Միւս բոլոր մասնաճիւղերը իրենց հրամանները կ'ստանային Սեւանիկէն, որ միևնոյն ատեն Եւրոպացիներու ձեռքով վերակազմուած ոստիկանութեան և բոլոր մակեդոնական բարենորոգմանց կեդրոնն էր: Եւրոպացիներու ներկայութիւնը տեսակ մը ապահովութիւն էր երիտասարդ թուրքերուն համար, որովհետև Ապտիւլ Համիտի մարդիկը չէին կրնար ուզածնուն պէս բռնաւորական միջոցներ ի գործ դնել, ինչպէս կ'ընէին Պոլիս կամ ուրիշ տեղեր: Չմոռնանք ըսելու որ քօմիթէն իր մէջ ունէր նաև քրիստոնեաներ, հրեաներ, ամէն դասակարգէ պաշտօնեաներ, սոսկական անհատներ, բայց մեծամասնութիւնը թուրք սպաները կը կազմէին:

Այն կէտին ուր մեր պատմութիւնը հասաւ, Սեւանիկի քօմիթէն նոյնիսկ բարեկամական յարաբերութիւններ հաստատած էր հայ, պուլկար, յոյն, ալպանիական եւլն. քօմիթէններու հետ:

Երբ մեր վերը յիշած չրջաբերականը հասաւ Սեւանիկ, կեդրոնական քօմիթէի անդամները արտաստուոր ճիստ մը գումարեցին որուն ներկայ գտնուեցան նաև Սաի պէյ և Արիֆ պէյ, որոնք կըցած էին ծպտուած մտնել Սեւանիկ, առանց լրտեսներու ուշադրութիւնը գրաւելու:

— Այս գոչեց Արիֆ պէյ, երբ իրենց ընկերներուն թուղթը կարգացուեցաւ, անմիջապէս հարկ է գործի ձեռնարկել, որովհետև հայրենիքը վտանգի մէջ է և ամէն օր դէպի կործանում կը դիմենք:

Ուրիշ յեղափոխական մը՝ Տիւլաճ պէյ, բնիկ Սեւանիկցիի ետանդուն ու խելացի երիտասարդ մը, որ մեծ հասարում կը վայելէր իր ընկերներուն մէջ և որուն իմացական կարողութիւններուն վրայ ամենքն ալ շատ յոյս դրած էին, ըսաւ.

— Ապտիւլ Համիտ մեր հայրենիքը մաս առ մաս կը ծա-

խէ . . . Աւստրիա արդէն Միթրովիցայի երկաթուղիի մենաշնորհը ստանալու վրայ է . այսինքն արդէն կը պատրաստուի գէպ ի Սելանիկ յառաջանալ , Գերմանիա Պազտատի գիծը ձեռք կ'անցնէ և Ռուսիա ևս իր կարգին փոխարինութիւն մը կը պահանջէ : Համիտ իր բռնած քաղաքականութեամբ ո՛չ թէ երկրին փրկութեանը վրայ կը մտածէ՝ այլ իր անձնական շահուն : Իր ամբողջ ջանքը , այս միջոցիս , եւրոպական Պետութիւններու մէջ պառակտում յառաջ բերել՝ Մակեդոնիոյ բարենորոգմանց ձեռնարկը վիժեցնելն է և ասիկա պարզապէս անոր համար որ կը կարծէ թէ եւրոպացի սպաններու և պաշտօնեաներու ներկայութիւնն է պատճառ յեղափոխական շարժումին տարածման : Միայն մէկ քանի լրտեսներ սպաննելով՝ չենք կրնար մէր հայրենիքը փրկել կործանումէն , հարկ է աւելի արմատական միջոցներու դիմել :

— Բայց մեր ընկերները լրտեսներու բնաջնջումը կ'առաջարկեն իբրև առաջին քայլ և ո՛չ թէ իբրև միակ յեղափոխական գործունէութիւն , դիտել տուաւ Սա'ի պէյ :

— Եթէ մէկ քանի լրտեսներ զարնելէ ետք ձեռքերնիս ծալած նստինք ու անմիջապէս ղինուորական աստամբութեան չձեռնարկենք՝ այն ասան մեր արարքը կրնայ շատ արդէտալի հետեանքներ ունենալ և մեզ ամենքս ալ ջախջախել :

— Շատ ճիշտ է այդ ըսածդ , բաւ Արիֆ , բայց միթէ կրնա՞նք վստահիլ մեր ղինուորներուն վրայ :

— Այո՛ , ղինուորը այլևս մեզի հետ է , պատասխանեց հազարապետ մը . մինչև հիմա գուցէ այս մասին կտակածներ ունենայինք , սակայն ամիսէ մը ի վեր յեղափոխական շարժումը մեծաքայլ յառաջ գացած է և նոյնիսկ կը վախնամ որ եթէ տակաւին անշարժ մնանք , ղինուորները իրենք ոտքի պիտի ելլեն , ու այն ասան մենք չպիտի կրնանք անոնց վրայ հեղինակութիւն մը ունենալ . քանի որ փոխանակ զանոնք ռաջնորդելու՝ պիտի ստիպուինք անոնց հետեիլ :

— Քանի որ այդքան վատահալթիւն ունինք ձեր զինուորներուն վրայ, բոպէ մը պէտք չէ կորսնցնենք. գոչեց Տիված պէյ :

— Գիտէք որ Պոլսէն զինուորական նոր քննիչ մը պիտի գայ եղեր, իբր թէ բանակին վիճակը քննելու համար, բայց թո՛ւն պաշտօնը պիտի ըլլայ կասկածելի սպանները մէյմէկ պատրուակներով հեռացնել այս տեղէն ու յետոյ . . .

— Ու յետոյ ծովուն յատակը և կամ Արարիոյ անապատները զրկել :

— Ո՞վ է այդ գալիք բարձրատիճան քննիչը, հարցուց Սաի պէյ :

— Դեռ որոշում չէ տրուած՝ ազահովաբար պալատական մը պիտի ըլլայ, Ապտիւլ Համիտի հաւատարիմներէն մէկը :

— Ուրեմն մենք ալ մեր առաջին գնդակը անոր կը վերապահենք :

— Ուրեմն մեր ընկերներուն պատուէրը պիտի գործադրենք առաջին առթիւ, ըսաւ Արիֆ պէյ :

— Այո՛, այո՛, գոչեցին ամէն կողմէ :

— Լրտեսները մէկիկ մէկիկ գնդակահար պիտի ստպալինք, նոյնիսկ եթէ անոնք փաշաներ ըլլան :

Քօմիթէին բոլոր անդամները միեւնոյն խանդավարութեամբ և զգայաւմով առգորուած էին և պէտք չինաց վիճաբանութեան : Որոշեցին խկոյն հրահանգ տալ ամէն կողմ, որպէս զի պէտք եղած պատրաստութիւնները ականնն որոշեալ ժամանակին սկսելու համար թէրորական գործողութիւնները :

Յետոյ մի առ մի մեկնեցան իրենց կեդրոնատեղիէն : Միայն Արիֆ և Սաի պէյերը միասին դուրս կան : Երկուքն ալ զվարկ կը կրէին և ըրենք զիրենք Եւրոպայի կը կեղծէին : Երկու ընկերները քիչ մը առեն պատելէ ետքը եկան հանգչելու քարափին վրայ գանուող գարեջրատուն մը : Հազիւ թէ քառորդէ մը ի վեր հոն կը գանուէին՝ երբ երկու հողի եկան բաղմեցան իրենց քովի սեղանը և մէյմէկ սուրճ սապարեցին :

Արիֆ և Սաի պէյերը իրենց սովորութեան համեմատ, ֆրանսերէն լեզուով կը խօսակցէին իրարու հետ, կասկածանքի տեղի չստալու համար :

— Երկու նորեկները ուշադրութեամբ զանոնք դիտելէ ետքը, իրենցմէ մին կամաց մը ըսաւ .

— Կարծեմ հոս արատօրէն կրնանք խօսիլ, այս մտրդիկը Եւրոպացի են և շուրջերնիս ուրիշ մտրդ չկայ :

— Այո՛, այո՛, այս գարեջրատունը արդէն Թուրքերը շատ քիչ կը յաճախեն, պատասխանեց միւսը . արդէն Սկաւնիկը Պոլսոյ հետ մի՛ բաղդատեր, հոս փա՛նք Ասատուծոյ, աւելի ազատ ենք և լրտեսներէն շատ չենք վախնար :

— Երանի՛ ձեզի, հառաչեց միւսը ձայնը բարձրացնելով, Պոլսոյ մէջ կրնամ ըսել որ ապրիլը անկարելի դարձած է... երէկուրնէ ի վեր ու ոտքս հոս դրի՛ կարծես աւելի ազատ չաւնչ կ'առնեմ կոր :

— Շիտակը շատ բախտաւոր ես որ կրցեր ես օձիքդ ազատել և անվտանգ հոս հասնիլ :

— Պարզապէս հրաշք մըն է հղածը և տակաւին հաւատալս չի գար. կոր... ինծի կը թուի կոր որ մէկ վայրկեանէն միւսը զիս պիտի ձերբակալեն, իցի՛ւ թէ ժամ առաջ կարենայի փափաքած անձերս տեսնել ու աւելի ապահով ու առանձին տեղ մը քաշուիլ... :

— Համիտ շատ իրար անցած ըլլալու է քու փախուսող իմանալով... :

— Կրնաս երեակայել իր կատաղութիւնը... ամսուան մը մէջ այս երրորդ անգամն է որ Ելբլըզի պալատէն մտրդ կը փախի... և այնպիսի մտրդիկ որոնց վրայ Համիտ կոյր վրտահութիւն ունէր :

— Բայց ինչո՞ւ այդ յանկարծական փախուսող... :

— Եթէ օր մ'ալ մնայի՝ ես ալ մառանապետ Օսման պէյիէ կամ Սաաբք պէյի քովը պիտի երթայի :

Մեր երկու ընկերները՝ Արիֆ և Սաի պէյ, քանի մը ըրոպէ

ի վեր սկսած էին ականջ դնել այս խօսակցութեան , բայց որպէս զի խօսակիցներուն կասկած չի տան և միևնոյն ատեն աւելի ուշադիր հետեւին այդ շահեկան անսակցութեան , սոցասաւորը կանչեցին և եւրոպական թերթերը ուղեցին և իբր թէ անոնց բնթերցման մէջ թաղուած գիրք մը առին :

Եւ սակայն երկու անձանօթները արդէն բնաւ կասկած ունենալ չէին թուեր այդ երկու երիտասարդներէն և իրենց խօսքը առաջ կը ասնէին ձայներնին քիչ մը ևս բարձրացուցած , այնպէս որ երկու յեղափոխականները յստակօրէն կը լսէին ամէն բան :

— Խնդճ Սաարք պէյ , բնաւ անձանօթներէն մին , պատուական երիտասարդ մըն է :

— Կը ճանչնաս զինքը , հարցուց այն որ Պոլսէն նոր եկած էր :

— Ի՛նչ ըսելէ , Ծաֆաթի մէջ խմբագրութիւն ըրած աստեղնէն կը ճանչնամ . . . միայն թէ այն ժամանակ չէինք գիտեր իր յեղափոխական ըլլալը :

— Այդ խնդճ ազան պէտք է ազատել և կարելի եղածին չափ շնաւ . մէկ օրէն միւսը կրնայ զո՛հ երթալ Համիտի վրէժխնդրութեան , կամ մեռնիլ այդ մութ գնտանին մէջ :

— Ի՛նչ միջոց աւնիս իրեն օգնութեան հասնելու . . .

— Միջոցը կարելի է գտնել , միայն թէ հարկ է որ յարաբերութեան մասնեմ այս սեղի յեղափոխական քօմիթէին հետ :

— Այո՛ , բայց ատիկա քիչ մը դժուար է , ինչպէս արդէն ըսի , որովհետեւ ևս բնաւ յարաբերութիւն չունիմ իրենց հետ և չիտակը կ'զգուշանամ ալ մօտենալու գլխուս փորձանք մը չրեքելու համար :

— Բարեկամ մը չունի՞ս որ անոնց հետ յարաբերութիւն ունենայ :

— Դժբախտաբար ո՛չ :

— Ավրո՞ս , որովհետեւ անպատճառ կ'ուզեմ որ այդ երի-

տասարդը ազատի այդ բռնաւոր դադանին ձեռքէն. չես դիտեր ինչ սարսափելի կայութեան մը մէջ կը գտնուի. իր տեղը եթէ ուրիշ մը ըլլար՝ մինչեւ հիմա խնդրեցած կ'ըլլար:

— Բայց չեմ կրնար ըմբռնել թէ ինչպէս կարելի պիտի ըլլայ զինքը ազատել:

— Բանտապահը և բանտապետը կաշառելով...

— Կը կարծե՞ս որ կաշառուին:

— Ոչ թէ կը կարծեմ՝ այլ վտահ եմ... Երկուքն ալ կը ճանչնամ.

— Լա՛ւ, բայց Երլարդէն դուրս ինչպէ՞ս պիտի ելլէ:

— Անոր ալ ճարը մտածած եմ. ինծի պէտք եղածը առատ դրամ և յետոյ մէկ քանի անձնուէր օժանդակներ են և այս ալ միայն իր յեղափոխական ընկերներուն մէջ կարելի է գտնել:

— Եւ եթէ դրամն ու օժանդակները գտնուին՝ կրկին Պոլիս պիտի վերադառնաս:

— Մի՞թէ՞ կարելի բան է...

— Ուրեմն ի՞նչ օգուտ:

— Պոլիս վերադառնալու պէտք չկայ. ես գիտեմ թէ դրամը որս՛ւլ զրկելու է որպէսզի ապահով կերպով իր նպատակին գործածուի...: Մեկնումէս առաջ ամէն բան կարգադրած եմ, այն յուսով որ հոս հասնելուս պէս պիտի կրնամ Ստառք պէ՛ի ընկերներուն հետ յարաբերութեան մտնել:

— Մե՛ղք որ այս մասին քեզի օգտակար չեմ կրնար ըլլալ և ուրիշ ծանօթ մըն ալ չունիմ որ այդ ծառայութիւնը մատուցանէ:

— Եւ գժբախտութիւնը հոն է որ ես ալ Սելանիկի մէջ երկար կարող չեմ մնալու, որովհետեւ մէկ ժամէն միւսը կըրնան զիս ձերբակալել եթէ ճանչցուիմ և զիտեմ որ շատ լըրտեսներ կան այստեղ որոնք զիս կը ճանչնան...

— Բայց քեզ կը ճաշնան իբրև Սուլթանին հաւատարիմ պաշտտական մը, հետեւաբար անոնցմէ վախնալիք բան մը չունիս:



— Ի՞նչ, միթէ արդէն հեռագրուած չէ՞, ամեն կողմ, իմ փախուստս... սպու մը պէս կը խօսիս:

— Իրաւունք ունիս, եղբայր, այդ չմտածեցի: Բայց այն ատեն իրաւցնէ այսպէս պատիլդ կընայ զլիսուտ փորձանք մը բերել:

Ճիշտ ատոր համար, եթէ մինչեւ վաղը իրիկուն չի կրնամ ճար մը գտնել քօմիթէին հետ յարաբերութեան մըտնելու, պիտի թողում հեռանամ... Թէև խղճիս վրայ բևռ մը պիտի ըլլայ այդ տարարախտ երկտասարդին օգնութիւն մը չկրնալ ընելու, մանաւանդ որ ամէն բան կարգադրած եմ հըրաշալի կերպով... Ապու Սամաքը պատրաստ է դրամական վարձատրութեան փոխարէն ամէն բան ընելու.

— Ապու Սամաքը ո՞վ է:

— Բո՛ւն իսկ բանտապետը, ամէն բան անոր ձեռքն է...

— Բայց ինչպէ՞ս կը համարձակի այդպիսի վտանգաւոր յեղափոխական մը փախցնելու:

— Ապու Սամաք Սուտանցի է, բաւական հարստութիւն դիզած է և որոշած է իր երկիրը դառնալ, հաւանօրէն այս գործը տեսնելուն պէս ինքն ալ կծիկը պիտի դնէ... բայց ի՞նչ օգուտ այս խօսքերէն քանի որ կարելի չպիտի ըլլայ քօմիթէին մարդիկը տեսնել... .

Երկու խօսակիցները լռեցին, յետոյ փախտական անձանօթը ժամացոյցը նայեցաւ և ըսաւ.

— Կէս օրը կը մօտենայ կոր ես օթէլս կը վերադառնամ, լաւագոյն է որ դուքսը շատ չերեւամ.

— Ո՞ր օթէլը իջած ես...

— Հոս մօտերը, Օթէլ Սելանիկ... եթէ ինծի լուր մը ունենաս հազօրդելիք հոն եկուր, որովհետև դուքս ելլելու միտք չունիմ. թիւ 16 սենեակն եմ և օթէլին մէջ իբրև Բէ-ժիի քննիչ Օսման էֆ. արձանագրուած եմ:

— Լա՛ւ, ամէն պարագայի մէջ վրաս յոյս մի՛ դնիր,

ինչպէս ըսի, ո՛չ ես ո՛չ ալ իմ բարեկամներս հեռուէն մօտէն  
յարաբերութիւն ունինք յեղափոխականներուն հետ :

Երկու բարեկամները հաշիւնին կարգադրելէ ետքը մեկ-  
նեցան .

Երբ անձանօթները աներևոյթ եղան՝ Սրբիք եւ Սաի իրենց  
թերթերը վար դրին եւ իրարու նայեցան :

— Ի՞նչ կ'ըսես ասոր, հարցուց Սաի իր բարեկամին :

— Շատ տարօրինակ ու դարմանալի դիպուած . . .

— Կը կարծես որ իր ըսածները ճշմարիտ ըլլան :

— Կասկածկու պատճառ մը չունինք, մանաւանդ որ  
ինչ որ պատմեց շատ բնական բան մըն է :

— Այն ատեն պէտք է որ անմիջապէս յարաբերութեան  
մասնէնք այդ մարդուն հետ .

— Ճիշդ ես ալ այդ կը մտածէի իր խօսքերը լսած մի-  
ջոցիս :

— Եւ եթէ համոզում գոյացնենք՝ անմիջապէս պէտք  
եղած դրամը ճարինք ու աշխատինք մեր խեղճ ընկերն ազա-  
տելու :

— Բայց մարդուն խօսքին նայելով՝ միայն դրամով խըն-  
դիրը չպիտի վերջանայ, մէկ քանի մարդու ալ պէտք ունի  
եղեր :

— Մարդ կրնանք գտնել, տակաւին Պոլսոյ մէջ անձնուէր  
ընկերներ չեն պակսիր, բայց նախ և առաջ պէտք է իրեն  
հետ յարաբերութեան մասնիկ և տեղն ի տեղօք ամէն բան ի-  
մանալ :

— Իր կեղծ անուոնն և բնականօթ լըր վիտենք, ուստի  
չատ դիւրին է զինքը տեսնելը :

— Արդեօք ուզողակի երթա՞նք օթիկ Սիւանիկ . . .

Երկու ընկերները պահ մը շտրհեցան :

— Չէ՛, ըսաւ Սաի պէյ, ատիկա կրնայ թէ՛ իրեն կաս-  
կածելի թուիլ և թէ կրնայ մեզ ալ վտանգել, լաւագոյն է որ  
իր հասցէին երտող մը ձգենք և իրեն ժամադրութիւն մը



տանք ուրիշ տեղ մը . . . օրինակի համար մեր բարեկամներէն մէկուն սենեակը :

— Ճիշտ ես ալ դայն պիտի առաջարկէի, մանաւանդ որ դրամի խնդիր ալ կայ գործին մէջ :

Ասլան պէյ Սելանիկի քօմիթէին ամենէն գործունեայ անդամներէն մէկն էր ու միայնգամայն ծածուկ կազմակերպութեան նոյն կեդրոնի գանձապետը : Հարուստ ընտանիքի մը պատկանող զարգացած ու անձնուէր երիտասարդ մըն էր որ քանի մը տարիէ ի վեր փարած էր յեղափոխական շարժումին և կարեւոր ծառայութիւններ մատուցած էր :

Երկու բարեկամները իսկոյն տոմսակ մը պատրաստեցին անձանօթին ուզուած, որու մէջ կ'ըսէին :

«Դիպուածով լսեցինք որ, կարեւոր առաջարկ մը ընելու համար, կը փափաքիք յարաբերութեան մտնել կեդրոնի գաղանի քօմիթէին հետ : Այս գիշեր կը հրանիրենք ձեզ մեր մօտ : Ձեր պանդոկին առջև մարդ մը պիտի սպասէ ձեզի որպէսզի առաջնորդէ ձեզ որոշուած տեղը : Այդ մարդը ձեզի պիտի մօտենայ և Սաքքէ անունը պիտի տայ, ինքզինք ներկայացնելու համար : Կրնաք բացարձակ վստահութիւն ունենալ իր վրայ : Այս թուղթը անմիջապէս պատուեցէք» :

Տոմսակը ո և է ստորագրութիւն չէր կրեր :

Արիֆ պէյ առաւ դայն և տարաւ պանդոկի դռնապանին յանձնեց խնդրելով, որ անմիջապէս իր հասցէին տանին :

Յետոյ երկու բարեկամները գացին գտան Ասլան պէյը և անոր հաղորդեցին ինչ որ լսած էին գարեջրատան մէջ և իրենց ըրած կարդադրութիւնը :

— Շատ ազէկ ըրեր էք, գոչեց երիտասարդը խանդավառուած, իցիւ թէ այդ մարդուն խօսքերը ճշմարիտ ըլլային ու կարենայինք մեր խեղճ Սատըք պէյը ազատել իր դնտանէն . . . ասոր համար ամէն դրամական զոհողութիւն պատրաստ եմ ընելու և եթէ մեր ընկերները զժկամակին քօմիթէին դրամէն ծախսելու՝ ես իմ գրպանէս պիտի տամ հարկ եղած գումարը :

— Կեցցե՛ս, Ասլան պէյ, զօչեցին երկու երիտասարդները  
իրենց ընկերոջ ձեռքը սեղմելով :

Միայն թէ անծանօթը պիտի վստահէր այդ տոմակին ու  
պիտի գա՞ր ժամադրութեան :

— Գուցէ պիտի կասկածի թէ լրտեսական ծուղակ մըն է  
իրեն դէմ լարուած, դիտել սուսաւ Ասլան պէյ :

— Ո՛չ, այդ մարդը քիչ մը միամիտ մէկը կը թուի ը-  
լալ և չեմ կարծեր որ այդպիսի կասկածանքներ ունենայ պա-  
աստխանեց Արիֆ պէյ :

Մինչև իրիկուն երեք երիտասարդները անհամբերութեան  
մէջ անցուցին . կ'ուզէին որ ժամերը շուտ մը սահէին և ի-  
րենք կարենային այդ վախատականին հետ յարաբերութեան  
մանել : Որոշած էին որ Արիֆ պէյ պիտի երթար պանդոկին  
առջև սպասելու և անծանօթը առաջնորդելու, իսկ միւս եր-  
կուքը պիտի սպասէին Ասլան պէյի մէկ բնակարանը, քաղքին  
կեդրոնէն հեռու : Այդ բնակարանը որ վորձու կալուած մըն  
էր, նոյն միջոցին պարտապ էր և շատ յարմար կուգար այդ-  
պիսի ժամադրութեան մը, մանաւանդ որ քիչ շատ կահա-  
ւորուած ալ էր :

— Ի՞մ ծնողացս բնակարանին մէջ չեմ ուզեր այդ անծա-  
նօթը ընդունիլ, ըսած էր երիտասարդը, որովհետև կրնայ  
վտանգաւոր հետեւանք մը ունենալ ու անոնց գլուխը փոր-  
ձանք մը բերել :

Որոչեցին նաև որ իրենց ընկերներուն բան մը չըսեն մին-  
չև որ անծանօթին հետ տեսակցին ու գաղափար կազմեն գոր-  
ծին լրջութեան մասին :

Մութը կոխելուն պէս՝ Արիֆ պէյ թեթեւ ճաշ մը ընկէ  
ևտքը, գնաց Սելանիկ Օթէլին առջև ժուռ գալու, սպասելով  
խորհրդաւոր անծանօթին դուրս ելլելուն :

Հաղիւ թէ քառորդէ մը ի վէր հոն էր երբ անծանօթը  
երեցաւ պանդոկին դրան առջև :

Արիֆ խկոյն անոր մօտեցաւ և զլիարկը հանելով բարեւելց ու ըսաւ .

— «Սաարք» :

Միւսը անմիջապէս ժպտելով բարեւը փոխանակեց :

— Ո՞ր կողմէն պիտի երթանք , հարցուց առանց կասկածանքի կամ վարանուծի նշան մը ցոյց ապու :

Չախ կողմէն , պատասխանեց երիտասարդ յեղափոխականը :

Երբ քիչ մը հեռացան ու կողմնակի փողոց մը մտան , անձանօթը ըսաւ .

— Երբ տոմսակը առի , շիտակը շատ զարմացայ որ իմ փափաքս այսքան շուտ ձեր ականջը հասեր է և դուք ալ իսկոյն ժամադրութեան մը որոշումը տուեր էք , բաւական միտքըս չարչարեցի որ կարենամ հասկնալ թէ ի՞նչ միջոցով կրցած էիք իմանալ , բայց չյաջողեցայ : Հիմա ամէն բան կը բացատրուի սակայն , ձեզ տեսնելու պէս ճանչցայ այս առտուան երկու երիտասարդներէն մին որոնք քարափի դարևջրատունը մեր քով նստած էին : Մենք ձեզ Եւրոպացի կարծելով ազատ համարձակ խօսեցանք և մենէ իմացաք ամէն բան այնպէս չէ . . .

— Շատ ճիշդ է ձեր ենթադրութիւնը , պատասխանեց Արիֆ , բայց ի՞նչպէս կ'ըլլայ որ անստորագիր տոմսակի մը վրայ , անմիջապէս առանց կասկածի , կուգաք մեր քով . . , գուցէ ծուղակ մը լարած ենք . . .

Անձանօթը խնդաց .

— Չէ՛ , պատասխանեց , իրա՛ւ է որ առաջին անգամ այդպիսի կասկած մը մտքէս անցաւ , բայց շուտով վաճնեցի դայն : Ձեր տոմսակին մէջ այնպիսի անկեղծ շեշտ մը կայ որ կարելի չէր գէշ կասկած մը ունենալ . . . ներքին ձայն մը ինծի կ'ըսէր թէ հայրենասէր բարեկամներու կողմէ կուգար այդ հրաւէրը : Ասկէ զատ , ի՞նչ ծուղակ կ'ուղէք որ ըլլայ : Եթէ Համիտի կողմէ պիտի լարուի այդ ծուղակը՝ բնաւ պէտք չը-

կայ, քանի որ ամէն զօրութիւն ունի զիս խելոյն ձերբակալել տալու և կրկին Պոլիս վերադարձնելու :

— Սաառք պէյի մասին որոշ տեղեկութիւն մը ունի՞ք, հարցուց Արիֆ խօսակցութեան նիւթը փոխելու համար :

— Ինչ որ զիտեմ սա է թէ մինչև մէկնամ օրս Սաառք ողջ էր ու միշտ բանտարկուած կը մնար իր զնաանին մէջ, աւանց նոր հարցաքննութեան ենթարկուելու :

— Ես կը կարծէի որ ինք պիտի ուզէր նոր հարցաքննութեան ենթարկուիլ՝ խօսատուութիւններ ընելու համար :

— Կը հասկնամ ի՞նչ ըսել կ'ուզէք, բաւ անծանօթը, խմորեղէնին կ'ակնարկէք . . .

— Ի՞նչ խմորեղէն, հարցուց Արիֆ այդ խօսքերէն բան մը չկրնալով հասկնալ :

— Այն խմորեղէնը որուն մէջ թուղթ մը պահուած էր և որ Սաառքի արուելու ռահմանուած էր, պատասխանեց անծանօթը, բայց դժբախտաբար այդ փորձը չյաջողեցաւ, ամէն բան հրեան կ'աւ . . . այս գործին մէջ Մատանտպետ Օսման պէյն ալ մաս ունէր :

— Վա՛յ, ուրեմն այդ թուղթը Սաառքի ձեռքը չհասա՞ւ հարցուց Արիֆ :

— Ձէ, պատասխանեց միւսը, բայց նոյնիսկ եթէ հասնէր օգուտ մը չունէր, որովհետև Սաառք եթէ ամէն բան խօսատուանի ալ այլևս չի կրնար ազատիլ . . . միակ միջոցը զայն փախցնելն է :

— Իսկ զուք ի՞նչ պարագաներու տակ ստիպուեցաք խոյս տալ Երլարդէն,

— Այդ ամենքը հիմա պիտի պատմեմ ձեր ընկերներուն ներկայութեան, ի՞նչ պէտք այժմ ըսելը, պատասխանեց անծանօթը :

Արիֆ չսնդեց և երկուքը միասին ձամբանին շարունակեցին բաւական ատեն առանց խօսելու : Ժամադրավայրը քա-

դաքին կեցրոնէն հետու տեղ մ'էր ու հազիւ կէս ժամէն հասան :

Սաի և Ստան պէյերը որոնք անհամբեր կ'սպասէին՝ սիրտիր ընդունելութիւն մը բրին նորեկին : Մէկ քանի քաղաքավարական խօսքերէ ետքը , Սաի պէյ ըսաւ .

— Մեր ժամանակը սուղ է և լաւ կ'ըլլայ որ անմիջապէս մեզ հոս հաւաքող խնդրովը զբաղինք :

— Ես ալ այնպէս կը կարծեմ , փութաց ըսելու անծանօթը :

— Ուրեմն , սիրելիս , խօսքը ձեր ձերն է , հաճեցէ՛ք միտքը յատկօրէն բացատրելու մեզի :

— Նախ և առաջ պէտք է որ ինքզինքս ծանօթացնեմ և ըսեմ թէ ի՛նչ պարագաներու տակ ստիպուած եմ թողուլ պալատական պաշտօնս ու խոյս քալ Պոլսէն :

— Ամենայն հաճոյքով մտիկ պիտի ընենք ձեր պատմութիւնը , ըսաւ Սաի պէյ :

— Անունս Նուրի է և պալատական քարտուղար մըն եմ . . . հաւանօրէն անունս չէք լսած , որովհետեւ շատ յարաբերութիւն չեմ ունեցած դուրսի հետ , այսուհանդերձ Երլարզի մէջ բաւական ազդեցիկ դիրք մը կը վայելէի չնորհիւ Ապտուլ Համիտի իմ մասին ցոյց առած վստահութեան , որովհետեւ պէտք է բռնեմ որ Սուլթանը զիս չափազանց կը սիրէր . . . : Հակառակ Երլարզի մէջ վայելած նիւթական ու բարոյական չնորհներուս , վերջերս կեանքը անտանելի դարձած էր ինձի համար : Ազատական դաղափարները իմ միտքս ալ պաշարած էին և չէի կրնար հանդուրժել չուրջս պարզուած անարանին : Իմ գլխաւոր դործս էր արտասահմանի մէձ հրատարակուած բոլոր ֆրանտերէն և թուրքերէն յեղափոխական հրատարակութիւնները կարդալ և անոնց մէկ յստակ համառօտութիւնը պատրաստել Սուլթանին համար : Իմ այս զբաղմունքս պատճառ եղաւ որ կամաց , կամաց , ևս ալ յեղափոխական դառ-

նամ... գաղափարային յեղափոխական մը անշուշտ, առանց գործունէութեան, առանց անձնութեան: Այսուհանդերձ հ'սպասէի առիթի մը որպէս զի կարենայի յարաբերութեան մասնկ այն հայրենասէրներուն հետ որոնք սարխներէ ի վեր կը գործէին մեր թշուառ հայրենիքի ազատութեանը համար:

Երեք երիտասարդները խորին ուշադրութեամբ և համակրութեամբ մտիկ կ'ընէին: Փախտականը շարունակեց.

— Վերջերս, երբ Նէճիպ Մէլհամէ հարցաքննեց Սատրք պէյը, ևս ալ, Սուլթանին հրամանաւ, իրիւ քարտուղարներկայ գտնուեցայ... ձեր ընկերոջ անվհճէր պատասխանները, սպաննալիքներու հանգէպ ցոյց տուած արհամարհանքը, իր անկեղծութիւնն ու արիւթիւնը զիս բողորովին հրապուրեցին և այն վայրկեանէն միաքս զրի միջոց մը դանկ զինքը սղատելու համար բռնաւորին ճիշտաններէն: Յաջողեցայ վերջուպէս քիչ շատ մտերմութիւն հաստատել Սուտանցի Սպու Սամաքի հետ, որուն հսկողութեանը յանձնուած էր Սատրք: Տեսայ որ այդ սեւամորթն ալ, հակառակ իր վայելապ ու անգութ նկարագրին, տեսակ մը արգահատանք կ'զգար բանտարկեալ երիտասարդին մասին ու համակրանքով կը խօսէր վրան: Այն ատեն համարձակութիւն առնելով՝ առաջարկեցի իրեն որ Սատրք պէյը փախցնենք: Սուտանցին իմ առաջարկութիւնս լսեց հաճութեամբ, յետոյ պատասխանեց. — «Ճշմտիւտը բնութեւ համար շատ սիրով կը փափաքիմ այս խեղճ երիտասարդը՝ ազատել զնաանի շարչարանքներէն, բայց Սատրքը փախչիլէ ետքը թ'նչ պիտի ըլլայ իմ վիճակս, կրնաք երեակայիկ դուք որ տալիներէ ի վեր մեր Սուլթանին մօտ կ'ապրիք ու կը կը ճանչնաք անոր բնութիւնը»: — «Դուն ալ միասին կը փախչիմ» պատասխանեցի: Սպու Սամաք ըսաւ թէ ինք արդէն իր երկիրը վերագտնալու համար խնդրագիր մը մատուցած է Սուլթանին և թէ Սուլթանը հաւանութիւն յայտնած է, միայն թէ հրաման ըրած է որ մինչև ամառ զեռ Երբորդը մնայ և ի

փոխարէն խոստացած է մեկնելու պահուն իրեն մեծ պարգև մը ապա :

— « Հիմա եթէ Սատըքը փախցնեմ ու ես ալ աներևոյթ ըլլամ, թէ՛ գլուխս փորձանքի մէջ պիտի ձգեմ և թէ՛ այդ պարգևէն պիտի զրկուիմ .» ըսաւ Սուտանցին : Հարցուցի թէ որքա՞ն պարգև ստանալ կը յուսար .— « Քոնէ հազար ոսկի պատասխանեց » : Այն ատեն՝ ինքնաբերաբար՝ ըսի որ եթէ Սատըքը փախցնէր երկու հազար ոսկի պիտի արուէր իրեն և միանգամայն զինքը ապահով կերպով Պոլսէն հեռացնելու միջոցներ պիտի հայթայթուէր : Այս խօսքերս մեծ ազդեցութիւն ըրին Սուտանցիին վրայ : Վերջապէս, չերկարեմ, հաւանեցաւ Սատըք պէյի փախուստը դիւրացնել հեռեկալ պայմաններով իրեն պիտի արուի երկու հազար ոսկի, հազար ոսկին նախապէս ու հազար ոսկին ալ Սատըքը ազատելէ ետքը, իր և իր ընկերոջ, որ Սատըք պէյի վրայ հսկող պահապան մ'է, միջոցներ պիտի արուին ապահով կերպով Պոլսէն հեռանալու համար : Այս պայմանները ընդունեցի, միայն թէ ինչպէ՞ս պիտի կրնայի գործադրել . . .

— Միթէ բացարձակ վստահութիւն ունի՞ք Ապու Սամաքի վրայ, հարցուց Սաի պէյ անոր խօսքը ընդմիջելով :

— Այո՛, այդ մարդը թէև ազէա ու կոպիտ, բայց անկեղծ է ու մանաւանդ շատ կը յարգէ իր խօսքը : Ասկէ զատ եթէ կեղծ ըլլային իր խօսքերը, եթէ զիս ծուղակը ձգելու նպատակով լնէր, կրնար զիս մատնել, քանի որ այդ պայմանագրութիւնէն ետքը տակաւին տասը օր մնացի Երբորդ և ուրիշ մէկ քանի անգամներ ալ զինքը տեսայ նորանոր խոստումներ առնելով իրմէ, նոյնիսկ անգամ մը զիս տարաւ Սատըքի գնտանը . . .

— Ի՞նչ, մեր ընկերը կրցա՞ք սեանել իր գնտանին մէջ, գոչեց Արիֆ պէյ :

— Այո՛, Երբորդը ձգելէս երկու օր առաջ, պատասխանեց միւսը, նոյնիսկ իրեն հետ քանի մը խօսք փոխանակեցի

և ըսի թէ ի՛նչ կարգադրութիւններ ընկու վրայ էի զինքը ազատելու համար այդ դժնդակ վիճակէն :

— Միթէ շատ փոխուած էր զնոսանին մէջ :

— Կատարեալ զիտ'ի մը դարձած էր, պատասխանեց նախկին պալատական քարտուղարը, բայց իր բարոյական կորովը անուշայայ մնացեր էր . . .

Սուտանցիին հետ այս կարգադրութիւնները ընկէ ետքը, ուզեցի յարաբերութեան մասնել Պոլսու յնպատիսական քօմիթէի անդամներուն հետ, որպէս զի իրենց հաշորդէի ու մէն բան : Բայց ի զ՛ւր ասդին անդին ինկայ, մէկ քանի վրատանելի բարեկամներու աջակցութեան զիմեցի, անկարելին փորձեցի որպէս զի կարենայի գանկ ինձի պէտք եղած անձերը : Կ'երեւայ որ այս միջոցին քօմիթէէն կարեւոր մարդիկ չեն մնացած Պոլիս : Ի վերջոյ Սաաւք պէյի ալ զիմեցի և ինձ դրեցի որ ինձի հասցէ մը ցոյց տայ, որպէս զի երթամ ու ինձիրը բացատրեմ : Չեր ընկերը զժբախտաբար կասկածեցու ինէ ու չուզեց բան մը ըսել : Եւ իրաւունք ալ ունէր, իրեն տեղը ևս ալ նոյն կասկածը պիտի ունենայի, մանաւանդ զիս տեսած էր արդէն իր հարցաքննութեան միջոցին իրբև նէճիպ Մէլհամէի հաւատարիմ քարտուղարը : Հիմա, վերջապէս, բախտը ունեցայ ձեզ գտնելու :

— Չբացատրեցիք թէ ի՛նչ պարագաներու տակ ստիպուեցաք փախչիլ Երլարդէն, բնու Սաի պէյ :

— Իրաւունք ունինք, այն ալ պատմեմ, պատասխանեց նախկին քարտուղարը : Իմ այս հետապնդումներս, Երլարդէն յաճախակի բացակայութիւններս, կասկածելի համարուած մարդոց հետ տեսակցութիւններս, լրտեսներու ուշադրութիւնը գրաւած էր, որոնք ետեւս գաղանի հսկողութիւն մը կատարելէ ետքը, իրենցմէ մին մանրամասն ճուռնալով մը ամէն բան հաղորդած էր Երլարդ : Տարօրինակ բախտով մը Սուլթանը այդ ճուռնալը ուրիշ շատ մը ճուռնալներու հետ, ստանց կարդալու ինձի յանձնեց, որպէս զի զանոնք աչքէ անցնեմ և



պարունակութիւնները համառօտելով իրեն հաղորդեմ: Այդ գործը արդէն յաճախ կը կատարէի: Կ'երեսակայէք յուզումս ձուռնալը որ դժբախտաբար ծայրէ ծայր ճիշտ էր. նոյն իսկ Լրտեսը կրցած էր գուշակել թէ ի՞նչ կը հետադարձէի և զիս և Երլարզի մէկ քանի պալատականներու միջև միջնորդ մը: Կարելի չէր այդ ձուռնալը ջնջել ու շարունակել Երլարզ մնալ, ձուռնալին մէջ գրուածները հերքելու միջոց ալ չունէի, վերջապէս կացութիւնս շատ ծանր էր, և հարկ էր անմիջական որոշում մը տալ: Ինչպէս ըսի, սրդէն սկսած էի զգուիլ Երլարզի կեանքէն, միւս կողմէ Սասարք սէյր ազատելու գաղափարը զիս կը պկեր... որոշեցի փախչիլ ու Սեկանիկ դալ, ուր կը յուսայի դիւրաւ յարաբերութեան մանկ ձեզ հետ: Եւ իսկոյն գործադրեցի որոշումս: Ահա՛, իրօգութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով:

Մարդը լուց: Երեք յեղափոխական երիտասարդները չափազանց ազգուած էին բոլոր այս պատմութիւններէն ու չէին զիտեր թէ ի՞նչ պէտք էր ընել:

— Ի՞նչ պիտի ընէք այժմ Սեկանիկի մէջ, հարցոց Սաի պէյ, խօսքը նորնկին ուղղելով:

— Իրա՛ւ որ ես ալ չեի զիտեր, ամէն պարագայի մէջ չպիտի կրնամ հոս երկար մնալ և նոյնիսկ միաք չունիմ վաղը մեկնելու և ժամանակ մը ծածկուած մնալու:

— Բայց եթէ մեկնիք ի՞նչպէս կրնանք դործել միասին:

— Եթէ հոս մնամ կը վախճամ որ մէկ ժամէն միւսը կը ձերբակալուիմ ու այն ատեն ամենուս ալ գործը կը խանգարուի:

— Մենք քեզ այստեղ կրնանք պահել ամենայն ապահովութեամբ, ըսաւ Սաի պէյ:

— Այո՛, այո՛, այդ մասին ընաւ հոգ մի՛ ըներ. երկրորդեց Արիֆ պէյ:

— Շնորհակալութեամբ և երախտ շքիտութեամ կ'ընդունիմ ձեր այդ առաջարկը, պատասխանեց նախկին պալատականը, որուն աչքերը ուրախութենէ շողացին :

— Այս վայրկեանէն իսկ մեր հովանաւորութեան ներքեւ էք, չարունակեց Սաի պէյ, հիմա անմիջապէս պանդոկ կ'ընթաց բեռները կառք մը կը դնէք ու հոս կը վերադառնաք, առանց ձեր նոր հասցէն իմացնելու . . . այս ատենը մեր բարեկամին, Ասլան պէյի կը պատկանի որ մեր անձնուէր ընկերներէն մէկն է և սիրով ձեր արամադրութեան ներքեւ կը դնէ զայն, մանաւանդ որ այժմ պարապ է :

— Այո՛, ամենայն հաճութեամբ, ըսաւ Ասլան պէյ, թէև շատ լաւ կահաւորուած է, այսուհանդերձ կրնաք հանգիստ բնակիլ հոս և եթէ պակաս բաներ ալ կան վաղը կարգի կը դնենք :

— Ամենախորին շնորհակալութիւններս կը յայտնեմ. զոչեց փախտականը, երբեք չպիտի մոռնամ այն ծառայութիւնը զոր ինծի կը մատուցանէք :

— Մենք ալ չպիտի մոռնանք երբեք այն մեծ ծառայութիւնը զոր դուք մեզի պիտի մատուցանէք, ազատելով մեր հէգ ընկերը իր զնտանէն, պատասխանեց Սաի պէյ :

Մարդը ոտքի ելաւ և մեկնեցաւ, խոստանալով բեռները առնել և անմիջապէս վերադառնալ իր նոր բարեկամներուն քով :

Երեք երիտասարդ իւր հոն մնացին ու չարունակեցին իրենց խորհրդակցութիւնները : Փախտականն սրալատականին պատմածները շատ կարեւոր էին և քանի որ յոյս կար Սառքը ազատելու . պէտք չէր ո և է դո՛ւրստութեան առաջ ընկերակիլ . այս էր ամէնուն ալ համոզումը : Միայն թէ հարկ համարեցին այս նոր եղկութիւնը հաղորդել իրենց միւս ընկերներուն և ինքնազուխ դործի չձեռնարկել :

Ապտիւլ Համիտի նախկին քարտուղարը ժամէ մը վերադարձաւ, հետը բերելով փոքրիկ պայուսակ մը :

— Ահաւասիկ ամբողջ ունեցածս, ըսաւ, և ստոնք ալ Սիլանիկի մէջ դնեցի, որովհետեւ Պոլսէն փախած ասանս բան մը չունէի հետս :

Ասլան պէյ իրենց նոր բարեկամը առաջնորդեց այն սենեակը որ իբրև ննջարան պիտի ծառայէր, յետոյ վարանոտ ձեւով մը ըսաւ :

— Կը ներէք բարեկամ, եթէ ձեզի բան մը հարցնեմ... չիտակը չեմ համարձակիր կոր վախնայով որ ձեր արժանապատուութիւնը կը վիրաւորեմ՝ թէև վիրաւորուելու ո և է պատճառ չունիք :

— Կ'ազաչեմ խօսեցէ՛ք մի՛ քաշուիք, պատասխանեց միւսը փութկոտութեամբ : Իմ մասին այնքան ազնուօրէն վարուեցաք որ ձեր ո՛չ մէկ խօսքը կրնայ զիս վիրաւորել :

— Պիտի հարցնէի թէ արդեօք դրամի պէտք ունի՞ք, որովհետեւ Պոլսէն յանկարծակի փախած ըլլալով՝ կրնայ ըլլալ որ չէ՛ք կրցած հետերնիդ դրամ առնել... կը խնդրեմ որ առանց քաշուելու, անկեղծօրէն խօսիք :

— Սիրելի Ասլան պէյ, ո՛չ միայն դրամի պէտք չունիմ, որովհետեւ, փո՛ռք Ասատուծոյ, բուսական խնայողութիւն ըրած էի ու պատրաստ դրամ ունէի գրքոցիս մէջ, այլ նոյնիսկ չափազանց դրամ ունիմ վրաս, ինչ որ մասհօգութիւն կը պատճառէ ինձ, այնպէս որ ձեռնէ պիտի խնդրէի որ ձեր քովը պահ տամ պէտք եղած ասեւը գործածելու համար, քանզի կը վախնամ որ վրաս պահելով կը գողցնեմ... իսկ տանիլ գրամատուն մըն ալ յանձնելու չեմ համարձակիր, որովհետեւ այն ատեն հարկ պիտի ըլլայ ինքնութիւնս յայտնելու :

— Շատ իրաւունք ունիք, պատասխանեց Ասլան պէյ, ամենայն հաճութեամբ յանձն կ'առնեմ ձեր դրամապահը ըլլալ... :

Նախկին քարտուղարը Մարօքեան կաշիէ խոշոր թղթապանակ մը հանեց զրպանէն ու պանքնօթներու ծրար մը ներկայացուց երիտասարդին :

— Ահաւաստիկ համբոցէ՛ք, ըսաւ, եօթը հարիւր ոսկի պանքնօթ կայ... սակէ զսա քովս բաւական դրամ կը մնայ մէկ քանի ամիս ապրուելու համար :

— Պէտք է որ ձեզի ընկալազիր մը տամ...

— Երբևք այդպիսի բան չեմ ընդունիր, գոչեց միւսը, ես ձեր վրայ վստահութիւն ունիմ և եթէ այդպիսի բան մը ընէք զիս չափազանց կը վիրաւորէք, զիտցած եղէք...

Էա՛ւ, լա՛ւ թող ձեր ուզածին պէս ըլլայ, կը տեսնեմ որ պատուական անձ մըն էք եզեր... մեզք որ շատ ոչ զիրար ճանչցանք :

— Ափս՛ս, այո՛, բայց նորէն շատ բաներ կրնանք ընել միասին մեր դժբախտ հայրենիքին համար : Չմոռնամ ըսկու որ եթէ Սաաքք պէյի փախստեան մասին իմ ծրագիրս ընդունուի՝ պատրաստ եմ ձեր քով պահ դրուած դրամէն երեք հարիւր ոսկի արամադրել այդ գործին... կը փախաքէի ամբողջը տալ, բայց ներկայ վիճակիս մէջ քիչ մը դրամ անըրաժեշտ է որ դանուի ձեռքիս տակ, քան զի չենք զխտր թէ ի՛նչեր կրնան պատահիլ :

— Բայց պէյ էֆէնտի, այս ձեր բրածը չափազանց է, գոչեց Ասլան պէյ խանդավառուած, և ես իմ ու իմ ընկերներուս կողմէ կը մերժեմ այս նվաճական նուէրը, դուք արդէն ձեր բարոյական աջակցութեամբ չափէն աւելին առած պիտի ըլլաք :

— Ո՛չ, գոչեց միւսը, իրաւունք չունիք մերժելու, միթէ արգիլուած է ինձի հայրենիքիս համար զո՛րոգութիւն ընկը և միթէ միայն ձե՛ր առանձնաշնորհուն է ատիկա...

Ասլան պէյ՝ յուզուած ու ամօթահար՝ չկրցաւ պատասխանել և լսին մօտենալով իր խօսակցին՝ անոր ճակատը համբուրեց :

Քիչ ետքը երիտասարդ յեղափոխականը բարի գիշեր մաղթելէ ետքը իր հիւրին վերադարձաւ ընկերներուն քով, ուրոնք վարի սրահը իրեն կ'սպասէին ու մանրամասնօրէն պատ-

մնց ինչ որ անցած էր իր ու փախստականին մեջև .

— Լաւ ուրեմն , գոչեց Սաի պէյ , շատ գոհ եմ որ այդ մարդը քովը գրամ ունի եզեր ու գրամն ալ քեզի յանձնեիր ու արամադրութիւն յայաներ է երեք հարիւր ոսկի սալու Սաաբքը փախցնելու ծրագրին յաջողութեանը համար :

— Ի՞նչու այդքան գոհ ես , հարցուց Արիֆ պէյ :

— Որովհետեւ հակառակ այդ մարդուն ըրած պատմութեան շատ բնական բան մը ըլլալուն , շիտակը միշտ կասկած մը ունէի թէ այս անձանօթը մեզ շահագործել կ'ուզէ , և թէ ըրդոր այդ պատմութիւնները կը յօրինէ վերջ ի վերջոյ մենէ զրամ քաշելու համար .

— Այդ կասկածը ես ալ ունեցայ , ըսաւ Արիֆ պէյ :

— Արդ , հիմա պէտք չէ որ այլեւս այդպիսի կասկածանքներ մեր միտքը պաշարեն , պատասխանեց Ասլան պէյ . այս մարդը բացարձակապէս անկեղծ է ու է գրամական շահագործում ընելու համար չէ որ մեզի հետ յարաբերութեան մանկ ուղած է . . . ընդհակառակը պատրաստ կ'երեւայ ամէն զոհողութեան :

Երեք բարեկամները մեկնեցան , առանձին թողով իրենց նոր ծանօթը որ արդէն անկողին մտած էր :



Պ Լ Ո Ւ Ե Ժ Է .

Փ Ա Ն Ո Ւ Ս Տ Ի Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

Հետեւեալ օր կանուխ Սայան պէյ եկաւ իր հիւրը տեսնելու և որպիսութիւնը հարցնելու , միանգամայն իրեն հետ հաւատարիմ մարդ մը բերաւ իրրե խոհարար և պատասխար :

— Հիմա հանգիստ կրնաս այստեղ մնալ առանց դուրս ելլելու, ըստ իր նոր բարեկամին, մեր Ահմէա ազան որ ձեզի կը ներկայացնեմ, մեր ասն հին ծառաներէն է թէ խիտ վտանակի ու հաւատարիմ և թէ միանգամայն պատուական խոհարար մըն է որուն կերակուրներէն չափազանց դո՛ս պիտի մնաք :

— Շատ շնորհակալ եմ ձեր հողածութենէն, բայց ես հոս համանդամ խորախիներ ուտելու չեմ եկած՝ այլ գործ տեսնելու, թշուառ հայրենասէր մը իր զնտանէն ազատելու համար, ի՞նչպէս կրնամ ես անգորր սրտով ձեր Ահմէա ազային պատրաստելիք համեղ կերակուրները ճաշակել երբ միտքս բերեմ Երրորդի մութ գեանափորին մէջ ցամաք հացով իր օրերն անցնող ստարաբխտ Ստարք պէյը :

— Ենհող եղիր, անոր մասին ալ անմիջապէս պիտի սկսինք աշխատիլ, սրտասխանեց Սալան պէյ իր հիւրին այս խօսքերէն չափազանց յուզուած, քիչ մը ետքը մեր բարեկամները կրկին պիտի դան ու վերջնական խորհրդակցութիւն մը պիտի կատարենք :

— Գարձեալ երէկի՞ բարեկամները . . .

— Անոնք՝ ինչպէս նաև երկու նոր ընկերներ, զորս ճանչնալու առիթը պիտի ունենաս և որոնք մեր քոմիթնին ամէնէն կարեւոր անդամներն են :

— Շատ ուրախ եմ որ պատիւը պիտի ունենամ իրենց հետ ծանօթանալու . . .

Արդարև ժամ մը ետքը Սաի պէյ, Արիֆ պէյ և քաղաքացիի զգեստ հագած երկու զինուորականներ եկան Սալան պէյի բնակարանը :

Մտորդակցութիւնը մինչև կէս օր տևեց : Ամէնքը համաձայն էին որ պէտք էր կարելի եղածին չափ շուտ զործել, որովհետև դէպքերը գահավէժ արագութեամբ մը իրարու կը յաջորդէին և կարելի չէր դուշակել թէ ի՞նչ անակնկալ կրնար պատահիլ մէկ վայրկեանէն միւսը :

Դրամական խնդիրը շուտով կարգադրուեցաւ : Վեր ի վերայ հաշիւ մը բնկիով տեսան թէ առ նաւազն երեք հազար ոսկիի պէտք կար : Փախտասկանը արդէն երեք հարիւր ոսկի կը տրամադրէր : Ապան պէջ ինքն ալ իր կողմէ հօթը հարիւր ոսկի տալ խոստացաւ , ոսկին պիտի առնէին Սեւանիկի կեդրոնական Քօմիթէի մնաուկէն էր բաւական հարուստ էր այդպիսի զոհողութիւն մը բնկու համար :

— Յետեյ մեր մասնաճիւղերուն կը դրենք և ամէն մէկէն մէյմէկ մասնավճար կը պահանջենք այս դործին համար երբոր յաջողութեամբ ի գլուխ հանենք , ըսաւ Սաի պէյ :

Հիմա կը մնար մարդու խնդիրը : Ո՞վ պիտի յարաբերութեան մէջը Ապու Սամաքի հետ :

— Այդ մարդը շատ կ'սովածոտ է , ըսաւ պալատական քարտուղարը , և կը վախնամ որ չուղէ անձանօթի մը հետ յարաբերութեան մասել :

Երկար խորհրդակցութեան տեղի տուաւ այս խնդիրը . ի վերջոյ փախտասկան Նուրի պէյ ըսաւ .

— Ուրիշ ճար չկայ , պէտք է որ ևս Պոլիս վերադառնամ և ուղղակի յարաբերութեան մասեմ բանտապետին հետ . . .

— Ի՞նչ կ'ըսէք , գոչեց Սաի պէյ , միթէ կարելի՞ բան է այդ :

— Ինչո՞ւ չէ , միթէ դուք շատ անգամներ Պոլիս չէ՞ք գացած . . .

— Այո՛ , բայց մենք ձեզի չափ ծանօթ չենք . . .

— Ես կը ծպտուիմ . ու անձանաչելի կը դառնամ . . . խընդիրը այն է որ դուք ինծի օգնէք ու Պոլսոյ մէջ ապահով տեղ մը ցոյց տաք ուր կարենամ մնալ ու գործել , առանց լրտեսներէ ու ու ստտիկանութենէն վախ ունենալու :

— Այդ գէլերին է և պէտք եղած ատեն ամէն միջոց կրնանք դանել :

— Յետոյ առանձին չեմ կրնար գործել , քանի որ ստիպուած պիտի ըլլամ փակուած մնալ , հարկ է որ օժանդակներ արուին ինծի . . .

— Պոլսոյ մէջ տակաւին ընկերներ ունինք որոնք կրնանք ձեզի ծանօթացնել . . . տակէ դատ եթէ պէտք ըլլայ, հոսկէ ալ մէկ կրկու հոգի ձեզի կ'ընկերանայ :

— Ուրեմն անմիջապէս մեկնումի պատրաստութիւնները տեսնենք :

— Ի՛նչ, լրջօրէն որոշած էք Պոլիս վերադառնալ, հարհուց Ասլան պէյ հիանալով պարտաականին անձնութիւնը վրայ :

— Կարծեմ մեր կացութեան մէջ գտնուող անձերը թեթեւ կատակներ ընելու ժամանակ չունին, պատասխանեց Նուրի՛ պէյ . . . Ապու Սամաքը յառաջ մղելու համար անհրաժեշտ է որ ևս հոն ըլլամ . . . առաջ կ'ենթադրէի որ ուրիշ մը կրնար կատարել այս գործը, բայց ո՛չ, անկարելի է, Սուտանցին շատ կասկածոտ է ու կրնայ գլուխնիս փորձանք ժրբերել . . .

— Քանի որ ձեր բարեկամը փափաք կը յայտնէ այս վտանգաւոր ձեռնարկին մասնակցելու և քանի որ կ'ըսէ թէ առանց իրեն կարելի չէ գործը յաջողութեամբ ղլուխ հանել, ինչ որ շատ ճիշտ կը թուի ինծի, պէտք է որ ընդունինք իր առաջարկը և մեր շնորհակալութիւնները յայտնենք, ըսուելիս ղլնուորականնէն մին որ մինչև այն ատեն լուռ մնացած էր :

— Կեցցե՛ս, գոչեց Նուրի պէյ . . . , ուրեմն այս խնդիրն ալ կարգադրուեցաւ . հիմա դուք որոշեցէ՛ք թէ ո՛վ պիտի ընկերանայ ինծի և թէ ե՛րբ ու ի՛նչ ճամբով պիտի երթանք Պոլիս :

Խօսակցութիւնը շարունակուեցաւ մինչև ցերեկ : Փախտական քարտուղարը հետզհետէ համակրանք կը շահէր յիշտփոխականներուն քով, իր եռանդովը, յանդուգն ծրագրիւնլովը և անձնուէր ու անշահախնդիր ընթացքովը :

Ասլան պէյ կ'ուզէր որ ղլինքը քօմիթէին մէջ առնեն Պոլիս մեկնելէն առաջ ու կարեւոր դեր մը տան իրեն :



— Այս մարդը իբրև նախկին պալատական և Երլաբլի բոլոր գաղանձիքներուն մօտէն տեղեակ մէկը, կրնայ մեզի շատ մեծ ծառայութիւններ մատուցանել, կ'ըսէր իր ընկերներուն :

Արդարև Նուրի պէյ Ապու-իւլ-Համիտի ներքին կեանքէն շատ բաներ կը հաղորդէր իր նոր բարեկամներուն, որոնք անյազ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէին իրեն :

Ինքն ալ փոխադարձաբար մեծ հետաքրքրութիւն ցոյց կուտար յեղափոխականներու մասին և տեղեկութիւններ կը հարցնէր Սալիհա Հանրօթի, Մէհմէտ փաշայի վրայ, որոնց համար անսահման հիացում մը ունէր :

— Այն օրը ուր բախտը ունենամ Սալիհա Հանրօթի ձեռքը համբուրելու կեանքիս ամէնէն երջանիկ օրը պիտի ըլլայ, կը յայտարարէր :

Խնդրած էր որ այդ շնորհին արժանանայ երբ որ յաջողի Ստաբք պէյը փախցնել ու անվտանգ բերել իր ընկերներուն քով : Երիտասարդ յեղափոխականները խոստացած էին իրեն այդ խնդիրքը կատարել :

Մեկնումի պատրաստութիւնները տեսնուած էին, դրամը հայթայթուած էր, միայն թէ հարկ էր մէկ քանի օր սպասել, որովհետև Պոլիս իրենց ընկերներուն իմացուցած էին որ երեք հօգի Սելանիկէն հոն պիտի երթային երկաթուղիի ճամբով և հրահանգ տուած էին որ անոնց համար ապահով տեղ մը պատրաստեն ու միանդամայն զիրենք դիմաւորեն Պոլիս հասած ժամանակին : Հիմա կ'սպասէին պատասխանի :

Նուրի պէյ ամբողջ օրը փակուած կը մնար տան մէջ. միայն գիշերները դուրս կ'ելլէր քայելու և օդ առնելու համար : Ամէն օր երիտասարդ յեղափոխականները կուգային իրեն մօտ տեսակցելու և տեղեկութիւններ հաղորդելու : Իր և անոնց միջև մտերմութիւնը այնչափ առաջ գացած էր որ և անոնց միջև մտերմութիւնը այնչափ առաջ գացած էր որ այլևս Նուրի պէյը իրենցմէ մէկը կը համարէին ու անոր

քով իրենց ներքին գործերուն վրայ կը խօսէին առանց կասկածանքի :

Նախկին պալատանը յաճախ խնդարով կ'ըսէր .

— Այսօր բաւական նիւթ աուելք ինծի՝ իրիկունք երբող ճուռնայ մը զրկելու համար :

Վերջապէս Պոլէն սպասուած նամակը եկաւ : Ամէն բան յաջող էր , պէտք եղած սենեակները վարձուած էին ապահով տեղ մը , ասկէ զատ նամակը կը յայտնէր որ Պոլտոյ մէջ նախկին խոստովիւնը չէր մնացած , թէ ոտիկանութիւնն իր ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձուցած կը թուէր , թէ Լըտեսները շատ չէին երեւար և թէ գործելու համար պատեհատենն էր :

Ասլան պէյ յաջողած էր երեք հատ գերմանական անցագիր ձեռք ձգել , որոնցմով պիտի երթային Նուրի պէյ և երկու յեղափոխականները . այդ երկու յեղափոխականներն մին էր մեր ծանօթ բարեկամը Արիֆ պէյ , որ անպատճառ ուզած էր մասնակցիլ իր ընկերոջ ազատման գործին՝ իսկ միւսն ալ պանացի երիտասարդ մ'էր , յանդուգն ու կորովի , որ բողբոլին անձանօթ ըլլալով Պոլտոյ մէջ՝ պիտի կրնար ազատորէն գործել և շատ օգտակար ըլլալ :

Շարաթ գիշեր մը Սաի , Արիֆ ու Ասլան պէյերը , երկու զինուորականներն և Ալպանիացի երիտասարդը հառաքուեցան այն բնակարանն ու կը գտնուէր Նուրի պէյ :

Հետեւեալ առտու կանուխ նախկին պալատականը և երկու յեղափոխականները կառախուժբով ձամբայ պիտի ելլէին Պոլիս երթալու համար ու այս առթիւ բարով երթանքի խնճոյք մը սարքած էր Ասլան պէյ :

Սեղանը շատ զուաթ անցաւ : Բազմաթիւ գաւաթներ պարպեցին գործին յաջողութեան , Սատրք պէյի կենաց , Ազատութեան յաղթանակին համար : Կերուխումը տեւեց ամբողջ երեք ժամ : Ի վերջոյ Նուրի պէյ ոտք ելաւ , գաւաթը ձեռքը և յուզուած շնչտով մը ըսաւ .

— Միրելի բարեկամներ, վազը առաւ կը մեկնինք երթալ բռնաւոր գազանին ճիրաններէն ազատելու համար ձեր պատուական ընկերը, Սատրք պէջը որ շարաթներէ ի վեր մտթ զնտանի մը խորը կը առտապի յուսահատ ինքզինք լքուած համարելով ամէնէն: Մեր կատարելիք գործը անշուշտ գծուարին ու վտանգալից է, բայց Աստուծոյ շնորհիւ կատարեալ հաւատք ունիմ որ պիտի յաջողինք և պիտի կրնանք ազատել սարարախա բռնտարկեալը: Զիս թէև մէկ քանի օրէ ի վեր միայն ճանչցաք, բայց կը յուսամ որ կրցաք գնահատել: Հասկցաք որ շահամոլ խարերայ մը չեմ և ձեզի հետ յարարելութեան մտնելով, ուրիշ նպատակ չեմ ունեցած՝ եթէ ոչ Սատրք պէջի փրկութիւնը: Հեմա պէտք է խոստովանիմ որ ուրիշ նպատակ մէն ալ ունիմ՝ այն է քաւել իմ անցեալս, իմ պալատականի անցեալս և աօրկա մէկ կերպով մը միայն կարելի է ինծի համար, այն է յեզպօրտական դառնալ, ձեր քօթիթէին մէջ մանել և կեանքիս մնացորդ մտար իմ հայրենիքիս փրկութեան և Ազատութեան յաղթանակին նախը. . .

— Կեցցէ՛ նաւրի պէյ, գոչեցին ամենքը ծափահարելով:

— Կը վախաքիմ որ, շարունակեց նաւրի պէյ, զիս ձեր քօթիթէին անգամ ընդունիք մեկնելէն առաջ: Կրնայ ըլլալ որ Պարսոյ մէջ ձերբակալուիմ և այդ ձերբակալութեան հետեւանքը պարզապէս իմ մահն պիտի ըլլայ: Արդ, կ'ուզեմ որ գտնէ յեզպօրտական մեռնիմ. . . այս միտիթարութիւնը սուէք ինծի, կ'ուզեմ որ այլևս ձեզի «սիրելի բարեկամներ» չանուանեմ, այլ «սիրելի ընկերներ» . . . :

Ամէնքը խորապէս զգածուած կ'ին այս խօսքերէն:

— Ձեր փափաքը մեր ամէնուս ալ փափաքն է, բայտ Սաի պէյ սաքի ելլելով:

Յետոյ իր շարժի ընկերներուն դառնալով՝ հարցաւ.

— Այնպէս չէ՞:

— Այո՛, այո՛, կրկնեցին ամենքն ալ միաբերան:

Նոյն վայրկեանին փողոցի դուռը զարնուեցաւ:

Կոչնականները՝ զարմացած՝ իրարու երես նայեցան: Մէկու մը չէին սպասեր այդ վայրկեանին, ո՞վ կրնար ըլլալ և կողը:

Խոհարարը Ահիլա գնաց դուռը բանալու և վայրկեան մը ետքը սրահին մէջ երեւցաւ զինուորական մը հարիւրապետի համազգէստով.

— Սէֆէր պէյն է եղեր, գոչեցին ամենքը ուրախութեամբ, եկու՛ր ճիշտ ժամանակին հասար:

Սէֆէր պէյ քօմիթէին անդամներէն էր և մեծ սէր ու յարգանք կը վայելէր իր ընկերներուն քով իր անկեղծութեան, ուղղամտութեան և մեծանձնութեանը համար:

Հակառակ իրեն ուղղուած հրաւերին՝ հարիւրապետը անշարժ մնաց իր տեղը, դաժան նայուածք մը ուղղելով ամէնուն վրայ:

— Տեղ բացէ՛ք Սէֆէր պէյին, գոչեց Ասլան պէյ, հոս իմ քովս եկու՛ր. պէտք ունինք քեզի:

— Ի՞նչ կայ, որ հարցուց նորեկը խիտ ձայնով մը:

Նոր ընկեր մը պիտի ընդունինք մեր մէջ, ընկեր մը որուն մասին արդէն խօսած ենք քեզի և որ...

— Ո՞վ է այդ նոր ընկերը, ընդմիջեց Սէֆէր պէյ առանց տեղէն շարժելու:

— Ահա տախկ, մեր պատուական բարեկամը, Նուրի պէյը, գոչեց Ասլան պէյ ձեռքովը ցոյց տալով պալատական քարտուղարը:

— Այս մարդը չենք կրնար մեր մէջ առնել. ըսաւ հարիւրապետը շանթահարիչ նայուածք մը ուղղելով Նուրի պէյի վրայ:

Այս խօսքերը, հաստատուն և դաժան չեչուով մը արտասանուած, խռովեցին ներկաները, որոնք իրենց ընկերոջ երեսը կը նայէին զարմացած, առանց համարձակելու զայն հարցուփորձել: Նուրի պէյ ինքն ալ այս անակնկալ դէպքէն սարսափահար լուս կը մնար:

— Այո՛, կրկնեց հարեւրապետը, այս մարդը չի կրնար մեր մէջ մանկ, այս մարդը իրաւունք չունի նոյն իսկ մեզի հետ սեղանակից ըլլալու...

— Բայց ինչո՞ւ համար, հարցուց վերջապէս Սաթ պէյ գողանար ձայնով մը:

Որովհետեւ այդ մարդը ստորին լրտես մըն է...

Այս խօսքերը զորս զինուորականը հանդիսաւոր ձայնով մը արաստանած էր, լախտի հարուածի մը պէս իջաւ ամէնուն գլխուն: Ամէնուն աչքերը ուղղուեցան Նուրի պէյի վրայ, որ յուզումէն կը դողդղար և որուն այտերը դեղն դեղին կտրած էին:

— Սուտ է, գոչեց պալատական քարտուղարը, խեղդուկ ձայնով մը:

— Այս մարդը, շարունակեց Սէֆէր պէյ, առանց կարեւորութիւն սալու Նուրի պէյի խօսքին, այս մարդը Սատրք պէյը ազատելու իր երեւակայական ծրագրով յաջողած է ձեր վստահութիւնը շահիլ և յետոյ ձեզ մտանած է Ապտ-իւլ-Համիտի...

— Մտանա՛ծ, գոչեց Սաթ պէյ տոքի կլկլով:

— Այո՛ ձեզ ամենքդ, այսինքն հոս գանուող վեց հոգիներն ալ մտանած է...

Ամէնուն ակնարկը կրկին սեւեռեցաւ Նուրի պէյի վրայ որուն շփոթութիւնը հեազհեա կ'աւելնար: Հիմա այլեւս չէր համարձակեր աչքերը վեր առնել և կարծես բոլորովին անէացած էր իր վրայ ձնչող ամբաստանութենէն:

— Նուրի պէյ, խօսէ՛, պատասխան տո՛ւր, մեր ընկերոջ այս ըսածներուն, գոչեց Արիֆ պէյ ինքն ալ տաքի կլկլով:

— Սխալ է, սուտ է, գրպարաութիւններ են... թո՛ղ ապացուցանէ իր ըսածները, կ'մկմաց միւսը:

— Այո՛, պիտի ապացուցանեմ, թշուառական, ըսաւ Սէֆէր պէյ. և կ'ուզեմ տեսնել որ պիտի համարձակիս ուրանալ...: Նախ, սիրելի ընկերներ, պէտք է ձեզի ըսեմ որ

մեր խմբակը, մէկ քանի ամիսներ առաջ, որոշեց որ իր անդամներէն մէկը ինքզինք իրը լրտես ձեւացնելով՝ յարաբերութեան մանէ այստեղ գտնուած լրտեսական խումբերուն հետ Այս ծրագիրը հրաժարի կերպով յաջողեցաւ և մեր ընկերը կարճ միջոցի մը մէջ կրցաւ մեծ ազդեցութիւն մը ձեռք բերել ու վստահութիւն ներշնչել ամէնուն: Ասկէ շարաթ մը առաջ, երբ մեր շարաթական նիստը գումարած էինք, այս ընկերը մեզ հազարդեց թէ Պոլսէն խիստ ճարպիկ լրտես մը հասած է որ կրցած է իսկոյն յարաբերութեան մանկ յեղափոխական խմբակի մը հետ, անոնց վստահութիւնը շահիլ և նոյնիսկ անոնց կողմէ հիւրասիրուիլ, ինքզինք իրրեւ երբորդէն փախչող պալատական մը ցոյց տալով: Հարկ չկայ ըսելու որ այդ ահնարիւած լրտեսը նոյնինքն ձեր սեղանը նստող այս թշուառականն է...: Չուղեցինք անոթիձագէս եղիլութիւնը ձեզի իմացնել, այլ թողուցինք որ լրտեսը իր էնթրիկները շարունակէ, տեսնելու համար որ իր յանդգնութիւնը մինչև ո՛ւր պիտի հասնէր:

-- Բայց կրնար նոյն միջոցին մեզի մանկ, գիտի սուտա Մաի պէյ տանլութեամբ լի նայուածք մը ուղղելով ամբաստանեալին վրայ:

Չէ՛, գիտէինք որ իր ծրագիրը տարբեր էր, նախ չէր ուղեր մէկ երկու մասնութեամբ գոհանալ, այլ իր նպատակն էր վստահութիւն ներշնչելով հետզհետէ նորանոր ծանօթութիւններ հաստատել բազմաթիւ յեղափոխականներու հետ և այսպէս ամէնքը մէկտանց նետել գաղանին ճանկը: Նոյնիսկ ձեր անունները չէր հազարդած իր լրտես ընկերներուն՝ այլ միայն յեղափոխականերու հետ յարաբերութիւն հաստատելը իմացուցած էր, պատմելով թէ ինչ հնարքի գիրմած էր յաջողելու համար: Մեր ընկերը, սակայն, զինքը գողանարաբ հետապնդելով տեսած էր այս սառնը մանկը և այսպէսով մենք իմացանք թէ որո՛նց հետ կրցած էր ծանօթանալ:

— Ի՛նչ պիտի պատասխանես այս որոշ ամբաստանու-

թիւններուն վաճառարան , գոչեց Սերիֆ պէյ բարկաճայթ անհամբերութեամբ , խօսքը Նուրի պէյին ուղղելով :

Այս վերջինը իր պաղարիւնութիւնը գտած կը թուէր , որովհետեւ հաստատ ձայնով մը պատասխանեց .

— Ասոնք բոլոր մատախներ են և ո՛չ թէ ապացոյցներ , և իրաւունք չունինք այս տեսակ կոտորածներով մէկը գտապարտել համ տմբաստանել :

— Համբերէ՛ քիչ մը և քեզի աւելի անհերքելի ապացոյցներ պիտի տամ , գոչեց Սէֆէր , պէյ :

Շարունակեցէ՛ք , սիրելիս , շարունակեցէ՛ք , բաւ Սաի պէյ :

Չինուորականը խօսքը շարունակեց .

— Երէկ զիշեր այս մարդը դարձեալ կը գանէ իր լրանք ընկերները և անոնց կ'իմացնէ թէ կիրակի տառու կանուխ երկաթուղիի ճամբով Պոլիս պիտի վերադառնայ : Այս տեղեկութիւնը առէ ևս քը կը մեկնի մեր ընկերոջ հետ և թղթատան կողմը ուղղուելով նամակ մը կը ձգէ տուփին մէջ . . .

Նուրի պէյ ալեւս զլուխը վար չէր հակած՝ այլ բարձր բռնած՝ մտիկ կ'ընէր զինուորականին խօսքերուն , իբրև թէ խնդիրը իր անձին չուրջ դարձած չըլլար :

— Քիչ ևս քը , շարունակեց հարիւրապետը , Նուրի և մեր ընկերը իրարմէ կը բաժնուին և այս վերջինը կը վերադառնայ թղթատուն ուր սակաւին հեռագրատան երկու սրահոնեաներ կը գանուէին : Գիտէք որ կրցած ենք թղթատան և հեռագրատան բոլոր սրահոնեաները մեր կողմը շահել . . .

— Հարկ չկայ այդպիսի խօսքերու , ընդմիջեց Սաի պէյ :

— Ինչո՞ւ համար . . .

— Քայց քանի որ մէջերնիս լրանս մը ունինք , ի՞նչ հարկ նորանոր բաներ հասկցնել անոր :

— Նուրի պէյը ալեւս մեր մէջ ընդունած ենք , պատասխանեց Սէֆէր պէյ շարաչուք ժպիտով մը , հետևաբար իրմէ վախ մը չունինք : Չերկարեմ խօսքս մեր ընկերը կը յաջողի

վերջապէս ձեռք ձգել քիչ մը առաջ տուփը նետուած նամակը . . . այս նամակը ոստիկանստիժեան նախարար Շէֆիք փաշայի ուղղուած էր :

Նուրի պէյ որ, ինչպէս ըսինք, իր պաղարիւնութիւնն սկսած էր գաննել, այս վերջին խօսքերուն վրայ բոլորովին քայքայուած դէմք մը կ'առնէ ու աչքերը կը խոնարհնցնէ :

— Ո՞ւր է այժմ այդ նամակը, հարցուց Սաի պէյ :

— Հոս իմ գրպանս, պատասխանեց զինուորականը իր կուրծքը ձեռնելով :

— Կարդացէ՛ք ուրեմն :

— Անմիջապէս :

Սէֆէր պէյ գրպանէն թղթապանակը հանեց և պահարանի մէջ դրուած նամակ մը առաւ և իր բնկերներուն երկարելով, ըսաւ .

— Նախ տեսէ՛ք հասցէն :

Ամենքն ալ մօտեցան ու կարդացին ոստիկանութեան նախարարին անունը :

— Հիմա տեսնենք պարունակութիւնը, շարունակեց Սէֆէր պէյ, նամակը պահարանէն հանելով ու բարձրաձայն կարգալով .

«Վսեմաշուք նախարար փաշա, կ'ըսէր այս գրութիւնը, ուրախ եմ ծանուցանելու Ձեր Բարձրութեան որ գործը խիստ յաջող ճամբու մէջ է, և կը յուսամ որ չնորհիւ մեր Վեհ Սուլթանին՝ որուն Առտուած երկար կեանք պարգևէ, իր նուիրակոն անձին ու Պետութեան դէմ դաւածանող ապերախտ արարածները պիտի կրնանք վերջապէս իրենց արժանի եզող կերպով պատժել : Իմ կողմէս խիստ վարպետ կերպով գործադրուած ծրագրի մը չնորհիւ կարող եզայ քօմիթէին երկու կարեոր անդամներուն՝ Սաի և Արիֆ պէյերուն վստահութիւնը շահիլ, որոնց ինքզինքս ցոյց տուի իբրև Երլարդէն փախկան կան քարտուղար մը : Անոնց միջոցաւ յարաբերութեան մտայնաւ Աելանիկի երեսելիներէն Ապան պէյի հետ, որ նոյնպէս



քօմիթէի անդամներէն մէկն է և որուն բնակարանը կը գտնուիմ այս միջոցիս, իբրև հիւր: Յետոյ, կամաց կամաց ճանչցայ նաև երկու յեղափոխական զինուորականներ, Հիւսնի և Ասիմ պէյերը և ուրիշ Ալպանացի երիտասարդ մը, որոնց ամէնն ալ կարևոր գործիչներ են: Հիմա պիտի ջանամ որ պաշտօնապէս քօմիթէի անդամ արձանագրուիմ, որպէս զի կանխապէս անկի ընդարձակ ծանօթութիւններ հաստատել:

Թէև կրնայի շատ զիւրաւ այս անձերը ձերբակալել տալ և Պոլիս գրկել, բայց մտածեցի որ լաւագոյն կ'ըլլար սպասել և յետոյ ամենքը միասին ձեռք անցընել, որովհետև պէտք է զիսնաք որ այս կողմերը ձեր կարծածէն շատ աւելի տարածուած է այդ անիծեալ քօմիթէն. այս մասին Ձեր Վսեմութեան շատ մը բերանացի տեղեկութիւններ պիտի կրնամ հազորդել Պոլիս վերադարձիս:

«Առ այժմ Ձեր Վսեմութեան ուշադրութիւնը կը հրաւիրեմ հետագայ սողերուն վրայ:

«Այս կիրակի՝ այսինքն նամակիս թուականէն երկու օր հետքը, առատուան կառախումբով, ես ու քօմիթէին երկու անդամները, Արիֆ ու Ալպանիացի երիտասարդը, Սեւանիկէն ճամբայ պիտի ելլենք Պոլիս գալու համար: Յաջողեցայ իրենց հաւտացնել թէ կարելի էր Սաաթք պէյընըրտըզէն փախցնել իմ միջոցաւս կաշառելով Ապու Սամաքը և իբր թէ այդ գօրծը զլուխ հանելու համար պիտի գանք: Երեքս ալ գերմանական անցագիրներ ունինք Շվարց, Հօֆման և Մայէր անուններով: Սիրքէճիի կայարանը մէկ կամ երկու հօզի պիտի գանք քօմիթէին պատկանող անձեր բնականաբար, մեզի զիմաւորելու համար: Ասոնք Ձեր Վսեմութեան կ'իմացնեմ որպէս զի պարտա ու պատշաճը անօրինէ:

«Ըստ իս լաւագոյն կ'ըլլայ որ մեզ իսկոյն կայարանին մէջ չձերբակալեն, որպէսզի կարելի ըլլայ նաև ձեռք անցընել մեզի զիմաւորել եկազներն ալ: Յետոյ պիտի խնդրէի Ձեր Վսեմութենէն որ հարկ եղած հրահանգները տար որպէս զի

քօմիթէի անդամներէն մէկն է և որուն բնակարանը կը զբա-  
նութիմ այս միջոցիս, իբրև հիւր: Յետոյ, կամաց կամաց ճանչ-  
ցայ նաև երկու յեղափոխական զինուորականներ, Հիւանի և  
Ասիմ պէյերը և ուրիշ Ալպանացի երիտասարդ մը, որոնց ա-  
մէնն ալ կարևոր գործիչներ են: Հիմա պիտի ջանամ որ պաշ-  
տնապէս քօմիթէի անդամ արձանագրուիմ, որպէս զի կա-  
րենամ աւելի ընդարձակ ծանօթութիւններ հաստատել:

«Թէև կրնայի շատ դիւրաւ այս անձերը ձերբակալիլ առ  
և Պոլիս զրկել, բայց մտածեցի որ լաւագոյն կ'ըլլար սպասել  
և յետոյ ամենքը միասին ձեռք անցընել, որովհետև պէտք է  
զիանաք որ այս կողմերը ձեր կարծածէն շատ աւելի տարած-  
ուած է այդ անիծեալ քօմիթէն. այս մասին Ձեր Վսեմու-  
թեան շատ մը բերանացի անդեկութիւններ պիտի կրնամ հա-  
զորդել Պոլիս վերադարձիս:

«Առ այժմ Ձեր Վսեմութեան ուշադրութիւնը կը հրա-  
ւիրեմ հետագայ առդերուն վրայ:

«Այս կիրակի՝ այսինքն նամակիս թուականէն երկու օր  
ետքը, առաւուան կառախուսմով, ես ու քօմիթէին երկու ան-  
դամները, Արիֆ ու Ալպանիացի երիտասարդը, Սեւանիկէն  
ճամբայ պիտի ելլենք Պոլիս գալու համար: Յաջողեցայ իրենց  
հաւատացնել թէ կարելի էր Սաադք պէյընը պահէն վախցնել իմ  
միջոցաւ կաշառելով Ապու Սամաքը և իբր թէ այդ գործը  
զլուխ հանելու համար պիտի գանք: Երեքս ալ զերմանա-  
կան անցագիրներ ունինք Շվարց, Հօֆման և Մայէր անուն-  
ներով: Սիրքէճիի կայարանը մէկ կամ երկու հօգի պիտի գան  
քօմիթէին պատկանող անձեր բնականաբար, մեզի զիմաւո-  
րելու համար: Ասոնք Ձեր Վսեմութեան կ'իմացնեմ որպէս զի  
պարտ ու պատշաճը անօրինէ:

«Ըստ իս լաւագոյն կ'ըլլայ որ մեզ իսկոյն կայարանին  
մէջ չձերբակալեն, որպէսզի կարելի ըլլայ նաև ձեռք անցընել  
մեզի զիմաւորել կեղոններն ալ: Յետոյ պիտի ինդրէի Ձեր  
Վսեմութենէն որ հարկ եղած հրահանգները տար որպէս զի

նախ և առաջ զիս ձերբակալուն իրբն փախստական պաշտոտկան մը, իսկ միւսները պարզապէս ինծի հետ գտնուելնուն համար վասնզաւոր նկատուին: Այս մարդիկը շատ միամիտ են և կրնանք տակաւին օգտուիլ իրենց այս միամտութեանն: Չմտնում բտելու որ երեք հազար սակի կը բերենք միասին՝ իբր թէ Ապու Սամաքը կաշտուելու համար, այդ գումարին երեք հարիւրը ես սուսած եմ, իրենց վստահութիւնը ներշնչելու համար: Կը ինդրեմ որ Ձեր վստահութիւնը այս կէտը ուշադրութեան տանէ և զիս նիւթական կորուստի մը չենթարկէ»:

Նամակը կը վերջանար ակնածանքի սովորական խօսքերով:

Աէֆէր պէյ այս գրութիւնը կարդացած էր խորին լուսթեան մը մէջ: Ամենքն ալ՝ շունչերնին կտրած՝ մաիկ ըրած էին այս ընթերցումը, առանց բառ մը արտասանելու: Բայց երբ զինուորականը լսեց, ամենուն աչքերն ալ, դարձան նուրիի վրայ, որ դարձանալի կորովով մը կրկին իր պաղարխնութիւնը դտած էր, հակառակ իր վրայ ճնշող անկղ ամբաստանութեան:

— Ի՞նչ պիտի ըսես ասոր, պուսաց Արիֆ պէյ, խօսքը կեղծ պաղատականին ուղղելով:

— Ես ասանկ նամակ չեմ գրած, ըսաւ այս վերջինը, ստիկա պօրզապէս դաւ մ'է ինծի դէմ նիւթուսած, թշնամիի մը կողմէ...

— Սեպանիկի մէջ ի՞նչ թշնամի կրնաս ունենալ, քանի որ մենե՛զ զատ ո՛չ ոք կը ճանչնայ քեզ հոս:

Չեմ գիտեր թէ ո՛վ այս պժգալի դաւը կրեակայած է, ինչ որ գիտեմ սա է թէ ես այդպիսի նամակ մը չեմ գրած...

— Բայց ուրբաթ զիշեր նամակ մը ձգած ես թղթատունը:

— Այո՛, ճիշտ է, մօրս նամակ մը գրեցի...

— Եւ սակայն այս նամակին մէջ գրուածները դուն և մենք միայն գիտենք, ինչպէս կ'ըլլայ որ դուրսէն մէկը թըշնամբար այս ամէնքը երեւակայէ ու գրէ :

Նուրի պահ մը վարանեցաւ . յետոյ անպատկառ չնակահալթեամբ ըսաւ .

— Գուցէ ձեր մէջը պէտք է փնտռել այդ գրաթեանն չնգինակը . . .

Այս խօսքը կատարի սրամտութիւն մը յառաջ բերաւ . ամենքն ալ բռունցքնին վերցուցած իր վրայ խուժեցին , միայն Սէֆէր պէյ իր տեղը մնաց և հանդարտ ձայնով մը ըսաւ .

— Ընկերներ , պազարիւն եղէք . . . այս մարդը ծեծի արժանի չէ , այլ ուրիշ պատիժի մը :

Զինուորականին այս խօսքերը իրենց ազդեցութիւնը ըրին և ամէնքը մէկ կողմ քաշուեցան :

— Այսպէս ուրեմն կ'ուրանաս քու լրտեսի ու դաւաճանի պաշտօնը , հարցուց Սէֆէր պէյ :

— Այո՛ , կ'մկմայ միւսը , բոլոր ատոնք գրապարտութիւններ են , ևս անմեղ եմ . . .

— Գիացիր որ հակառակ քու ուրացումներուդ ողջ չպիտի ելլես այս տեղէն , որովհետեւ մեր մէջ չկայ մէկը որ հաւատք ընծայէ խօսքերուդ :

Նուրի չպատասխանեց :

— Ընկերներ , ըսաւ գինուորականը , ակնարկն իր շուրջը պտտեցնելով , կը խնդրեմ որ ամենայն պազարեամբ , հանդարտութեամբ , գիտակցաբար ու խղճահարսութեամբ պատասխանէք ինձի , որովհետեւ վայրկեանը շատ հանդիսաւոր է և մարդու մը կեանքը ձեր պատասխանէն կախուած է . . . : Լաւ ուրեմն ձեր մէջը կ'ս' , մէկն որ կատկածի թէ քիչ մը առաջ կարդացած նամակս այս մարդը չէ գրած :

— Այդպիսի կատկած մը կարելի չէ ունենալ , ըսին միաբերան Սաի և Արիֆ պէյերը :

Նոյնը կրկնեցին նաև միւսները :

— Եթէ ի նպատակ այս մարդու ամենափոքր կատարածանք մը ունիք կը խնդրեմ որ յայտնէք :

— Բովանդակ խղճովս համողուած եմ որ այս մարդը յանցաւոր է ըստ Արիֆ :

— Այո՛ , յանցաւոր է , կրկնեցին միւսներն ալ :

— Հիմա , ինչ պատիժ արժանի կը տեսնաս այս մարդուն Սաի պէյ , հարցուց զինուորականը երիասասարդ յեղափոխականին դառնալով :

— Մահուան պատիժը , քանի որ աւելի մեծ պատիժ մը չկայ պատասխանեց այս վերջինը հաստատա ձայնով մը :

Սէֆէր պէյ մի առ մի ամենուն ալ կրկնեց նոյն հարցումը , ամէնքն ալ առանց վարանելու , մահուան վճիռը սուին :

Այն ատեն զինուորականը դէպի կեղծ պաշտտականը դարձաւ և հանդիսաւոր ձայնով մը ըսաւ .

— Նուրի՛ լսեցիր դատավճիռդ , պատարաստուէ ուրեմն պատիժդ կրկու . . .

Լրտեսը ա՛լ բարոյովին իր կորովը կորանցուցած , ընկճեալ ու անէացած՝ ոտքի ելաւ , դեղեւոտ քայլերով մտակցաւ Սէֆէր պէյի ու անոր ոտքերուն փարելով .

— Ներո՛ւմ , ներո՛ւմ , գոչեց լալահառաչ :

Բայց զինուորականը անդրդուելի մնաց :

— Գործած ոճիրդ այնքա՛ն մեծ է որ մարգիկ չեն կրնար ներել անոր , ըսաւ , թո՛ղ Աստուած ներէ . . .

— Թող սուէք ինծի ըրած չարիքս քաւելու , թո՛փովեց լրտեսը միշտ ծունկի վրայ եկած :


— Քու մահուամբդ պիտի քաւես դայն , քանի որ անով հայրենիքի մաքրագործումին պիտի ծառայես լրտես մը պակասեցնելով Թուրքիոյ մէջէն . . .

Եւ Սէֆէր պէյ , ամենայն հանդարտութեամբ , զրպանէն ասորձանակ մը հանելով ետեւէ ետեւ՝ երեք հարուած ուղղեց իր

առքերուն տակ գայարուող լրանին գլխուն՝ որ անշունչ գետին փռուեցաւ :

— Սաակի՛ն լրանները , կեցցէ՛ Աղասութիւնը գոչեց :  
Ամենքը ձայնակցեցան իրեն :

— Ընկերներ , բաւ Սէֆէր պէյ , կրնանք պարծենալ թէ հայրենիքի համար օգտակար կերպով վերջացուցինք մեր օրը , բայց , ափսո՛ս , միայն այս չափով մեր գործը չլրանար : Սեւ լանիկ լրաններով լեցուած է և ամէն օր նորեր կը հասնին . . . պէտք է հասկցնել Ապրիւլ Համիաի որ այլևս իր լրաններէն վախցող չկայ և թէ անոնք պէտք է որ սարսափին յեղափոխութենէն : Ինչ որ սկսա՞նք այս իրիկուն հարկ է որ շարունակենք վազը , միւս օր , մինչև որ մաքրագործու՞մը կատարեալ ըլլայ . . . :



Գ Լ Ա Ի Ե Ժ Ը

Ճ Գ Ն Ա Ժ Ա Մ Ը

Մինչդեռ Սեւանիկի , Իւսկիւպի , Մանասթըրի և վերջապէս Բումիլիի նահանգներուն մէջ յեղափոխական շարժումը զինու գորութեամբ կ'սկսէր յայտնուիլ , արտասահման ապաստանած երիտասարդ թուրքերն ալ անսովոր եռուզեռում մը ցոյց կուտային : Մանաւանդ Բարիզ կեղըոնը եղած էր Եւրոպայի թուրք յեղափոխականներուն : Ապրիւլ Համիա իզո՛ւր ամէն օր հեռագրական հրահանգներ կը զրկէր զեապան Միւնիւր փաշային , որպէս զի ո և է կերպով միջոց մը գտնէ այդ յեղափոխականները Բարիզէն վտարել տալու և կամ զանոնք

կաշատիկ ու Պոլիս գրկելու : Միւսիւր փաշայի բոլոր խորամանկ վարպետութիւնները օգուտ մը չէին ընելը . Ապախու Համիտի այդ հլու և հաւատարիմ պաշտօնեան արդէն վարկարեկ կղած էր Ֆրանսական կառավարութեան քով , որ զայն կը նկատէր աւելի Սուլթանին մէկ լրտեսը քան թէ մեծ Պետութեան մը ներկայացուցիչը : Միւսիւր փաշա ինքն ալ գիտէր թէ ի՛նչ յարգ ունէր Ֆրանսայի արասքին գործերու նախարարութեան մօտ ու այլևս չէր համարձակեր երխտասարգ Թուրքերու գէմ բողոքներ ներկայացնել կամ զանոնք իրրիւ անխնայական ու ոճրագործ ցոյց տալ :

Ապախու Համիտի կողմէ հեռագիր մը սակայն , միւսներէն շատ աւելի ստիպողական , կը հրամայէր իրեն Բարիդէն հեռացնելու Մէհմէտ Զիան և կամ զայն համադրու որ Պոլիս վերադառնայ , գրամ , պաշտօն սովէն բան խոստանալով :

Մէհմէտ Զիա հին տարագիր մըն էր որ երկուր տարիներէ ի վեր Բարիդ քաջուած , յամառ պայքար մը կը մղէր համիտեան բռնաւորութեան դէմ : Երկար առեւն իւ ձայնը անլսելի մնալէ ետքը , վերջապէս յաջողած էր համակիրներու շրջանակ մը կողմից որ հեռագրեալ ծառայ ստացաւ և ի վերջոյ կուսակցութիւն մը ձեւացուց : Ապախու Համիտ թէև շատ անգամներ փորձած էր Մէհմէտ Զիան կաշտուել , բայց անիկա անդրդուելի մնացած էր ու մերժած էր բռնաւորին ընծաները սրքան ալ հրապուրիչ էին անոնք : Սուլթանը ա՛լ յոյսը կրարած , չէր զբաղեր իրմով , մանաւանդ որ այդ ազատականը երբեք յեղափոխութիւն կամ բռնի միջոցներ չէր քարոզած ընդհակառակը դատապարտած էր զանոնք , Իր միակ փափաքն էր Սահմանադրութիւնը վերահաստատել Թուրքիոյ մէջ խաղաղ միջոցներով , միութեան և յառաջդիմութեան շնորհիւ :

Եւ սակայն վերջերս հասկցած էր որ ուզած կերպովը կարելի չպիտի ըլլար ազատական բէժմ մայնել Թուրքիոյ մէջ և եթէ քիչ մըն ալ տեսէր բռնաւորութիւնը , հայրենիքը բողոքովին կորստեան պիտի մտանուէր : Ուստի հրաժարելով իր

չին գաղափարներէն մօտեցած էր յեղափոխական ասորերուն թուրք, հայ կամ սլաւոնացի, իր կուսակցութիւնը անոնց միայնելով: Այն ժամանակ ահա՛ Ազատիւ Համիա զգացած էր վտանգը և Մէհմէտ Զիան նկատած էր իր ամենէն փնտասկար թէնամիներէն մէկը:

Զոյն ջախջախել անկարելի էր, իր զօրութիւնը մինչև հոն չէր հասնէր, ուստի գերագոյն փորձ մը ընել ուզած էր զոյն իր կողմը շահելու համար:

— Միւնիր փաշան սատանայ է, թերևս կրնայ յաջողիլ մտածած էր:

Դեպքանը երբ իր ախրջ սախազական հետագերը առաւ՝ մեծ վարանումի մը մասնուեցաւ, արհու հանդերձ ունեց անկարելին փորձել և խառն իր մօտ կանչել առաւ Կեփասօֆը, իր մտերիմն ու անպաշտօն խորհրդականը:

Կեփասօֆ հայ փաստաբան մըն էր, որ արհեստը լքած, շուայտութեան մէջ կ'ապրէր և Պոլսէն մտերմական կապեր հաստատած ըլլալով Միւնիր փաշայի հետ, անոր ընկերակցած էր նաև Բարիզ ու անպանտան մէջ կապրէր առանց որոշ գործ մը ունենալու: Դեպքանը զոյն կը գործածէր իր դիւանագիտական պաշտօնէն դուրս կատարած զանազան շիլ գործերուն մէջ: Կեփասօֆ խելացի, քաջ ֆրանսագէտ ու Բարիզի կեանքին մօտէն տեղեակ ըլլալով՝ շատ օգտակար կ'ըլլար Միւնիր փաշայի, որ իր մտերիմին վրայ անասման վտանջութիւն ունէր և շատ անգամ, ծանրակշիւ խնդիրներու համար անոր խորհուրդին կը դիմէր:

Երբ փաստաբանը եկաւ դեպքանին քով, այս վերջինը անոր ներկայացուց Երբաղէն ընդունուած հետագիրը:

— Ի՞նչ պիտի ընենք հիմա, հարցուց երբ Կեփասօֆ իր ընթերցումը աւարտեց:

— Վեհափառ Սուլթանին հրամանը պէտք է գործադրել պատասխանեց դեպքանին խորհրդականը.

— Կը կարծե՞ս որ կը յաջողինք համազել Մէհմէտ Զիան.



— Ո՛վ գիտէ, թերեւս . . .

— Բայց մէկ քանի անգամ ի վեր այդ փորձը ընելու գնցինք :

— Գիտէ՞ք որ ուրիշներ ալ գտնուեցան որոնք նախ արհամարօս հպարտութեամբ մերժեցին մեր առաջարկները և յետոյ կամաց կամաց կարգի եկան ու մեյմէկ բարձր պաշտօնի խոստումով վերադարձան Պոլիս իրենց յեղափոխականութիւնը վրաններէն թօթափելով՝ ու պարկեշտ հաւատարիմ հպատակներ դառնալով :

— Դժբախտաբար Մէհմէտ Չիւս անոնց խմորէն չէ :

— Փաշա էֆէնտի, ամէն բան մեր ընելիք խոստումներէն կախում ունի :

— Այդ մասին բացարձակ իշխանութիւն արուած է ինձի ամէն բան առաջարկելու իրեն :

— Լաւ ուրեմն այն ատեն գործը կը դիւրանայ . . .

— Տեսակցութիւն մը կրնան կարգադրել իրեն հետ, հոս դեպքանատունն և կամ ուրիշ սեղ մը :

— Հիմա կ'երթամ անմիջապէս զինքը գտնելու :

— Եթէ այս գործն յաջողինք՝ իմ ստանալիք նուէրիս հարիւրին տասը քուկդ է . . .

Այս վերջին խօսքերը բոլորովին խանդավառեցին փաստաբանը, որ խկոյն դեպքանատունէն մեկնեցաւ զէպի Ռիւ Մօնօ ուր կը բնակէր Մէհմէտ Չիւս, անշուք օթելի մը մէկ փոքրիկ սենեակը :

— Իցի՛ւ թէ զիս դուրս չվճնա՞տ, մտածեց կեփասօֆ սենեակին դուռը զարնելով .

— Մաէ՛ք, ըսաւ ձայն մը ներսէն :

Փաստաբանը դուռը բացաւ ու ներս մտաւ : Մէհմէտ Չիւս գրասեղանին առջև նստած՝ գրելու զբաղած էր : Գլուխն անփութօրէն կտին դարձուց և երբ Միւնիքի մտերիմը նշմարեց՝ խկոյն յօնքերը պոստեց .

— Կը ներէք եթէ ձեզ անհանգիստ կ'ընեմ, փութաց ը-

սելու կեփասօֆ վայրկեան մը միայն, թէ կարելի է հնորհեցէք ինձի :

— Խօսեցէ՛ք, ձեզ մտիկ կ'ընեմ . . .

— Վսեմաշուք Միւնիբ փաշա կը փափաքի տեսակցութիւն մը ունենալ ձեզի, հետ կարեւոր խնդրի մը մասին . . .

— Եթէ այդ կարեւոր խնդիրը ձեր Սուլթանին կողմէ նոր առաջարկութիւններ են անօգուտ է այդ տեսակցութիւնը պատասխանեց Մէհմէտ Զիա չոր շեշտով մը .

Փաստաբանը հարկ համարեց ստել .

— Ոչ, ըսաւ հաստօտ ձայնով մը, ընդհակառակը Վսեմաշուք դեսպանը յանձնարարեց ինձ ձեզ հաւատաւ թէ երբեք Սուլթանին կողմէ նոր դիմումի մը վրայ չէ խնդիրը, այլ դուտ անձնական . . .

— Անձնական ի՛նչ բան կրնայ ըլլալ իմ և Միւնիբի միջև . . .

— Միւնիբ փաշա, որուն համար, ներեցէ՛ք որ դիտել տամ, շատ սխալ կարծիքներ ունիք, կը փափաքիմ ձեզի հետ գաղանի խորհրդակցութիւն մը կատարել, Թուրքիոյ արդի քաղաքական կացութեան մասին և ձեզի հաղորդել կարգ մը տեղեկութիւններ, որոնցմէ կրնաք օգտուիլ . . .

— Երբէ՛ս ի վեր Թուրքիոյ քաղաքական կացութիւնը կը շահագրգռէ այդ պարոնը, պատասխանեց Մէհմէտ Զիա ամենախորին արհամարհանքով մը :

— Հաւատացէ՛ք որ անկեղծօրէն կը խօսիմ, շարունակեց կեփասօֆ, Միւնիբ փաշան անկեղծ հայրենասէր մըն է, պէտք չէ զիքը արտաքին երեւոյթներէն դատել . հիմա որ զգացած է թէ համիտեան բռնակալութիւնը դէպի անդունդ կը տանի մեր թշուառ երկիրը, կ'ուզէ իր ամբողջ կարողութիւնը նուիրել հայրենիքի փրկութեան և ասոր համար անա՛րամաղիր է ձեզի հետ զործելու . . . հաճեցէ՛ք անգամ մը հետը տեսակցիլ ու աջն ատեն դուք ալ պիտի համոզուիք ըսածներուս :

— Բայց արդէն քանի անգամ առիթը ունեցած եմ անսակցելու . . .

— Հիմա պարագաները փոխուած են : Այդ անսակցութիւնները Համիտի հրամանով կատարուած են , մինչդեռ այս անգամ , ինչպէս ըսի , Նորին Վսեմութիւնը անձնապէս կ'ուզէ բանակցիլ ձեզի հետ :

Մէհմէա Զիա պահ մը խորհեցաւ : Թէև բնաւ վստահութիւն չունէր Միւնիք փաշայի անկեղծութեան և հայրենասիրութեան վրայ՝ այսուհանդերձ մտածեց թէ բան մը չէր կորսընցներ այս անսակցութեան հաւանելով :

— Գուցէ իրաւցնէ , մտածեց , Միւնիք համոզուած է որ բռնակալութեան անկումը մտապուա է , և կ'ուզէ այժմէն մեր կողմը յարիլ՝ իր ապագան ապահովելու համար և թերևս իրաւամբ փորձէ մեզի մէկ քանի ծառայութիւններ մատուցանել իր անձնակախ շահուն համար :

Ինքնիրեն այս խորհրդածութիւնը ընելէ ետքը՝ Մէհմէա Զիա գործաւ դեպքանին մտերիմին և ըսաւ .

— Ամէն պարագայի մէջ չեմ ուզեր որ անսակցութիւնը դեպքանատան մէջ կատարուի :

— Ուր որ կ'ուզէք կրնանք հոն ժամադիր ըլլալ :

— Անհրաժեշտ է որ այսօր տեղի ունենայ այդ անսակցութիւնը :

— Այո՛ , եթէ կարելի է , որովհետև փաշան ըսաւ որ խիստ ստիպողական է . . .

— Լաւ ուրեմն կէսօրէն ետքը , ժամը երեքին Պարլամը Մօնմաութար քաֆէ Պրասպան ժամադիր կ'ըլլանք . . . այդ ժամուն քաֆէն ամայի կ'ըլլայ և կրնանք հանգիստ կերպով խօսակցիլ :

Փաստաբանը իրեն յանձնուած գործը այսքան յաջող կերպով գլուխ հանած ըլլալուն ուրախ՝ հրաժեշտ առաւ և խմբին վերադարձաւ դեպքանատուն , ուր Միւնիք փաշա իրեն կը սպասէր : Միւնիք շատ դո՛ւ մնաց և ըսաւ .

— Հիմա կարգը իմա է վարպետութիւնս ցոյց տալու...  
Երբ Մէհմէտ Զիա ժամը ճիշտ երեքին մտաւ դափէ Պրորտ-  
պան, դեսպանը արդէն իրեն կ'սպասէր:

Սովորական բարեւտութէն ետքը՝ երխասարպ Թուրքե-  
րու պետը ըսաւ.

— Փաշա էֆէնտի հիմա կրնաք ձեր ըսելիքները հազոր-  
դել, ամենայն ուշադրութեամբ մտիկ կ'ընեմ:

— Նախ՝ պարտք կ'զղամ յայտարարելու որ ըսաւ Միւ-  
նիբ փաշա հանդիսաւոր ձեւով մը, հակառակ ձեր և ձեր բա-  
րեկամներու կարծիքին, ես ալ ձեզի չափ երիտասարդ Թուրք  
մը և հայրենասէր մըն եմ...: Գուցէ դուք չուզէք հաւատալ  
ասոր, բայց օր մը, երբ առիթը ներկայանայ, ապահով եմ որ  
պիտի համոզուիք թէ ճշմարիտ կը խօսիմ ու այն ատեն խըզ-  
ճահարութիւն պիտի զգաք իմ մասին ձեր ըրած սխալ դա-  
տաստանին համար:

— Ապահով եղիք որ այն ատեն պիտի գամ ձեռնէ ներում  
ինդրելու ամենայն ուրախութեամբ, պատասխանեց Մէհմէտ  
Զիա, առանց համոզուելու դեսպանին խօսքերուն:

— Իրա՛ւ է որ եմ դեսպանական խիստ պատուաբեր  
պաշտօնիս հետ՝ մեր Սուլթանը Օսմանցի յեզափոխականներու  
վրայ հսկելու և անոնց շարժումները իրեն տեղեկագրելու  
դժնդակ գործն ալ յանձնած է ինձի, այսու հանդերձ պէտք  
է գիտնաք որ եթէ յանձն առած եմ այդ նուաստացուցիչ  
գործը կատարելու, պատճառը այն է որ ուզած եմ այս կեր-  
պով ծառայութիւն մը մատուցանել իմ յեզափոխական հայրե-  
նակիցներու և այս կերպով արդարանալ իմ խղճիս առջև...:

— Ի՞նչ տեսակ ծառայութեան մասին կը խօսիք, ըսաւ  
Մէհմէտ Զիա զարմացած դէմքով մը:

— Հիմա պիտի բացատրեմ: Յեղափոխականներու ծառա-  
յութիւն մատուցած եմ և կը շարունակեմ մատուցանել պար-  
զապէս Սուլթանին կողմէ ինձ յանձնուած հսկողութեան պաշ-  
տօնը գէշ կատարելով: Այսպէս, օրինակի համար, միշտ ջա-

նացած եւ ձեր բուն գործունէութիւնը ծածուկ պահելու և ի փոխարէն երեւակայական դաւադրութիւններ անդեկադրելու Երրորդ, այնպէս որ Ապաիւլ Հանիա երբեք որոշ գաղափար մը չունի յեզափոխական շարժումին վրայ... : Ի՞նչ կ'ըսէք ասոր :

— Ծշմարիտը շատ հանձարեղ կը գտնեմ ձեր այդ ուղղութիւնը, պատասխանեց Մէհմէտ Զիա նուրը և հեզնական ժպիտով մը :

— Այս խոստովանութիւնը ձեզ ընկելով, ցոյց կուտամ թէ որքան անասանան վստահութիւն ունիմ ձեր ուղամտութեան վրայ :

Շատ չնորհակալ եմ...

— Այս ընթացքը բռնելով, ինչ որ պէտք է խոստովանիմ շատ պատուաւոր ընթացք մը չէ և վստահութեան զեղծում մ'է պարզապէս. իմ միակ նպատակս եղած է ապահովել յեզափոխական շարժումին հաջողութիւնն և նպատակ մեր դրժբախտ հայրենիքին վերականգման : Մինչև վերջին ժամանակներս յոյս ունէի թէ երիտասարդ Թուրքերու ջանքերը յաջողութեամբ պիտի պսակուին, մանաւանդ որ Սուլթանը շատ վհատած կը թուէր և նոյն իսկ վերջերս լրջօրէն մտածած է գահէն հրաժարիլ... անշուտ դուք ալ իմացած էք ասիկա, քանի որ մէկ քանի թերթեր հրատարակեցին, թէ և մենք ստիպուեցանք իսկոյն հերքու տալ... բայց հակառակ այդ հերքումներուն զիացէք որ իրողութիւնը ճիշդ էր...

— Ձեմ գիտեր թէ ի՞նչ եզրակացութեան հասնիլ կ'ուզէք բոլոր այս խօսքերով, ըսաւ Մէհմէտ Զիա անհամբեր :

— Այսպէս ուրեմն, շարունակեց զեսպանը, շատ յոյս ձեր յաջողութեան մասին, երբ վերջերս քաղաքականութիւնը բոլորովին փոխուեցաւ :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Ըսել կ'ուզեմ որ նախ Սուլթանը բոլորովին մէկ կողմ թողած է գահէն հրաժարելու գաղափարն և ա՛լ աւելի ուժով

փորձած է իշխանութեան, թէև ինքն ալ բժաւնած ըլլալով հանդերձ թէ ներկայ բռնապետական դրութիւնը չի կրնար այլևս տեսել: Գաղտնաբար կրնամ ձեզի հաւաստել թէ՛ Գերմանիա իր պաշտպանութիւնը նախընտրելով հանդերձ Սուլթանին՝ պահանջած էր որ երկիրը ազատական բէժիմով մը օժտուի և 76ի Սահմանադրութիւնը վերահաստատուի... ասիկա զէւտնագիտական խիստ ծածուկ գաղտնիք մ'է որ ձեզի կը հազորդեմ:

— Շնորհակալ եմ ձեր ցոյց տուած վստահութենէն՝ բայց տակաւին չկրցայ հասկնալ թէ այս մտերմական ղեկուցումներուն նպատակը ի՞նչ է:

— Երկու օր առաջ Երլարդէն նորանոր տեղեկութիւններ և հրամաններ ստացայ, շարունակեց դեսպանը առանց ուղղակի պատասխանելու իր խօսակցին ակնարկութեան, բոլորն ալ քեզ մը առաջ՝ բաժնեկրս կը հաստատեն:

Մէկ կողմէն Սուլթանը որոշած է յեղափոխական շարժումը կարելի եղածին համար շուտով խեղդել ամէն միջոցներով և այս մասին եւրոպական պետութիւններու աջակցութիւնն ալ ապահոված է. միւս կողմէ որոշած է նաև ազատական բէժիմի մը հետեւիլ, որովհետև անով միայն պիտի կրնայ եւրոպական պետութիւններու և մասնաւորաբար Գերմանիոյ օժանդակութիւնը ապահովել: Այս ազատական բէժիմը մինչև Սահմանադրութեան պիտի երթայ...:

— Բայց եթէ Սուլթանը Սահմանադրութիւնը տալու գիտաւորութիւն ունի, ի՞նչ պէտք կայ երիտասարդ Թուրքերը հարածելու, քանի որ անոնք ալ ուրիշ բան մը չեն պահանջեր:

— Սուլթանը կ'ուզէ որ ճնշումի տակ գործած չըլլայ. անա՛ իր նպատակը: Բուժակիլի մէջ վերջերս անգլի ունեցած զինուորական բմբոսառութեան զէպքերը չափազանց ազդած են իր վրայ և որոշած է խստօրէն զսպել զանոնք... Ի՞նչ գալով այն ազատականներուն որոնք փախաք կը յայտանն

Թուրքիա վերադառնալու, անոնք գրկաբաց պիտի ընդունուին, բաւ է որ խոստանան յեղափոխական շարժումներ չյարուցանելու, իսկ անոնց հանդէպ ամէն տեսակ միջոցներ ի գործ պիտի դրուին, նոյնիսկ դիմում պիտի ըլլայ եւրոպական Պետութիւններու որպէս զի իրենց երկիրներուն մէջ զրոնուող Թուրք խուլարարները արտաքսուին . . . :

— Այդ դիմումը յաճախ եղած և միշտ մերժումներու հանդիպած է, ընդմիջեց Մէհմէտ Զիա որ սկսած էր հասկնալ թէ դեսպանը ո՞ր կապի կ'ուզէր իր խօսքը :

— Մինչև հիմա այնպէս եղած է այն՝, բայց ես կը վախնամ որ Պետութիւններէն գոնէ մէկ քանին պիտի ընդունին Սուլթանին առաջարկը, բնակոնարար ի փոխարէն մեծամեծ առաւելութիւններ ձեռք ձգելով :

— Ուրեմն խորհուրդ կուտաք որ Պոլիս վերադառնամ, ըսաւ Մէհմէտ Զիա ժպտելով :

— Ես ու եւ խորհուրդ չեմ տար, այլ կայութիւնը կը պարզեմ այնպէս ինչպէս որ է : Սուլթանին ներկայ սրահադրութիւնները նկատի առնելով՝ ես հրբև անկեղծ հայրենասէր՝ այնպէս կը կարծեմ որ ամենուս պարասկանութիւնն է երթալ բոլորուիլ իր շուրջը և զայն ուզիլ ձամբու մը առաջնորդել . . .

— Ապտ-իւլ-Համիտ երբեք չկրնար ուղղութեան գալ . . .

— Բայց անգամ մըն ալ փորձենք, ի՞նչ կը կորսնցնենք : Զոր օրինակ եթէ որոշէք Պոլիս դառնալ, ես կարող եմ ամէն ապահովութիւն տալ ձեզ յանուն Սուլթանին . . .

— Ի՞նչ կարեւորութիւն ունի իմ անձնական ապահովութիւնս :

— Ասկէ դատ, ու ասիկա կ'ըսեմ ո՛չ թէ ձեզ շրայնելու կամ կաշառելու անարդ նպատակով, այլ միմիայն մեր թըրուաւ երկրին շահուն համար, երբ յանձն առնէք Պոլիս դառնալ, ձեզի համար բաց պիտի ըլլան բոլոր ասպարէզները, ամէնէն կարեւոր ու բարձր պաշտօնները : Եւ հայրենիքը ի՞նչ

օգուաներ չի կրնար քաղել եթէ ձեզի պէս լուսափա ու ազատական մարդ մը, օրինակի համար, ներքին գործերու կամ հանրային կրթութեան նախարար ըլլայ...

— Ստիկա կարելի է եթէ նախ Սահմանադրութիւնը հրօշակուի...

— Բայց մէկ օրէն միւսը ինչպէս կ'ուզէք որ Թուրքիա Սահմանադրական դառնայ... բա՛ւ է որ Սուլթանը ինք ուզէ ազատական ոգևոլ կառավարել երկիրը. այն ատեն, քանի մը տարի ետքը, Սահմանադրութիւնը պիտի դայ, ատանց յանկարծական տակնուվրայութեան:

— Սահմանադրութիւնը որպէս զի հաստատ մնայ և ապրի պէտք է որ հակառակ Սուլթանին կամքին ու ժողովրդեան ուժով հսկուի:

— Բայց այդ ձեր ըսածը անկարելի է Թուրքիոյ մէջ, միթէ Թուրքիոյ ժողովուրդը ու է կամք ունի:

— Ես ժողովուրդը ըսելով կը հասկնամ նաև բանակը...

— Այսինքն մէկ քանի հարիւր սպաներ որոնք Երիտասարդ-Թուրքերուն յարած են:

— Մէկ քանի հարիւրը կրնայ մէկ քանի հազար ըլլալ...

— Իցի՛ւ թէ կարելի ըլլար, բայց սիրելի Մէհմէտ Զրքա պէյ, կը տեսնեմ որ պատրանքներ միայն կ'ապրիք, ամէն յեղափոխականներու պէս, և իրականութեան վրայ դադափար չունիք:

— Ընդհակառակն երբեք անտաի յոյսերով չեմ օրօրուած և եթէ այս միջոցիս բանակին ակնարկեցի՝ պատճառը այն է որ գիտեմ թէ հայրենիքի փրկութիւնը միայն անոր ձեռքով պիտի կատարուի...

— Եթէ կը ներէք ձեզի քիչ մը լուսարանեմ, ըսաւ Միւնիր փաշա:

Ամենայն հաճութեամբ մտիկ կ'ընեմ ձեզի:

— Իրա՛ւ է որ Բուսէլիի բանակին մէջ տեղի ունեցած ըմբոստութեան մէկ քանի շարժումները բաւական վրդովում



պատճառեցին Սուլթանին և միւս կողմէ չտալազանց խանդալտութիւն յառաջ բերին յեղափոխական թուրքիլուն մէջ, սակայն ափսոս որ ենթադրուած կարեւորութիւնը չունէր այդ գինուորական շարժումը. մանաւանդ որ լսկ մէկ քանի յանդուգն սպաներու անձնական փորձերն էին որոնք վիժեցան: Զինուորը, ստորադաս սպաները և բարձրաստիճան գինուորականները միշտ հաստատարիմ մնացած են Սուլթանին: Անշուշտ իրենց այս ընթացքը չեմ գովեր և ո՛չ ալ հայրենասիրական կը գտնեմ, բայց միայն իրողութիւնը կը հաստատեմ:

Մէհմէտ Զիա չպատասխանեց և թոյլ տուաւ որ դեպքանք իր խօսքը շարունակէ, այս վերջինը թղթապանակը հանեց գրպանէն, մէջը բաներ մը վնասեց և դայն դուրս քաղեց.

— Ահաւասիկ ծածկագիր հեռագիր մը որ առջի օր ստացայ, կ'ուզեմ ձեզի հաղորդել, խնդրելով որ պարունակութիւնը ծածուկ մնայ, որովհետեւ շատ գաղանխի է... այս գաղանխքը ձեզ հաղորդելով իմ նպատակս է ձեզի որոշ գաղափար մը առ իրական կայութեան մտախն... .

— Կարդացէ՛ք, ըսաւ Մէհմէտ Զիա պէյ անասրբեր ձեռով մը:

— Այս հեռագիրը ուղղակի Երլարզէն կուգայ, բացառից դեպքանք, Նորին Վեհափառութեան քարտուղար Իզզէթ փաշայի կողմէ, մտիկ ըրէ՛ք. «Բարբիղեան թերթերէն սմանց մէջ Մակեդոնիոյ բանակին ըմբոստական շարժումներուն վրայ մէկ քանի չտալազանցուած լուրեր երևցած են, որոնք պարզապէս չարամտութեան արդիւնք են, իսկոյն պաշտօնապէս հերքեցէք դանոնք: Փախով իրականութեան՝ ահաւասիկ: — Մէկ քանի դժգոհ սպաներ, հաւանօրէն արտաքին գրողներու սպառնացութեան տակ, ուղած են մարտիցնէլ մեր զինուորները, բայց անոնք անխախտ մնացած են իրենց հուստարմութեան մէջ: Այդ սպաները և իրենց կարճամիտ հետեւորդները, Վեհափառ Սուլթանին հրամանաւ, իսկոյն ձեր-

բակալուելով մայրաքաղաքս պիտի բերուին ու Պատերազմ. մասնաւոր Ատեսնի մը պիտի յանձնուին դատուելու համար : Այս է ամբողջ իրողութիւնը և կը խնդրեմ Ձեր վսեմութեանէն որ հասնիք այս մասօք տեղեկացնել ուր որ անկ է : Վեհ . Սուլթանը բացարձակապէս որոշած է այդ խռովարական տարբերէն մաքրել Օսմ. Բանակը և այլևս թող չտայ որ մեր Պետութեան թշնամիներուն կողմէ ջանքեր ըլլան մեր զինուորայիններու հաւատարմութիւնը խախտելու : Չմոռնամ բսկու որ ձերբակալուելիք սպաններուն թիւը հազիւ հարիւրի կը հասնի , ինչ որ ցոյց կուտայ ըմբատական շարժումին անկարելորդութիւնը :»

— Ինչպէս կը տեսնէք , շարունակեց Միւնիք փաշա , այս անգամ Սուլթանը որոշած է արմատապէս զսպել զինուորական շարժումը , որուն վրայ այնքան յոյս դրած կը թուիք : Ինչպէ՞ս կ'ուզէք որ բանակը կարենայ դորձ մը տեսնել կրք վերին հրամատարները և հասարակ զինուորները չեն մասնակցիր շարժումին . . .

— Ուրեմն ըստ ձեր կարծիքին՝ ուրիշ բան չի մնար ընելիք , այլ գուխ ծռել բռնաւորին և անոր հլու գործիքը դառնալ . . .

— Երբեք այդպիսի խորհուրդ չեմ տար , դոչեց զեապանը ընդհակառակն իմ ծրագիրս է բերդը ներսէն առնել , ինչպէս կ'ըսեն , մօտենալ Սուլթանին , անոր բարի արամադրութիւններէն օգտուել , քովէն հեռացնել իր շար խորհրդատուները , որոնք միակ պոտասխանատուներն են ներկայ վիճակին , որովհետև մեր վեհափառ Սուլթանը , դարձեալ կը կրկնեմ , շատ լաւ արամադրութիւններով առգորուած է մանաւանդ այս միջոցիս . . . : Ըստ իս ճշմարտապէս հայրենասիրական գործ մը ըրած պիտի ըլլաք անմիջապէս Պոլիս վերադառնալով ու կառավարութեան մէջ կարեւոր դերք մը գրաւելով : Եթէ այս վայրկեանիս ձեր հաւանութիւնը սաք խաղոյն կը հեռագրեմ Երլարդ և վստահ եմ որ ձեր վերադարձին կայսերական հրա-

մանը մինչև զիշեր կը հասնի . . . : Նախարարութեան մէջ ի՞նչ պաշտօն կը նախնարէք առնել :

Մէհմէտ Զիա չպատասխանեց և նուրբ ժպիտով մը իր խօսակցին նայեցաւ , դեպքանը շարունակեց .

— Նիւթական դժուարութեանց մասին բնա՛ւ մի մտածէք , զիտեմ որ դրամապէս շատ անձուկ վիճակ մը ունիք և գուցէ օթէլլին ու ճաշարաններուն ալ պարտքեր բրած էք . ատոնք ամէնքը կրնաք մաքրել անմիջապէս . ձեր վերադարձի ծախքերուն համար ալ ի՞նչ գումար որ ուզէք կրնաք արբամադրել :

Միւնիր փաշա լուց և սպասեց որ երիտասարդ Թուրքերու պետը պատասխանէ :

Մէհմէտ Զիա ամենայն հանդարտութեամբ գրպանէն ժամացոյցը հանեց , նայեցաւ և ըսաւ .

— Ժամը չորսը անցած է և ես ժամը չորսուկէսին ուրիշ ժամադրութիւն մը ունիմ , կը ներէք որ մեկնիմ . . .

— Բայց ձեր որոշումը չյայտնեցիք , գոչեց Միւնիր փաշա :

— Ի՞նչ որոշում . . .

— Պոլիս վերադառնալու և կառավարութեան մէջ գործօն դեր մը ստանձնելու մասին :

— Պոլիս պիտի վերադառնամ և կառավարութեան մէջ գործօն դեր մը պիտի ստանձնեմ՝ անշուշտ : Երբոր ժամանակը գայ . . .

— Բայց ահաւասիկ բացատրեցի որ բո՛ւն ժամանակը հիմա է . . .

— Ինէ առաջ պէտք է որ ուրիշ բան մը Պոլիս վերադառնայ :

— Ի՞նչ բան . . .

— Սահմանադրութիւնը :

— Այն ատեն կը վախնամ որ շատ պիտի սպասէք :

— Քսան տարի է կապասեմ կոր, քանի մը ամիս ևս կըր-  
նամ սպասել . . .

— Քանի՞ մը ամիս, գոչեց դեսպանը զարմացած :

— Այո՛, քանի մը ամիս, պատասխանեց Մէհմէտ Զիա  
հաստատ ձայնով մը :

Յետոյ, գլխարկը հանելով բարեկեց ու հեռացաւ :

Միւնիւր փաշա դիտեց անոր սրճարանէն դուրս ելլելը և  
պուրվարին վրայ անյայտ ըլլալը և մեկամձօրէն ըսաւ ինքնի-  
րին .

— Մեղք, կարծեցի որ կրցած էի զինքը ծուղակը ձը-  
գել . . .

Երիտասարդ Թուրքերու պետը չեմ ստած ըսելով որ ու-  
րիշ ժամադրութիւն մը ունէր : Արագ քայլերով անցաւ Մօն-  
մարդը փողոցէն : Հալերուն առջևէն, Շաթլէի հրապարակէն,  
Արդարութեան պալատին առջևէն ու Սէն Միշէլի կամուրջէն  
և հասաւ Ռիւ տէ գ'Էքօլի անկիւնը դանուող քաֆէ Սուֆ-  
լէն :

Սրճարանին մէջ աչք մը պատմեցելէ ետքը, խփոյն ուղ-  
ղուեցաւ անկիւն մը ուր քարառուն տարեկապի մօտ, դեղին  
պեխերով, յաղթանդամ ու գեղազէմ մարդ մը նստած էր ու  
թերթ կը կարդար :

— Բարեւ Աղիզ պէյ, ըսաւ, կը ներեա եթէ քեզի քիչ մը  
սպասցուցի . . .

Միւսը թերթը խփոյն սեղանին վրայ դրաւ և պատաս-  
խանեց .

— Արդէն ևս ալ նոր եկայ, տե՛ս տակաւին բան մը չեմ  
խմած :

— Կարևոր բաներ ունիմ քեզի հաղորդելիք ըսաւ Մէհ-  
մէտ Զիա իր բարեկամին քով տեղաւորուելով :

— Ես ալ . . . իմ հաղորդելիքներս մանաւանդ ուրախալի  
են . . .

— Իսկ իմիններս ղուարճալի են, պատասխանեց Մէհմէտ Զիա խնդալով :

— Ուրեմն նախ դուն սկսէ քու պատմութիւնդ, որովհետեւ իմս ուրախալի և միանգամայն շատ լուրջ է և հարկ է որ յետոյ խորհրդակցինք միասին :

— Լաւ ուրեմն մեր վսեմաշուք դեսպանին՝ Միւնիր փաշայի՝ քովէն կուգամ . . .

Եւ Մէհմէտ Զիա մանրամասնօրէն պատմեց իր տեսակ ցութիւնը :

— Դեսպանին այդ դիմումը և հրապուրիչ առաջարկութիւնները կը հասատտեն իմ տեղեկութիւններս, ըսաւ Ազիզ պէյ, երբ միւսը իր խօսքը աւարտեց :

— Ինչպէս . . .

— Այո՛, ատիկա ցոյց կուտայ թէ Ապտ-իւլ-Համիտ այնպիսի ճգնաժամի մը մէջ կը գտնուի՝ որուն նմանը չէ տեսուած երեսուն տարիէ ի վեր . . . Երբորդին մէջ ամէնքը քուարած են և վնասութիւն կը տիրէ ամէնուն վրայ . . .

— Ի՞նչ որոշ տեղեկութիւն ունիս :

— Այս առտու նամակ մը ստացայ Սկիւպի մեր ապրտամը ընկերներէն . . . ստիպուած էի այդ նամակը անմիջապէս ժընէվ զրկել, հետեւաբար քովս չէ, բայց ամբողջ գրութեան կրնամ մի առ մի քեզի կրկնել : Նախ՝ շատ ճշմարիտ է Միւնիր փաշայի տուած լուրը . . .

— Ո՞ր լուրին կ'ակնարկես . . .

— Այսինքն Սուլթանին հրամանը հարիւր յիսունի չափ սպաներ իսկոյն ձերբակալելու և Պոլիս փոխադրելու . . . :

— Բայց սոսկալի՛ բան է այս և դուն կ'ըսես թէ ուրախալի լուրեր ունիս ինձ հազորդելիք :

— Այո՛, Ապտ-իւլ-Համիտի հրամանը գացած է Սելանիկ, բայց և ո՛չ մէկ սպայ կարելի եղած է ձերբակալել . . .

— Ամենքն ալ խո՞յս տուած են :

— Ամենքն ալ իրենց տեղը կեցած են, սակայն ո՛չ ոք

ուզած է Սուլթանական հրամանը գործադրել և Հիւսէին  
Հիլմի փաշա իր հրաժարականը մատուցած է, առարկելով որ  
այս պայմաններուն մէջ այլևս չի կրնար պաշտօնի վրայ  
մնալ...

— Բայց Հիւսէին Հիլմի փաշան պէտք չէ որ հեռանայ  
իր պաշտօնէն՝ քանի որ այնքան օգտակար կ'ըլլայ մեզի:

— Սրբէն Ապու-իւլ-Համիա չէ ընդունած իր հրաժարա-  
կանը և հրամայած է որ իր գործին զուխը մնայ... այսու-  
հանդերձ իրողութիւնը սարսափեցուցած է Նըլսրըր որ ա՛յլ չի  
համարձակիր բռնութեան գիմելու: Միւս կողմէ թէ՛ բանակին  
և թէ՛ ժողովուրդին մէջ բոլորտաթիւնն ողին իր ծայրայեղ  
աստիճանին հասած է մէկ երկու շարթուան ընթացքին մէջ...  
ամէն կողմ Սահմանադրութիւն կը պահանջեն: Մէհմէտ փաշա  
որ համակը գրած էր, կ'ըսէ թէ վայրկեան մը կորանցնելու չէ  
և պէտք է օգուտ քաղել յառաջ եկած այս խանդավառու-  
թենէն, որ կրնայ յանկարծ մարիլ եթէ ազարդիւն մնայ:

— Շատ իրաւունք ունի, կրնիք այսքան բարեպառտեհ  
տալի՞ մը չէր գտնուած գործելու համար:

— Զիտ հրաւիրած է իրենց մօտ և վաղն իսկ պիտի  
մեկնիլո՞ւ:

— Ի՞նչ ճամբով... գիտես որ զգուշութիւնը ձեռքէ ձը-  
գելու չէ:

— Հոսկի Իտալիա, յետոյ պիտի անցնի՞ր Գարատաղ ու  
անկէ ալ մեր ընկերներուն քով...

— Իցի՛ւ թէ մեր ձեռք բերելիք ազատութիւնը մեծա-  
մեծ արիւննայեղութեան տեղի չտար:

— Եթէ արագ ու ճարտար կերպով գործենք՝ կարծեմ  
սուսնոց արիւննայեղութեան պիտի կրնանք յաջողիլ... Ըսոյց  
հակասակ պարագային՝ այլևս չենք կրնար կանգ առնել և  
եթէ սախալինք՝ պէտք է որ արիւն թափենք, ամէն ազգ  
այդ ճամբէն անցած է ազատութիւնը ձեռք բերելու համար:  
Երկու բարեկամները սակաւին երկար ժամեր իրարու

հետ խորհրդակցեցան և գիշերը վրայ հասած էր կրք լրարմէ բաժնուեցան :

Ազիզ պէյ որ կը պատրաստուէր ապստամբութեան կեդրոնը երթալու և զէն ի ձեռին կռիւ մղելու բռնակալութեան դէմ, գնդապետ մըն էր որ կրկու տարի առաջ ստիպուած էր թողուլ հեռանալ բանակէն ու արտասահման տպասանիլ ճիշտ այն միջոցին ուր զինքը ձերբակալելու հրաման ըրած էր Ապտ-իւլ-Համիտ : Իր զինուորական կրթութիւնը Ֆրանսայի մէջ կատարելագործած՝ Ազիզ պէյ Օսմանեան Բանակին ամենէն արժէքաւոր սպաներէն մէկն էր և մեծ համարոււմ կը վայելէր իր ընկերներուն մէջ : Գնդապետին փախուստը մեծ յուզում առաջ բերած է Երբարզի մէջ : Ապտ-իւլ-Համիտ ամէն ջանք թափած էր զայն կրկին Պոլիս վերադարձնելու համար, նոյնիսկ խոստացած էր իր աստիճանը բարձրացնել և փաշայութեան բարձրացնել . սակայն զինուորականը մերժած էր բոլոր այդ խաբէական շնորհները և միտքը դրած էր ազատութեան հետ միայն վերադառնալ հայրենիք : Արտասահմանի մէջ Ազիզ պէյ անգործ չէր մնացած և ամբողջ գործունէութիւնը նուիրած էր տարտղնած յեղափոխական ոյժերը իրարու քով բերելու, փոխադարձ զիջողութիւններով անտոյ հակառակութիւններու վերջ տալու և միեւնոյն ծրագրի մը շուրջ բոլորուած՝ Ազատութեան պայքարը մղելու : Ինքն էր նաև որ Օսմ. Պետութեան միւս այլացեղ յեղափոխական մարմիններու մօտութիւն ցոյց տուած էր և յաջողած էր ընդհանուր միութիւն մը առաջ բերել Բարիզի մէջ : Ազատասէր զինուորականին բոլոր այս գործունէութիւնը ծանօթ էր Երբարզի բռնաւորին և մասնաւոր հսկողութիւն մը կազմակերպուած էր իր շուրջը զեռպանատան լրտեսներուն ձեռքով : Ազիզ պէյ գիտէր այս բանը, բայց շատ կարեւորութիւն չէր տար, թէև քանի մը անգամ պատահած էր որ այդ լրտեսներէն մէկ քանիին փառաւոր դաս մը տալ, հրապարակազանոնք նախաաւելով կամ ապստակելով :

Ազիզ պէյ Քաֆէ Սուֆլէէն ելլելէ յետոյ գնաց պուլուլաւ  
Սէն Միշէլի վրայ ճաշարան մը և կերակուրը ուտելէ ետքը ,  
չխտակ վերադարձաւ իր պանդոկը որ Օտէնի հրապարակին  
վրայ կը գտնուէր :

Մինչև կէս գիշեր բազմաթիւ նամակներ գրեց . յետոյ ան-  
կողին մտաւ քնանալու համար :

Սասուն կանուխ ելաւ , իր երկու պայուսակները պատ-  
րաստեց ու կառք մը բերել տալով՝ մեկնեցաւ պանդոկէն դէպ  
ի Լիօնի կայարանը :

Որպէ՞ս զի իր մեկնումը ուշադրութիւն չգրաւէ , որոշած  
էին որ իր ընկերներէն ո՛չ ոք պիտի երթար հետը , զինքը  
ճամբու գնելու համար :

Կառախումբը պատրաստ էր արդէն և Ազիզ պէյ իսկոյն  
տեղաւորուեցաւ առաջին կարգի վակօնը մտաւ , խիստ վայել-  
չօրէն հագուած , աղնուական ձևերով , երիտասարդ ու գե-  
ղանի կին մը և բազմեցաւ զինուորականին դիմաց :

— Ահաւասիկ ուղեւորութեան մէջ հաճելի ընկերուհի մը  
կցի՞ւ թէ դժուարահաղորդ չըլլար , մտածեց Ազիզ պէյ :

Ուղեւորուհին ընդհակառակն շատ դիւրահաղորդ էր և  
առաջին առթիւ խօսքի բռնակեցաւ գնդապետին հետ :

Զարգացեալ , նրբամիտ ու նրբախօս՝ երիտասարդ կինը  
առաջին վայրկեանէն թովեց թուրք յեղափոխականը որ պահ  
մը մոռնալով իր միտքը տանջող ծանրակշիւ խնդիրները , բո-  
լորովին անձնատուր եղաւ անոր հմայքին :

Երբ կառախումբը Լիօնի կայարանը մտաւ , ուր քառա-  
սուն վայրկեան գաղափար պիտի առնէր ուղեւորներուն միջոց  
տալու համար որ ճաշեն , Ազիզ պէյ ամենայն փութկոտուեամբ  
իր գեղանի խօսակիցը հրաւիրեց ճաշի :

Թեթև մերժումէ մը ետքը , կինը հաւանեցաւ ընկերանա-  
լու իր պատահական ծանօթին : Ճաշը , զոր շամբանեայի շի-  
լով մը ուռգած էին , շատ հաճելի անցաւ և երբ վակօն վե-  
րադարձան ա՛յլ մտերիւններ դարձած էին :



Ազիզ պէյ հիմա գիտէր թէ իր ընկերուհին Ֆրանսայի Պառնուհին մըն էր, այրի ու սնդաւակ որ Նիս կ'երթար բարեկենդանը անցնելու և որ շատ տրամադրութիւն ունէր դուսնելու :

Զինուորականը ինքն ալ հարկ համարած էր ինքզինք ծանօթացնել և ըսած էր թէ փախտական թուրք գնդապետ մըն էր : Պառնուհին որ ամէն բանի տեղեակ կը թուէր, սկսաւ քաղաքականութեան վրայ ճառել և խօսքը բերելով Ապսիւ Համիտի վրայ, բարկաճայթ շեշտով մը ըսաւ .

— Ներեցէ՛ք, պարոն գնդապետ, բայց պէտք է ըսիմ որ ձեր վեհնապետը հրէջ մը և թշուառական մըն է . . .

— Հակառակը չեմ սնդեր, պատասխանեց զինուորականը խնդալով :

— Ես հօրեղբորորդի մը ունիմ որ մէկ քանի տարի Պոստի Ֆրանսական զեապանատունը պաշտօն վարած է . . . անուշի բաներ կը պատմէ Ապսիւ Համիտի մասին :

— Իր պատմածները վստահ եմ որ իրականութենէն շատ պակաս ըլլալու են, պատասխանեց Ազիզ պէյ, որ գոհ կ'ըլլար իրեն ծանօթ նիւթի մը վրայ խօսք բացուելուն :

— Եւ երեսո՛ւն տարիէ ի վեր կը հանդուրժէք որ այլ պիտի մարդ մը ձեր վրայ խշխէ, գոչեց Պառնուհին, որուն գեղեցիկ աչքերը շանթեր կ'արձակէին :

— Բայց ի՞նչ կրնանք ընել, սիրելի տիկին :

— Խոստովանեցէ՛ք որ ջիզ չունիք . . . եթէ Ֆրանսայի մէջ ըլլար այդպիսի թագաւոր մը, շատո՛նց զինքը գահէն վար առած կ'ըլլայինք : . . Լուի ԺԶ. որ ապսիւ Համիտի քով հրեշտակ մը կրնայ համարուիլ՝ մինչև կիյեթիւնը հանեցինք և դուք այդպիսի բռնաւորի մը առջև կը խոնարհիք :

— Սակայն մենք ալ սկսած ենք ընդվզիլ, կամ մայ գընդապետը :

— Այո՛, գիտեմ ձեր ընդվզումը, ձեր յեղափոխութիւնը, շարունակեց Պառնուհին հեզնական քմծիծաղով մը, հօրեղ-

բորորդիս բացատրած է ինձի Երիտասարդ-Թուրքերուն գործունէութիւնը . . . . քանի մը տասնեակ մարդիկ որոնք լեզապատառ խոյս տուած են Պոլսէն ու Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ սպաստանած իրեն թուրք յեղափոխականներ, այս չէ՞ ձեր բոլոր շարժումը . . . պարզապէս երգեցիկ սրճաբաններու յեղափոխականներ, և սասնկով կը կարծէք թէ կարող պիտի ըլլաք բռնաւորութիւնը տապալել Թուրքիոյ մէջ . . .

Ազիզ պէյ, որ ոկիզքները զուարճութեամբ կը դիտէր այդ օտարունիին բորբոքումը, այժմ կ'սկսէր սրամտիլ և վերաւորանք զգալ :

— Բայց Տիկին, ըստ չոր ձայնով մը, կը տեսնեմ որ չա՛տ սխալ զաղափար ունիք մեր յեղափոխական շարժումին վրայ և այդ շարժումը ձեր կարծածէն շատ աւելի լուրջ է :

— Ես իմ տեսածներէս, կարդացածներէս ու լսածներէս կը դատեմ, եթէ մեծամեծ գործեր տեսած էք զորս ո՛չ ոք գիտէ ու պիտի գիտնայ, այդ տարբեր բան, բայց ես կը կարծեմ որ յեղափոխութիւն մը ծածկարար տեղի չունենար :

— Սակայն ո՞վ բտաւ որ ծածուկ կը գործենք, միթէ լուր չունի՞ք Մակեդոնիոյ մէջ այս միջոցիս տեղի ունեցած դէպքերէն, որոնց մասին թերթերը կը խօսին :

— Այո՛, մէկ քանի սպաներու ըմբոստացումը . . .

— Ո՛չ թէ մէկ քանի սպաներու՝ այլ ամբողջ զօրագունդներու, գոչից Ազիզ պէյ որուն համբերութիւնը սպառիլ կը սկսէր :

— Եւ ի՞նչ կը պահանջեն այդ զօրագունդերը . . .

— Առ այժմ Սահմանադրութեան վերահաստատումը իսկ յետոյ կը տեսնենք . . . :

— Ուրեմն լուրջ շարժում մըն է զինուորական շարժումը :

— Բնականաբար և ըմբոստացումի ոգին այնքան արագ

կը տարածուի որ քիչ ասունէն ամբողջ զօրաբանակները զու-  
ցէ ոտքի ելեն . . .

— Ուրեմն կիցցէ՛ օսմանեան բանակը . ըսաւ Պառօնուհին  
յաշկարծ իր թշնամական չեչար փոխելով , ա՛նա՛ հիմա կը հա-  
ւատամ որ գրական արդիւնքի մը պիտի հասնիք . . . : Ներում  
կը խնդրեմ քիչ մը առաջ ըսած վերաւորիչ խօսքերուս հա-  
մար , հաւատացէ՛ք որ անկեղծ համակրանքէ մը կը բղխէին . . .

— Վստահ եմ այդ մասին , պատասխանեց գինուորակա-  
նը :

Պահ մը լուռ մնալէ ետքը՝ Պառօնուհին յանկարծ ըսաւ .

— Բայց քանի որ ձեր ղինակից եղբայրները Ազատու-  
թեան համար կը կուռին Մակեդոնիոյ լեռներուն մէջ , դուք  
որ ազատական մը ըլլալ կը թուիք ու միտնգամայն գնդա-  
պետ մըն էք . . . էս եթէ ձեր տեղը ըլլայի՝ վայրկեան մը չի  
կորսնցնելով պիտի վազէի իմ ընկերներուս քով :

— Ինչէ՞ն գիտէք որ դէպի հոն չեմ գլմեր :

— Բայց այս կառախումբը կարծեմ Մակեդոնիա չեր-  
թար . . .

— Ո՛չ , բայց Իտալիա կը տանի :

— Միեւնոյն բանը չէ . . .

— Ո՞վ գիտէ , պատասխանեց գնդապետը ժպտելով :

— Պարոն կարծեմ թէ քթիս կը խնդաք , ըսաւ գեղանի  
տիկինը ինքն ալ ժպտելով , և կ'ուզէք իբրև հերոս մը կլի-  
ցնել զձեզ :

— Այդպիսի յաւակնութիւն չունիմ , հերոս ըլլալու պէտք  
չկայ հայրենիքի ազատութեան ծառայելու համար :

— Ուրեմն լըջօրէ՞ն կը խօսիք . . . Մակեդոնիա կեր-  
թաք :

— Այո՛ , կ'երթամ իմ բաժինս նուիրելու Թուրքիոյ վե-  
րածննդեան գործին :

— Իտալիոյ ճամբով . . . չիտակը աշխարհագրութեան  
մասին քիչ մը տկար եմ և լաւ չեմ կրնար կոր ըմբռնել ձեր  
հետեւելիք ճամբան :

— Եւ սակայն շատ պարզ է. Իտալիայէն պիտի անցնիմ  
Փարատաղ, Ագրիականի ճամբով ու անկէ Ալպանիա:

— Ո՛հ, այո՛, իրաւունք ունիք, որքա՛ն յիմար եմ որ  
չկրցայ այդչափ պարզ քան մը խորհիլ: Շատ երջանիկ եմ որ  
տոխթ ունեցայ ձեզի պէս քաջ հայրենասէր մը ճանչնալու: . .

— Եւ ես ալ նոյնքան երջանիկ եմ որ մեր դատին այն-  
քան համակիր Ֆրանսուէի մը տեսնելու բախտը ունեցայ:

— Ես ամէն ազնիւ դատերու համակիր եմ, ըսաւ Պա-  
ռոնուէին իր գեղեցիկ աչքերը գնդապետին վրայ յառելով, և  
հաւատացէ՛ք մեծազոյն փափաքս է այս միջոցիս ձեզի ընկե-  
րանալ, միասին երթալ, լեռներու վրայ կռուիլ Ազատութեան  
յաղթանակին ու բռնապետութեան տապալմանը համար . . .

— Չեր այդ երազը իրականացնել շատ դիւրին է, ըսաւ  
Ազիզ պէյ խնդալով, և միմիայն ձենէ կախում ունի . . . Ես  
պատրաստ եմ մինչև ասպտամբ զօրագունդը առաջնորդել ձեզ  
անվտանգ . . .

— Բայց առանձին կին մը ի՞նչպէս պիտի կրնայ ապրիլ  
բանակին մէջ . . .

— Նախ առանձին չէք, ուրիշ կրներ ալ կան մեզի հետ,  
ճշմարիտ հերոսուհիներ, որոնց ներկայութեանը շատ բան կը  
պարտինք . . .

Պարոնուհիին խնդրանքին վրայ՝ Ազիզ պէյ սկսաւ ման-  
րամանօրէն պատմել Սալիհա հանրմի և իր ընկերներուն մա-  
սին գիտցածները; որոնցմէ չափազանց խանդավառեցաւ Ֆը-  
րանսուէին:

Պատկերութիւնը երկարեցաւ այսպէս: Գեղանի տիկինը  
կարծես իրաւամբ փափաք կ'զգար գնդապետին ընկերանալու,  
միայն թէ վախ մը ունէր, ճամբան ձերբակալուելու վախը:

— Եթէ Համիտի մարդոց ձեռքը իյնանք, ըսաւ մտա-  
տանջ երևոյթով մը:

— Այդ մասին ընաւ հոգ մի՛ ընէք, պատասխանեց գըն-  
դապետը, ապահովութեան ամէն միջոց ձեռք առնուած է:

— Իրա՞ւ կ'ըսէք, ի՞նչ միջոցներ ըսէք խնդրեմ...

— Նախ Զէթինէի մէջ մեր ընկերներէն երկուքը խնձի պիտի սպասան, տասը հոգիէ բազկացած զինեալ խուճրով մը, միասին պիտի երթանք միևչև Օսմանեան սահմանազուխը ուր նոր խուճը մը մեզի պիտի միանայ...

— Բայց սահմանազլխին վրայ թուրք պահնորդներ չըկա՞ն...

— Անշուշտ կան, բայց անոնց հետ ալ գործերնիս կարգադրած ենք:

— Ինչպէ՞ս...

— Իրենց հրամայող սպան մեր քօմիթէէն է...

— Օ՛ ուրեմն ամէն բան կարգին է, գոչեց գեղանի Պառոնուհին, հիմա համոզուեցայ որ վախնալիք մը չկայ:

— Ուրեմն միասին կուգա՞ք կոր, հարցուց Ազիզ պէյ խնդալով:

— Եթէ ո՛չ անձամբ՝ վստահ եղիք որ սրտով ձեզի պիտի հետեւիմ, և ձեր յաջողութեան համար պիտի աղօթեմ... Իսկ երբ Սահմանադրութիւնը վերահաստատուելով՝ յազթական Պոլիս մտնէք, պիտի գամ ձեզի գտնեմ, ձեռքերնիդ սեղմիլու համար:

Գիշերը, ժամը 10ին Հասան Մառսէյլ, ուր կառախուճքը պիտի փոխէին և Նիս գացող ձեպընթացը պիտի առնէին: Երկու ժամ միջոց ունէին: Զինուորականը կրկին իր ընկերուհին հրաւիրեց կայարանի ճաշարանը: Ճաշէն ետքը Պառոնուհին մէկ կողմ քաշուեցաւ իր մօր նամակ մը գրելու համար, մինչ Ազիզ պէյ գնաց քարափին վրայ սիկառ մը ծխելու:


Երբ մեկնումի ժամը հասաւ, զնդապետը և Պառոնուհին դարձեալ զիրար գտան վակօնին մէջ:

Հետեւեալ օրը Միւնիք փաշա հեռագիր մը կ'ուղղէր Եւտրզ որուն մէջ կը ծանուցանէր զնդապետ Ազիզ պէյի մեկնումը դէպ ի ապստանըներուն քով, միևնոյն ժամանակ մանրամասնօրէն ցոյց կուտար անոր հետեւիք ճամբան և կ'ըսէր

նակ որ Գարատաղի ստճմանագլուխի հրամանատարը քօմի-  
թէին անդամներէն էր և պիտի դիւրացնէր Ազիզ պէյի մուտքը  
Մակեդոնիոյ մէջ :

Յրանսացի կեղծ Պառոնուհին դեսպանատան լրտես մըն էր  
պարզապէս որ ուրիշ առիթներու մէջ ալ մեծ ծառայութիւն  
ներ մատուցած էր :

Մօրը նամակ գրելու պատրուակին տակ իսկոյն հազր-  
դած էր Բարիզ, գնդապետին հետ ունեցած ամբողջ տեսակ-  
յութիւնը :



Գ Լ Ո Ի Ե Ժ Թ .

## Հ Ա Մ Ի Տ Կ Ը Գ Ա Ի Է

Երբ դեսպանին ծածկագիր հեռագիրը Երլտըզ հասաւ,  
ամբողջ պալատը տրդէն տագնապի մատնուած էր : Ապաիւր  
Համիտ օրերէ ի վեր ծայրայեղ դրդուութեան մը մէջ կը դըտ-  
նուէր և իր ամէնէն մտերիմ պալատականներն իսկ անուղողով  
կը մօտենային իրեն : Բռնաւորը կռտաղի յուսահատութեամբ  
մը կը տեսնէր իր իշխանութեան կամայ կամայ քայքայումը :  
Իր երևոնամեայ բացարձակ տիրապետութեան մէջ առաջին  
անգամ ըլլալով հրամանները անգործադրելի կը մնային . . .

Բաւմէլիի բանակին ազատական սպաներուն գէժ իր ծրա-  
դրած սճիրները անգործադրելի մնացած էին . և ո՛չ մէկ սպայ  
մը կարելի եղած էր ձերբակալել, իր ստիպողական բոլոր հե-  
ազիրներուն՝ Հիւսէյին Հիլմի փաշայ միւսնոյն պատասխանը  
կուտար .

«Յաւելով կը յայտարարեմ Ձեր Բարձր Վեհափառութեան որ իր հրամանները գործադրելու զօրութիւն չունիմ և խոնարհաբար կը խնդրեմ որ իմ հրաժարականս ընդունիք :»

Ապտիւլ Համիտ կատաղի նախատինքներ թափելով հանդերձ Հիլմի փաշայի գլխին՝ կը մերժէր հրաժարականը ընդունիլ : Եւ մինչ մէկ կողմէ սպանները ազատ կը մնային՝ միւս կողմէ յեղափոխական շարժումը հետզհետէ կը ծաւալէր : Իր լրաններուն կողմէ եկած տեղեկագիրներ կը յայտնէին թէ յեղափոխական թերթեր ու տետրակներ և Սուլթանին դէմ սուկալի նախատինքներ պարունակող գրութիւններ ամէնուն կը բաժնուէր արձակ համարձակ ու սրճարաններու մէջ կը կարդացուէր : Ս.մէն կողմէ «Սահմանադրութիւն կ'ուզենք» պահանջումը կը լսուէր . զինուորը որ մինչև այն ատեն հաւատարիմ մնացած էր Սուլթանին , ինքն ալ իր կարգին կ'ընդվզէր , որովհետև Ապտիւլ Համիտ , Ռուսելիի բանակներուն սպաներէն դժգոհ՝ նիւթական անձկութեան մասնաձեւ էր զօրագունդերը , յուսալով որ այս կերպով զինուորները իրենց սպաններուն դէմ պիտի դառնային , սակայն հակառակը պատահած էր և հիմա զինուորներն ալ իրենց սպաններուն կը միանային՝ բռնաւորին դէմ զոր իրենց բոլոր թշուառութեան պատճառը կը նկատէին :

Սելանիկէն ու Մանասթրէն հասած այս վրդուխցուցիչ տեղեկագիրները կարգալու վրայ էր Ապտիւլ Համիտ , երբ իր սիրական քարտուղարը քովը եկաւ , Բարիզի դեսպանին հեռագիրը ձեռքը բռնած :

— Կարևոր լուր մը , Վեհափառ Տէր , ըսաւ պալատականը , ակնածական խոնարհումով մը :

— Լա՛ւ թէ գէշ լուր , հարցուց բռնաւորը գլուխը վեր առնելով :

Իզգէթ փաշա վայրկեան մը վարաննցաւ , յետոյ ձայնով մը պատասխանեց .

— Լաւ լուր մը . . .

— Կարդա՛ տեսնենք, գոչեց Ապտիւլ Համիտ, խիստ կերպով մը :

Բալատականն սկսաւ կարդալ մեզի ծանօթ հեռագիրը :

— Ինչպէ՛ս, լաւ լո՛ւր մը կ'անուանես ասիկա, պտուց Ապտիւլ Համիտ բարկութեամբ :

— Այո՛, Վեհափառ Տէր քանի որ տրուած այս մանրամասն տեղեկութեանց չնորհիւ պիտի կրնանք շատ դիւրաւ Ազիզ պէյը ձեռք անցընել, տակաւին իր տեղը չհասած :

Ինչպէ՛ս պիտի կրնանք ընել այդ բանը :

— Սահմանագլխի սպանները փոխելով իսկոյն և հաւատարիմ սպաններ նշանակելով անոնց տեղ :

— Դեռ հաւատարիմ սպայ մնաց, գոչեց բռնաւորը բարկութենէն դողացող ձայնով մը :

— Վեհափառ տէր, անշուշտ հաւատարիմ սպաններ ունիք տակաւին և շատ բազմաթիւ . . .

— Այո՛, գուցէ Պոլիս, իմ շուրջս գանաւորները անոնք որ շահերով կապուած են հետս . . . և որոնք գուցէ օր մը ինծի դէմ դառնան երբոր այդ շահերը դադրին :

— Լա՛ւ ուրեմն, Պոլսոյ սպաններէն կը զրկենք մէկ քանի հատ :

— Բայց ի՞նչ օգուտ ունի Ազիզի մը համար այնքան իրարանցում . . . հատ մը աւելի, հատ մը պակաս, ի՞նչ կարեւորութիւն ունի . . . չարիքը պէտք է արմատէն խլել . . . պէտք է միջոցը գտնել բնաջինջ ընկուլ բոլոր այդ ըմբոստ սպաններն ու զինուորները :

— Ես ալ գիշեր ցերեկ այդ մասին կը մտածեմ, բայց ձտրայ մը չեմ կրնար կոր գտնել, ըսաւ պալատականը չփոթած երեւոյթով մը :

— Վա՛յ, ըսաւ Ապտիւլ Համիտ, հակառակ այդչափ մտածելուդ միջոց մը կարող չես գտնել, լաւ ուրեմն ես քենէ աւելի բախտաւոր եմ . . . ես միջոցը գտայ :

— Վեհափառ Տէր, չեմ զարմանար որովհետեւ իմ խելքս այլնչ է ձեր անսահման իմաստութեան քով :



— Այո՛, միջոց մը որ կարծեմ միակն է այդ ըմբոստաները կարգի բերելու և ըմբոստանալու միաք ունեցողները սարսափեցնելու համար :

— Արդեօք Ձեր Վեհափառութիւնը պիտի հաճի իմացնել այս միջոցը :

— Քանի որ Բումէլիի զօրքերը չեն ուզեր իմ հրամաններս գործադրել ու ապստամբներուն դէմ շարժիլ, ևս ալ Անատօլուէն հաւատարիմ զօրազունդ մը կը զրկեմ անոնց վերայ ու այս կերպով իրենց հախէ՛ն կուգամ... Ի՞նչ կ'ընես ասոր

— Արդարև շատ իմաստուն և ուղիղ որոշում մըն է, Վեհափառ տէր, միայն թէ այդ ծայրայեղ միջոցին դիմելու ժամանակը հասա՞ծ է, պատասխանեց պալատականը :

— Ի՛նչպէս, կ'ուզե՞ս որ թողում որպէս զի յեղափոխութիւնը աւելի տարածուի և յետոյ անկարելի ըլլայ առաջը առնել...

— Ձեր Վեհափառութիւնը իրաւունք ունի, պէտք է անմիջապէս ջախջախել իրենց գլուխը, փութաց պատասխանելու Իզզէթ փաշա, անանկով որ բռնաւորը բարկութիւն կ'զգար իր ըրած դիտողութենէն :

— Բայց Անատօլուէն զօրազունդ զրկելէ առաջ, ուրիշ միջոց մըն ալ ունիմ գործադրելիք, միջոց մը որ գուցէ պէտք չպիտի թողու միւսին...

Պալատականը չհամարձակեցաւ բացատրութիւն ուղիկ և թողուց որ Ապսիւլ Համիա ինքնաբերաբար խօսի :

— Այդ թշուառականներուն դէմ պէտք է իրենց գործածած զէնքերովը կռուել, շարունակեց բռնաւորը :

— Շատ իրաւացի է Ձեր Վեհափառութեան ըսածը, պատասխանեց քարտուղարը առանց դիտնալու թէ ի՛նչ բանի կ'ակնարկէր իր տէրը :

— Քանի որ անոնք մեզի դէմ մութին մէջ կը դաւաճանեն՝ մենք ալ նոյն բանը կրնանք ընել իրենց :

— Անշուշտ, ըսաւ Իզդէթ որ այլեւ սկսած էր հաճկատ  
բռնաւորին միաբը :

— Թոյն ու դաշոյն վարպետութեամբ գործածուելով՝ շատ  
դիւրաւ կրնան այդ բմբուսաները կարգի բերել :

— Եւ ես վստահ եմ որ Ձեր վեհափառութեան և հայրե-  
նիքի սիրոյն համար շատեր յանձն պիտի առնեն այդ դործը  
կատարել :

— Մանաւանդ երբ դրամական մեծամեծ պարգևներ ալ  
ստանան :

— Ձեր վեհափառութիւնը իցի՛ւ թէ այս միջոցը աւելի  
առաջ մտածած ու գործադրած ըլլար, գուցէ կացութիւնը  
այսքան ծանր չէր դառնար :

— Մինչև հիմա տակաւին որոշապէս չէինք դիտեր մեր  
թշնամիները, բայց հիմա՝ իրենց դիմակները վար առին և  
յայտնի համարձակ գործել սկսան. գիտենք թէ որո՛ւ հետ է  
մեր գործը և կրնանք մեր հարուածները ուղիղ իջեցնել :

— Կարծեմ որ եթէ յաջողինք իրենցմէ տասը հատը մի-  
այն պատժել ձեր խորհած միջոցներովը արդէն այդ բմբուսա-  
կան շարժումը խեղդած կ'ըլլանք :

— Ես ալ նոյն կարծիքը ունիմ : Առ այժմ, գործի սկսե-  
լու համար, ցուցակ մը պատրաստած եմ. նմենէն առաջ  
պէտք է որ Առնաւուտ Մէհմէտ փաշան ու Սալիհա հանրմը  
իյնան, անոնք են դիտաւոր դրողիչները, ասոր վստահ եմ :  
Յետոյ մէկիկ մէկիկ, կրնանք մէջտեղէն վերցնել Սաի պէյը,  
Արիֆը, Նուրին, և լին :

— Իսկ Ազիզ պէյը որ ինչպէս այժմ իմացանք կ'երթայ  
կոր անոնց միանալու . . .

— Ասոր ալ ծուղակ մը կը պատրաստենք :

— Բայց վեհափառ Տէր ի՞նչպէս պիտի կրնանք մեր հա-  
ւատորիմները Մէհմէտ փաշայի ու Սալիհա հանրմի մօտեցնել,  
քանի որ այդ անձերը իրենց մարդերով լեռները ապաստանած  
են . . .

— Ատոր համար դիւրին միջոց մը կայ, պատասխանեց  
ԲՆՆԱԼՈՐը չար ժպիտով մը, մէկ քանի սպաներ իբրև սպա-  
տամբ ու յեղափոխական ձեւանալով՝ կ'երթան անոնց կը մի-  
անան, անոնց վստահութիւնը կը շահին և յետոյ, յարմար  
մէկ վայրկեանին իրենց դործը կը տեսնեն...

— Զէնքով...

— Բնա՛ւ երբեք, զէնքը շատ աղմուկ կը յարուցանէ...  
միթէ թոյնը աւելի ապահով չէ՞ :

— Ես ալ ձիշտ այդ խորհուրդը պիտի տայի...

— Ես այնպիսի թոյներ ունիմ իմ տրամադրութեանս տակ  
որոնք շատ ապահով կերպով կրնան ազդել, առանց արտաքին  
նշան մը ձգելու... :

Այս վերջին խօսքերը ըսելու պէտք չունէր, պալատականը  
արդէն շատ լաւ գիտէր իր տիրոջ ձեռքը եղած միջոցները,  
լռիկ մնջիկ մէջտեղէն վերցնելու համար այն անձերը որոնք  
կասկածելի կամ վստահաւոր համարուելու դժբախտութիւնը  
կ'ունենային :

ԲՆՆԱԼՈՐը խօսքը առաջ տարաւ և մանրամասնօրէն պար-  
զեց ծրագիրը իր սիրական քարտուղարին :

Հետեւեալ օրն իսկ երկու բարձրաստիճան սպաներ, մին  
հարիւրապետ և միւսը գնդապետ, Եըլտըզի պահակազօրքին  
պատկանող, խոյս պիտի տային յանկարծ : Սուլթանը իբրև թէ  
զանոնք ձերբակալելու համար հրահանգներ պիտի զրկէր ամէն  
կողմ և մասնաւորաբար Սելանիկ, բայց կարելի չպիտի ըլլար  
զիրենք ձերբակալել և վերջապէս պիտի յաջողէին երթալ սպա-  
տամբներուն միանալ և անոնցմէ օգնութիւն խնդրել, իբրև  
Ապտիւլ Համիտէն հալածուած փոխստականներ :

Միւս կողմէ երկու չէրքէզ ու երկու արպանացի հաւատա-  
րիմներ Սելանիկ պիտի երթային, յարմար առթիւ մէկ քանի  
ծանօթ յեղափոխական պետեր դաշոյնահար կամ ընկալիչներով  
պաննելու :

— Մէկ քանի գլխաւորներ երբոր իյնան, ա՛լ միւսներուն ոյժը կը կտորի, ըսաւ բռնաւորը իր խօսքը աւարտելով՝ իսկ երբ այս վերջին փորձն ալ սնյաջող ելլայ՝ այն ատեն կը դիմենք Անաստուլուի զօրագունդներուն...՝ ա՛լ երկար տեւեղին այդ ըմբոստական շարժումները և պէտք է որ շուտով վերջ գտնան ի՛նչ միջոցներով ալ ըլլայ :

— Հիմա Վեհափառ Տէր ի՛նչ հրաման կ'ընէք Ազիզ պէյի մասին, հարցուց Իզզէթ փաշա տեսնելով սր իր տէրը բոլորովին մոռցած էր այդ խնդիրը :

— Շուտով պատերազմական նախարարը հոս կանչեւ սո՛ւր, հրամայեց Ապտիւլ Համիտ :

Պալատականը փութաց դուրս ելլելու, որպէս զի հարկ եղած հրահանգը տայ :

Ապտիւլ Համիտ երբ առանձին մնաց, գրպանէն փոքրիկ տետրակ մը հանեց և վրան քանի մը տող բան գրեց. յետոյ թիկնաթուփին վրայ ընկողմանեցաւ, խորունկ մտածութեան մը մէջ թաղուած :

Ժա՛՛մ մը հոքը նախարարը կը հասնէր պալատ ու կը ներկայանայ իր ախրոջ :

— Ի՛նչ լուր ունիս մեր Սեյանիկի հաւատարիմ բանակէն, հարցուց բռնաւորը իր նախարարին խիստ ու միանգամայն հեղնական շեշտով մը :

— Վեհափառ Տէր, պատասխանեց նախարարը, նոր տեղեկութիւն մը չկայ... բայց կը կարծեմ որ կացութիւնը ծանրակշիռ է :

— Ուրիշ նոր սպաներ ու զօրքեր ալ միացա՞ծ են ըմբոստներուն...

— Չէ՛... գոնէ ինձ տեղեկութիւն չէ տրուած՝ բայց ցաւալին ու մանաւանդ երկրլուզային այն է սր բանակին մէջ ախրող ոգին շատ վրդուկեցուցիչ է... զօրագունդները պէտք է ուրիշ տեղ փոխադրել և ասիկա կարելի չէ, ափսո՛ս :

— Ի՛նչո՞ւ համար կարելի չէ...

— Նախ նիւթական. դժուարութիւններ կան. յետոյ կը վախնամ որ եթէ այդպիսի միջոցի մը դիմենք, ապստամբական շարժումը շատ աւելի մեծ ծաւալ մը կ'ստանայ:

— Գարատաղի սահմանադրութիւն վրայ գանուող պահակախումբերն ի՞նչ վիճակի մէջ են, հարցուց յանկարծ Ապտիւլ Համիտ, պիչ պիչ նախարարին երեսը նայելով:

Այս վերջինը հասկցաւ թէ Սուլթանը բանի մը ակնարկի կ'ուզէր, սակայն չկրցաւ գուշակել ինչ ըլլալը:

— Այդ կողմերէն դժգոհութեան բան մը չունինք, թութովեց:

— Սպաներուն հաւատարմութեան վրայ վստահ ես...

— Մինչև հիմա դիտողութեան ակզը չեն տուած:

— Ո՞վ է իրենց հրամանատարը...

— Գնդապետ Չէրքէզ Հասան պէյ, ղինուորական վարժարանէն չըջանաւարտ մը, որ թէև տակաւին շատ երիտասարդ է, սակայն Ձեր Վեհափառութեան շնորհիւ քիչ ժամանակի մէջ խիտ յառաջացաւ...

— Ի՞նչպէս իմ պաշտպանութիւնս կը վայելէ գոչեց Ապտիւլ Համիտ զարմացած դէմքով մը:

— Այո՛, Վեհափառ Տէր, կ'երևի որ ձեր յիշողութիւնէն կը վրիպի կոր... իր քոյրը կոյսերական հարէմը կը դառուի և վերջին անգամ Ձեր Վեհափառութիւնը հրամայեց որ զընդապետի աստիճանը շնորհուի իրեն...

— Այո՛, այո՛, յիշեցի, ըսաւ բռնաւորը, հիմա հասկցայ թէ ո՞վ է...

Արդարև Չէրքէզ Հասան պէյ, տեղակալի աստիճանով դպրոցէն ելլելէն ետքը, քիչ ատենի մէջ հետզհետէ բարձրացած էր մինչև գնդապետութեան աստիճանին, շնորհիւ երբ արդէն իրեն եզած աջակցութեան: Իր քոյրը հրաշալի գեղեցկութեամբ Չէրքէզուհի մը, Ապտիւլ Համիտի սիրականներէն էր և մեծ ազդեցութիւն ձեռք բերած էր իր աբրաջ վրայ: Ապտիւլ Համիտ բան մը չէր կրնար մերժել այդ գեղանի աղ-

չկան և անոր ամէն քմահաճոյքները կը կատարուէին անպատճառ :

Բռնաւորը երբ իմացաւ թէ յեղափոխականներու աջակից կողմ այդ գնդապետը, որուն վրայ Ազիզ պէյ յոյսը դրած էր անվտանգ կերպով Մակեդոնիա մանկու համար, իր սիրական Չէրքէզուհիին եղբայրն է՝ սրախ սեղմուժ մը ունեցան : Գիտէր թէ Չէրքէզուհին խնթի պէս կը սիրէր իր եղբայրը որ իր ընտանիքին միակ անդամն էր, որովհետեւ հայրն ու մայրը մեռած էին և ուրիշ եղբայր կամ քոյր չունէր, խնթի միւս ազգականները բնաւ չէր ճանչնած, շատ փոքրիկ հասակէն պալաա բերուած ըլլալով :

Ապաիւլ Համիտ պահ մը լուռ ու մտածկոտ մնաց, մինչ նախարարը կը ջանար գուշակել իր տիրոջ մտասանջութեան պատճառը :

— Մտիկ ըրէ՛, ըսաւ յանկարծ, հիմա իսկոյն հեռագիր պիտի գրկես գնդապետ Օսման պէյին և ըսես որ ճամբայ կլքելով անմիջապէս Պոլիս գայ : Իմացուր նաև իրեն որ քոյրը ծանրապէս հիւսնդ է և կ'սուզէ վիշքը տեսնել... հեռագիրը առնելուն պէս պէտք է որ ճամբայ ելլէ :

— Չեր հրամանը այս վայրկեանիս կը կատարուի, Վեհափառ Տէր :

— Բայց հարկ է ուրիշ մէկը որոշել Օսման պէյի տեղ...

— Ատիկա դիւրին է և ժամանակ ունինք այդ մասին խորհելու :

— Ընդհակառակն բոպէ մը չունինք կորսնցնելու, ըսաւ Ապաիւլ Համիտ... պէտք է աւելի մեծ աստիճանաւոր մը, զօրավար մը կամ զոնէ հազարապետ մը գրկել, կը հասկնաս... փորձուած, հաւատարիմ մէկը, որուն լիազօր իշխանութիւն պիտի տրուի իր հրամանին տակ գտնուող սպաները փոխելու և անոնց տեղ նորեր նշանակելու և բոլոր ատենք հարկ է որ մէկ երկու օրուան մէջ կատարուին... մեծ վտանգ մը կ'սպառնայ մեզ Գարատազի սահմանազլուխին վրայ...

Այս վերջին խօսքերը ափ ի բերան թողուցին նախարարը որ չկրցաւ զարմացական ճիչ մը զսպել :

— Վաճաճ կ'սպառնայ, գոչեց, ի՞նչ արդեօք պատե-  
րա՞ղճ պիտի ունենանք Գարատաղի հետ...

— Գարատաղի հետ պատերազմը, եթէ ըլլար իսկ, կա-  
րեւորութիւն չունէր, խնդիրը յեղափոխական շարժումին վը-  
րայ է...

— Վեհափառ տէր, կը խնդրեմ լուսարանեցէք զիս, ու  
ովհետեւ հաւատացէք որ բան մը չեմ գտնիր :

— Այո՛, դժբախտաբար ո՛չ մէկերնիւզ բան մը գիտէք,  
գոչեց Ապտիւլ Համիտ, միշտ ես եմ որ ձեզի տեղեկութիւն  
պիտի տամ... դուք պարզապէս կը քննաք :

— Վեհափառ տէր գիշեր ցերեկ կը հսկենք Ձեր թան-  
կագին կեանքին վրայ...

— Պարսպ խօսքերով ժամանակ չանցնենք : Ահաւասիկ  
իրողութիւնը :

Եւ Ապտիւլ Համիտ նախարարին երկարկեց քիչ մը ա-  
ռաջ Իզզէթ փաշայի բերած ծածկագիր հեռագրին թարգմա-  
նութիւնը որ սեղանին վրայ կը մնար :

Պատերազմական նախարարը ուշի ուշով կարգաց թուղթը  
ու կրկին տեղը դրաւ :

— Եթէ հրաման կ'ընէք, ըսաւ, ժամ մը չնորհեցէք ինձ  
որպէս զի այդ պաշտօնին յարմար անձերու ցանկ մը պատ-  
րաստեմ եւ Ձեր վեհափառութեան ներկայացնեմ, որպէս զի  
անոնց մէջէն հատ մը ընտրէք :

Ապտիւլ Համիտ խնդրուած պայմանաժամը չնորհեց իր  
նախարարին որ տիրոջը քովէն հեռացաւ մեծ մտատանջու-  
թեան մը ժատնուած : Բուժէլի բանակին մէջ տիրոջը ըմբոս-  
տական սգին զինքը չափազանց կը տանջէր եւ կ'զգար որ ա-  
ղետալի ու վերջնական փոթորիկը մօտ է պայթելու. գիտէր  
նաև թէ զինքը որքա՛ն կ'ատէին բանակին լուսամիտ ու ա-  
զատական սպաները եւ թէ ի՞նչ պատիժ սահմանուած էր իրեն  
այն օրը որ յեղափոխութիւնը պիտի յաղթանակէր :

Բռնաւորը ինքն ալ երբոր առանձին մնաց սարսափելի  
անձկութեան մը մասնուեցաւ : Ժամանակէ մը ի վեր բուն  
Ջէրֆէզուհիին զգլխիչ հրապոյրներուն , այն աստիճան որ այ-  
լեւ կանանոցին միւս կիները գոյութիւն չունէին իրեն համար  
իր ամբողջ վայելքն ու հեշտութիւնը այդ ազջիկն էր , որուն  
կ'ուզուէր իր մտածումը նոյն իսկ ամենածանր զբաղմանցը  
միջոցին : Ու հիմա ինքզինք ստիպուած կ'զգար իր պաշտումի  
առարկային դէմ գործելու , անոր սիրական եղբայրը պաշտո-  
նանկ ընելով ու պատժելով . . .

— Այդ թշուառական Հասանը անպատիժ թողուլ կարելի  
չէ , կը մտածեր , ատիկա թէ՛ իրեն և թէ՛ միւսներուն համար  
քաջալիրութիւն մը պիտի ըլլայ իրենց դաւաճանութիւնը շա-  
րունակելու ինծի դէմ , իսկ եթէ պատժեմ ի՞նչ պիտի ըլլա  
Պէլքիսը . . . սրտին ցաւէն կրնայ մեռնիլ կամ նոյնիսկ անճաս-  
պան ըլլալ , ամէն պարագայի մէջ աստիճալարար զիս պիտի  
ատէ . . . այո՛ , այն միակ արարածը որ աշխարհի վրայ գուցէ  
զիս անկեղծօրէն կը սիրէ , անոր ալ ատելի պիտի դառնամ . . . :

Այդ դառն մտածումներուն մէջ էր երբ պատերազմական  
նախարարը վերադարձաւ ու իր տիրոջ ներկայացուց մէկ քա-  
նի բարձրաստիճան զինուորականներու անուններ , որոնք ար-  
դէն Մակեդոնական զօրաբանակներուն մէջ կը գտնուէին ու  
կրնային շուտով իրենց նոր պաշտօնին գլուխը անցնիլ :

Ապտիւլ Համիտ աչք նետեց այդ անուններուն վրայ . ա-  
մենքն ալ հաւատարիմ ճանչցուած անձեր էին , նոյնիսկ մէ-  
ջերնին հաս մը կար որ լրտեսութիւն ալ կ'ընէր և միշտ շա-  
հական ճուռնայներ կ'ուզէր Ելլտըզ : Համիտ իսկոյն զայն  
մատնանչեց .

— Յարմարագոյնը ահաւասիկ Գատրի պէյն է , ըսաւ լըր-  
տես զինուորականին ակնարկելով :

— Ես ալ ճիշդ այդպէս կը խորհիմ , պատասխանեց նա-  
խարարը :



— Իսկոյն հեռագրէ իրեն որ սահմանադրուի մեկնի և մի-  
կենոյն ատեն ըսէ՛ իր ընկիւնքները . հիմա որ Բարիդէն եկած  
հեռագիրը տեսար , գիտես թէ ի՞նչ կը պահանջենք իրմէ . . .  
նախ կասկածելի սպաները հեռացնել իր գունդերէն և յետոյ  
ջանալ ձեռք ձգել Ազիզ պէյը և իր խումբը : Եթէ այս գործը  
կարենայ յաջողութեամբ կատարել՝ կրնայ վստահ ըլլալ որ ան-  
միջապէս զօրապետի աստիճանին պիտի բարձրանայ :

— Նորին Վեհափառութեան հրամանները իսկոյն պիտի  
հեռադրեմ , պատասխանեց նախարարը :

Հետեւեալ օրը նոր և ընդարձակագոյն հեռագիր մը կը  
հասնէր Բարիզի դեսպանատունէն Ազիզ պէյի մասին : Գնդա-  
պետը փոխանակ ուղղակի իր ճամբան շարունակելու , ժրնէ-  
վէն ստացած հրահանգի մը վրայ որոշած էր նախ հոն երթալ  
և իր ընկերներուն հետ խորհրդակցելի . դեսպանը միևնոյն ա-  
տեն կը հազորդէր ժընէվ դանուոզ Երիտասարդ Թուրքերու  
և Հայ յեղափոխականներու անունները , որոնց մասին Ազիզ  
պէյ խօսած էր իր կասկածելի ընկերուհիին :

— Բայց այս Միւնիխը ուրկէ՛ կիմանայ ամէն բան , հար-  
ցուց բռնաւորը իր սիրական քարտուղարին :

Իզգէթ փաշա որ շատ չէր սիրեր Բաօիզի դեսպանը և  
դայն իրեն մրցակից մը կը համարէր , տարտամ շարժում մը  
ըրաւ . յետոյ պատասխանեց .

— Շիտակը չեմ գիտեր , ինծի ալ տարօրինակ կը թուի  
այսքան մանրամասնութիւններ , կարծէք թէ հեռագիրը նոյ-  
նինքն Ազիզ պէյը խմբագրած է , որովհետեւ անոր մէջ իր  
խորհուրդներն ու մտածումները կը պատմուին :

— Ի՞նչ ըսել կ'ուզես , գոչեց Ապախը Համիտ խիստ չեչ-  
տով մը :

— Ըսել կ'ուզեմ որ Միւնիխ փաշան չափազանց ճարպիկ  
պէտք է ըլլայ այս ամէնը ժամը ժամին կարենալ իմանալու  
համար , պատասխանեց քարտուղարը աննշմարելի ժպտով  
մը :

— Եւ կամ մտքէն հնարէ, . . . խոստովանէ՛ որ այդ ըսե  
ուզեցիր :

— Վեհափառ Տէր, իրա՛ւ որ գրուած յայտնութիւնները  
այնքան տարօրինակ կը թուին որ . .

— Ես ալ արդէն այդ կասկածը կ'ունենամ կոր :

— Ձեր Վեհափառութիւնը ուրեմն զիս չի կրնար մեղա-  
դրել իրեն պէս խորհելու հարար . . .

— Կ'ուզեմ որ իսկոյն այս կէտը ստուգենք և Միւնիթին  
կողմէ խաղի մը չի գանք . . .

— Մուցայ ըսելու որ Միւնիթ փաշա ուրիշ հեռագրով մը  
քսան հազար Փրանք կը խնդրէ անմիջապէս, որպէս զի Ազիզ  
պէյլի մասին հետապնդումը կարելի ըլլայ օգտակարապէս շա-  
րունակել . . .

— Վա՛յ, ատիկա ա՛լ աւելի իմ կասկածներս կ'աւելցնէ .  
ինչո՞ւ անմիջապէս չսիր :

— Բայց կ'սպասէի որ առաջին հեռագրին մասին Ձեր  
Վեհափառութիւնը իր խորհրդածութիւնները աւարտէր . . .  
արդեօք խնդրուած գումարը զրկե՞նք . . . Միւնիթ փաշան ու-  
զած է որ հեռագրով զրկուի որպէսզի ժամանակ չկորսուի :

— Ձէ, առ այժմ մի՛ զրկեր. նախ պէտք է խնդիրը լու-  
սաբանենք . . .

— Ինչպէս որ Ձեր Վեհափառութիւնը կամք կ'ընէ, պա-  
տասխանեց իզգէթ փաշա որ կը ջանար իր գոհունակութիւնը  
ծածկել :

— Շուտով հեռագրէ Միւնիթին և հարցուր թէ Ազիզ  
պէյլի մասին իր տուած տեղեկութիւնները ի՛նչ աղբիւրէ քա-  
ղած է . . . հարկ է որ մանրամասնօրէն բացատրէ ամէն բան,  
այնպէս չէ՞ . . .

— Բնականաբար, Վեհափառ Տէր, խնդիրը շատ կենսա-  
կան է . . . այս տեղեկութիւններուն յենլով ստիպուած ենք  
չատ մը միջոցներ ձեռք առնել և եթէ անհիմն ըլլան՝ պարտապ  
տեղը ժամանակ և դրամ վատնած պիտի ըլլանք :

Իզգէթ փաշա իր ախոյ խօսքերէն քաջալերուած՝ իսկոյն քաշուեցաւ իր զրասնեակը՝ խմբագրելու համար հետեւեալ քինալից հեռագիրը՝ Բարիզի դեսպանին ուղղուած .

«Վսեմափայլ Դեսպան :

«Մեր Օգոստափառ Տէրը, Նորին Վեհափառութիւն Սուլթանը թէև կարգաց Ազիզ պէյի մտածումներուն և շարժումներուն մասին Ձեր Վսեմութեան տուած տեղեկութիւնները, սակայն չկրցաւ զայն լուրջ ուշադրութեան առնել՝ նկատելով որ արուած տեղեկութիւնները ստուգութեան փափաքուած երաշխաւորութիւնը չունէին և ենթադրել կուտային թէ գուցէ անգիտակցաբար զո՞ գացած էք ստայօդ լրատունիբու : Այս պարագաներու մէջ Նորին Վեհափառութիւնը կը կարծէ թէ աւելորդ է նորանոր գումարներ արամագրել Ազիզ պէյի մասին նորանոր տեղեկութիւններ քաղելու համար : Կ'սպասենք ձեր պատասխանին :»

Միւնիլը փաշա, որ կ'սպասէր իր ճարպիկութեան համար համար Սուլթանէն գովեստներ ընդունելու, սարսափելի բարկութեամբ կարգաց այդ հեռագիրը և գուշակից թէ հարուածը ուսկից կուգար : Երբ իր հանդարտութիւնը գտաւ, իսկոյն հետեւեալ հեռագիրը զրկից ուղղակի Ապախու Համիտի հասցէին .

«Ազիզ պէյի մասին տուած կարեւոր տեղեկութիւններս բացարձակօրէն կ'երաշխաւորեմ : Չանոնք օրը օրին քաղած եմ մեր դեսպանատան ծառայութեան մէջ գանաւոր և զանազան առիթներու մէջ մեծամեծ ծառայութիւններ մատուցանող Տիկին Պառնուհի տը Շօմօնէն՝ որ յատկապէս Բարիզէն ընկերակցած է զնդապետ Ազիզ պէյի և յաջողած է անոր վստահութիւնը գրաւել և իբրև Երիտասարդ Թուրքերու համակիր ինքզինք ցոյց տալով՝ անոր խորհուրդներն ու ծրագիրները իմանալ : Խնդրուած գումարը այդ Տիկնոջ սահմանուած էր, որովհետև պիտի ջանար Ազիզ պէյի ընկերանալ մինչև Գարատաղ : Իմ երկարամեայ ծառայութիւններս պէտք

էին իմ Օգոստոսիան Տիրոջս մտքէն հեռայնել ու եւ է կաակած կամ երկրմտութիւն տուած տեղեկութեանցս մասին: Ինքզինքս չառ դժբախտ կ'ղգամ որ չեմ կրցած տակաւին իմ Վեհափառ Տիրոջս վստահութիւն ներշնչել եւ այս պայմաններուն տակ ինձ համար այլես անկարելի է շարունակել իմ դեպքանական պաշտօնս. ուստի խոնարհաբար կը խնդրեմ Վեհափառ Սուրբանէն որ բարեհաճի հրաժարականս ընդունիլ եւ արժանաւորաբարդն եւ աւելի վստահելի անձ մը նշանակէ իմ տեղս:»

Ապիւլ Համիտ հազիւ թէ այս հեռագիրը կ'որդացած էր, երբ Իզզէթ փաշա ներս մտաւ ընկճած դէմքով մը: Բռնաւորը խոժոռ ակնարկ մը ուղղեց իր քարտուղարին:

— Ի՞նչ կայ, հարցուց չոր ձայնով մը:

— Վեհափառ Տէր, ժընէվէն հեռագիր մը հասաւ Ազիզ պէյլի մասին, զոր կը փափաքէի ՁերՎեհափառութեան հաղորդել...

— Ի՞նչ կ'ըսէ այդ հեռագիրը, անշուշտ Միւնխրի սըռուած տեղեկութիւնները սուտը կը հանէ ըսաւ Ապիւլ Համիտ հեզնական ժպիտով մը:

— Ո՛չ, Վեհափառ Տէր, ընդհակառակն կը հաստատէ, կմկմաց Իզզէթ փաշա:

— Կարդա՛ տեսնենք, հրամայեց Ապիւլ Համիտ:

— Ահաւասիկ Վեհափառ Տէր. «Գնդ. Ազիզ պէյ, որ Երիտասարդ թուրքերու պետերէն մին կը համարուի, հոս հասաւ եւ յաճախակի տեսակցութիւններ ունեցաւ թուրք եւ հայ յեղափոխականներու եւ մակեդոնական քօմիթէին անդամներուն հետ: Իրեն կ'ընկերանայ Փրանսացի Տիկին մը, որուն ս'վ ըլլալը կամ ի՞նչ դէր ունենալը տակաւին չկրցանք հասկնալ, բայց կը թուի որ ինքն ալ յեղափոխականներուն դորձակից է:»

— Այդչա՞փ միայն կնոջ մասին ուրիշ տեղեկոնթիւն չը կայ...:

— Ո՛չ, Վեհափառ Տէր,...

— Ո՛վ կ'ենթադրես որ ըլլայ այդ կինը որ Ազիզ պէյի կը հետեւի :

— Վեհափառ Տէր, չեմ կրնար գուշակել :

— Լաւ ուրեմն, նոյնինքն այն անձն է որ Միւնիրի տեղեկութիւններ կը հաղորդէ դաւաճան գնդապետին մասին... ա՛ն, կարդա՛ այս հեռագիրը :

Եւ Ապտիւլ Համիտ իր քարտուղարին երկարեց Բարիզի դեսպանէն ստացած հեռագիրը : Իզգէթ փաշա կարդաց զայն ներքին կատաղութեամբ մը մինչ բռնաւորը զինքը կը գիտեր ակնապիշ կարծես անոր սրտէն անցածները կարդալ փորձելով :

— Անիրաւ անզը կասկածներ ունեցար իր վրայ, ըստ երբ քարտուղարը բնթերցումը աւարտեց :

— Բայց, Վեհափառ Տէր, առաջին անգամ դուք արտայտեցինք կասկածը...

— Ո՛չ, գոչեց Սուլթանը, ես քննէ ազդուեցայ :

Իզգէթ փաշա գլուխը խոնարհեց առանց պատասխանելու :

— Հիմա պէտք է Միւնիրին փրա՞ր առնել... չեմ ուզի որ իրեն պէս ինձ հաւատարիմ ու անձնուէր մէկը վշտացած մնայ ինծի հանդէպ :

— Ձեր Վեհափառութիւնը ինչպէս որ յարմար տեսնէ՝ այնպէս կ'ընենք...

— Նախ՝ իմ կողմէս պէտք է հեռագրես որ երբեք չեմ բնդուենի իր հրաժարականը, թէ ինք բացարձակ վտահոթիւնս կը վայելէ և թէ շատ զո՞հ եմ իր գործունէութիւնէն, հասկցա՞ր :

— Այո՛, Վեհափառ Տէր, ձեր հրամանը իսկոյն կը կատարեմ...

— Յետոյ՝ փոխանակ քսան հազար Փրանքի իրեն յիսուն հազար Փրանք կը զրկես և կ'ըսես որ իմ կողմէս բացառիկ նուէր մը ընէ այդ Փրանսացի կնոջ և բարեւներս հաղորդէ իրեն :

— Այո՛ , Վեհափառ Տէր :

— Վերջապէս կ'ուզեմ որ մանրամասն անդեկութիւններ տայ այդ կնոջ մասին գուցէ ուրիշ առթիւ ալ կրնանք պէտք ունենալ իրեն : Շո՛ւտ բոլոր այս ըսածներս կատարէ և ջանա՛ որ գործած սխալդ դարմանես և Միւնիրին կատարեալ գոհացում տաս :

Պալատականը ակնարձանքով խոնարհելէ ևաքը դուրս ետաւ իր արքայ Նրամանները կատարելու համար :



Գ Լ Ո Ի Ե Ի .

## Տ Ը Շ Օ Մ Օ Ն Պ Ա Ռ Ո Ն Ո Ի Հ Ի Ն

Հարկ չկայ ըսելու որ Միւնիր փաշա երբ ստացաւ Ազգախուլ Համիտի տուն տուած հեռագիրը . այլևս մտքէն չանցուց Նրամարտկանի խօսք ընել և անմիջապէս փութաց երկար հեռադրով մը կենսապրական ծանօթութիւններ տալ Ազգիզ պէյի ընկերակցոյ արկնոջ մասին :

Ըստ Բարիզի դեսպանին անդնութեանց այդ կէնը ոչ Քրանտացի էր ոչ ալ Պառոնուհի , այլ Պիլժիացի պետական պաշտօնեայի մը այրին՝ որ նիւթական անձկութեան մասնուած՝ լրահասական գործերու ձեռնարկած էր զայն ապրուստի միջոց ընելով : Իր աշխարհիկ յարաբերութիւնները ճարպիկութիւնը և մանաւանդ գեղեցկութիւնը շատ կը նպաստէին իրեն իր ընդգրկած ասպարէզին մէջ և յաճախ կրցած էր դեսպանին հազորդել ուրիշ դեսպանատանց գաղտնիքները : Միւնիր փաշա կ'աւելցնէր թէ երեք տարիէ ի վեր յարաբերութիւն հաստա-

տած էր այդ կնոջ հետ և զայն շատ մը առիթներու մէջ գործածած ու միշտ գոհ մնացած էր: «Իր հաւատարմութեան մասին շատ վստահութիւն ունիմ և երբեք իրմէ կասկածելու պատճառ մը չեմ ունեցած» կը գրէր:

— Այս կինը իմ գործիս պիտի դայ և պիտի կրնայ ուզածս ընել, վճուեց Ապտիւլ—Համիտ երբ իր զեւպանին սուած անդեկութիւնները կարդաց:

Արդարև բռնաւորը ծածուկ խորհուրդ մը յղացած էր, որուն մասին նոյն իսկ իր մտերիմ պալատականներուն չէր ուզեր բան մը ըսել և զոր ի գլուխ հանելու համար կը մատնէր զիմում ընել այդ կնոջ ճարպիկութեան:

Բանակցութիւնները սկսան Երլարզի ու Բարիզի զեւպանատան միջև: Ազիզ պէյ և կեղծ Պառոնուհին կրկու արմաղէ կտքը մեկնած էին Հում և հոն վերջապէս իրարմէ բաժնուած: Գնդապետը ճամբան շարունակած էր դէպի Քարազազ, խոստանալով իր նոր բարեկամուհիին նամակով անդեկութիւններ տալ իր արկածալից ուղեւորութեան մասին, իսկ կինը դարձած էր Նիս, ուրկէ հեռագրով զինքը Բարիզ կանչած էր Միւնիք փաշա: Սուլթանին ծառայութեան մէջ մտնելու առաջարկը շատ զսնունակութեամբ լսեց բախտախնդիր զեզուհին, միայն թէ ուզեց ինքզինք ծանրէն ծախել և կարգ մը դժուարութիւններ յարոյց Պոլիս երթալու համար: Միւնիք փաշա հասկցաւ թէ ամբողջ խնդիրը դրամին վրայ էր և թէ վարձատրութեան քանակութիւնը աւելցնելով ամէն դժուարութիւն պիտի հարթուէր:

— Նախ ի՞նչ ծառայութիւն կ'սպասուի ինէ, հարցուց կինը:

Դեւպանը չկրցաւ այս հարցումին պատասխանել, որովհետև այդ մասին բան մը հաշտուած չէր իրեն:

— Մեկնելէ առաջ պէտք է որ կատարելիք գործս գիտնամ, վճուեց Պառոնուհին:

— Բայց մեր վեհափառ Տէրը այդ նկատմամբ բնաւ

խօսք մը չէ բրած՝ այլ պարզապէս ձեզ հրաւիրած է Պոլիս ,  
խոստանալով նիւթական առատ վարձատրութիւն :

— Ատիկա բաւական չէ . . .

Գետպանը տախտակեցաւ կնոջ այս պահանջումը հազարդել  
եղբարդ և խնդրկի ու ըստ այնմ որոշ պատասխան մը  
տրուի .— «Իրմէ կ'սպասենք այն ծառայութիւնները որոնց  
մասին արդէն փորձառութիւն և վարժութիւն ունի» պա-  
տասխանը եկաւ :

Այս խօսքերը թէեւ քիչ մը տարտամ բայց վերջապէս  
ցոյց կուտային թէ ինչ էր Սուլթանին դիտաւորութիւնը :

— Հաւանորէն Պոլսոյ դիւանագիտական շրջանակներու  
հետ յարաբերութեան պիտի մտցնեն ձեզ , ըսաւ գետպանը :

— Եթէ այդ է ինչ պահանջուածը , կը յուսամ որ կրնամ  
օգտակար ըլլալ , պատասխանեց գեղանի լրտեսունին :

Վերջապէս կարգ մը ձեւակերպական դժոտարութիւններէ  
ետքը , հաւանեցաւ Պոլիս երթալու , ամսական յիսուն հազար  
ֆրանք վարձքով :

Այս ահագին գումարը շատ համեստ երեւցաւ Համիտի  
որ յօժարակամ յանձն առաւ վճարել , և միևնոյն ատեն բա-  
ցէն քսան հազար ֆրանք դրկեց իրրեւ ճամբու ծախք : Բախ-  
տակնդիր կինը իր շիւ ասպարէզին մէջ երբեք ասանկ  
բախտի մը չէր հանդիպած : Անմիջապէս իր անտուկները կա-  
պեց և ձեպնդաց կառախոնմբով ճամբայ ելաւ դէպի Պոլիս :

Սիրքէճիի կայարանին մէջ Պարոնունին դիմաւորելու և  
կած էր Սուլթանին սիրական քարտուղարը :

Իզգէթ վաշա թէեւ առաջին անգամն էր որ պիտի տես-  
նիր օտարունին , այսու հանդերձ դժուարութիւն չկրեց դայն  
ձանչնալու , և կառախումբը կանգ առնելուն պէս մօտեցաւ  
առաջին կարգի վակօններէն մէկուն պատուհանին , ուրկէ  
գեղանի կնոջ մը գլուխը գուրս կը ցցուէր , և ամենայն քա-  
ղաք ավարութեամբ ըսաւ :



— Եթէ չեմ սխալիր՝ Տիկին պարոնուհի ար Շօմօնը բուրեւելու պատիւն ունիմ :

— Այո, պարոն, ևս ինքս եմ... արդեօք կրնամ գիտնալ թէ որուն հետ խօսելու պատիւն ունիմ :

— Վեհափառ Սուլթանին անձնական քամուղար Իզզէթ փաշա .

— Շատ երջանիկ եմ ձեզի հետ ծանօթնալու... ձեր համբաւը արդէն լսած էի :

— Ենորհակալ եմ, Տիկին Պարոնուհի, պատասխանեց պալատականը որ առաջին վայրկեանէն հմայուած էր օտարուհիին հրապոյրէն :

Ուզեւորուհին թեթեւ քայլով մը վար ցատկեց վահօնէն և պալատականին հետ ուղղուեցաւ պէտքի հրապարակը . ուր կառք մը կ'սպասնր իրեն :

Իզզէթ փաշա Սուլթանին հիւրը առաջնորդեց Բերա, մտանաւոր արքայթըման մը զոր երկու երեք օրուան մէջ ձուխապէս կահաւորել առած էր : Խոհարար մը, ծառայ մը և սպասուհի մը արդէն պատրաստ կ'սպասէին երբ ուղևորուհին ներս մտաւ :

— Իմ օգոստափառ Տէրս ձեզի համար յատկապէս պատրաստել տուաւ այս բնակարանը, ըստ պալատականը կը որ հիւրասրահին մէջ առանձին մնացին :

— Շատ շնորհապարտ եմ Նորին Վեհափառութեան :

— Մտածեցինք որ Պոլսոյ լաւագոյն պանդոկներուն մէջ իսկ չպիտի կրնայիք այնքան հանդիստ ըլլալ որքան այս առանձին բնակարանին մէջ, ուր ձեր սրամազրութեան ներքե զրուած են վարժ ու հաւտարիմ սպասուորներ... ասկէ դատ ուրիշ տեսակէտներով ալ կարծեմ աւելի պատշաճ է որ առանձին բնակարան մը ունենաք քան պանդոկը բնակիք : ձանձրանալի ու անհաճոյ զրացնութիւններու մէջ :

— Վսեմափայլ Տէր, շատ լաւ խորհած էք այսպէս կարգադրելով և անգամ մըն ալ իմ խորին շնորհակալիքս կը

յայտնեմ իմ մտախ ցոյց արուած այս արտակարգ հողածու-  
թեանց համար և կը խնդրեմ որ յասկապէս իմ թարգմանս  
ըլլաք Վեհափառ Սուլթանին քով, ամենախորին երախ-  
տագիտութիւնս յայտնելու համար:

Այս քաղաքավարական խօսքերու փոխանակութենէն  
ետքը, Պարոնուհին իր զարդասենեակը քաշուեցաւ, ուղեւո-  
րական զգեստները հանելու համար, մինչ պալատականը հիւ-  
րասրահին մէջ կ'սպասէր, վեր վար չըջելով:

Կէս ժամ ետքը Պառոնուհին երեւցաւ սնական զգեստով:

— Հաճեցէ՛ք նստիլ, ըսաւ Իզդէթ փաշայի, այլեւս ես  
եմ տանախրուհին և դուք իմ հիւրս էք:

Յետոյ, քանի մը աննշան խօսակցութիւններէ ետքը՝  
լուրջ կերպարանք մը առնելով ըսաւ:

— Այժմ ըսէ՛ք տեսնեմ թէ ի՞նչ կ'սպասէք ինէ և թէ  
պիտի կրնամ փոխարինել ինձ եղած այս մեծարանքները:

— Վեհափառ Սուլթանը, ձեզ դիմաւորելու գալէս առաջ  
երբ իրեն ներկայացայ, ըսաւ. «ըսէ՛ք Պառոնուհին որ իրեն  
բարի դալուստ կը մտալթեմ և միանգամայն կը խնդրեմ որ  
պատրաստ գանուի խոյն գործի սկսելու համար»:

— Բայց այս վայրկեանէս խոյ պատրաստ եմ, գոչեց գե-  
ղուհին ժպտելով, միայն թէ չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի ընեմ:

— Կը ցաւիմ ըսելու, Տիկին Պառոնուհի, որ ես ալ ձեզի  
չափ անտեղեակ եմ ձեր մասին մեր Վեհափառ Տիրոջ խորդ-  
հուրդներուն նկատմամբ, պատասխանեց պալատականը ինքն  
ալ ժպտելով:

— Զարմանալի՛ բան...

— Վեհափառ Սուլթանը գուցէ ձեր գալուն կ'սպասէր  
իր դիտաւորութիւնը յայտնելու համար:

— Բայց դուք որ իր մտերիմ խորհրդակիցն էք, ինչպէս  
կ'ըլլայ որ մինչև հիմա հասկցած չէք թէ ինչ գեր սահմա-  
նուած է ինձ:

— Վեհափառ Սուլթանը երբ ծանրակշիռ որոշումներ տայ

սովորութիւն ունի զանոնք վերջին վայրկեանին միայն  
յայտու :

— Բայց զիս դող կը հանէք ձեր այս խորհրդաւոր կեր-  
պերովը . . . ուրեմն շատ ծանրակշիռ պարագաներու բերմամբ  
դիմում եղած է ինձի :

— Այնպէս կ'ենթադրեմ, սիրելի տիկին :

— Այդ պարագային կը վախնամ որ Նորին Վեհափառու-  
թիւնը յուսախար պիտի ընեմ . . .

— Իսկ ես վստահ եմ որ կատարելապէս պիտի յաջողիք  
ձեզ վստահուած գործին մէջ :

Պալատականը մեկնեցաւ երկմտութեան և տարակուսան-  
քի մէջ թողլով բախտասնդիր օտարունին : Եւ սակայն ճշմա-  
րիտ էր որ Իզդէթ փաշա տակաւին չէր իմացած իր տիրոջ  
գաղտնիքը : Երլարդ վերադառնալով՝ իսկոյն փութաց Ապտիւլ  
Համիտի քով իր տեղեկատուութիւնը ընելու համար : Սուլթա-  
նը գոհունակութեամբ լսեց Պառոնունիին գալուստը և գոր-  
ծելու պատրաստակամութիւնը . յետոյ իր մտերիմ քարտու-  
ղարին ըսաւ թէ ի՛նչ յոյսեր դրած էր այդ կնոջ գործունէու-  
թեան վրայ :

— Այս ամենքը, եզրակացուց բռնաւորը, առ այժմ մեր  
մէջ պէտք է գաղտնիք մնայ . . . դուն իսկոյն վերադարձիւր  
տիկնոջ քով ու հասկցուր թէ ի՛նչ պիտի ըլլայ իր մատուցա-  
նելիք ծառայութիւնը :

— Բայց եթէ մերժէ մեր առաջարկը, արդեօք խոհեմու-  
թիւնն է զինքը հաղորդակից ընել Ձեր Վեհափառութեան խոր-  
հուրդներուն :

— Ձանձ' նախ քիչ բառով բացատրել թէ ի՛նչ կ'սպա-  
սենք իրմէ և երբ տեսնաս որ արամադիւր է գործելու, այն  
ատեն մանրամասնութեանց մէջ մտիւր . . .

Իզդէթ փաշա իր տիրոջ այս հրահանգները ստանալէ կտ-  
քը անմիջապէս վերադարձաւ Պառոնունիին մօտ երբ արդէն  
մութը կոխել սկսած էր :

— Եկայ Ձեր հետաքրքրութիւնը գոհացնելու, ըսաւ :  
վհեհափառ Սուլթանը վերջապէս հաճեցաւ ինձ հաղորդել թէ  
ինչ գործի սահմանած է ձեզ :

— Լաւ ուրեմն, շատ ուրախ եմ, դո՛ւնց դեղանի տիկի-  
նը, ճշմարիտը խօսելու համար այս առտուան ձեր խորհրդա-  
ւոր ձեւերը զիս քիչ մը շփոթեցուցին և ամբողջ օրը գրեթէ  
մոտատանջութեան մէջ անցուցի, վախնալով որ ինչ պահան-  
ջուածը շատ դժուար և կամ իմ կարողութենէս վեր բան մը  
պիտի ըլլայ և պիտի ստիպուիմ մերժել . . .

— Ո՛չ տիկին, ընդմիջեց պարտաականը, ինչ որ մեր  
վհեհափառ Տէրը կը պահանջէ ձեռնէ շատ դիւրին է և խնդիրը  
մի միայն ձեր կողմէ բարի կամեցողութեան վրայ է :

— Բարի կամեցողութիւն չի պակսիր քովս . . . ուրեմն  
շուտ խօսեցէք, անհամբեր ձեզի մտիկ կ'ընեմ :

— Նախ մէկ երկու հարցումներ պիտի ընեմ, եթէ կը  
ներէք :

— Ուղածնուդ չափ, փաշա, պատրաստ եմ պատասխա-  
նելու :

— Բաւական օրեր Ազիզ պէ ի հետ անցուցիք, այնպէս  
չէ՞ :

— Ամբողջ շաբաթ մը և գրեթէ ամէն ժամ միասին :

— Եւ բոլոր այդ միջոցին ձեր խօսակցութեան զլիսաւոր  
նիւթն էր երիտասարդ Թուրքերու շարժումները և Մակեդո-  
նիա դանուող մաս մը սպաներու ըմբոստութիւնը :

— Կրնամ ըսել որ ո՛չ թէ մեր խօսակցութեան զլիսաւոր  
նիւթը՝ այլ միակ նիւթ էր . . . ի բաց առեալ այն սիրային  
յայտարարութիւնները զորս ասան ասան Ազիզ պէյ ինձ կ'ուզ-  
դէր և որոնց պարտ կ'զգայի պատասխանել կարելի նշածին  
չափ քաջաշէրիչ կերպով :

— Ատիկա շատ լաւ կը հասկնամ, տիկին, որովհետեւ  
անկարելի է ձեզի հետ օր մտ անցընել առանց այդ տեսակ  
յայտարարութեան մը մղուելու . . .

— Եւ որուն ապացոյցը այն է որ դուք ալ արդէն սկսաք պատասխանեց գեղանի բախտախնդիրը ծիծաղելով, բայց կը խնդրեմ, առ այժմ թողունք սիրաբանութիւնը և մեր լուրջ խօսակցութեան վերադառնանք, այո՛, Աղիզ պէյի հետ գրեթէ բոլոր ժամանակնիս ղինքը խանդավառող խնդիրներու վերայ խօսեցանք :

— Այդ խօսակցութեանց միջոցին արդեօք գնդապետը ակնարկութիւն մը ըրա՞ւ իրենց մէկ կարևոր ընկերոջ մասին որ հոս բանտարկուած է . . . :

Կեղծ Պառոնուհին պահ մը աչքերը ցեղունը յարեց՝ մտածելու կամ իր յիշողութիւնը ամփոփելու ձեւով, յետոյ յանկարծ գոչեց .

— Այո՛, այո՛, երիտասարդ յեղափոխական մը, իրենց կարեւոր ոյժերէն մէկը . . . կեցէ՛ք անունը պիտի յիշեմ . . . Ստաբք պէյ, հախկին խմբագիր մը . . .

— Այո՛, ճիշտ այդ է, տիկին, պատասխանեց պալատականը ուրախութեամբ .

— Յանդուզն երիտասարդ մը որ մահափորձ կատարած ասին ձերբակալուած է Երլարդի պարտէզին մէջ և որ այժմ պալատը բանտարկուած կը մնայ, և որ հակառակ իր վրայ ի գործ դրուած ճնշումներուն և չարչարանքներուն չէ ուղած ո և է խոստովանութիւն ընել :

— Կը աննամ որ հրաշալի կերպով տեղեկութիւն ունիք . . . միթէ երբեք խօսք բացուեցա՞ւ այդ երիտասարդը Երլարդի բանտէն փախցնելու մասին :

— Աղիզ պէյ անգամ մը ըսաւ թէ ինք և իր ընկերները պտտրատ էին ամէն զոհողութեան, իրենց այս բանտարկեալ ընկերը ազատելու համար, բայց ո և է կարելիութիւն չկար, իր միակ յոյսն էր յեղափոխական շարժումին յաղթանակը . . . «Եթէ յաջողինք Սահմանադրութիւնը վերահաստատել թէ՛ Ստաբք պէյը և թէ՛ իրեն հազարաւոր նահատակներ ազատած կ'ըլլանք» ըսաւ անգամ մը :

— Ուրեմն Սաաբք պէյի ազատումը իրենց համար մեծ նշանակութիւն ունի...

— Բնականաբար գոչեց Պառոնուհին որ աակաւին չէր կրնար հասկնալ թէ ո՛ր յանդիլ կ'ուզէր պալատական քարտուղարը :

— Եւ կիթէ մէկը գտնուի որ յաջողի այդ Սաաբք պեյը Երլարզի բանտէն փախցնել ու ամառի իր ընկերներուն յանձնել , այդպիսի անձ մը ի՞նչ ընդունելո՞նք իւր կրնայ գտնել Ազիզ պէյի և իր ընկերներուն քով :

— Բայց կարծեմ թէ լաւագոյն ընդունելութիւնը որ կրնայ ըլլալ...

Ու այդպիսի ծառայութիւն մը մատուցանող անձը բնականաբար պիտի նկատուի իբրև անկեղծ բարեկամ մը , իրենց դատին անձնուէր պաշտպան մը...

— Եւ սակայն կարծեմ ո՛չ ոք պիտի գտնուի որ այդպիսի յանդուգն դործ մը փորձէ . . . Գնդապետը ըսաւ ինծի թէ անկարելի էր Սաաբք պէյը ազատել Երլարզէն և թէ իրենք մտքերնին չէին անցուցած այդպիսի փորձ կը ընել...

— Սիրելի Տիկին , ինչ որ Ազիզ պէյ ու իր ընկերները անկարելի կը վճռեն՝ գուցէ ուրիշներ կարենան կատարել...

— Կը խոստովանիմ որ լաւ չեմ ըմբռներ ձեր խօսքերը , ըսաւ Պառոնուհին , որուն՝ խօսակցութեան այս ընթացքը շատ արօրինակ կը թուէր :

— Հիմա աւելի բացայայտ կերպով պիտի խօսիմ , պատասխանեց պալատականը , գիտէ՞ք ձեր առաջին դործը ի՞նչ պիտի ըլլայ...

— Ո՛չ , քանի որ ժամէ մը ի վեր ձեռնէ անհամբեր բացատրութեան մը կ'սպասեմ այդ մասին :

— Լաւ ուրեմն ձեր առաջին դործը պիտի ըլլայ նախ Սաաբք պէյը փախցնել Երլարզէն...

— Սաաբք պէյը փախցնել , գոչեց Պառոնուհին ապաւած , կատակ կ'ընէք հետ...

— Ո՛չ, արիկին, շատ լրջութեամբ կը խօսիմ, նախ և առաջ Սաաթք պէյը պիտի փախցնէք Երլտըզէն և յետոյ դայն ծածկարար պիտի տանիք յանձնէք իր ընկերներուն...

— Ներեցէք, պարոն, ձեր խօսքերը այնքա՛ն սարօրինակ կը գտնեմ որ կ'սկսիմ կասկածիլ թէ...

— Խեղքս կորսնցուցած եմ...

— ... և կամ զիս յիմարի մը տեղ կը դնէք:

— Եթէ համբերութիւն ունենաք զիս լսելու՝ այն ատեն պիտի տեսնէք որ ո՛չ ես խեղքս կորսնցուցած եմ և ոչ ալ ձեզ հետ կատակաբանել կ'ուզեմ:

— Շարունակեցէք ուրեմն...

— Մեր վեհափառ Սուլթանը կ'ուզէ հաւատարիմ մէկը ունենալ յեզափոխականերու բո՛ւն կեդրոնին մէջ, սրպէս զի օրը օրին անցած զարձածը տեղեկագրէ իրեն. այսպիսի անձ մը սրպէս զի օգտակար կարենայ ըլլալ՝ հարկ է որ միևնոյն ատեն խեղափոխականներու կատարեալ վստահութիւնը վայելէ: Այդ, եթէ Սաաթքը փախձնէք և իրենց տանիք՝ այն ատեն իրենց բացարձակ վստահութեանը պիտի կրնաք արբանալ և ձեր տեղեկատուի պաշտօնը հիանալի կերպով կատարել... այժմ հասկցաք կարծեմ թէ ի՞նչ է մեր վեհափառ Տիրոջ ծրագիրը:

— Հիանալի, գոչեց Պառոնուհին խանդավառուած, հանձարեզ սատանայական ծրագիր ... և Սուլթանը ի՞նքն է որ մտածեց այս:

— Ուրիշ ո՞վ կրնար այսպիսի խորհուրդ մը յղանալ...

— Բայց ուրեմն շա՛տ խելացի վեհապետ մը ունիք...

Միթէ իր համաւը չէի՞ք լսած արդէն... այժմ շափազանց խելացի է մեր Սուլթանը, մանաւանդ այսպիսի ծրագիրներ յղանալու համար: Ուրեմն, Տիրիկին Պառոնուհի, կ'ընդունիք ձեզի տահմանուած այս գրեթէ հերոսական գերը կատարել:

— Ամենայն հաճութեամբ, միայն թէ ի՛նչպէս պիտի ը-

նենք որ երևոյթները փրկենք ու կեզծիքը երևան չըլայ:

— Այդ մասին ալ մեր վեհափառ Տէրը ամէն ինչ խորհած է:

— Իսկ յեղափոխաններուն քով իմ պաշտօնս մի միայն տեղեկատուութիւն պիտի ըլլայ:

— Այո՛, նախ ձեր կողմէ տեղեկութիւններ պիտի տաք, յետոյ պիտի ջանաք պատասխանելու բոլոր այն հարցումներուն որոնք ձեզի պիտի ուղղուին... առ այժմ այս է ձեր գործը:

— Առ այժմ... ինչ ըսել կուզէք:

— Այսինքն ըսել կ'ուզեմ թէ դուք ապագային ուրիշ ծառայութիւններ ալ խնդրենք ձեռնէ, տեղեկատուութիւնէ դատ: Բայց հարկ չկայ այս մասին հիմակուինէ խօսելու...

— Գալով Սատրգ պէյի՝ անշուշտ ես չեմ որ պիտի երթամ իր բանալին դռները խորտակելու և զինքը իր շղթաներէն ազատելու, այլ դուք զայն պիտի բերէք ու յետոյ լուր հանէք թէ զինքը փախուցած եմ...

— Ինչպէ՛ս, տիկին, բայց յաջողութեան էական պայմանը այն է որ նախ Սատրք պէյ կատարելապէս համոզուի, առանց ու է է կասկածի թէ դուք զինքը փրկած էք. առանց ասոր մեր ծրագիրը ջուրը կ'իյնայ, հետեւաբար ես չեմ որ պիտի բերեմ զինքը հոս, այլ դուք պիտի գաք Երլարզ ու վարպետութեամբ պիտի ազատէք բանտարկեալը:

— Ա՛հ, բնաւ չմտածեցի այդ կէտը, գոչեց Պառսնուհին ձեռքը ճակտին տանելով... այնքան տարօրինակ ու երեւակայութիւնէս հեռու ծրագիր մը պարզեցիք որ շիտակը մտքիս ուղղութիւնը կորսնցուցի... այո՛, իրաւունք ունիք, նախ պէտք է որ Սատրք պէյին վտահաթիւնը չահինք:

— Ասոր համար վազն իսկ Երլարզ պիտի գաք և նախ վեհափառ Սուլթանին ներկայանալէ ետքը:

— Սուլթանին պիտի ներկայանամ, գոչեց զեղանի տիկինը ու բախութեամբ:



— Այս՛, մեր Վեհափառ Տէրը շատ կը փափաքի ձեզի հետ անձամբ ծանօթանալ . . . յետոյ ձեզ կը բաձատրենք թէ ի՛նչպէս պիտի պատրաստենք փախուստի ծրագիրը . . . այս գործը քայլի մը օրուան մէջ պէտք է կատարուի :

— Բայց ի՛նչ տիպազտով պիտի ներկայանար Սուլթանին :

— Երբև եւրոպացի ազնուական տիկին մը . . . բայց ոչ երբևք իբրև սը Ծօմօն Պառօնուհի, որովհետև այդ անուրբ քիչ մը վտանգուած է և ծանօթ .

— Ճիշտ ես ալ այդ գիտողութիւնը պիտի ընէի :

Իզգէթ փաշա տակաւին ժամի մը շափ մնաց դեղանի օտարուհիին քով և անոր մանրամասնօրէն բացատրեց թէ Սուլթանին ներկայացած պահուն ի՛նչ գիրք պիտի բռնէր և միևնոյն ատեն մէկ քանի պալատականներու մասին ծանօթութիւններ տուաւ : Սուլթանին քարտուղարի զգացած էր որ այդ կինը շատ խելացի ու ճարպիկ էր և պիտի կլնար գիւրար իր Վեհափառ Տիրոջ վստահութիւնը շահիլ, ասոր համար առաջուց կ'ուզէր անոր հետ մտերմական կապեր հաստատել և զայն իրեն հետ ունենալ : Միւս կողմէ կը վախնար որ կնոջ ապապագայ յաջողութիւնները պիտի նպաստէին նաև Բարիզի դեսպանին և այս կէտն էր որ զինքը մտատանջութեան կը տանէր :

Հետևեալ օրը արդարև Պառօնուհին զնաց պալատ և ներկայացաւ Սուլթանին որ շատ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ իրեն :

Շաբաթ մը ետքը տարօրինակ լուր մը տարածուեցաւ պալատին մէջ : Եւրոպայի ազնուական կինը որ Սուլթանին հիւր եղած է և Երլտնզի կանանոցին մէջ յարկաբաժին մը արամադրուած էր իրեն՝ յանկարծ անյայտ եղեր էր . . . իրեն հետ անյայտացած էին նաև պալատական ըմբիշ Սուտայնի ապու Սամաք և իր ընկերը բանտապահ Ալի, ինչպէս նաև այդ երկուքին պահպանութեանը յանձնուած բանտարկիւնը յեղափոխական Սատրք պէյը : Կ'ըսուէր թէ Սպտ—իւլ—Համլու

կառաւորի բարկութեան մը մէջ կը գտնուէր, թէ երես դար-  
ձուցած էր Իզզէթ փաշայէն որ այդ կիներ մտցուցած էր պա-  
լատ ու զայն Սուլթանին ներկայացուցած՝ իրրեւ մեծ ազնուա-  
կանուհի մը: Նոյն իսկ իրարու կը փոփսալին թէ Սուլթանը  
ապտակած էր Իզզէթ փաշան և թէ զայն հաւանորէն Սուրիա  
պիտի աքսորէր: Ծանօթ յեղափոխանին և կնոջ ու երկու բա-  
տապահներուն փախուսան ու անյայտացումը այնքան լաւ  
կերպով կատարուած էր որ ոչ սք ստոյք տեղեկութիւն մը  
ունէր և ամենքը զանազան ձևերով կը պատմէին զէպքը:  
Յայտնի իրողութիւնը այն էր որ այդ փախուստը կաղմակեր-  
պուած էր ազնուական օտարուհիին ձեռքով որ յաջողած էր  
մեծաքանակ դրամով կաշառել Ապու Սամաքն ու իր ստո-  
սաղաս ընկերը: Այս անօթ կնոջ մասին ամենէն տարօրի-  
նակ շուկները կ'ըջէին, նոյն իսկ պնդողներ կային թէ այդ  
կիներ ուրիշ մէկը չէր այլ բո՛ւն Սալիհա հանըմը որ կրցած  
էր ամենքը խաբել ու իբրեւ Երոպացի Երլարզ մանկ ու  
Սուլթանին վստահութիւնը գրաւել: Պալատականները սար-  
սափանար կ'սպասէին տեսնելու համար թէ ի՞նչ հետեւանք  
պիտի ունենար այս անօրինակ զէպքը. որովհետեւ կ'ըսուէր  
թէ մէկ քանի կարեւր պալատականներ մասնակից էին գոր-  
ծին և թէ Սուլթանը սրտած էր խիստ քննութեան մը կն-  
թարկել ամբողջ Երլարզի մարդիկը: Ժամէ ժամ կը սպասէին  
Իզզէթի անկումին ու աքսորուելուն: Ապտ—իւլ—Համիտի  
սիրական քարտուղարը այդ փախուստէն ի վեր իր Շիշլիի ա-  
պարանքը քաշուած՝ պալատ օտք չէր դնել և կ'ըսուէր թէ  
իր բնակարանը չղթալի տակ առնուած էր:

Փախտականները գտնելու համար ծայարայնից միջոցներ  
ձեռք առնուած էին և սակայն ո և է արդիւնք չէր տուած . . :

Այս զէպքը այնքան զէչ աղդեցութիւն ըրած էր Սուլ-  
թանին վրայ որ յուզումէն ու բարկութենէն հիւանդացած էր:

Ահա՛ այն բոլոր խօսքերը որոնք կը լսուէին Երլարզի մէջ  
ականջէ ականջ Ապտ—իւլ—Համիտ իր խաղը այնքան լաւ

կերպով պատրաստած էր որ պալատին մէջ հաղիւ կրեք չորս հոգի գիտեր ընէն իրողութիւնը, և անոնք ալ ո՛չ միայն և բեան չէին հաներ, այլ նոյն իսկ ամենէն աւելի կ'աշխատէին չինծու լուրերով միտքերը շուարեցնելու :

Մինչ այս կեղծ իրարանցումը կ'ստեղծուէր պողատին մէջ և ամբողջ սպիկանութիւնն և լրտեսները հեի՛ն և կ'աշխատէին՝ միամտաբար՝ փախտականները գտնելու և խտտացուած մեծամեծ պարգևներուն արժանանալու համար, ևս Սամաք ամենայն հանդարտութիամբ, իր ընկերոջ Ալիի հետ կը հասնէր Եգիպտոս ու կը պատրաստուէր իր երկիրը վերադառնալու, ուր կը յուսար իշխանական կեանք մը վարել՝ շնորհիւ իր դիզած հարստութեան :

Իսկ աղատաբար Պառոնուհին ու մեր բարեկամ Սատրք պէյ հասած էին Սոփիա, ուրկէ կը յուսային միջոց մը գտնել երթալ իրենց ընկերներուն միանալու համար: Ծափափնասիկին խմբագիրը աղատութիւնը ձեռք ձգելէ ետքը շուտով կազդու, բուեր ու իր տանջանքները մոռցէր էր: Իր հրաշալի ազատումը այնքան արտասովոր պարագաներու տակ տեղի ունեցած որ տակաւին չէր կրցած զայն լաւ մը ըմբռնել և իրեն այնպէս կը թուէր թէ բոլոր ասոնք հաճելի երազ մըն էին որուն պիտի յաջորդէր յանկարծ զարթնումը. Երբտղի գնասնին մէջ :

Մինչև Սոփիա ժամանակ չէր գտած կամ մանտանդ չէր ուզած իր դեղանի ազատարարը հարցուփորձելու, իր ամբողջ ուշադրութիւնը նուիրած ըլլալով ձեռք չէինալու և անգամ մը ինքզինքը սահմանազլխէն անդին նետելու մտատանջութեան: Բայց երբ որ ապահով կերպով հասան պուլկարական մայրաքաղաքը, ուր ա՛յ համխտական հետապնդումներէ վախ չունէին, ուզեց քիչ մը լուսաբանուիլ անցած դարձածներու մասին: Այս արդար հետաքրքրութիւնը դոհացնելու համար Պառոնուհին դժուարութիւն ցոյց չտուաւ :

— Ձեր ազատութիւնը, ըսաւ Սատրք պէյի, ինչ աւելի  
ձեր մէկ ընկերոջ կը պարտիք:

— Ո՞վ է արդեօք այս սիրելի ընկերը, ըսէ՛ք իր անունը  
որպէս զի երախտագիտութեամբ յաւիտեան արձանագրուած  
մնայ սրտիս մէջ:

— Այդ ընկերնիդ է գնդապետ Ազիզ պէյ, այն արի ու  
անձնուէր յեղափոխականը որ Բարեգի Նէշտասէր կեանքը թող-  
լով այս միջոցիս գացած է իր ապրտամբ ընկերներուն քով  
անոնց հետ իր կեանքը զոհելու հայրենիքին ազատութեանը  
համար:

Եւ գեղանի տիկինը մանրամասնօրէն պատմեց թէ ինչ-  
պէս ուղեւորութեան մը միջոցին դիպուածով ծանօթացեր էր  
յեղափոխական գնդապետին հետ, թէ ինչպէս ամբողջ շարաթ  
մը միասին անցուցած էին ու Ազիզ պէյ իր վտանգութեամբը  
պատուեր էր զինքը շատ մը կարեւոր ու ծածուկ անգնկու-  
թիւններ տալով յեղափոխական կողմակերպութեանց մասին,  
և թէ ինչպէս մաղ մնացեր էր որ Պատմունհին ընկերանոր  
գնդապետին մինչև ապստամբութեան կեդրոնը:

Սատրք պէյ հիացումով մտիկ կ'ընէր այս գեղանի կնոջ  
ու կ'սքանչանար վրան:

— Մեր խօսակցութեանց միջոցին, շարունակեց Պատ-  
մունհին, մէկ քանի անգամ ալ ձեր խօսքը բացուեցաւ և ան-  
սայ թէ որքա՞ն կը տառապէր ձեր ազնիւ ընկերը յիշելով ձեր  
գերութիւնն և կրած չարչարանքը Երլարզի գնտանին մէջ:  
«Իցի՛ւ թէ ժամ առաջ յաջողցնէինք ազատութեան յարթա-  
նակը և կարենայինք ողջ առողջ գնտանէն փրկել մեր սիրելի  
Սատրք պէյը» կը կրկնէր ձեր ընկերը: Հաւատացէ՛ք որ մէկ  
չարաթը բաւական եղեր էր զիս բոլորովին կապուելու ձեր  
ազնիւ գատին, բոլորովին խանդավառուեր էի լսելով  
ձեր կրած անտանկի տառապանքը Ազաթիւ Համի-  
տի բռնակալութենէն և անկէ փրկուելու համար ձեր անձնա-  
զոհութիւնները...: Երբ Հոմի մէջ բաժնուեցանք Ազիզ պէ-  
յէն՝ միակ սուեռուն գազափստ մը ունէի՝ այն է ո և է կեր-

պով օգտակար ըլլալ ձեր աղատագրական շարժումին : Յանկարծ գաղափար մը միտքս ծնաւ , յանդուզն , խօսական , բոլորովին վիպային գաղափար մը , այն է՝ Պոլիս գալ և ձեզ ազատել . . . : Մտքիս մէջ հողար ու մէկ ծրագիրներ կը յղանայի՝ մին միւսէն աւելի արտաուայ և անդործադրելի և սուկայն անկարելի էր բաժնուիլ այդ մտածումէն որ ա՛յլ յաճախանք մը դարձած էր . . . : Ճար չկար , պէտք էր որ նեսուէի այս արկածախնդիր գործին մէջ : Շնորհիւ իմ ունեցած բարձր յարաբերութիւններուս կրցայ նոյն իսկ Հոսմի մէջ յանձնարարականներ ձեռք բերել որոնց շնորհիւ կը յուսայի , Կ . Պոլսոյ մէջ , պալատականներու հետ ծանօթանալ և միջոց մը գտնել երջարգ մանկու , թէև սակաւին որոշ ծրագիր մը չունէի թէ ի՞նչ միջոցաւ պիտի կրնայի ձեզ ազատել : Յոյսս Աստուծոյ վրայ զրած էի պարզապէս և ներքին ձայն մը կ'ըսէր թէ պիտի յաջողէի :

Երիտասարդը հիացիկ մտիկ կ'ընէր այս մտայածին պտտմութեան , առանց համարձակելու բառով մը գայն ընդմիջել : Գեղուհին պատմեց թէ ի՞նչպէս Պոլիս հասնելով՝ անմիջապէս իր յանձնարարականներուն շնորհիւ յարաբերութեան մտած էր Իզզէթ փաշայի հետ , յետոյ Սուլթանին ներկայացած , կանանոցին մէջ հիւր եղած և վերջապէս միջոցը գտած էր Ապու Սամարը գտնելու և պալատականի մը մեղսակցութեամբ , որուն անունը սալ չուզեց և որ իբր թէ իրեն սիրահարած է եղեր , գայն ու իր ընկերը կաշատել ու Սատրք պէյր փախցընել : Եւ այս ամէնը շարաթուման մը միջոցին :

— Ծշմարիտը անհաւատալի է այս պատմութիւնը , եզրակացուց Պաուսուհին , և ես անգամ երբ կը մտածեմ չեմ կրնար բացատրել թէ ի՞նչպէս պարագաները այսքան հիանալի կերպով օգնեցին ինձի . . . անպատճառ Նախախնամութեան միջամտութիւնը կայ գործին մէջ և մեր պարտականութիւնն է անոր շնորհակալ ըլլալ . . . :

Սատրք պէյ ինքն ալ արդարև շատ սարօրինակ կը զըստ

ն էր այս ամենքը, սակայն իրողութիւն մը կար մէջանդը, այն է թէ՛ ինք ազատ էր այս միջոցիս ասիկա բաւական էր:

— Տիկին, ըսաւ յուղուած ձայնով մը, ինձի հանդէպ անձնութիւնս այնպիսի գործ մը կատարած էք որ որքան ալ մեծ ըլլայ երախտագիտութիւնս դարձեալ չպիտի կրնայ հուսաարիլ ձեր բարերարութեան:

— Տակաւին իմ վրաս պարտադրած պաշտօնս ամբողջովին չեմ կատարած, պատասխանեց Պառնուհին համեստութեամբ, ուստի երախտագիտութիւննիդ յայտնելու ժամանակը չէ հասած . . . :

— Բայց տակաւին ի՞նչ կուզէք ընել, գոչեց երիտասարդը:

— Ես ուխտած եմ ձեզ իմ ձերքովս տանիլ ձեր ընկերներուն քով . . . :

— Բայց չափազանց է ատիկա և չարժեր ձեր անձը վըսանգել . . . :

— Եթէ ընդդիմանանք իմ այս խորհուրդիս՝ հաւատացէ՛ք խիստ կը վշտացնէք զիս և ձեր երախտագիտութիւնը շատ գէշ կերպով յայտնած կ'ըլլաք:

Երիտասարդը լռեց՝ չուզելով վիշտ պատճառել իր ազատարարին:

— Այո՛, շարունակեց Պառնուհին, միաքս դրած եմ երթալ Աղիդ պէյը գտնել և ցոյց տալ անոր որ շատ անգամ կին մը առանձին կրնայ ընել այնպիսի բաներ զօրս հերոսներու ամբողջ բանակ մը կարող չէ լնելու . . . :

Ստորք պէյ թէև կրկին փորձեց զեզաշի օտարուհին ետ կեցնել իր վտանգաւոր խորհուրդէն, սակայն անկարելի եղաւ. իր ամէն բանաւոր առարկութիւններուն Պառնուհին մէկ խօսքով միայն կը պատասխանէ.

— Միաքս դրած եմ և պիտի կատարեմ որոշումս:

Երիտասարդը՝ ճարահատ՝ ստիպուեցաւ զլուխ ծռել: Հիմա կը մնար միջոցը գտնել միջև Իւսկիւպ երթալու և իրենց

աստուամբ ընկերներուն միանալու : Միակ հնարաւոր ճամբայ մը կար , այն է Մակեդոնական յեղափոխական աջակցութեան դիմել : Այս քօմիթէն , որուն կեդրոնը Սօֆիայէր , կրցած էր Մակեդոնիոյ ամէն կողմերուն հետ կանոնաւոր յարաբերութիւն հաստատել իր հրոսախումբերուն միջոցաւ :

Սատըք պէյ իր ծրագիրը պարզեց Պառոնուհին :

— Շատ լաւ խորհած ես , ըսաւ այս վերջինը , այո՛ , ուրիշ ճար չկայ պէտք է խելոյն քօմիթէին դիմել :

Երիտասարդը գնաց քօմիթէի կեդրոնատեղին ուր ինք գինքը ճանչցուց . իր անունը ծանօթ էր արդէն յեղափոխականներուն , որոնք շատ սիրալիր ընդունելութիւն մը ըրին իրեն ու երբ իր արկածալից ու վիպական ազատամը լսեցին խանդավառուած ուզեցին ճանչնալ ազատարար տիկինը : Սատըք պէյ քօմիթէի երևք անդամներուն ընկերակցութեամբ եկաւ պառոնուհին քով : Այն տեղ Սատըք բացատրեց թէ ի՞նչ ծառայութիւն կը խնդրէին ինք ու տիկինը Մակեդոնական քօմիթէէն :


Երբ պուրկար յեղափոխականները ամենայն հաճութեամբ խոստացան իրենց աջակցութիւնը : Խնդրուածը շատ դիւրին բան մըն էր քօմիթէին համար , որ ինչպէս ըսինք . կանոնաւոր հազորդակցութեան մէջ էր ամբողջ Մակեդոնիոյ հետ :

Հետեւեալ օրն իսկ Սատըք պէյ պառոնուհին և քօմիթէէն անդամ մը ճամբայ եկան Սօֆիայէն դէպի սահմանադրուիս , ուր քօմիթէի անդամը զիրենք պիտի յանձնէր հրոսախումբի մը պաշտպանութեան որպէս զի կարենային անվտանգ մինչև իրենց ընկերներուն քով հասնել :

Պառոնուհին մեկնելէն առաջ կրցած էր երկտող մը զրկել Իզդէթ փաշայի որ իրեն մասնաւոր հասցէ մը տուած էր , հետը թզթակցելու համար :

«Ամէն բան յաջող է , կը գրէր պառոնուհին : Մակեդոնական քօմիթէին աջակցութեամբ պիտի սնցնինք սահմանա-

Քրիստոսն և Երթանք Իւսկիւպ, Սատրքի ընկերներուն միանալու: Այսօր կը մեկնինք: Սատրք կոյր վատահալիւն ունի վրաս և իրապէս հուտացած է որ ևս եւ իր սղատարարը:»



Գ Լ Ո Ւ Խ Ի Ա.

## Ա Ն Ա Կ Ն Կ Ա Լ Մ Ը

Գնդապետ Ազիզ պէյ զոր Հասաի մէջ թողուցինք, իր ճամբան շարունակած և եկած էր Չէթինէ, ուրկէ պիտի երթար Գարատաղի սահմանազուխը, անկէ Թուրքիա մտնելու համար: Այնպէս կարդադրուած էր որ Չէթինէի մէջ պիտի դար իրեն միանալու յեղափոխական ընկերներէն մին և իմաց տալու թէ ի՞նչ միջոցներով պիտի անցնէին սահմանազլսէն:

Ազիզ պէյ երեք օրէ ի վեր Չէթինէի մէջ այդ ընկերոջ կ'սպասէր, երբ առտու մը կանուխ եկան իր դուռը բաղխեցին, մինչ ինք խոր քունի մէջ էր: Գնդապետը ըմբոստ արթննալով՝ անկողնէն վար ցատկեց և վաղեց դուռը բանալու:

Յանկարծ դարմացական աղաղակ մը արձակեց իր դէմը գտնելով անձ մը՝ որուն չէր սպասէր սպահովաբար:

— Հասա՛ն պէյ, գոչեց գնդապետը, դուք հոս ի՞նչ բան ունիք...:

— Թոյլ տուէք որ նախ ներս մտնեմ և յետոյ կը պատմեմ ամէն բան:

Գնդապետը մէկ կողմ քաշուեցաւ և նորեկը, որ երիտասար դու գեղադէմ գինուորական մըն էր, ներս մտաւ:



— Ես, ըսաւ Ազիզ պէյ, երեք օրէ ի վեր անհամբեր կ'սպասէի մեր ընկերներէն մէկուն, բայց ո՛չ ձեզի...

— Լաւ ուրեմն բախար այնպէս ուզեց որ ես լլլամ եկողը:

— Բայց ինչպէ՞ս թողուցիք ձեր կարեւոր պաշտօնը սահմանազլխին վրայ... ասիկա կրնայ ծանր կասկածներ յարուցանել:

— Ա՛յ պաշտօն չունիմ...

— Ի՛նչ... դո՛ւք ալ մասնուեցաք:

— Այնպէս կ'ենթադրում... խնդիրը այն է որ պատերազմական նախարարէն հեռագիր ստացայ անմիջապէս Պոլիս դառնալու, ուր իբր թէ քոյրս ծանրապէս հիւանդ է եղեր...

— Բայց գուցէ ճշմարիտ է...

— Ո՛չ, քանի որ հեռագիրը ստանալէս օր մը ետքը քերովմէս նամակ առի որուն մէջ իր շատ առողջ ըլլալը կը գորէր... բայց միայն այդ չէ: Գիտէ՞ք ինծի ո՞վ յաջորդ նշանակուած է... հազարապետ Սամի փաշան՝ նոյնինքն Սուլթանին ամէնէն հաւատարիմ լրտեսներէն մին որ իբրև քննիչ այս միջոցիս Իսկիլուպ կը գտնուի և որուն գործը ուրիշ բան չէ՝ այլ բոլոր կասկածելի նկատուած սպաներուն ցուցակը պատրաստել:

— Բայց ձեր վրայ ի՛նչպէս կրնան կասկածիլ, մանաւանդ որ Ապտիել Համիտի պաշտպանեալը ճանչցուած էք և երկրզլի մէջ հօր նեցուկներ ունիք:

— Կ'երեւայ որ որոշ մասնութիւն մը եղած է... բայ ի ինէ ուրիշ ութը սպաներ ալ որոնք ազատական ու յիզափոխական կը համարուինս հրաման ստացած են Իսկիլուպ երթալու... իմ քաղած տեղեկութիւններէս այնպէս կը հասկցուի թէ բոլոր այս իրարանցումը ձեր պատճառաւն է...:

— Ի՞մ պատճառաւս...

— Այո՛, ես հակառակ հեռագրին՝ չմեկնեցայ և սպասեցի իմ յաջորդիս գալուն, որ հասնելուն պէս ծայրայիզ զգուշու-

թիւններ ձեռք առնել սկսաւ սահմանազլխին վրայ ու վերջապէս իմացայ թէ այդ ամենքը կ'ըլլային, որովհետեւ լուր առնուած էր թէ խիստ վտանգաւոր թուրք յեղափոխականներ Գարատազի սահմանազլխէն թուրքիա պըտի մտնէին... արդ, միայն դուք կայիք այս կէզմէն եկող: Հասկցայ թէ ի՞նչ փորձանք կ'սպսէր ինծի եթէ Պոլիս երթայի, ուստի նախամեծար համարեցի խոչս տալ ու ձեզի պատմել ամէն բան:

Երկու զինուորականները երկարօրէն խորհրդակցեցան, երկուքն ալ համոզուած էին որ մատնութիւն կար գործին մէջ, սակայն չէին կրնար երեւակայել թէ ուսկից կուգար հարուածը:

Ի վերջոյ գնդապետ Ազիզ պէյ ըսաւ վճռաբար.

— Ինչ որ ալ ըլլայ, այլես ես չեմ կարող դառնալ, պէտք է որ անցնիմ սահմանազլուխէն...:

— Այո՛, իրաւունք ունիք, գոչեց Հասան պէյ խանդավառուած, կ'սպասէի որ այդպէս խօսիք. այո՛, պիտի փորձենք անցնիլ և մեր ընկերներուն միանալ, հակառակ լրտես Սամի փաշաներու ձեռք առած միջոցներուն:

— Ի՞նչ, դո՛ւք ալ կ'ուզէք միասին գալ...:

— Բնականաբար. միթէ ժամանակը չէ մեր զիմակները վար առնելու և բացէ ի բաց կռիւ մղելու բռնակալութեան դէմ... ու յետոյ կը կարծէ՞ք որ ձեզի առանձին թողելու վստուութիւնը պիտի գործեմ...:

Այո՛, իրաւունք ունիք, սիրելի Հասան պէյ, միասին պիտի երթանք... շատ անձնազօհութիւններու պէտք ունիք մեր հայրենիքը վրկելու համար:

Ազիզ պէյ տենդային ածապարանքով մը հագուեցաւ և իր ընկերոջ հետ դուրս ելաւ պտոյտ մը ընելու:

Հասան պէյ, որ բաւական ատենէ ի վեր Գարատազի սահմանապահ զօրագունդին հրամանատարն էր՝ շատ լաւ կը սահմանապահ զօրագունդին հրամանատարն էր՝ շատ լաւ կը ձանձնար արն տեղերը ուրկէ պիտի անցնէին թուրքիա մտնելու համար և իր ընկերակցութիւնը մեծ օժանդակութիւն մը

պիտի ըլլար Ազիզ պէյի համար, որ անկէ աւելի լաւ առաջ-  
նորդ մը չէր կրնար ունենալ: Միայն թէ մէկ առաջնորդը  
բաւական չէր և այս կէտը մտածել կուտար յեղափոխական  
զնյապետին:

— Բայց միայն երկու հոգի պիտի կրնանք ի գլուխ հա-  
նել այս գործը, ըսաւ իր ընկերոջ:

— Ես մենէ զատ դեռ երկու հոգի ալ կը արամադրեմ  
պատասխանեց Հասան պէյ:

— Ո՞վ են այդ մարդիկը...

— Երկու հայրենակից Չէրքէզ զինուորներ, որոնք երբ  
իմացան թէ պիտի թողում հեռանամ բանակէն, որովհետեւ  
իրենց յայանեցի խորհուրդս, գիտնալով իմ մասիս ունե-  
ցած անսահման սէրն ու համակրանքը, այդ երկու կարիճ-  
ները չուզեցին ինէ բաժնուիլ և իրենք ալ զասալիք կզած՝  
զէնքերնին առին ու ինծի հետեւեցան...

— Եւ հիմա հո՞ս կը գտնուին:

— Այո՛, մեր հրամանին տակ ու պատրաստ մեզի համար  
կեանքերնին զոհեցու...

— Չըսէ՞ք որ մեր արշաւախումբը արդէն պատրաստ է  
կզէր, գոչեց Ազիզ պէյ որուն մտահոգութիւնը փարատած էր  
ուրեմն անմիջապէս մեկնինք, երբ տակաւին Սամի փաշա իր  
ծուղակը չէ լարած սահմանադրին երկայնքը...

— Վստահ եղի՛ր որ անոր ծուղակներէն բռնուող աղ-  
ուէսներ չենք մենք...

— Ամէն պարագայի մէջ ուխտենք սղջ չիյնալ Համիտի  
ճանկը...

Երկու բարեկամները ամբողջ օրը անցուցին իրենց պատ-  
րաստութիւնները տեսնելով և հետեւեալ առտու արշալոյսին  
չորս հոգիէ բաղկացած փոքրիկ խումբը ձիով ճամբայ ելաւ  
Չէթրնեէն ու կորսուեցաւ Գարատաղի լեռներուն մէջ:

Երբ սահմանադրութիւն մօտեցան՝ Հասան պէյ առաջարկեց  
մանրագննին քննութենէ մը ետքը որոշել թէ ո՞ր կէտէն պիտի

մանէին ներս : Այդ քննութիւնն ինք առանձին պիտի կատարէր և յետոյ պիտի գար Ազիզ պէյի իմացնել արդիւնքը :  
Մութը պատած էր արդէն ամէն կողմ և Ազիզ պէյ երկու Ձէրֆէզ զինուորներու հետ Գարատաղցի լեռնականի մը հիւղակին մէջ անհամբեր կը սպասէր իր ընկերոջ վերադարձին՝ երբ Հասան պէյ ներս մտաւ .

— Օ՛ն ըսաւ , ճամբայ ելլանք և օդուա քաղինք զիշերուան մութէն՝ որովհետեւ սահմանազլուխին ամբողջ կրկայնքն արտաստվոր հոկողութիւն մը ձեռք առնուած է . . .

Ձիերը պատրաստ կ'սպասէին արդէն և փոքրիկ խումբը անմիջապէս ճամբայ ինկաւ : Սասափելի ցուրտ մը կար և լեռներու կատարները ձիւնով ծածկուած էին , բայց չորս մարդիկն ալ լաւ պատսպարուած էին իրենց հասա վերարկուենքուն մէջ :

Երկու ժամ անընդհատ ձիավարեցին Հասան պէյի առաջնորդութեամբ որ լուռ ու մունջ իր ձին կը քշէր խորտուբորտ արահկոտներու մէջէն : Ատեն ատեն՝ հեռուն՝ սահմանապահ զինուորներու վառած խարոյկները կ'երեւային : Յանկարծ Հասան իր ձին վազցնել սկսաւ , իր ընկերները հետեւեցան իրեն՝ առանց այս յանկարծական վազքին պատճառը հասկնալու : Հիմա ո՛չ խարոյկ և ո՛չ ալ մարդկային էակ մը : Թանձր ամպեր երկինքը ծածկած էին ու կատարեալ խաւար կը տիրէր ամէն կողմ : Հասան պէյ հետզհետէ կ'արագէր իր ձիուն ընթացքը , որուն դժուարաւ կրնային հետեւիլ իր ընկերները , թէև ամէնքն ալ քաջ հեծնողներ էին :

Վերջապէս ձիերը՝ չնչասպառ դադրեցուցին իրենց վազքը :

— Ո՛ւր կը գտնուինք , հարցուց Ազիզ պէյ իր բարեկամին .

— Կէս ժամէ ի վեր սահմանազլուխը անցած ենք , պատասխանեց չէրֆէզ գնդապետը իր ձին միշտ առաջ քշելով :

— Ուրեմն ա՛լ վաանդ չկա՛յ . . .

— Ո՛վ գիտէ . . . ըստ իմ ենթադրութեանս պէտք չէ որ  
ըլլայ, քանզի այս կողմերը ընդհանրապէս հսկողութիւնը չստ  
թոյլ է, սովորական ճամբաներէն հեռու ըլլալուն. այսուհան-  
դերձ կրնայ պատահիլ Սամի փաշա այս կողմերուն ուշադրու-  
թիւն դարձուցած ըլլայ . . . ժամէ մը միայն կրնանք մեր վի-  
ճակին վրայ սրոշապէս ապահով ըլլալ :

— Ինչպէ՞ս հարցուց Ազիզ պէյ :

— Երբոր հասնինք այն արպանական գիւղը ուր կ'եր-  
թանք . . .

— Միթէ բարեկամներ ունիք հոն . . .

— Բնականաբար . . . միայն թէ խնդիրը մինչև հոն հաս-  
նիլն է :

Կարծես չէրքէզ գնդապետին այս մտահոգութիւնն արդա-  
րացնելու համար յանկարծ հրացանի ձայներ լսուեցաւ դէպ ի  
փոքրիկ խումբին կողմը ուղղուած :

— Մեզ կը հալածեն, գոչեց Հասան պէյ :

Նոր հրացանաձգութիւն մը լսուեցաւ կրկին ու գնդակ-  
ները սուլելով իրենց գլխուն վրայէն անցան :

Երկու չէրքէզ զինուորները խսկոյն իրենց հրացանները  
ուղղեցին ձայնին եկած կողմը և պատրաստուեցան կրակ ընե-  
լու :

— Չըլլայ որ հրացան քաշէք, հրամայեց Հասան պէյ,  
ջանանք որ փախչինք ու հեռքերնիս կորսնցնենք . . .

Եւ իր ձին մտրակից : Բայց նոյն միջոցին ճիշդ իրենց  
յառաջացած կողմէն ալ հրացանի ձայներ սկսան լսուիլ դէպի  
իրենց ուղղուած :

— Պաշարուած ենք, ըսաւ Ազիզ պէյ խուլ ձայնով մը :

Չէրքէզ գնդապետը յուսահատ ակնարկ մը պտտուցուց մը-  
թութեան մէջ, յետոյ իր ընկերներուն դառնալով, ըսաւ .

— Վար իջէք ձիերէն ու ջանացէք ծածկուիլ :

— Բայց ո՞ւր կարելի է ծածկուիլ, գոչեց Ազիզ պէյ :

Հրացանաձգութիւնը կը շարունակուէր երկու կողմէն: Չորս մարդիկը ձիերէն իջած էին արդէն և վարանտա շուրջերնին կը նայէին, առանց կարենալ որոշում մը ապու:

— Ետեւէս եկէ՛ք, հրամայեց Հասան պէյ և մութին մէջ արագ քայլերով յառաջացաւ դէպի մօտակայ բլրակ մը որ ժայռերով ու մացառներով ծածկուած էր և որուն վրայ մազլցեցան բաւական դժուարութեամբ:

Հրացանի ձայները հետզհետէ կը մօտենային և յայտնի կը տեսնուէր թէ բազմաթիւ խումբ մըն էր զիրենք հալածողը:

Բայց առ այժմ երկու զինուորները ապահովութեան մէջ էին և հրացանի զնտակներէն վախ չունէին:

Ժայռերու ծերպերուն մէջ կծկաած, իրենց զէնքերը ձեռքերնին, չորսն ալ լուռ ու մունջ կ'սպասէին, մինչ հրաձանաձգութիւնը կը շարունակուէր:

Առտուան ժամը չորսն էր արդէն և մէկ երկու ժամ ետքը խաւարը կը փարատէր կամաց կամաց: Հիմա հրաձանաձգութիւնը ընդհատ ընդհատ տեղի կ'ունենար: Այնպէս կը թուէր թէ հալածողները լուսնալուսն կ'սպասէին վճռական յարձակումին համար: Հասան պէյ պահ մը դուրս կ'աւ իր թաքստոցէն և չորս կողմը աչքէ անցնելէ ետքը վերադարձաւ իր ընկերներուն քով,

— Ամէն կողմէ պաշարուած ենք. յայտարարեց, և փախուստի ո և է, հնարք չկայ:

— Միթէ շատու՞ր են, հարցուց Ազիզ պէյ:

— Կարծեմ մօտաւորապէս չորս հարիւր հոգի ըլլալու են, եթէ ո՛չ աւելի:

— Ուրեմն ամէն մէկէրնիս հարիւր հոգիի դէմ կուուելու ստիպուած ենք... չխտակը քիչ մը դժուար կացութիւն, ըսաւ Ազիզ պէյ դառն ժպիտով մը:

— Ո՛չ թէ դժուար՝ այլ բացարձակապէս յուսահատական, վճռեց Չէրքէզը:

Երբ բոլորովին լուսացաւ, պաշարողները սկսան կամայ կամայ յառաջանալ հետզհետէ սեղմելով իրենց շրջանակը:

— Դիրքերնիս թէև անառիկ՝ բայց մեղք որ քիչուոր ենք, դիտեց Ազիզ պէյ:

— Այո՛, եթէ գոնէ քսան հոգի ըլլայինք կրնայինք աղուոր դաս մը տալ իրենց . . . :

Պահ մը կրկին Հասան պէյ ժայռերուն մէջէն գլուխը վեր առաւ ու մեկէն ներս քաշեց:

Ութը տասը հրացանի ձայներ լսուեցան ու գնդակները եկան զարնուիլ ժայռերուն:

— Հազիւ երեք չորս հարիւր մէդը հեռու են մենէ, ըսաւ Հասան պէյ և ցաւալին այն է որ մեզ նշմարած են և ուղղակի դէպ ի այս բլուրը կը յառաջանան:

— Բայց չենք կրնար անշարժ սպասել որ գան մեզ բռնեն, գոչեց Ազիզ պէյ: Օ՛հ դիմեք մեր ղէնքերուն:

— Այո՛, ուրիշ ճար չկայ. պէտք է կուռիլ մինչև որ մէկիկ մէկիկ իյնանք:

Չորսն ալ իրենց հրացանները պատրաստեցին:

— Ինձ մտիկ ըրէք, ըսաւ Հասան պէյ, յարձակողները շատ մօտ են մեզի և պէտք է նշան առնելով քաշել ղէնքերը որպէսզի մեր փամփուշտները պարսպ անղը չսպառենք:

— Կրակ, գոչեց Ազիզ պէյ:

Չորս հարուած մէկէն պարպուեցան և չորս հոգի գետին տապալեցան յարձակողներուն մէջէն: Ատիկա յանկարծական սարսափ մը յառաջ բերաւ զինուորներուն մէջ որոնք մէկէն դադրեցուցին իրենց յառաջխաղացութիւնը:

Երկու գնդապետներն ու երկու Չէրքէզները յուսահատ կատաղութեամբ մը կը շարունակէին կրակ ընել: Ուրիշ մէկ քանի զինուորներ ալ գետին փռուեցան: Յանկարծ իրենց առաջնորդող սպաներուն հրամանին վրայ, ամենքը մէկ գետին պառկեցան և սկսան սոսկալի հրացանաձգութիւն մը, բայց փոքրիկ խուճըր, ժայռերու ծերպերուն մէջ, այբա՛ն

հիանալի կերպով պատասպարուած ու պաշտպանուած էր ո՛չ մէկ վնաս կրեց : Իրենց թաքստոցէն կը շարունակէին պատասխանել զիրենք պաշարողներու գնդակներուն , թէև շատ ցանցատ կերպով , որովհետև նախ չէին համարձակեր ծերպերէն դուրս երևնալ , յետոյ կը վախնային որ իրենց փառփուշտները կ'սպառէին :

Կախը այսպէս կը տեսէր երկու ժամէ ի վեր և սակայն յայտնի էր ըստ ի վերջոյ փոքրիկ խումբը պիտի ստիպուէր տեղի ապու .

— Այս վիճակը չի կրնար երկար տեսել , ըսաւ Ազիզ պէյ , իր ընկերոջ , ազատու մի ճար չկայ . . . պիտի մեռնինք կամ անձնատուր ըլլանք :

Ինչպէս անձնատուր ըլլանք , հարցուց չէրքէզ գնդապետը զարմացած :

— Այսինքն իմ մասին չեմ խօսիր , որովհետև եթէ նոյն իսկ անձնատուր ըլլամ , ապահովաբար Ապախու Համիտ զիս չպիտի ապրեցնէ , բայց նոյնը չէ ձեզի համար :

— Կ'ուզես որ ես առանձին անձնատուր ըլլամ , գոչեց Հասան պէյ դողահար ձայնով մը :

— Ո՛չ թէ առանձին , այլ երկու հայրենակից զինուորներովդ , որոնք ի դ՛ուր իրենց կեանքը վրայ պիտի տան , առանց օգտակարութեան . . . գալով քեզի ես վստահ եմ որ անձնատուր ըլլալէդ ետքը կրնաս գլուխդ փրկել , քանի որ հզօր պաշտպան մը ունիս երջարդի մէջ :

Երիտասարդ գնդապետը սրտմտած երևոյթ մը առաւ .

— Հաւատացէք որ զիս չտիազանց կը վշտացնէք ձեր այս խօսքերով , ըսաւ . միասին վտանգին մէջ ինկանք , միասին պիտի մեռնինք , մանաւանդ որ ես նոյն իսկ պարտակահն եմ քեզ չլքանելու , քանի որ ես եղայ պատճառը այս ծուղակին մէջ իյնալու և դուն ինձ վտահելով եկար մինչև այստեղ :



— Լա՛ւ, բայց այս երկու չէրքէզ զինուորները ինչ յանցանք ունին... գոնէ ջանանք զանոնք ազատելու:

— Այս մասին իրաւունք ունիս, թող անոնք անձնատուր ըլլան...

Երիտասարդ գնդապետը դարձաւ իր երկու հայրենակիցներուն որ քիչ մը անդին կձկուած էին և նշան ըրաւ որ մօտենան: Երկու չէրքէզ զինուորները եկան իրենց պետերուն քով:

— Ընկերներ, ըսաւ Հասան յուզուած ձայնով մը, բախտը մեզ անյաջող գնաց և չկրցանք մեր նպատակին հասնիլ: Ա՛լ փրկութեան յոյս չկայ, ամէն կողմէ պաշարուած ենք և ո և է ընդդիմութիւն անօգուտ է, ուստի գոնէ ձեր կեանքը փրկելու համար անձնատուր եղէք... ձեզ բան մը չեն կրնար ընել եթէ ըսէք թէ հակառակ ձեր կամքին և միայն ձեր մեծաւորին հրամանին հնազանդելու համար հեռացած էիք բանակէն... օ՛ն, շուտով ձեր հրացաններուն ծայրը ձերմակ թաշկինակ մը կապեցէք ու գացէք...:

— Իսկ դո՞ւք, հարցուց զինուորներէն մին:

— Մենք հոս պիտի մնանք ու կուրինք մինչև որ իշանք:

— Ես ալ ուրեմն ձեզի հետ պիտի մնամ, պատասխանեց զինուորը հանդարտութեամբ:

Յետոյ իր ընկերը ցոյց տալով շարունակեց.

— Օսմանը եթէ կ'ուզէ թող երթայ:

— Ամենքս ալ հոս պիտի մեռնինք, պատասխանեց Օսման իր կարգին:

Գնդապետը, որ իր մարդոց նկարագիրը շատ լաւ կը ճանչնար, անօգուտ համարեց պնդելը:

— Գիտէի որ այսպէս պիտի ըլլար, ըսաւ պարզապէս:

Նոյն միջոցին պաշարողները ա՛լ աւելի մօտեցած էին և կարելի չէր անգործ մնալ. յանկարծ՝ Ազիզ պէյի տուած հրամանին վրայ՝ բուն հրացանաձգութիւն մը սկսաւ փոքրիկ

խումբին կողմէ : Յարձակողներէն նրեք հողի գետին տապա-  
լեցան և միւսները նահանջեցին , իրենք ալ անընդհատ հրա-  
ցան պարպելով : Այս յաջողութենէն քաջալերուած բլրակին  
վրայ զիրք բռնողները շարունակեցին իրենց կրակը , որուն  
նոյնքան սաստիկութեամբ կը պատասխանէին զխմացէն :

Կռիւր անքան տաքցած էր որ փոքրիկ խումբը այլևս  
մոռցած էր իր նախկին գգուչաւորութիւնը՝ ժայերու ծեր-  
պիւրէն վեր բարձրացած հրացանը կը պարպէր՝ աւելի լաւ  
նշան առնելու համար : Առիկա ազետալի ելաւ : Գնդակ մը  
գետին տապալեց չէրփէզ զինուորներէն մին , որ ճակատէն վի-  
րաւորուած՝ վայրկենապէս մեռաւ :

— Մեր առաջին զոհը , ըսաւ Հասան պէյ տխրութեամբ :

— Հիմա կարգը մեզի պիտի գայ , պատասխանեց զըն-  
դապեար նշան առնելով :

Փոքրիկ խումբին ցոյց առած յանդգնութիւնը ստիպեր  
էր միւսները հետզհետէ նահանջելու , մանաւանդ որ իրենցմէ  
սպայ մըն ալ՝ ծանրապէս վիրաւորուած՝ գետին ինկեր էր :

Կռիւր այսպէս տեսեց մինչև կէսօր : Յետոյ պաշարողները  
վճռական գործողութեան մը սկսան : Ամենքը միահամուռ  
խուժեցին բլրակին վրայ , մինչ երկու գնդապետներն ու չէր-  
փէզ զինուորը անվիճեր պաղարիւնութեամբ մը կը զխմագ-  
րէին այդ կատաղի յարձակումին : Յանկարծ զինուորը ազա-  
ղակ մը արձակեց և ժայերուն վրայ ինկաւ կուրծքէն մա-  
հացու կերպով վիրաւորուած , քիչ մը ետքը ուրիշ գնդակ  
մը ծակեց Հասան պէյի ուսը , զայն անգործութեան մատնե-  
լով : Հիմա Ազիզ պէյը մնացեր էր որ ստանձին կը շարունա-  
կէր պայքարը յուսահատօրէն՝ սպասելով իրեն սահմանուած  
գնդակին :

Բայց մէկէն իրարանցում մը առաջ եկաւ յարձակողնե-  
րուն մէջ , յառաջխաղացութիւնը յանկարծ կեցաւ և հրացա-  
նաձգութիւնն ալ դադրեցաւ : Ազիզ պէյ չկրցաւ հասկնալ թէ  
ի՞նչ պատահած էր , բայց ինքն ալ իր կարգին հրացանը վար

զրաւ րօպէ մը ծուեցաւ իր վերաւոր ընկերոջ քով որ ժայռի մը վրայ երկնցած էր :

— Ինչո՞ւ հրացանի ձայները լսեցին , հարցուց վերաւորը :

— Չեմ գիտեր , ես ճիշդ այդ հասկնալ կ'ուզեմ . պատասխանեց Ազիզ պէյ , բայց անկէ առաջ թող տուր որ սա վերքը տեսնեմ :

Եւ արագ շարժու՛մով մը իր ընկերոջ հագուստները հանեց , վերքը քննեց և յայտարարեց .

— Բարեբախտաբար թեթեւ ու անվնաս կերպով վիրաւորուած ես . . .

— Այո՛ , գիտեմ , արդէն ցաւ ալ շատ չեմ զգար , բայց ի՞նչ օգուտ . . .

Ազիզ պէյ չպատասխանեց , թաշկինակով մը վերքը կապեց և հագուստները վերստին հագցուց : Նայն միջոցին հրացանաձգութիւնը վերսկսու : Գնդապետը իր գէնքը առաւ և ոտքի ելաւ , ժայռերէն վեր բարձրացաւ , չորս բոլորը զննեց և յետոյ վերադարձաւ իր ընկերոջ քով :

— Զարմանալի բան մը տեղի կ'ուեննայ , բաւ , հրացանի հարուածները այս կողմ չեն ուղղուած այլ դիմացի կողմը . . .

— Ի՞նչ կը նշանակէ թէ նոր թշնամի մը երևան կ'լածէ որուն դէմ կը կռուին այժմ , մեզ մոռնալով :

— Բայց ո՞վ կրնայ այդ նոր թշնամին :

— Հաւանօրէն ապստամբական հրոսախումբ մը և կամ . . . մեր ընկերները .

— Վիրաւորը ինքն ալ ուզեց աչքովը տեսնել անցած դարձածը և իր ընկերոջ օգնութեամբ ոտքի ելաւ ու անոր թեւին յենած բարձրացաւ ժայռի մը կատարը :

Կռիւը կը շարունակուէր կատաղի սաստկութեամբ մը : Կարելի չէր տեսնել թէ որո՞նք էին այս տնակնկալ օժանդակները որոնք մէջտեղ ելած էին և ստիպած որ պաշարողները հեռանան ըլրակէն , բայց յայտնի կը տեսնուէր

որ բազմաթիւ էին որովհետեւ ամբողջ խումբը անոնց դէմ  
դարձուցած էր իր զէնքը :

Երկու զինուորականները որոնց ա՛լ ուշադրութիւն դար-  
ձնող չկար, նստեցան ժայռի մը կատարը և հանդարտիկ դի-  
տեցին իրենց աչքին առջև տեղի ունեցած արիւնալի կռիւը :

Մինչև իրիկուն չդադրեցան հրացանի ձայները եւս մութը  
կռիւկ սկսաւ, երկու գնդապետները տեսան որ գիրենք պա-  
շարող գունդը, իր մեռելները թողլով ու վիրաւոր հարներն ա-  
ռած՝ սկսաւ նահանջել և աներեւոյթ ըլլալ դիմացի կողմը  
տարածուող հովիտին մէջ :

Ա՛յ փրկուած էին :

Զիրենք հալածող գունդը բոլորովին աներեւոյթ ըլլալէն  
ետքը ձիաւորներու խումբ մը ելաւ որ դէպ ի բլրակը յառա-  
ջանալ սկսաւ . այս խումբն տասը հոգիէ կը բազկանար :

Երկու ընկերները սրտատրոփ սպասեցին տեսնելու համար  
թէ որո՞նք էին իրենց ազատիչները :

Վերջապէս Ազիզ պէյ ճանչցաւ խումբին առաջնորդը .

— Նուրի պէյն է, գոչեց ուրախութեամբ :

— Ո՞ր Նուրի պէյը, հարցուց վիրաւորը :

— Իւստիլպի զօրագունդէն որ Մէհմէտ փաշայի և Սա-  
լիա հանրմի հետ կազմեց յեզափոխական կեդրոնը և առա-  
ջին անգամ պարզեց ապստամբական դրօշակը :

Վայրկեան մը ետքը ձիաւորներն եկած միացած էին եր-  
կու զինուորականներուն, «Կեցցէ՛ աղատութիւն, կեցցէ՛ Սահ-  
մանադրութիւն» գոչելով :

Յնձութեան առաջին վայրկեանը անցնելէ ետքը, Նուրի  
պէյ ըսաւ .

— Բարեկամներ վայրկեան մը չունինք կորոնցնելիք,  
պէտք է անմիջապէս հեռանանք այս տեղէն, որովհետեւ ան-  
շուշտ ձեր հալածիչները կրկին պիտի վեռադարնան աւելի մեծ  
թիւով, թէ՛ ձեզ և թէ՛ մեզ հետապնդելու համար :

— Բայց ինչպէ՞ս այսքան փոքրիկ խումբով մը կրցաք  
հարիւրաւոր զինուորներ ի փախուստ դարձնել, հարցուց Ա-  
զիզ պէյ :

— Մեր խումբը շատ աւելի բազմաթիւ էր, միայն թէ մեր միւս ընկերները անմիջապէս հեռացուցի... Օ՛ն կրկար բարակ բացատրութիւններու ժամանակ չէ, շուտով ձի հեծէ՛ք :

Իսկոյն ձիաւորներէն երկուքը իրենց ձիերը արամազրեցին երկու գնդապետներուն :

— Բայց այստեղ երկու մեռած ընկերներ ունինք, առարկեց Հասան պէյ, ի՞նչ պիտի ընենք իրենց դիակները... :

— Այդ քաջներն այս ժայռերէն աւելի փառաւոր գերեզման մը չեն կրնար ունենալ, պատասխանեց Նուրի պէյ. թո՛ղ մեր մարդիկն իսկոյն իրենց մարմինները ծածկեն քարի դէզի մը տակ... :

Սպային այս ըսածն անմիջապէս գործադրուեցաւ և քաւորդ մը կաքը խումբը արագ արագ կը հեռանար բլրակին քովէն :

Երկու ժամ անհնդատ արշաւելէ ետքը հասան լեռներու մէջ կորսուած ալպնական գիւղ մը ուր պիտի անցընէին գիշերը :

Երկու գնդապետները, մանաւանդ վիրաւորեալ Հասան պէյ, յօգնութենէ ուժասպասուելով էին ու պէտք ունէին հանգիստի և սակայն Աշիզ պէյ չուզեց անմիջապէս ննջել և Նուրի պէյը անկիւն մը տանելով զայն երկարօրէն հարցուփորձեց, յեղափոխական շարժումին մասին անգեկութիւններ առնելու և միանգամայն իմանալու համար թէ ի՞նչ պարագաներու տակ իրենց օգնութեան հասած էին այնքան անակնկալ կերպով, ճիշտ այն վայրկեանին ուր ամէն յոյս կորսնցուցած երկու գնդապետները մահուան կը պատրաստուէին :

— Ձեր զարուստը գիտէինք արդէն, բացատրեց Նուրի պէյ, քանի որ մենք հրաւիրած էինք որ դայիք մեզի միանայիք և որոշած էինք որ առաջ հոգինոց խումբ մը պիտի գար մինչև Լահմանագլուխ և ձեզ մեր կեդրոնը առաջնորդէր : Այդ խումբը ճամբայ ելաւ իմ առաջնորդութեամբ, բայց երբ այս գիւղը հասանք, ուր մեզի համալիր ու գործակից շատ քարեկամներ ունինք, լսեցինք որ կացութիւնը մեր երեւակայածէն բոլորովին տարբեր էր : Գնդապետ Հասան պէյ որուն

վրայ դրած էինք մեր յոյսը, ինչպէս նաև ուրիշ մէկ քանի իւր Համիտի հաւատարիմ լրտեսը Սամի փաշա հրամանատար կարգուած էր սահմանազլի զօրագունդերուն ազատական շարժումին յայնապէս հակառակ սպաներ բերուած էին, հրակողութիւնը կրկնապատուած և այս ամէնը միմիայն ձեռք համար... որովհետև ձեր գալուստն ալ իմացուած էր...

— Այո՛, և մինչև հիմա չկրցայ ըմբռնել թէ ո՞վ կրնայ ըլլալ մասնիչը, պատասխանեց Աղիզ պէյ :

— Այս վիճակին մէջ, շարունակեց Նուրի պէյ, մեր տասը հոգինոց փոքրիկ խումբը ո և է գործ մը չէր կրնար տեսնել և յուսահատ ճար մը կը մտածէի, երբ այս ատու կանուխ մեր ընկերներէն պատանի Հասանը լուր բերաւ թէ գիւղէն երկու ժամ անդին ընհարում մը տեղի կ'ունենար բլրակի մը վրայ ապաստանած փոքրիկ խմբի մը և հարիւրուոր զինուորներու միջև, որոնք ամէն կողմէ պաշարած էին դիմադրող խումբը : Իսկոյն գուշակեցի թէ դուք էիք վասնզի մէջ գանուողը և գիւղին մեծաւորները հաւաքելով, որոնց ամէնքըն ալ մեզ համակիր են, պարզեցի կացութիւնը և բաի թէ հարկ էր անմիջապէս օգնութեան փութալ... Ժամուան մը մէջ երկու հարիւր հոգի, զինեալ պատրաստ կեցած էին : Սհա այդ խումբովն էր որ եկանք ու յաջողեցանք ի փախուստ դարձնել զինուորները և ձեզ փրկել :

— Հիմա ըսէ՛ք տեսնեմ թէ ի՞նչ է յեղափոխական շարժումին վիճակը...

— Ափսո՛ս որ շարժումը տակաւին չատ սահմանափակ է, պատասխանեց Նուրի պէյ ախրութեամբ, մեր օրինակը յուսացուածին չափ հետևողներ չունեցաւ. իրա՛ւ է որ ամբողջ ժողովուրդը, առանց ցեղի խարութեան, մեզի հետ է ու Սահմանադրութիւն կը պահանջէ, բայց բանակը շատ դանդաղ կը շարժի :

— Իսկ Պոլսո՞յ մէջ... միթէ կարելի չալտի՞ ըլլայ հոն ալ շարժում մը առաջ բերել :

— Պոլսոյ վրայ բնա՛ւ յոյս չենք գնել : Հոն այլևս ո և է գորութիւն չունինք, հոն գտնուած լաւագոյն ուժերը արդէն թողած հեռացած են...

— Ուրեմն կացութիւնը բնաւ յուսալից չէ, բաւ Ազիդ պէյ :

— Մէկ յոյս մը ունինք՝ այն է Ապտիւլ Համիտի երևուկայութեան վրայ ազդել, զայն սարսափեցնել, մեր ոյժին ու զօրութեան վրայ մեծ գաղտնիար մը ներշնչել և այս կերպով ստիպել զինքը որ Սահմանադրութիւնը հռչակէ... անգամ մը որ այս կերպով ընկրկիլ սկսի՝ ա՛լ դիւրաւ կրնանք հետզհետէ պահանջկոտ դառնալ, մանաւանդ որ Սահմանադրութեան հրահակումը մեզ պիտի կապէ ամբողջ Թուրքիոյ ժողովուրդները :

— Բայց ինչպէ՞ս կը յուսաք Ապտիւլ Համիտի վրայ այդ ազդեցութիւնը ձեռք բերել :

— Մէկ քանի միջոցներով : զորս ձեզ կը բացատրենք երբ որ մեր տեղը հասնինք :

Հեռեկալ առտու թէև Ազիդ պէյ փափաքեցաւ խեղճ մեկնիլ արպանիական հիւրընկալ գիւղէն, սակայն անկարելի եղաւ : Հասան պէյ, որուն վէրքը լաւ դարմանուած չէր, սոսկալի տենդ մը ունեցաւ և հարկ եղաւ զինքը լրջօրէն խնամել և հազիւ չորս օր ետքը կարող եղան իրենց վիրաւոր ընկերովը ճամբայ ելլել և մէկ քանի օրէն հասնիլ իրենց ընկերներուն քով, ուր մեծ խանդավառութեամբ ընդունուեցան :

Գնդապետը որ Նուրի պէյի հետ ունեցած տեսակցութենէն քիչ մը յուսաբեկ եղած էր և տխուր արամադրութեան մը ներքեւ կը գտնուէր, յանկարծ ողբերգութեամբ տեսնելով այդ յեղափոխական միջավայրին մէջ արբող եռանդը : Կերան մը կողմին վրայ գտնուած արպանիական փոքրիկ քաղաքը զոր իրենց կեդրոնը ըրած էին յեղափոխականները կատարեալ անակատակութիւն մը երևոյթը առած էր և ամէնուն՝ նոյնիսկ կիներուն և մանուկներուն ձեռք հրացան կը տեսնուէր : Կառավարական իշխանութեան հետք չէր մնացած, ո՛չ միւտիւր, ո՛չ ոստիկան, ո՛չ պաշտօնեայ : Միակ իշխանութիւնը որուն ամէնքը ինքնայօժտար կը հպատակէին՝ քօմիթէն էր զոր կը ներկայացնէին նախկին թիկնապահ Մէհմէտ փաշա, Սալիհ հանըմ և Նուրի պէյ : Հիմա անոնց վրայ կ'աւելնալնային նաև

Ազիզ պէյ և Հասան պէյ, որուն ցոյց տուած անձնուիրութիւնը հիացուցած էր ամէնքն ալ: Չէրքէզ գնդապետը թէև միշտ համակիր եղած էր Երիտասարդ Թուրքերուն և իր ձեռքէն եկած ծառայութիւնները մատուցած էր, այսուհանդերձ պաշտօնապէս անոնց կուսակցութեան անդամ չէր արձանագրուած մինչև այն ատեն: Հէմա էր որ իր բոլոր կապերը կը խզէր բռնաւորութեան հետ և կը նետուէր յեղափոխութեան գիրկը:

Իրիկունը ամենքը հաւաքուեցան զեանայարկի ընդարձակ սրահ մը որուն մէջտեղ, խոշոր գեղջկական վառարանի մը մէջ, ճարձատուն կրակ մը կը վառէր:

Այդ սրահը իբրև ժողովարան կը ծառայէր և իրենց հոն տեղի կ'ունենային խորհրդակցութիւնները:

Սալիհա հանրմ, սեղանի մը քով նստած, մէկիկ մէկիկ կը բանար զանազան տեղերէ եկած նամակները և անոնց սրբունակութիւնը կը հաղորդէր իր ընկերներուն:

Այս գործին զբաղած էր՝ երբ յանկարծ ուրախութեան աղաղակ մը արձակեց:

Ամէնքը՝ զարմացած՝ աչքերնին անոր դարձուցին: Սալիհա հանրմ այնքան ինքնիշխան կորով մը ունէր, այնքան իր ներքին զգացումները կրնայ զսպել. որ իր կողմէ այսպիսի աղաղակ մը իրաւցնէ տարօրինակ կրնար երևալ իր ընկերներուն, որոնք իսկոյն հասկցան թէ արտաքոյ կարգի բան մը տեղի ունեցած էր:

— Ի՞նչ բան արդեօք ձեզի ուրախութեան այս աղաղակը արձակել կուտայ, հարցուց Առնաւուտ Մէհմէտ փաշա:

— Իրողութիւն մը, որուն չպիտի հաւատաք, պատասխանեց Սալիհա հանրմ... գիտէ՞ք թէ ուսկից է այս կարգացած նամակս:

— Հաւանօրէն մեր ընկերներէն...

— Այո՛, մեր ամէնէն սիրելի ընկերներէն՝ Սատրքէն...:

— Սատրքէն, գոչեցին ամենքը միաբերան, ինչպէ՞ս կըրցիր է Երլտըզի գնտանին խորէն նամակ մը հասցնել մինչև հոս:



— Բայց Երլարդէն չի գար նամակը, այլ Սօֆիայէն :  
— Այսինքն՝ Սօֆիայի ճամբով ըսել կ'ուզէք, պատաս-  
խանեց Նուրի պէյ :  
— Ո՛հ, այդ չէ ըսել ուզածս, Սատրք նամակը գրած էր  
Սօֆիայէն . . . :

— Ուրեմն ազատոր է բանտէն :  
— Բնականարար, քանի որ այս միջոցիս Սօֆիա կը գտ-  
նուի՝ ուրկէ կը պատրաստուի մեր քովը գալ Մակեդոնական  
քօմիթէին աջակցութեամբը :  
— Ապտիւլ Համիտ ներս՝ւմ չնորհած է արդեօք իրեն . . .  
— Չէ, բարեկամներ, եւրոպացի կին մը Սատրք փախ-  
ցուցած է Երլարդէն . . .

Այս վերջին խօսքերը ընդհանուր զարմանք յառաջ բե-  
րին . Սալիհա հանրմ տեսաւ իր ընկերներուն թերահաւատ  
դէմքերն եւ ըսաւ .

— Ես ալ չպիտի հաւատայի այդ գրուածքին, եթէ մեր  
ընկերոջ դիրը բացայայտ կերպով չճանչնայի . . . առէ՛ք կար-  
դացէք նամակը :

Ազիզ պէյ որ Եւրոպացի կնոջ խօսքը լսելուն պէս իր  
ճամբու ընկերուհին յիշած էր, իսկոյն տեղէն ցատկեց և նա-  
մակն առնելով բարձրաձայն կարդալ սկսաւ : Սատրք պէյ այդ  
գրութեամբ մանրամասն կը պատմէր ինչ որ մինք արդէն  
գիտենք և միեւնոյն ատեն յոյս կը յայտնէր թէ քիչ օրէն  
պիտի կրնար իր սրտին վրայ սեղմելու սիրելի ընկերներն և  
անոնց հետ կուռելու ազատութեան յաղթանակին համար :

Նամակը երկարօրէն կը խօսէր Պառոնուհիին վրայ ու կը  
յիշէր նաև Ազիզ պէյը և կնոջ անոր հետ ըրած ուղեւորու-  
թիւնը :

— Հիմա բացարձակապէս կը հաւատամ, գոչեց Ազիզ  
պէյ ուրախութեամբ, այո՛, բոլոր պատմուածները ճիշտ են և  
այդ զարմանալի կինը որ ինծի հետ հոս գալ կ'ուզէր, կարող  
է այդպիսի գործ մը գլուխ հանելու . . . :

Ու Ազիզ պէյ իր ընկերներուն պատմեց, Բարիդէն մեկ-  
նած պահուն իր հանդիպումը Պառոնուհիին հետ ու մինչև

Հում իրեն ընկերանալը, ինչպէս նաև Թուքիոյ ազատական շարժումին մասին անոր ցոյց տուած չափազանց համակրանքը:

— Պէտք է այդ կնոջ փառաւոր ընդունելութիւն մը ընենք երբոր Սաաբք պէյի հետ հոս համարի. եզրակացուց:

— Բնականաբար, պատասխանեց Սալիհա հանրմ, այդ կինը իրաւունք ունի մեր երախտագիտութեան, քանի որ մեր սիրելի ընկերը կրցած է ազատի բռնաւորին ճիրաններէն:

— Եւ սակայն բոլոր այդ պատմութիւնը շատ տարօրինակ կը թուի ինձի, ըսաւ կամաց մը Նուրի պէյ, որ նամակը Ազիզ պէյի ձեռքէն առնելով սկսաւ անգամն ալ ինք կարդալ ուշադրութեամբ:

Այս դիտողութիւնը անպատասխանի մնաց: Սալիհա հանրմ նոր նամակ մը բացած դայն կը կարդար ամբողջ ուշադրութիւնը անոր նուիրած:

— Ահաւասիկ կարեւոր լուր մըն ալ, ըսաւ երբոր ընթերցումը աւարտեց:

— Բարի՞ է արդեօք միւսին պէս, հարցուց Մէհմէտ փաշա:

— Ձեր բարեկամներէն մին, իբրեւ զինուորական լիազօր քննիչ Պոլէն այս կողմերը պիտի գայ եղբր, պատասխանեց Սալիհա հանրմ ժպտելով:

— Ո՞վ է արդեօք այս բարեկամս...:

— Նոյն ինքն Շէմսի փաշան...:

— Համիտի հաւատարիմ լրտեսը, գոչեց Մէհմէտ փաշա, այն որ այնքան երիտասարդ սպաներու կորուստին պատճառն եղաւ:

— Այո՛, այդ անարժան զինուորականը ահա՛ մեր բանակներուն վրայ լիազօր քննիչ կարգուած է:

— Բայց չիտակը շատ աներես յանդգնութիւն մը պէտք է համարձակելու համար հոս գալ և մեզի դէմ դաւել:

— Գիտէք որ ոչ աներեսութիւնը և ոչ ալ յանդգնութիւնը կը պակտի Շէմսի փաշայի քով, ըսաւ Ազիզ պէյ:

— Բայս այս անգամ չենք կրնար անպատիժ թողուլ զինքը. գոչեց Մէհմէտ փաշա յուզուած ձայնով մը:

— Մեր Մանասթըրի ընկերները, որոնք այս լուրը ստացաւ աղբիւրէ առնելով մեզի կը ծանուցանեն, ըսաւ Սալիհա հա-

նըմ, մենէ հրահանգ կ'ուզին թէ ի՞նչ կերպ ընդունելութիւն մը պէտք է ընել այդ քննիչին երբոր ոտքը Մանասթըր դնէ:

— Ես անձամբ կ'երթամ զինքը ընդունելու իմ վեցհարուածեանովս. լաւագոյն ընդունելութիւնը այս կերպ կարիք է ընել իրեն . . . :

— Հանդարտեցէ՛ք, փաշա էֆէնտի, պատասխանեց Սալիհա հանըմ, նոյնիսկ այդ կերպ ընդունելութեան մը համար պէտք չկայ որ դուք տեղափոխուիք . . . նամակը դրող մեր ընկերները արդէն այդ գործը կատարելու համար մեր կողմէ բառի մը կ'սպասեն:

— Կեցցեն ուրեմն, այդ արտօնութիւնը իսկոյն կը չսորհենք:

— Վճռական քայլ մըն է ատիկա սակայն որուն համար պէտք է լրջօրէն խորհրդակցինք:

— Ես այն կարծիքը ունիմ որ առանց բացարձակ սպացոյցներու՝ պէտք չէ մահուան վճիռ արձակենք, պատասխանեց Սալիհա հանըմ: Եէմսի փաշան, այո՛, Ապտիւլ Համիտի հաւատարիմ անձերէն մէկն է և հաւանօրէն յեղափոխական շարժումը բանակին մէջ զսպելու պաշտօնով կուգայ, բայց, ո՛վ զիտէ, թերեւս հոս հասնելով իր տրամադրութիւնները փոխուի, թերեւս ինքն ալ մեզի հետ միանայ . . .

— Այդ անկարելի է, Եէմսի փաշա փորձուած մարդ մըն է, զիտեկ տուաւ թիկնապահը:

— Ես այն կարծիքէն եմ, շարունակեց Սալիհա հանըմ, որ պէտք է թողուլ այս նոր քննիչը որ իր պաշտօնին ձեռնարկէ, նոյն իսկ պէտք է ջանալ զայն մեր կողմը շահելու և երբ մեր ջանքերը ապարդիւն ելլեն, երբ տեսնանք որ այդ մարդը իրաւցնէ մեզ չարիք հասցնելու կ'աշխատի՝ այն ատեն կրնանք իրեն դէմ հարկ եղած միջոցները ձեռք առնել:

Այս խօսքերը այնքան բանաւոր երևեցան որ ամենքն ալ ի վերջոյ համակարծիք դառնուեցան Սալիհա հանըմի, և որոշեցին այդ մտքով հրահանգ դրեել իրենց Մանասթըրի ընկերներուն: Միայն նախկին թիկնապահը անդրդուելի մնաց և ուզեց որ Եէմսի փաշա սպաննուի ոտքը Սելանիկ դրածին պէս:

# İstanbul Belediyesi

İnkilâb Müzesi ve Kütüphanesi

Sayı:

Oda

Dolab

Raf

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM0463/1-3\***

255.07.02.01.06.00/

